Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ ՍԵԴՐԱԿԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ Մ.Թ.Ա. XI-VI ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2006

ՀՏԴ 941(479.25):008
ԳՄԴ 63.3(2Հ)+71
Ա 791

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհուրդը:

Խմբագիր՝ Վահան Էդուարդի Հովհաննիսյան

ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ.Գ., ԱՎԵՏԻՍՅԱՆ Պ.Ս.

Ա 791 Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում: - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006 թ., 396 էջ:

Մենագրությունը նվիրված է Արարատյան դաշտի մ.թ.ա. XI-VI դարերի մշակույթին: Գիրքը նախատեսվում է պատմաբանների, հնագետների, արվեստաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Ա $\frac{0503020913}{704(02)06}$ 2006 ԳՄԴ 63.3(2Հ)+71

ISBN 5-8084-0736-2

© Ավետիսյան Հ.Գ.,
Ավետիսյան Պ.Ս., 2006 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում կատարված պեղումները զգալիորեն թարմացրին Վանի թագավորության պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Նորահայտ նյութերի հետ մեկտեղ շրջանառության մեջ մտան ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ ու տեսակետներ: Մասնավորապես, Վանա լճի առափնյա շրջաններում կատարված պեղումներն առիթ տվեցին, որպեսզի ուրարտական մշակույթի ծագումնաբանության հարցերը նոր տեսակետով ասպարեզ մտնեն[1]: Հրապարակի վրա են նաև Վանի թագավորության կործանման, ավարտական փուլի ժամանակագրության նոր մեկնաբանություններն ու թվագրությունները, արքայացանկում փոփոխություններ կատարելու առաջարկները և այլն: Ռ. Բառնետի, Տ. Սուլիմիրսկու, Ֆ. Քյոնիգի կողմից առաջ քաշված այն տեսակետը, որ Վանի թագավորությունն անկում է ապրել մ.թ.ա. 640-ական թվականներին, ներկայումս պաշտպանում են Ս. Կրոլը, Մ. Սալվինին, Պ. Զիմանսկին և այլոք[2]: Հատկանշական է, որ վերոհիշյալ հարցերը մեկնաբանելու,

[1] *V. Sevin,* The Origins of the Urartians in the light of the Van/Karagündüz Excavations, Anatolian Studies, 49, 1999, pp. 159-164; *I. Reindell, M. Salvini,* Die urartäischen Hohlmaße für Flüssigkeiten, SMEA, 43, 2001, S. 119-139; *P. Zimansky,* Ancient Ararat. A Handbook of Urartian Studies, Delmar, New York, 1998; *T. Özguç,* Altintepe. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 24, Ankara, 1966; *T. Özguç,* Altintepe II. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 27, Ankara, 1969; *Özguç T.,* Urartu and Altintepe, "Archaeology" 22, 1969, p. 256-263; *S. Lloyd, Ch.A. Burney,* Excavations at the Urartian Citadel of Kayalidere, "Türk Arkeoloji Dergisi", 14 (1-2), 1965, s. 217-222; *M.T. Tarhan,* Recent Research at the Urartian Capital Tushpa, "Tel Aviv", 21, 1994, p. 22-57; *M. Salvini,* Reflections about the Urartian Shrines of the Stelae. In: "Aspects of Art and Iconography: Anatolia and Its Neighbors". Studies in in Honor of Nimet Özguç, ed. J.M.Mellink, E.Porada, T. Özguç, Ankara, 1993, p. 543-548; *A. Çilingiroğlu,* The Early Iron Age at Dilkaya. In Anatolian Iron Ages. The Proceedings of the Second Anatolian Iron Ages Colloquium Held at Izmir (4-8 May, 1987), ed. A. Çilingiroğlu, D.H. French, Oxford, 1991, p. 29-38; *D. Zafer,* The Urartian Cremation Jars in Van and Elaziğ Museums. In: Anatolian Iron Ages 3. The Proceedings of the Third Anatolian Iron Ages Colloquium Held at Van (6-12 August, 1990) ed. A. Çilingiroğlu, D.H. French, Ankara, 1994, p. 49-62; *E. Kutlu,* Altintepe'de Urartu Seramiği (The Urartian Pottery from Altintepe), Belleten, 1969, 33, s.291-301; *G. Korbe, H. Sağlamtimur, Ö. Çevik,* Potteri. In: "Ayanis I. Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998" (Eds. A. Çilingiroğlu, M.Salvini), Roma, 2001, p. 85-153; *V. Sevin, A. Özfirat, E. Kavakli,* 1997-1998 Van/Altintepe Urartu Nekropolü Kazibari, "Kazi Sonuçlari Toplanisi", XXI/1, Ankara, 2000, s. 421-434.

[2] *R.D. Barnett,* Further Russian Excavations in Armenia, Iraq, 21, 1959, pp. 1-19; *T. Sulimirski,* Scythian Antiquities in Western Asia, "Artibus Asiae", 17, 1954, pp. 282-318; *F.W. König,* Handbuch der Chaldischen Inschriften, Archiv für Orientforschung, Graz, 1955-57; *St. Kroll,* Urartus Untergand in anderer Sicht, Istanbuller Mitteilungen, 34, 1984, s. 151-170; *M. Salvini,* Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995; *P. Zimanssky,* The Kingdom of Urartu in Eastern Anatolia, Civilisations of the Ancient Near East, II, New York, 1995, pp. 1140-1141, *նույնի* Archaeological inquiries into ethno-linguistic diversity in Urartu, in: Greater Anatolia

հիմնավորելու համար առավելապես օգտագործվում են հնագիտական տվյալներն ու նյութերը:

Մինչ օրս շարունակվող քննարկումները ցույց են տալիս, որ հրապարակի վրա ունենք լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ, որոնք նոր հարցադրումներից բացի, նոր մոտեցումներ են պահանջում: Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունի լեռնաշխարհում պետական կազմավորումների ձևավորման ու զարգացման ուղիների ուսումնասիրությունը:

Կասկածից վեր է, որ վաղ պետական կազմավորումները տարածաշրջանում արձանագրվում են առնվազն մ.թ.ա. III հազարամյակի վերջերից: Սեպագիր տեքստերում, Եփրատից արևելք հիշատակվող երկրանուններից բացի, Նորշուն թեփեյի պալատական համալիրը, Թռեղքում, Վանաձորում, Քարաշամբում, Լոռի Բերդում հայտնաբերված «արքայական» դամբարանները սոցիալ-քաղաքական զարգացումների որակապես մի նոր համայնապատկեր են ուրվագծում՝ լավագույնս վկայելով նշված հանգամանքը: Լեռնաշխարհի սահմաններն ընդգրկող տերության՝ Վանի թագավորության հանդես գալով, Հայկական լեռնաշխարհում ավարտին հասավ պետականության կայացման առաջին փուլը: Այս ընթացքում՝ մ.թ.ա. XV-IX դարերի պետական կազմավորումների խայտաբղետ կազմի՝ սոսկ փաստագրումներն անգամ, վկայում են, որ տարածաշրջանի տարբեր հատվածները հասարակական-քաղաքական զարգացումների ինքնատիպ ուղի են անցել:

Բնականաբար, այս հանգամանքը կանխորոշիչ դեր պետք է ունենար ինչպես Վանի թագավորության կազմավորման, այնպես էլ գոյատևման հետագա փուլերում: Ակնհայտ է նաև, որ վերոհիշյալ իրավիճակը փաստող ելակետային տվյալների վերլուծությունները կարևոր նշանակություն են ձեռք բերում, այսպես կոչված «ուրարտական էքսպանսիային» համընթաց ձևավորվող նոր իրողությունների (կենտրոնացված քաղաքական, ռազմական, տնտեսական համակարգի, վարչա-տարածքային ստորաբաժանումների, սոցիալական կազմի) և դրանցով պայմանավորված՝ Վանի թագավորության, որպես տերության կազմավորման «մեխանիկան» հասկանալու և վեր հանելու համար: Նշենք նաև, որ «ուրարտական էքսպանսիա» ասելով նկատի ունենք ոչ միայն ռազմական նվաճումները, այլև մշակութային նոր իրողությունների տարածումն ու արմատավորումը:

and the Indo-Hittite Language Family, Journal of Indo-European Studies, Monograph Number 38, Washington D.C. 2001, p. 15-27, *տես նաև՝ W. Kleiss*, Bastam II, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1977-78, Berlin, 1988; *Ph. Kohl, St. Kroll*, Notes on the Fall of Horom, Iranica Antiqua, v. XXXIV, 1999, pp. 243-259; *И.Н. Медведская*, Периодизация скифской архаики и древний Восток, Российская Археология, 1992, 3, с.86-107, *И.М. Дьяконов*, Киммерийцы и скифы на древнем Востоке, Российская Археология, 1994, 1, с. 108-116, *Г.Н. Курочкин*, Хронология переднеазиатских походов скифов по письменным и археологическим данным, Российская Археология, 1994, 1, с. 117-122.

Հայաստանի տարածքում վերջին տասնամյակներում կատարված պեղումները զգալիորեն ընդլայնել են Արաքսից հյուսիս ընկած տարածքների՝ մ.թ.ա. XII-VIդդ. պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Վերը հիշատակված խնդիրների պարզաբանման համար սկզբունքային նշանակություն ունեն հատկապես Արարատյան դաշտի երկաթեդարյան հուշարձանների պեղումների արդյունքները: Սակայն կուտակված տվյալներն ու նյութերը վերը նշված առումներով արժևորման կարիք ունեն: Հատկանշական է, որ Կարմիր բլուրի պեղումներից հետո հատուկ ուսումնասիրության առարկա դարձան ուրարտասկյութական փոխառնչությունները, սակայն բուն տարածքների, մինչուրարտական և Վանի թագավորների նվաճումներից հետո տեսանելի հնագիտական իրողությունների համեմատության արդյունքները ներկայացվում էին թռուցիկ ակնարկների միջոցով[3]:

Նշված խնդրին մեծ ուշադրություն է դարձրել Հ. Մարտիրոսյանը: Մեծանուն գիտնականը փաստորեն առաջին անգամ, կոնկրետ նյութերի վերլուծության արդյունքներից ելնելով, սահմանեց Վանի թագավորության կազմի մեջ ընդգրկված անդրկովկասյան հասարակությունների մշակույթի հիմնական տարբերակիչ հատկանիշների կազմը, դրանց առանձնահատկություններն ու կապը մինչուրարտական փուլերի հետ: Միաժամանակ, մի շարք հնագիտական համալիրների նյութերի վերլուծությամբ, վեր հանեց ուրարտական մշակույթի հսկայական ազդեցությունը «տեղաբնիկների մշակույթի» վրա[4]: Ուրարտական և «վաղ հայկական» մշակույթների ժառանգական կապերի վերհանման առումներով բացառիկ տեղ ունեն Գ. Տիրացյանի դիտարկումներն ու փաստագրումները[5]:

Այսպես կոչված «ուրարտական» և «տեղական» մշակույթների փոխազդեցության փաստերի վերհանման նպատակով, Արարատյան դաշտից հայտնի նյութերին են անդրադարձել նաև Ս. Եսայանը, է.

[3] *Б.Б. Пиотровский*, Кармир-Блур I, Ереван, 1950, с. 86-97, նույնի՝ Ванское царство, Москва, 1959.

[4] *А.А. Мартиросян*, Раскопки в Головино, Ереван, 1954., *նույնի՝* О древнем поселении и могильнике близ Ленинакана, КСИИМК, 55, 1954, с. 106-116, *նույնի՝* Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв до н. э.), Լրաբեր հասարակական գիտությունների, 9, 1956, էջ 61-84, *նույնի՝* Город Тейшебаини, Ереван, 1961, նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

[5] *Г.А. Тирацян*, Культура древней Армении: VI в. до н.э.-III в. н.э., Ереван, 1988, *նույնի՝* Урарту и Армения (к вопросу о преемственности материальной культуры), II международный симпозиум по армянскому искусству, Ереван, 1978, с.181-191.

Խանզադյանը: Մեծամորի և Օշականի պեղումների արդյունքներն ու դրանց մեկնաբանությունները հիմնովին թարմացրեցին տարածաշրջանի մ.թ.ա. XI-VIդդ. պատմահնագիտական համապատկերի վերակազմության աղբյուրագիտական հենքը[6]: Նշենք նաև, որ Հայաստանի տարածքի երկաթեդարյան հուշարձանների պեղումներից ձեռք բերված նյութերի ուսումնասիրության ընթացքում տարբեր հեղինակներ անդրադարձել են վերոհիշյալ խնդիրներին, արձանագրելով փոխազդեցությունների անարառկելի փաստերը: Սակայն Արարատյան դաշտում «ուրարտական մշակութային էքսպանսիայի» ընթացքի, հետևանքների և դրսևորման առանձնահատկությունների լուսաբանման «հնագիտական ասպեկտները», որպես ինքնավար խնդիր չեն արժևորվել և քննարկման առարկա չեն դարձել: Մինչդեռ, մ.թ.ա. XI-IX դարերում, խիստ ինքնատիպ մի մշակութային արեալի կարևորագույն կենտրոնի և նոր տերության ձևավորման սկզբնափուլից «ուրարտական մշակույթի» խոշորագույն անկլավի պատմահնագիտական իրավիճակի փուլ առ փուլ վերակազմությունը և համեմատական քննությունը բազմաթիվ հարցերի պատասխան են ենթադրում: Ավելացնենք նաև, որ վերջին տասնամյակներում Արարատյան դաշտում և կից տարածքներում կատարված պեղումների շնորհիվ (Արագած, Արամուս, Այգեշատ, Արտաշավան, Շամիրամ, Թալին և այլն) զգալի տվյալներ են կուտակվել, որոնք նույնպես լրացնում և ընդլայնում են վերն արժևորած հարցերի շրջանակը: Սակայն այս հուշարձանների պեղումների արդյունքները գործնականում շրջանառության մեջ չեն դրվել, և կուտակված նյութերը դասդասման, կանոնիկ նկարագրության և մեկնաբանության կարիք ունեն, հատկապես, եթե նկատի ունենանք, որ հիշյալ տարածքներում պեղված երկաթեդարյան հուշարձանները ներկայացված են երեք հիմնական իրավիճակներով.

Հուշարձաններ, որոնք ավերվել են Վանի տիրակալների արշավանքների ընթացքում և թագավորության գոյատևման ժամանակահատվածում չեն բնակեցվել (ներկայացված են բացառապես միևնույն ուրարտական շերտերով՝ Դվին, Շամիրամ, Էլառ):

Հուշարձաններ, որոնք ավերել և հետագայում վերակառուցել են Վանի տիրակալները (ներկայացված են միևնույն ~~ուրարտական և ուրարտական~~ շերտերով՝ Մեծամոր, Ոսկեվազ, Կարմիր բլուրի քաղաքային տեղամաս):

Հուշարձաններ, որոնք կառուցել են Վանի թագավորները (ներկայացված են ուրարտական, ~~հատուկ նաև հետուրարտական~~ շերտերով՝ Էրեբունի, Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր՝ միջնաբերդը, Օշականի պալատական համալիրը և ամրոց-դղյակը, Արագածի և Արամուսի ամրոցները և այլն):

Նշված հանգամանքը բացառիկ հնարավորություն է ընձեռում հուշարձանների տվյալների համեմատական վերլուծությունների միջոցով վեր հանելու՝ տարածաշրջանի պատմահնագիտական համապատկերը մինչև ուրարտական արշավանքները, Վանի թագավորների արշավանքներին անմիջապես հաջորդող իրավիճակի առանձնահատկություններն ու հիմնական բնութագրական չափանիշները, «Ուրարտական» և «էթիունյան» մշակույթների փոխհարաբերակցության, փոխներթափանցման հնագիտական դրսևորումները:

Աշխատանքում ներկայացված աղյուսակները, չափագրությունները, նկարները կատարվել են Կ.Դաֆադարյանի, Ա.Կանեցյանի, Ս.-Գաբրիելյանի, Հ.Սարգսյանի, Լ.Կիրակոսյանի, Ա.Դավթյանի կողմից:

[6] *Է.Վ. Խանզադյան, Կ.Հ. Մկրտչյան, Է.Ս.Պարսամյան,* Մեծամոր, Երևան, 1973, *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Ереван, 1988.

ԳԼՈՒԽ I

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. XI-VIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անդրկովկասի մինչուրարտական (ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջաններ) փուլի հնագիտական հուշարձանների տվյալներն ընդհանրացնող ուսումնասիրություններում փորձեր են արվել տարանջատելու որոշակի մշակութային ենթաշրջաններ: Ըստ որում, Անդրկովկասի սահմաններում ենթամշակութային որոշակի արեալներ սահմանազատելու մոտեցումներում տեսանելի են կոնցեպտուալ երկու մոտեցումներ: Մի կողմից՝ ենթամշակութային արեալների տարանջատման համար ելակետ են Կովկասի կամ Անդրկովկասի (նաև Հարավային Կովկաս) մշակութային ընդհանրության՝ կովկասյան ունիվերսալիզմի չափանիշները, մյուս կողմից՝ մեկնակետ են քաղաքական ներկայիս իրողությունների սահմանները[7]:

1930-40 ական թթ. Այսրկովկասի սահմաններում մշակութային առանձնահատկություններով տարանջատվող որոշակի շրջաններ էին առանձնացնում Ա. Իեսսենը և Բ. Կուֆտինը[8]: Ենթաշրջաններ առանձնացնելու համար հիմնականում չափանիշ էին մետաղական գտածոների (առավելապես զենք) ձևաբանական առանձնահատկությունները, որոնք կապվում էին առանձին մետաղագործական կենտրոնների հետ: Այս բաժանումները վերջնական տեսքով սահմանվեցին և արժևորվեցին Բ. Պիոտրովսկու կողմից[9]: Անդրկովկասում առանձնացվում էին բրոնզե իրերի որոշակի ձևերով բնութագրվող կոնկրետ շրջաններ՝ 1. արևմտյան Վրաստանը, 2. կենտրոնական և արևելյան Վրաստանը, 3. կենտրոնական Անդրկովկասը (Հայաստան), 4. արևմտյան Ադրբեջանը, 5. Կուրի և Արաքսի միջագետքը (Մուղան): Մի փոքր առանձնացված էին դիտարկվում Թալիշի և Զանգեզուրի շրջանները[10]: Անդրկովկասի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան հուշարձանների քարտեզագրման հետագա փորձերը (հիմք ունենալով վերոհիշյալ ստորաբաժանումը) միտում ունեին տարածաշրջանում առանձնացնելու մշակութային որոշակի արեալներ, օգտագործելով հատկանիշների և գտածոների առավել ընդգրկուն

[7] Древнейшие государства Кавказа и Средней Азии, Археология СССР, Москва, 1985, с. 8-48.
[8] *А.А. Иессен,* К вопросу о древнейшей металлургии меди на Кавказе, Известия Государственной Академии Истории Материальной Культуры, 120, Москва-Ленинград, 1935, с. 8-22. *Б.А. Куфтин,* Материалы к археологии Колхиды, Тбилиси, 1949. Т. I.
[9] *Б.Б. Пиотровский,* Археология Закавказья, Ленинград,1949, с. 54-55.
[10] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 54.

ցանկ: Ներկայումս ռուսալեզու գրականության մեջ ընդունված են այն տեսակետները, որոնց համաձայն առանձնանում են «կոլխիդյան», «Կենտրոնական անդրկովկասյան» (հարավային և արևելյան Վրաստան, Հայաստան), «Արևելյան անդրկովկասյան» և «Թալիշյան» մշակույթները[11]:

Հ. Մարտիրոսյանն անդրադառնալով Հայաստանի վաղ երկաթի դարաշրջանի հնագիտական հուշարձանների պարբերացման հարցերին, դրանք դիտարկեց, որպես մշակութային մեկ ընդհանրություն[12]: Հայաստանի տարբեր շրջաններում կատարված պեղումները (Շիրակ, Հյուսիս-արևելյան Հայաստան, Տաշիր-Ձորագետ, Սևանի ավազան, Սյունիք, Արագածոտն և այլն) մեկ անգամ ևս եկան հաստատելու, որ Հայաստանի ողջ տարածքով մեկ, վաղ երկաթի դարաշրջանում տարածված էր նույն մշակույթը: Արևմտյան Հայաստանի տարածքում կատարված վերջին տասնամյակների պեղումները ցույց են տալիս, որ այս մշակույթին բնորոշ հուշարձանները սփռված են ողջ լեռնաշխարհով[13]:

Ժամանակակից հնագիտական ուսումնասիրություններում Հայաստանի տարածքի մինչուրարտական (վաղ երկաթի դարաշրջանի) հուշարձանները, որպես կանոն, խմբավորվում են մշակութային մեկ ընդհանրության շրջանակներում («Հայաստանի վաղ երկաթեդարյան մշակույթ», «էթիունյան մշակույթ», «Լճաշեն-մեծամորյան մշակույթ») և թվագրվում են վաղ երկաթի համար ներկայումս ընդունված ժամանակագրության ընդհանուր սահմաններում, այն է՝ մ.թ.ա. XII/XI-IX/VIII դդ.[14]: Ուրարտական մշակույթին բնորոշ դրսևորումներով համալիրներն արդեն վերագրվում են երկաթի լայն տարածման փուլին:

Հայկական լեռնաշխարհի «վաղ երկաթեդարյան մշակույթի» խոշորագույն կենտրոններից մեկն էլ քարտեզագրվում է Արարատյան դաշտի սահմաններում: Ուսումնասիրությունները փաստում են, որ Վանի տիրակալների հիշատակած Ազա երկիրը գործնականում ընդգրկում է Արարատյան դաշտը[15]: Այսօր կարող ենք ասել, որ Արա-

[11] *М. Н. Погребова,* Иран и Закавказье в раннем железном веке, Москва, 1977, с. 22-32, *К.Н. Пицхелаури,* Новые аспекты хронологии археологических памятников центральной части Южного Кавказа, Тбилиси, 1979.
[12] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы ... с.132-160.
[13] *V. Sevin,* The Excavations at the Van Castle Mound ... p. 221-228.
[14] *Պ. Սվետիսյան, Ռ. Բաղալյան, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան,* Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ, ՀՀ 1993-95 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկ. թեզիսներ, Երևան, 1996, էջ 8-10:
[15] *Н.В. Арутюнян,* Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966, с. 80-97, *նույնի՝* Биайнили (Урарту), Ереван 1970, с. 420-427, *նույնի՝* Топонимика Урарту. Ереван, 1985, с. 13-14, *նույնի՝* Корпус урартских клинообразных надписей (КУКН), Ереван 2001, с. 499-500.

ռատյան դաշտում պեղված Կարմիր բլուրի նախաուրարտական, Դվինի, Մեծամորի «հրդեհված շերտերի» և այդ շերտերին բնորոշ նյութերով դամբարանների (Կարմիր բլուր, Մուխանաթ թափա, Կարմիր բերդ, Մեծամոր, Օշական, Սասունիկ, Շամիրամ, Այգեշատ և այլն) տվյալներն անվերապահորեն վկայում են, որ, մինչև ուրարտական արշավանքները, Ազա երկիրը ծաղկուն քաղաքներ, բարգավաճ տնտեսություն և հոծ բնակչություն ունեցող երկրամաս էր: Ներկայումս Արարատյան դաշտի սահմաններում հայտնի վաղ երկաթեդարյան շերտերով «քաղաքների», բերդշենների, բնակատեղիների քանակն անցնում է երկու տասնյակից (Մեծամոր, Դվին, Կարմիր բլուր, Ծիծեռնակաբերդ, Ախթամիր, Կարմիր բերդ, Այգևան, Աշտարակի բերդշեն, ինչպես նաև Արագածոտն, Ապագա, Արագած, Աղավնատուն, Ծաղկալանջ և մի շարք այլ գյուղերի հարևանությամբ գտնվող հնավայրերը): Հատկանշական է, որ Հայաստանի տարածքի վաղ երկաթի դարաշրջանի քաղաքների մասին մեր պատկերացումները հիմնականում խարսխված են Ազա երկրի «քաղաքներից» ձեռք բերված տվյալների վրա: Սրանց մեջ առանձնանում է Մեծամորը: Այստեղ կատարված լայնածավալ պեղումները ներկայումս թույլ են տալիս վերականգնելու տարածաշրջանի քաղաքային կենտրոնների քիչ թե շատ մանրամասն նկարագիրը[16]: Բազմաֆունկցիոնալ արտադրական համալիրների բարդ ցանցը, արհեստանոցների ծավալները, մետաղագործության, խեցեգործության հետ կապված գտածոները ցույց են տալիս, որ Մեծամորը ռեգիոնալ նշանակության տնտեսական կենտրոն է եղել: Ավելին, բացված պալատական և տաճարական համալիրները մատնանշում են կառավարման, վարչարարական, պաշտամունքային գործառույթներն իրականացնող ձևավորված համակարգի, սոցիալական և հասարակական շերտավորման փաստը: Կասկածից վեր է, որ պարսպապատ միջնաբերդի սահմաններում (բուն «քաղաքային թաղամասերից» մեկուսացված) պալատական, տնտեսական և տաճարական համալիրները պետական վաղ կազմավորումների համար բնորոշ հատկանիշներով ներկայացված, քաղաքային կենտրոնի բացահայտ վկայությունն են, ինչը մեկ անգամ չէ, որ հիմնավորվել է Է. Խանզադյանի կողմից[17]:

Անհամեմատ փոքր ծավալներով պեղված Կարմիր բլուրի վաղ երկաթեդարյան շերտերի տվյալները նույնպես վկայում են, որ գործ ունենք Ազա երկրի քաղաքային խոշոր կենտրոնի հետ: Մինչուրարտական շրջանի, 40-50 հա տարածություն զբաղեցնող՝ հոծ կառուցապատված քաղաքային տեղամասը վկայում է երբեմնի բարգավաճ քաղաքի գոյության մասին[18]:

Տարածաշրջանի քաղաքային մշակույթի, հասարակական և տնտեսական զարգացումների ներկայիս պատկերացումները խարսխված են նաև Դվինի պեղումների արդյունքների վրա: Իր նշանակությամբ Դվինը բացառիկ է Արարատյան դաշտի հուշարձանների մեջ: Պեղումներից պարզվեց, որ բլուրը բազմաշերտ հուշարձանախումբ է: Ստորին հորիզոնը՝ 14 մ խորությամբ, սկսվում է վաղ բրոնզի դարի մշակույթով, որի վրա նստած են վաղ երկաթե դարի և ապա հելլենիստական ու միջնադարի մշակութային հզոր շերտերը[19]: Մեր խնդրի հետ առնչվող վաղ երկաթե դարի մշակութային շերտի հզորությունը կազմում է երկու մետր և աչքի է ընկնում հիմնականում երեք բնութագրիչ առանձնահատկություններով: Դրանք են. հզոր հրդեհի այրված համատարած հետքերը, մոնումենտալ քարաշեն ճարտարապետության առկայությունը, գտածոների ոչ սովորական հավաքածուն, որոնց շարքում առանձնանում են կա՛մ պաշտամունքային, կա՛մ արտադրական նշանակությամբ հնագիտական իրեր[20]: Առանց վերապահումների կարելի է ասել, որ Դվինում պեղված վաղ երկաթի դարի շերտերը ներկայացված են պաշտամունքային կառույցների և արհեստանոցների խիստ ծավալուն համակարգով: Ինչպես Արարատյան դաշտի մի շարք խոշոր բնակավայրեր, այնպես էլ Դվինը կործանվել է մ.թ.ա. VIII դարում՝ ուրարտացիների հզոր հարձակումից: Դրանից հետո երկար ժամանակ այն չի բնակեցվել:[21]: Ամենայն հավանականությամբ Դվինը Արարատյան դաշտում առաջինն էր, որ ուրարտական էքսպանսիայի զոհը դարձավ:

Մեծ քանակով ուրարտական նետասլաքների առկայությունը հուշում է, որ ուրարտական արշավանքների զոհ են դարձել նաև Շամիրամի ամրոցը և քաղաքատեղին: Շամիրամի հուշարձանախումբը տեղադրված է Արագածոտնի Արուճ և Շամիրամ գյուղերի տարածքում: Այս բազմաշերտ հնագիտական համալիրի ուսումնասիրությամբ զբաղվել են Ե. Լալայանը, Թ. Թորամանյանը, Խ. Սամուելյանը, Գ. Արեշյանը և ուրիշներ[22]: Տևական ընդմիջումից հետո վաղ երկա-

[16] *Է.Վ. Խանզադյան*... նշվ. աշխ., էջ 64-141:
[17] *Է. Խանզադյան,* Մեծամորը Էթիունիի Ազա (Վազա) երկրի արքունի քաղաք, Հայաստանի հնագույն մշակույթը, հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 20-21:

[18] *В. Сорокин,* Следы древнейшего поселения у Кармир-Блура, Советская Археология, 2, 1958, Москва, с. 150-152, *А. Мартиросян,* Город Теушебаини, Ереван 1961, с. 63, *Ս.Ա. Եսայան,* Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 57:
[19] *К.Х. Кушнарева,* Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 5.
[20] *К.Х. Кушнарева,* ук. соч., с. 10.
[21] *К.Х. Кушнарева,* ук. соч., с. 108, рис 32 /2/, Таб. XVIII.
[22] *Գ.Ե. Արեշյան,* Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, զեկուցումների թեզիսներ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1985թ., էջ 13-15:

թեդարյան քաղաքատեղիի տարածքում առաջացել է անտիկ շրջանի ոչ քաղաքային տիպի ամրոց-բնակավայր[23]: Շամիրամի շերտագրական դիտարկումներից պարզվում է, որ հնավայրի զբաղեցրած հրվանդանի տարածքը բնակեցվել է դեռևս միջին բրոնզի դարաշրջանում: Բուն քաղաքատեղիի տարածքում կատարված պեղումները ցույց են տալիս, որ այն ներկայացված է 3 հիմնական շերտագրական հորիզոններով. ա/ ուշ բրոնզի և վաղ երկաթի համատեղ շերտ /130-180 սմ/, բ/ վաղ երկաթի շերտ, որը մեծ չափով խախտվել է անտիկ ժամանակաշրջանում /50-130 սմ/ և գ/ անտիկ ժամանակաշրջանի շերտ /10-50 սմ/[24]: Ներկայացված վաղ երկաթեդարյան հուշարձանների համապատկերը լրացնող տվյալներ ունենք նաև Արարատյան դաշտի անմիջական հարևանությամբ գտնվող էլառի ամրոց-բնակատեղիից: Արգիշտի I-ի թողած արձանագրություններից մեկում խոսվում է էթիունի երկիրը Խալդ աստծո զենքին հպատակեցնելու, ինչպես նաև Ուլուանի երկիրը և Դարանի քաղաքը նվաճելու մասին: Ակնհայտ է, որ էթիունիի մեջ մտնող Ուլուանին, ինչպես և Ազան կոնֆեդերացիայի անդամ տերություններ էին: Ուլուանի երկրի կենտրոններից էր Դարանին, որը, մինչ ուրարտացիների նվաճումը, հզոր քաղաք էր: Ամրոցն իր միջնաբերդով ընկած է Աբովյան քաղաքի տարածքում: Այն զբաղեցնում է 10 հա մակերես, շրջակայքի նկատմամբ նրա բարձրությունը 40-50 մ է: Բլուրը չորս կողմից շրջագծված է պաշտպանական կառույցներով՝ հավանաբար տարբեր ժամանակներում շինված: Մինչ Արգիշտիի արշավանքը բլրի հարավային լանջի արհեստական, լայնադիր դարավանդները նույնպես բնակելի են եղել և օղակվել են կիկլոպյան պարիսպներով, որի կենտրոնում տեղադրված է քաղաքի միջնաբերդը[25]: Աբովյան քաղաքի շինարարության ժամանակ հայտնաբերվել են ճարտարապետական համալիրներ, նկուղային հարկեր՝ գինու մառաններով, հնագիտական տարատեսակ իրեր, խեցեղենի բեկորներ՝ բնորոշ մ.թ.ա. II հազ. վերջի, I հազ. սկզբի մշակույթին[26]: Պեղված նյութը համահունչ է Ազա երկրի քաղաքները ներկայացնող հուշարձանների տվյալներին և տնտեսական, մշակութային զարգացումների նույն պատկերն է տալիս:

Վերջին տասնամյակում Արարատյան դաշտում և կից տարածքներում վաղ երաթեդարյան հնավայրերի նոր պեղումները արժեքավոր տվյալներ հրապարակ բերեցին, որոնք տարածաշրջանի պատմահնագիտական համայնապատկերը լրացնելու էական հնարավորություններ են ընձեռում: Նորահայտ հնագիտական սկզբնաղբյուրների մի զգալի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, ուստի և ներկայացվում է մանրամասն նկարագրությամբ:

Այս հնավայրերի թվում կարելի է նշել «Ախթամիր» հուշարձանախումբը, որը գտնվում է Ոսկեվազ գյուղից 2,5 կմ հարավ՝ Քասախ գետի աջ և ձախ ափերին, նախալեռնային և հարթավայրային գոտիների սահմանագծում: Արագածոտնի այս նշանավոր հուշարձանը ունի միջնաբերդ, քաղաքատեղի, դամբարանադաշտ[27]:

Միջնաբերդի հյուսիսարևմտյան որմնահեծի «անատոմիական» կտրվածքը պարզեց, որ ամրոցը հիմնվել է ուշ բրոնզ-վաղ երկաթի դարում և այնուհետև 4-6 անգամ վերանորոգվել՝ «երեսպատվելով» նոր կառուցված հենապատերով: Հզոր որմնահեծով ամրացված վերջին պարիսպը հավանաբար կառուցվել է Վանի թագավորության շրջանում[28]:

«Աղթամիրի» վաղ երկաթեդարյան հասարակության մասին հետաքրքիր տվյալներ են տվել այդ հնավայրի մաս կազմող և ներկայումս Այգեշատ գյուղի հյուսիսարևմտյան տարածքներն ընդգրկող դամբանադաշտի պեղումները[29]:

Դամբանադաշտը կազմված է մի քանի դամբանախմբերից, որոնք տարածվում են Քասախ գետի ձախ ափի երկայնքով՝ միմյանցից անջատվելով ինչպես բնական, այնպես էլ կիկլոպյան շարվածքով ընդգծված պատերով, աշտարակներով: Պեղման համար ընտրված դամբարանների տարածքը պատված է միմյանց կիպ, մեծ խտությամբ կազմված շուրջ 200 կրոմլեխաշարերից, որոնք աչքի են ընկնում մարդակերպ տարբեր չափի արձանների, սյուն-կուռքերի, ֆալլոսների առկայությամբ: 1990-92 թվականներին դամբանադաշտում հետազոտվել են վաղ երկաթի դարի շուրջ երեք տասնյակ համալիրներ: Ստորև ներկայացվում են պեղված համալիրներից մի քանիսը:

Դամբարան N 1. Արտաքուստ միաշար, միջին չափի անմշակ բազալտե քարերով օղակված կրոմլեխ է, տրամագիծը՝ 2,8 մ: Հողաթումբը չկա: Մինչև ծածկասալերը լցված էր 0,3 մ հաստությամբ քա-

---

[23] Նույն տեղում:

[24] *Հ.Ե. Սիմոնյան,* Շամիրամ քաղաքատեղիի 1-ին շերտագրական տեղամասի 1983 թ. պեղումների արդյունքները, զեկուցումների թեզիսներ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1985թ., էջ 15-17:

[25] *Է.Վ. Խանզադյան,* նշվ. աշխ., էջ 9:

[26] *Է.Վ. Խանզադյան,* նշվ. աշխ., էջ 10:

[27] *Հ. Սիմոնյան, Հ. Գաշ, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ս. Հմայակյան, Ի. Կարապետյան, Պ. Ավետիսյան,* Հայ-բելգիական համատեղ պեղումներ Ոսկեվազում, զեկուցումների թեզիսներ, ՀՀ-ում 1993-1995 թթ հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան 1996 թ., էջ 68-70:

[28] Նույն տեղում:

[29] *Հ.Գ. Ավետիսյան, Լ.Ն. Բիյագով,* Այգեշատի դամբանադաշտի պեղումները, զեկուցումների թեզիսներ, Հայաստանում 1989-90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան 1991 թ., էջ 35-36:

բահողային լիցքով: Հատակագծում ուղղանկյուն՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը /0,7 մ խորությամբ/ ծածկված էր կարմիր, երեք ոչ մեծ տուֆ սալերով: Հայտնաբերվեց երկու սափոր, մեկ կճուճ, մարդու ատամ, բրոնզից 12 սմ երկարությամբ ասեղ, սարդիոնից հինգ՝ կտրվածքում կլոր ուլունքներ: Դամբանախցի հատակը, ինչպես նաև ուղեկցող գույքը պատված էր կավով (Աղ. 1):

Դամբարան N 2. Արտաքուստ 3,5 մ տրամագծով, կոպիտ բազալտե քարերով շարված կրոմլեխ է: Լիցքի հզորությունը՝ 0,2 մ, որի մեջ հայտնաբերվեցին սև խեցու բեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե երեք, ոչ մեծ չափի ծածկասալերով:

Արևելյան կրոմլեխապատի մոտ՝ լիցքի միջից, հայտնաբերվեց գլխով դեպի արևելք ուղղված կարմիր տուֆից կնոջ արձան: Դամբանախցի հարավարևելյան հատվածում հայտնաբերվեցին հանգուցյալի կավածեփ ոսկորներից մի քանիսը՝ ազդրոսկր, կողոսկր: Կմախքի դիրքը հնարավոր չէր պարզել: Թաղումը զուրկ էր ուղեկցող գույքից:

Դամբարան N 4. Արտաքուստ միաշար բազալտե խոշոր քարերով շարված, 3,8 մ տրամագծով կրոմլեխ է: 0,2 մ հզորությամբ քարահողային լիցքի միջից հայտնաբերվեցին սև խեցու բեկորներ: Հատակագծում ուղղանկյուն արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված է մեկ կարմիր տուֆի սալով: Հանգուցյալը 45-55 տարեկան տղամարդ էր[30]: Խիստ կծկված կմախքը (աջ կողքի վրա պառկած, ձախ ձեռքը կրծքին, գլխով դեպի արևելք, դեմքով վեր) պատված էր կավալուծությամբ: Վերջինս գոտկատեղին կրում էր բրոնզե գոտի: Հայտնաբերվեցին նաև երկու սև անոթներ:

Դամբարան N 5. Արտաքուստ 0,15 մ հզորությամբ լիցքով, խոշոր բազալտե քարերով շարված, 3,7 մ տրամագծով կրոմլեխաշար է: Դամբանախուցը ծածկված է կարմիր տուֆ ծածկասալերով: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախցի թաղումը աչքի է ընկնում համեմատաբար հարուստ նյութով: Հանգուցյալը 35-55 տարեկան կին էր: Կմախքը խիստ կծկված վիճակում էր՝ ձախ կողքի պառկած, գլխով դեպի արևելք: Աջ ձեռքը դրված էր «որովայնին», ձախը՝ ուսին: Գանգը բացակայում էր: Աջ ձեռքի դաստակին հայտնաբերվեց բրոնզից ապարանջան: Վզի վրա սարդիոնե ուլունքներն էին: Կմախքը ամբողջովին կավալուծությամբ էր պատած: Դամբանախցի արևելյան գլխապատի մոտ հայտնաբերվեցին 5 սև խեցանոթներ: Հանգուցյալի ձախ ձեռքին կար փոքրիկ թաս (Աղ. 2):

[30] Մարդաբանական նյութի բնորոշումը կատարվել է Ռ.Ա. Մկրտչյանի կողմից, որին շնորհակալություն ենք հայտնում:

Դամբարան N 6. Օղակված է փոքր չափերի բազալտե քարերով շարված 1,7 մ տրամագծով կրոմլեխաշարով: Լիցքի հզորությունը կազմում է 0,25 մ: Դամբանախուցը ծածկված է կրոմլեխի շրջագիծն ընդգրկող սև տուֆ քարով: Հիմահողային, արևելք-արևմուտք կողմնորոշումով, հատակագծում ուղղանկյուն դամբանախցից հայտնաբերվեցին սև փայլեցրած խեցեբեկորներ: Հատակը պատած էր 7 սմ կավաշերտով:

Դամբարան N 7. Օղակված է բազալտե ոչ մեծ չափի քարերով շարված, 3 մ տրամագծով կրոմլեխաշարով: 0,2 մ հզորությամբ լիցքը քարահողային է: Խուցը ծածկված է բազալտե ծածկասալերով: Կրոմլեխաշարի արևելյան կողմում հայտնաբերվեց արձանի գլուխ, որն ունի կլոր իրան, ընդգծված քիթ, հարթ կտրված ճակատամաս: Դամբանախուցը հիմնահողային է, հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Ոսկորների վատ պահպանվածության պատճառով հանգուցյալի սեռն ու տարիքը չվավերացվեց: Հավանաբար թաղվածը տղամարդ է, որի միայն ոտքի ոսկորների մի մասը հաստատագրվեց: Դամբարանից գտնվեց կենտրոնական ողով երկաթե դանակի բեկոր, ինչպես նաև նիզակի պոչուկի մաս:

Դամբարան N 8. Օղակված է մեծ բազալտե քարերով շարված, 5,2 – 4,1մ չափերի տրամագծով կրոմլեխով: Լիցքը քարահողային է՝ կազմված 0,35 մ հզորությամբ շերտից: Դամբարանախուցը ծածկող սալերը երկու՝ սև տուֆե կիսակոպատաշ քարեր են: Խուցը հատակագծում ուղղանկյուն է, հիմնահողային, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Խցի հատակը պատված էր կավով: Կենտրոնում տեղադրված էին երկու սև փայլեցրած անոթներ: Խցի արևելյան հատվածում թաղվածը 20-25 տարեկան կին էր: Կմախքը խիստ կծկված էր, ձախ կողքի վրա պառկած, գլխով ուղղված արևմուտք, դեմքով՝ հարավ: Վերին վերջույթները ծալված էին, ձեռքերը ուղղված դեպի դեմքը: Հայտնաբերվեց մեծ քանակությամբ ուղեկցող նյութ: Թաղվածի ձեռքին կային 6 բրոնզե ապարանջաններ (մեկին՝ 4, մյուսին՝ 2): Վզի վրա բացվեցին չորս բրոնզե բարակ և հաստ լարերից կլորացող ծայրերով վզնոցներ: Մեծ քանակի խխունջից, սարդիոնից և շաղախից, տարբեր տիպի և ձևերի ուլունքները զարդարում էին կրծքի մասը: Գլխի վրա կար բրոնզե շիգդ: Ձախ քունքի մոտ դրված էին երկու երկաթե դանակներ և մեկ թի (Աղ. 3, նկ. 1-14):

Դամբարան N 9. Կոպիտ, փոքր չափի բազալտե քարերով շարված 3,3 մ տրամագծով կրոմլեխաշար է: Լիցքը քարահողային է, 0,15 մ հզորությամբ, իսկ խուցը ծածկված էր տուֆե սալով: Խուցը հատակագծում ուղղանկյուն է՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Խցի կենտրոնական մասում հայտնաբերվեց սև փայլեցրած մեծ քոթոն: Վերջինս, ինչպես նաև ամբողջ խուցը, լցված էր կավե շերտով: Խցի

հատակը եզրապատված էր մանր քարերով: Հանգուցյալի կմախքի ոսկորների դիրքն անկանոն էր: Թաղվածը հավանաբար տղամարդ է:

Դամբարան N 10. Օղակված է կոպիտ բազալտե քարերով շարված, 3 մ տրամագծով կրոմլեխաշարով: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեց սև փայլեցրած ակոսազարդ խեցու բեկոր: Դամբանախուցը, որ ծածկված էր երկու տուֆ սալերով, հիմնահողային է, արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Հայտնաբերվեցին մեկ փոքր անոթ և խեցեբեկորներ: Կմախք չի հայտնաբերվել: Դամբանախցի հատակը կավածեփ էր:

Դամբարան N 11. Օղակված է մեծ բազալտե կոպիտ քարերից, 3,4 – 2,5 մ տրամագծով կրոմլեխաշարով: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեցին սև խեցեբեկորներ: Դամբարանի ծածկասալերը տուֆից են: Խուցը հիմնահողային է, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Խցի միջից հայտնաբերվեցին կոպտատաշ երկու բազալտ քարեր, երկու խեցանոթներ:

Դամբարան N 12. Օղակված է փոքր չափի գետաքարերով շարված, 1,7 մ տրամագծով կրոմլեխաշարով: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեցին սևափայլ, եղևնանախշով, գծիկներով զարդարված մեծ քանակությամբ խեցեբեկորներ: Ծածկասալ չարձանագրվեց: Դամբանախուցը հիմնահողային էր, արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Խցի հատակը պատված էր կավով: Պեղումների ժամանակ հայտնաբերվեց սակավ նյութ (Աղ. 3, նկ. 15-17):

Դամբարան N 13. Օղակված է 3,5 մ տրամագծով, կոպիտ բազալտե քարաբեկորներով շարված կրոմլեխաշարով: Լիցքը կազմված է մանր քարաբեկորներից, որոնք հեռացնելուց հետո բացվեց կարմիր տուֆից ծածկասալը: Լիցքի միջից հայտնաբերվեցին սև փայլեցրած խեցաբեկորներ: Հիմնահողային դամբանախուցը կողմնորոշված է արևելքից արևմուտք: Խցի հատակին՝ արևելյան գլխապատի տակ, տեղադրված էին չորս սև անոթներ: Վերջիններից արևմուտք բացվեց ձեռքի ոսկորների մնացորդ, որի վրա կար բրոնզե ապարանջան: Կմախքից պահպանվել էին միայն ձեռքի ոսկորներ: Բացի բրոնզե ապարանջանից, գտնվեցին նաև երկաթե գամ, ապարանջան, սարդիոնե հուլունքներ: Դամբարանախցի հատակը կավածեփ էր (Աղ. 4):

Դամբարան N 14. Օղակված է կոպիտ, ոչ մեծ բազալտե քարերով շարված, 2,8 մ տրամագծով կրոմլեխով: 0,3 մ հզորությամբ լիցքը կազմված է մանր քարերից: Հայտնաբերվեցին բազալտե աղորիքի կտոր, սև խեցանոթների բեկորներ: Կրոմլեխաշարի արևմտյան պատի մոտ գտնվեց դեմքի վրա ընկած, գլխով դեպի արևելք ուղղված կնոջ տուֆե արձանիկ: Այն ունի ընդգծված դիմային մանրամասներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե մեծ սալաքարերով: Գրանցվեց 30-45 տարեկան կնոջ թաղում: Կմախքից պահպանվել էին միայն վերջույթների մի քանի ոսկորներ: Խցի հյուսիսարևելյան անկյունում գտնվեցին սև սափոր և կափարիչով փոքրիկ անոթ: Աճյունը և գույքը, ինչպես նաև ամբողջ դամբանախցի հատակը, պատած էր կավաշաղախով:

Դամբարան N 15. Օղակված է կոպիտ բազալտե քարերով շարված, 2,3 մ տրամագծով կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,3 մ հզորությամբ: Խցի ծածկասալերը չկան: Դամբանախուցը ձվածիր է, համապատասխան կրոմլեխի տրամագծին: Կմախք և ուղեկցող նյութ չկար, թաղում չի կատարվել (կենոտաֆ):

Դամբարան N 16. Օղակված է խոշոր բազալտե կոպիտ քարերով շարված, 5 մ տրամագծով կրոմլեխաշարով: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե երեք խոշոր սալաքարերով: Հանգուցյալն աջ կողքի վրա պառկած, խիստ կծկված վիճակում, գլխով արևելք, դեմքով հյուսիս ուղղված 45-65 տարեկան տղամարդ էր: Դամբարանախցի արևելյան գլխապատի մոտ՝ կավածեփ հարթակի վրա, գտնվեցին բրոնզե փոքր նիզակ, երկու սև անոթներ: Մեկ այլ սև կճուճ հաստատագրվեց դամբանախցի հարավային պատին կից: Աճյունը, ուղեկցող գույքը, ամբողջ հատակը պատած էր կավաշաղախով:

Դամբարան N 17. Օղակված է մեծ և փոքր բազալտե քարերով շարված, երկշար՝ 4,3 և 1,8 մ տրամագծերով, կրոմլեխաշարերով: Լիցքը քարահողային է, 0,3 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին մի քանի սև խեցաբեկորներ: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե մեծ սալաքարերով: Դամբարանում թաղում չի կատարվել (կենոտաֆ): Դամբարանի խցի հատակը պատած էր կավաշաղախով:

Դամբարան N 18. Օղակված է 4,2-3,5 մ տրամագծով, բազալտե անմշակ քարերով շարված, (հյուսիսային մասում կրոմլեխի քարերը բացակայում էին) կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,25 մ հզորությամբ: Դամբանախուցը հիմնահողային է, արևելք-արևմուտք կողմնորոշումով, որը ծածկված էր երկու խոշոր տուֆե սալաքարերով: Հայտնաբերվեց կոտրտված երկու խեցանոթ: Դամբանախցի հատակը պատված էր կավաշաղախով:

Դամբարան N 19. Օղակված է 4,7 մ տրամագծով, միաշար կիսակոպտատաշ տուֆ քարից կրոմլեխով: Վերջինիս արևելյան կողմում շարված են 5 բազալտե քարեր, որոնք հենապատի նշանակություն են ունեցել: Լիցքը քարահողային է, 0,3 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցաբեկորներ: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե երկու մեծ սալաքարերով: Դամբանախցից հայտնաբերվեցին երեք խեցանոթներ: Խցի հատակը պատած էր կավաշաղախով (Աղ. 5, նկ. 4-6):

Դամբարան N 20. Օղակված է 2,5 մ տրամագծով, բազալտե քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,3 մ հզորությամբ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե ծածկասալով: Խցից հայտնաբերվեցին երկու անոթ, մեկ բրոնզե ապարանջան, սարդիոնե հուլունքներ: Կմախքի ոսկորները վատ էին պահպանված: Դամբանախցի հատակը կավածեփ էր:

Դամբարան N 21. Օղակված է 3,3-2,8 մ տրամագծով, բազալտե մեծ և փոքր քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,2 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցաբեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երկու տուֆե սալաքարով: Խցի հյուսիսային կողմում հայտնաբերվեցին իրար վրա դրված երկու կավանոթներ: Արևմտյան պատին կից դրված էր միականթ թաս: Կմախքը բացակայում էր: Հատակը կավածեփ էր:

Դամբարան N 22. Օղակված է 4,1 մ տրամագծով, խոշոր կիսակոպտատաշ տուֆ քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է: Հիմնահողային, արևելք-արևմուտք ուղղվածությամբ, հատակագծում ուղղանկյուն թաղման խուցը ծածկված էր տուֆ սալաքարերով: Դամբարանում թաղում չի կատարվել (կենոտաֆ): Խցի հատակը կավով էր պատած:

Դամբարան N 23. Օղակված է 2,8-2,25 մ տրամագծով, բազալտե միջին չափի քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,35 մ հզորությամբ: Լիցքի մեջ դրված տուֆե արձանից (գլխով՝ արևելք, դեմքով՝ վեր) բացի, գտնվեցին նաև հյուսիս-հարավ, արևմուտք-արևելք ուղղվածությամբ դրված երկու տուֆե սյուն-կուռքեր: Հատակագծում ուղղանկյուն, հյուսիս-հարավ կողմնորոշումով դամբանախուցը հիմնահողային է: Վերջինս ծածկված էր երկու ոչ մեծ ծածկասալերով: Գրանցվել է 20-25 տարեկան կնոջ թաղում: Կմախքը խիստ կծկված էր, ձախ կողքի պառկած, գլխով՝ հյուսիս: Աջ դաստակին հայտնաբերվեց ապարանջան: Դամբանախցի հարավային պատի տակ հայտնաբերվեցին 2 անոթներ: Դամբանախուցը կավով էր պատած (Աղ. 5, նկ. 7-8):

Դամբարան N 24. Օղակված է 2,2 մ տրամագծով, բազալտե միջին չափի քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,2 մ հզորությամբ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երեք տուֆե սալաքարերով: Կմախքը չկար: Դամբանախցի հյուսիսային և արևելյան մասերում գտնվեցին երեք սև անոթներ: Խցի հատակը կավածեփ էր (Աղ. 5, նկ. 1-3):

Դամբարան N 25. Օղակված է 3 մ տրամագծով, բազալտե քարերով շարված կրոմլեխով: Լիցքի հզորությունը կազմում է 0,25 մ:

Այն քարահողային է: Գտնվել են սև գույնի խեցեբեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երկու սալաքարով: Գրանցվեց ձախ կողքի վրա խիստ կծկված դիրքով կնոջ թաղում: Հայտնաբերվեցին երեք խեցանոթներ, բրոնզե ապարանջան, սարդիոնե հուլունքներ: Դամբանախցի հատակը կավով էր պատած:

Դամբարան N 26. Օղակված է 2,6 մ տրամագծով, բազալտե քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է, 0,25 մ հզորությամբ: Հիմնահողային դամբանախուցը հատակագծում ուղղանկյուն է, արևելք-արևմուտք (շեղումով) կողմնորոշումով: Ծածկված էր տուֆե և բազալտե սալերով: Գրանցվել է 17-22 տարեկան, ձախ կողքի վրա պառկած կնոջ թաղում: Հայտնաբերվել են երկու խեցանոթ, երկու վզնոց, սնկաձև ականջօղեր, սարդիոնե և մածուկից հուլունքներ: Խցի հատակը պատած էր կավաշաղախով:

Դամբարան N 33. Օղակված է 3,5 մ տրամագծով, բազալտե խոշոր քարերով շարված կրոմլեխով: Լիցքը քարահողային է՝ 0,25 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցաբեկորներ: Հատակագծում արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երեք սալաքարերով: Ծածկասալերի հեռացումից հետո դամբանախցի արևելյան կողմում բացվեց խեցանոթ, որի մեջ կար երեք բրոնզե ապարանջան: Հայտնաբերվեցին սարդիոնե հուլունքներ: Գրանցված թաղումը վատ էր պահպանված:

Դամբարան N 34 (Նկ. 1). Հարավից և արևմուտքից սրան կից կառուցված են ևս երկու դամբարաններ, և այս երեքը առանձնանում են մյուսներից, որպես մեկ ամբողջություն: Դամբարանը շրջագիծ պատվել է կրոմլեխի պատաշարով, այնուհետև հարթ կտրված, ուղղանկյունաձև քարերով արվել է կրոմլեխի երկրորդ պատաշարը: Ծածկված էր 3 սալաքարերով (հյուսիսարևելյան երկու ծածկասալերը դրված էին իրար վրա): Ծածկասալերի և կրոմլեխի առաջին պատաշարի միջակայքում դրված էին միջին մեծության քարաբեկորներ, չափերը՝ կրոմլեխի արտաքին շարի տրամագիծը արևելք-արևմուտք առանցքով 5,25 մ է, հյուսիս-հարավ լայնական առանցքով՝ 4,40 մ: Կրոմլեխի II շարի տրամագիծը՝ արևելք-արևմուտք առանցքով 3,8 մ է, հյուսիս-հարավ առանցքով՝ 3,5 մ: Արտաքին լիցքի բարձրությունը՝ 0,30-0,40 մ:

Հիմնահողային՝ հատակագծում ուղղանկյուն դամբանախուցն ուղղված է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Դամբանախցի լիցքի ուղղահայաց կտրվածքի ուշադիր զննումից հետո պարզ դարձավ, որ հատակին կատարվել է թաղում, ապա այն պատվել զտված կավահողի շերտով (այն վերին մասում բավականին ամուր էր), այնուհետև դրվել են կավանոթները և ծածկվել քարախառն փափուկ

կավահողով, ու այդ շերտը պատվել է միջին մեծության քարերով: Սրանց վրա նույնպես լցվել է քարախառն փափուկ կավահող, և նոր խուցը ծածկվել է սալաքարերով:

Թաղումը կատարվել է անմիջապես հատակին: Հանգուցյալը 45-65 տարեկան տղամարդ էր: Գանգի ոսկորի մի քանի կտոր գտնվեց խցի արևելյան պատի տակ, հատակից բավականին բարձր: Ուսոսկրի մի բեկոր դուրս եկավ հարավային պատի կենտրոնական մասին կից տարածքից: Հատակին in situ բացվեցին աջ ոտքի ազդրոսկրը և սրունքոսկրը՝ սուր անկյան տակ ծալված, ձախ ձեռքի բազկի և նախաբազկի ոսկորները: In situ պահպանված ոսկորների դիրքը (եթե ենթադրենք, որ կմախքի լրակազմը պարզապես քայքայվել է, և պահպանվել են միայն նշվածները) հուշում է, որ այս դեպքում աճյունը պետք է դրված լիներ խցի լայնքով, գլխով հարավարևելք, աջ կողքի վրա պառկեցրած, կծկված վիճակում: Բայց քանի որ գանգի և ուսոսկրի բեկորները չեն համապատասխանում այդ դիրքին, և բացի այդ, կմախքի մնացած ոսկորներից ոչ մի հետք չի գրանցվել, ենթադրում ենք, որ աճյունի ոսկորների լրակազմը ամբողջական չէ, և աճյունը թաղվել է ոչ ամբողջովին: Պետք է նշել նաև, որ in situ պահպանված ոսկորների դիրքից երևում է, որ ձախ ձեռքը մեկնված է եղել դեպի ծունկը, իսկ ոտքերը ծալված են եղել W տեսքով:

Ոտքի ոսկորների մոտ հատակին բացվեցին երկաթյա նիզակի կոթառի բեկորներ: Կիսով չափ պահպանված մի կավանոթ (Աղ. 6, նկ. 5, 6) և անոթների բեկորներ դուրս եկան խցի կենտրոնական հատվածից: Դամբանախցի չափերը՝ արևելք-արևմուտք երկայնական առանցքով, 2,3 մ է, հյուսիս-հարավ լայնական առանցքով՝ կենտրոնում 1,6 մ է, բարձրությունը 1,2 մ:

Դամբարան N 35 (Նկ. 2). Անմիջապես կից է N 34 դամբանին: Արտաքինից երևում էին կրոմլեխի պատաշարի քարերը, որոնք հյուսիսային հատվածում միանում էին N 34-ի ուղղահայաց դրված կրոմլեխի պատաշարին: Դամբանը պատված էր ճաքաքարերի լիցքով և մի քանի խոշոր քարերով: Դրանք հեռացնելուց հետո բացվեցին ծածկի երկու սալաքարերը դամբանի հարավարևմտյան հատվածում, ծածկասալի և կրոմլեխի պատաշարի միջակայքում բացվեց տուֆե արձանիկ:

Դամբարանը շրջագծված է երկու շարքով իրար վրա դրված կրոմլեխի պատաշարով: Հնարավոր եղավ պարզել նաև, որ N 35 դամբանը ավելի ուշ է կառուցվել, հաջորդելով N 34-ին: Հատակագծում շրջանաձև դամբանախուցը հիմնահողային է, ուղղված հյուսիսից-հարավ (չափերը՝ կրոմլեխի տրամագիծը արևելք-արևմուտք առանցքով՝ 2,9 մ, հյուսիս-հարավ առանցքով՝ 2,6 մ: Խցի տրամագիծը՝ հյուսիս-հարավ առանցքով՝ 1,6 մ, բարձրությունը՝ 1,05 մ):

Խցի լիցքը քարաշատ, փափուկ կավահողն է, որը շարունակվում էր գրեթե մինչև հատակը: Հատակին, մոտ 0,15 մ հաստությամբ, զտած կավահող է: Գտնվեցին կմախքի ոսկորների մի քանի բեկոր՝ հատակից 0,3-0,4 մ բարձրության վրա, կենտրոնական հատվածում: Խցի արևելյան կողմում՝ պատին կից, դրված էր թերի կավանոթը, որի շուրջ բոլորից դուրս եկան սարդիոնից, շաղախից և 20 զոլավոր խխունջից արված ուլունքներ, երկու կաորի խխունջ և ոսկյա նրբաթիթեղի մի քանի բեկոր: Թաղումն ուղեկցող գույքը դրված էր հատակից 0,20-0,25 մ բարձրության վրա: Դամբանախուցը փորված է խճաքարով հարուստ հողաշերտի մեջ (Աղ. 6, նկ. 1-4, 7, 8):

Դամբարան N 36 (Նկ. 3). Ընկած է N 34-ից 1 մ արևմուտք: Արտաքինից չէր երևում: Մաքրման աշխատանքներն ավարտելուց հետո պարզվեց, որ վերջինս մի փոքր խորացրած փոսորակ է, եզրագծված կրոմլեխի պատաշարով: Փոսորակի մեջ դրված էր քարակոթող, որը ծածկված էր մեկ փոքր սալաքարով: Քարակոթողը կարծես թե անավարտ արձանիկ լիներ, որը հարթ դիմահայաց մասով ուղղված էր հարավ՝ դեպի կլորավուն աշտարակը:

Դամբանի չափերը՝ կրոմլեխի տրամագիծը հյուսիս-հարավ առանցքով՝ 1,9 մ է, արևելքից-արևմուտք՝ 1,8 մ:

Ներկայացվող բոլոր դամբանները պատկանում էր միևնույն տիպին: Դրանք արտաքինից միաշար (բացառությամբ N N 17, 34-ի) կրոմլեխներ են, հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ (N 23-ն ունի հյուսիս-հարավ կողմնորոշում) հիմնահողային, մեկից մինչև երեք սալաքարերով ծածկված դամբարանախցերով: Այս տիպի մեջ առանձնանում են մի խումբ դամբարաններ (N N 15, 22), որոնցում թաղում չի կատարվել (կենոտաֆ):

Պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոները բաժանվում են մի քանի խմբերի՝ զենքեր, զարդեր, խեցեղեն և քարե քանդակ-կուռքեր:

Զենքեր: Համեմատաբար սակավ քանակի այս գտածոները ներկայացված են բրոնզե փոքր նիզակով (N 16), երկաթե դաշույնով (N 8): Բավականին հետաքրքիր է N 4 դամբարանից հայտնաբերված բրոնզե գոտին, որն ունի 8 սմ լայնք, 0,72 մ երկարություն, կլորացող ծայրեր: Գոտին եզրամասում հարդարված է թեք գծերի նախշազարդումով: Կենտրոնական հատվածում նշմարելի է մեկմեկու հատվող գծազարդ: Գոտու ծայրերին և եզրերին ամրակապերի համար անցքեր են արված:

Զարդեր: Ներկայացված են մի քանի տիպի գտածոներով: Այս խմբի մեջ ընդգրկված զարդերից առանձնանում են հարթ և ատամնավոր մակերևույթով, կտրվածքում կլոր, ծվածիր բրոնզե տարբեր չափի, ինչպես նաև օձագլուխ ապարանջանները (N N 13, 8, 23 և

այլն): Հայտնաբերված զարդերից են կտրվածքում կլոր, ծայրերում դեպի դուրս կլորացող բրոնզե վզնոցները, որոնցից երկուսի վրա արված են գծանախշեր (N 8, 26): N 8 դամբարանից հայտնաբերվել է բրոնզե շիգդ: 1-ին դամբարանից հայտնաբերվել է 0,1 մ երկարությամբ բրոնզե ասեղ: Հետաքրքիր է նաև բրոնզե վզնոց շղթայի առանձին մասերի հայտնաբերումը N 8 դամբարանից: Բացի նշվածից, գտնվել են բրոնզե լարից ականջօղեր: Առատ են սարդիոնե, մածուկից, ապակուց, հեմատիտից պատրաստված ուլունքները: Դրանք բաժանվում են մի քանի տիպի՝ կլոր՝ տակառաձև, երկկոնիկ: Մածուկե և ապակյա հուլունքները կապույտ, սպիտակ, դեղին գույն ունեն: Դամբարաններից հայտնաբերվեց տարբեր չափի մոտ 100-ի հասնող խխունջից, երբեմն մշակված զարդշարան:

Խեցեղեն: Առավել մեծ քանակի այս գտածոները ներկայացված են մի քանի տիպով: Դրանք հիմնականում սև փայլեցրած, փայլատ մակերևույթով խեցանոթներ են: Ըստ իրենց ձևաբանության՝ քննարկվող անոթները բաժանվում են հետևյալ խմբերի՝ կճուճներ, սափորներ, քրեղան-թասեր: Կճուճներն ունեն կլորացող իրան, դուրս ճկված շուրթ, հարթ, երբեմն լայն հատակ: Զարդամոտիվների մեջ առանձնանում են ալիք-զիգզագ, հասկանախշ, եղունգազարդ հորինվածքները: Սափորներն ունեն կլոր, երկկոնիկ, դեպի վեր լայնացող իրան, կարճ վիզ, դուրս ճկված շուրթ, հարթ, փոքր հատակ: Այս խմբին պատկանող անոթները զարդարված են եռանկյունիներով, շևրոններով, մատնեքանախշով: Հանդիպում են փայլանախշով արված սափորներ: Շևրոնները և եռանկյունիները երբեմն լրացվում են բեկյալներով, կետազարդով: Թաս-քրեղաններն ունեն դեպի վեր լայնացող իրան, եզրագծված կողեր, կլորացող հարթ շուրթեր, նեղ հատակներ: Ներկայացվող կավանոթները շուրթի տակ ունեն զուգահեռ ներծկված գոտեզարդեր: N 19 դամբարանից հայտնաբերված թասն ունի կտրվածքում կլոր կանթ:

Քարե քանդակ-կուռքեր: Այս գտածոները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ առանձնանում են N N 2, 14, 23, 35 դամբարաններում հայտնաբերված կանացի արձանները, ինչպես նաև N 7-ում՝ գտնված գլխի քանդակը: Արձանները տարբեր չափերի են՝ 0,3-0,7 մ բարձրությամբ: Կարմիր տուֆից ընդգծված դիմային մանրամասներով այս արտեֆակտերի մեջ առանձնանում է N 2 կրոմլեխից հայտնաբերվածը՝ կրծքին քանդակված մանյակով: Հաջորդ խումբը ներկայացված է կարմիր տուֆի սյուն-կուռքերով (N N 13, 23), որոնցից մեկը կտրվածքում սեղանաձև է: Պեղված դամբարանների ժամանակագրական սահմանները ճշտելու համար կարևոր նշանակություն ունի մի քանի դամբարաններից հայտնաբերված նյութի վերլուծությունը: Հարկ է նշել, որ N 11 կրոմլեխից հայտնաբերված

երկու խեցանոթները թե՛ իրենց ձևաբանությամբ և թե՛ զարդամոտիվներով վերաբերում են ուշ բրոնզի վերջին փուլին: Հատկապես բնորոշ է սև փայլանախշով, քայլող դրոշմիչով ալիքազարդ, թրծումից հետո կարմիր ներկի հետքերով հարդարված երկկոն անոթը, որով համալիրը թվագրվում է մ.թ.ա. XIII-XII դդ.: Այս դամբարանը պեղված կրոմլեխների մեջ առայժմ ամենավաղն է՝ իր զուգահեռները գտնելով հատկապես Լոռի բերդում,[31] Լճաշենում[32]:

Մնացած դամբարաններից հայտնաբերված հնագիտական գտածոների վերլուծությունը, մանավանդ խեցեղենի ձևերը, ինչպես նաև զարդամոտիվների կատարումը և առանձին տարրերի քննությունը հնարավորություն են տալիս վերոհիշյալ համալիրները թվագրել մ.թ.ա. X-IX դդ.: Այս նյութերն իրենց որոշակի համեմատականներն ունեն Շիրակի,[33] Թալինի,[34] մասնավորապես Կարմիր բերդի[35] նյութերում՝ թվագրվելով վաղ երկաթի դարաշրջանով:

Ուշագրավ տվյալներ են արձանագրվել նաև Թալինի դամբարանադաշտում: Հուշարձանն ընկած է Թալինի հյուսիսային արվարձաններում՝ ձգվելով արևելքից արևմուտք շուրջ 4 կմ: Այստեղ պեղված համալիրներից 85-ը ներկայացված են վաղ երկաթի դարին բնորոշ գույքի կազմով[36]:

Դամբարան N 1: Արտաքին կառույցները չեն պահպանվել: Դամբանախուցը հարթ սալաքարերով կառուցված «քարարկղ» է, երկայնական առանցքով ուղղված հյուսիսից հարավ: Հատակագծում ուղղանկյուն է: Չափերն են՝ 0,85x0,6x0,6 մ: Կմախքի մնացորդներ չգտնվեցին: Գույքը դրված էր խցի հյուսիսարևելյան անկյունում՝ դեղնա-մոխրագույն ծծում, մրապատ կճուճ և անդեզիտե սանդկոթ (Աղ. 7, նկ. 7-9):

Դամբարան N 2: Արտաքին կառույցները չեն պահպանվել: Դամբանախուցը հարթ սալաքարերով կառուցված «քարարկղ» է: Արևմտյան հատվածում գլխապատ չունի: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված հյուսիս-արևելքից հարավարևմուտք: Ծածկված էր մեկ մեծ և երկու փոքր սալաքարերով: Չափերն են՝ 1,6x1x0,85 մ: Խցի լիցքը մինչև 0,6 մ խորության վրա փափուկ հող է, մեջը՝ մանր քարեր: Այնուհետև գալիս են միջին մեծության քարաբեկորների շերտը և ուղեկցող գույքը:

---

[31] *Հ.Գ. Դեվեջյան,* Լոռի բերդ I, Երևան, 1981, էջ 46-47.
[32] *Ա.Ա. Մարտիրոսյան,* Армения в эпоху бронзы... с. 18.
[33] *Թ.Հ. Հակատրյան,* Артикский некрополь, Ереван, 1979, с. 16.
[34] *Պ.Հ. Ավետիսյան,* Раскопки в Талинском районе, Археологические Открытия, Москва, 1988, с. 467-468.
[35] *Հ.Ա. Եսայան,* Ереван /Археологический очерк/ Ереван, 1969, с. 29-40.
[36] *Պ.Ս. Ավետիսյան, Ֆ.Ս. Մուրադյան,* Պեղումներ Թալինի նորակառույցներում, ՀՀ 1989 – 90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 26-28:

Գրանցվեց 35-45 տարեկան տղամարդու վերաթաղում: Անատոմիապես անկանոն դիրքով կմախքի ոսկորները «շարված էին» խցի անկյունագծով՝ արևելքից արևմուտք: Կմախքի ոսկորների շուրջ դրված էին մանր եղջերավորի ոսկորների մնացորդներ:

Թաղման ուղեկցող գույքը դրված էր խցի հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան անկյուններում: Գտնվեցին խողովակակոթառ, փետրածև սայրով նիզակի ծայր, երկու սափորներ, մրապատ կճուճ, երեք քրեղաններ և մեկ խոշոր, կարասատիպ անոթ,որն ուսին ունի մարդու պատկերով ծեփաքանդակ (Աղ. 8):

Դամբարան N 3: Արտաքին կառույցները չեն պահպանվել: Հատակագծում ուղղանկյուն, երկայնական առանցքով արևելքից արևմուտք ուղղված դամբանախուցը «քարարկղ» է: Պահպանվել էր դամբանախուցը ծածկող սալերից մեկը: Չափերն են 1,5x0,9x0,8 մ: Խցի լիցքը մինչև 0,4 մ խորության վրա փափուկ հող է, մեջը մանր քարեր: Այնուհետև գալիս են միջին մեծության քարաբեկորների շերտը և ուղեկցող գույքը:

Գրանցվեց 22-25 տարեկան տղամարդու վերաթաղում: ՆՆջեցյալի կմախքի ոսկորները և ծնոտն արծանագրվեցին խցի արևելյան հատվածում, իսկ գանգը՝ հարավ-արևմտյան անկյունում (քունքոսկրի վրա տեսանելի վնասվածքներից երևում է, որ դրանք են եղել մահվան պատճառը): Մարդու ծնոտից ոչ հեռու արծանագրվեցին կրակի հետքեր և մանր եղջերավոր անասունի ոսկորների մնացորդներ:

Թաղման ուղեկցող գույքը (բեկորային վիճակում) դրված էր կմախքի ոսկորների ու գանգի մոտ: Գտնվեցին մոխրագույն, մրապատ կճուճ, երկու քրեղան և սափորի բեկորներ (Աղ. 7, նկ. 4-6):

Դամբարան N 4: Արտաքին կառույցները չեն պահպանվել: Հատակագծում ուղղանկյուն, երկայնական առանցքով արևելքից արևմուտք ուղղված դամբանախուցը հարթ տուֆասալերով կառուցված «քարարկղ» է: Ծածկված էր երկու մեծ և մեկ փոքր սալաքարերով: Չափերն են՝ 1,4x0,95x0,9 մ: Խցի լիցքը մինչև 0,4 մ խորության վրա փափուկ հող է, մեջը տարբեր մեծության քարեր: Այնուհետև գալիս են միջին մեծության քարաբեկորների շերտը և ուղեկցող գույքը:

Արծանագրվեց 22-30 տարեկան տղամարդու վերաթաղում: Խցի տարբեր հատվածներում բացվեցին կրակի հետքեր, իսկ կենտրոնում՝ կենդանու մի քանի ոսկոր:

Կմախքի ոսկորների շուրջը և խցի արևմտյան հատվածում գտնվեցին երկու խոշոր կճուճների բեկորներ, մեկ քրեղան և կափարիչ (Աղ. 7, նկ. 1-3, 10):

Դամբարան N 5: Չևով նման է նախորդին: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Ծածկված էր երկու մեծ և մեկ փոքր սալաքարերով: Չափերն են՝ 1,7x0,9x0,8 մ: Խցի լիցքը մինչև 0,4 մ խորության

վրա փափուկ հող է, մեջը մանր քարեր: Այնուհետև գալիս են միջին մեծության քարաբեկորների շերտը և ուղեկցող գույքը:

Գրանցվեց 30-40 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Կմախքի ոսկորները դրված էին խցի կենտրոնական հատվածում: Մարդու ոսկորների «կույտի» հարևանությամբ բացվեց մանր եղջերավորի գանգ: Խցի հյուսիսարևմտյան հատվածում գտնվեցին կարասատիպ խոշոր անոթներ, կճուճներ, միականթ սափոր և քրեղան (Աղ. 9):

Դամբարան N 6: Կիսով չափ վերգետնյա, հարթ սալաքարերով կառուցված, հատակագծում ուղղանկյուն «քարարկղ» է՝ երկայնական առանցքով ուղղված արևելքից-արևմուտք: Արևելյան կողմից խցի գլխապատի դեր էր խաղում ցից դրված քարը, որն ըստ երևույթին փակել է խցի «մուտքը»: Չափերն են՝ 2,5 x 1,2 x 1 մ: Պահպանվել էր մեկ ծածկասալը:

Գրանցվեց 35-45 տարեկան տղամարդու թաղում: Առկա էր կմախքի ոսկորների մի մասը, ըստ որի որոշվեց, որ աճյունը թաղվել է կծկված վիճակում, աջ կողքի վրա՝ գլխով դեպի արևմուտք: Խցի հարավարևմտյան անկյունում՝ աճյունին դիմահայաց, բացվեցին չորս կավանոթներ, դեմքի մոտ՝ բրոնզից նետասլաք, գանգի հետնամասում՝ բրոնզից դաշույն և բիզ, որոնք դրված են եղել կաշվե միևնույն պատյանի մեջ: Պահպանված ձախ ազդրոսկորի դիմաց բացվեցին բրոնզի բարակ թիթեղից, խիստ քայքայված ապարանջանի կամ բազպանի մնացորդներ, որոնք օղակում էին մոտ 20 սմ տարածք: Կլոր գլխիկով մի շքասեղ դուրս եկավ խոշոր կճուճի միջից: Բացվեցին նաև վանակատի ցլեպներ, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ (Աղ. 10, Աղ. 60, նկ. 3, 9-11, 14, 20):

Դամբարան N 13: Չևով նման է նախորդին: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Ծածկասալերը չեն պահպանվել: Չափերն են՝ 1,5x1x0,8 մ: Խուցը մինչև 0,4 մ խորության վրա լցված էր միջին մեծության քարաբեկորներով:

Գրանցվեց 25-30 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Գլուխը մարմնից անջատ է դրվել խուց: Կմախքի ոսկորները, անկանոն անատոմիական դիրքով շարված էին խցի անկյունագծով՝ հյուսիս-հարավ ուղղվածությամբ: Բրոնզե նիզակով, երկաթյա դաշույնի շեղբի բեկորով, քրեղանով և լայնաբերան սափորով ներկայացված գույքը դրված էր խցի արևմտյան հատվածում (Աղ. 11, նկ. 5-7, 9):

Դամբարան N 14: Չևով նման է նախորդին: Արևմտյան գլխապատը շարված է երկու սալաքարով: Ծածկասալերը չեն պահպանվել: Չափերն են՝ 1,9x1,3x0,8 մ: Խցի լիցքը մինչև 0,4 մ խորության վրա խիստ քարքարոտ էր, որտեղ հանդիպում էին միջնադարյան խեցու բեկորներ: Կմախքի ոսկորները խիստ քայքայված վիճակում

բացվեցին արևելյան հատվածում: Կմախքի ոսկորների մեջ գտնվեցին կճուճի և սափորի բեկորներ (Աղ. 11, նկ 1, 2):

Դամբարան N 15: Արտաքինից պահպանվել էին դամբանաթմբի մի հատվածը և կրոմլեխի 6 քար: Քարահողային լիցքով դամբանաթմբի բարձրությունը 0,5 մ է, տրամագծը՝ 4 մ: Թաղման խուցը ձևով նման է նախորդներին: Արևմտյան կողմում գլխապատ չունի, իսկ արևելյան գլխապատը, ինչպես N 6-ում, բարձր է մյուսներից: Չափերն են՝ 1,6x1x1 մ: Խուցը մինչև 0,4 մ խորության վրա լցված էր մանր ու միջին մեծության քարերով:

Գրանցվեց 12-15 տարեկան աղջկա աճյունի մնացորդների վերաթաղում: Գտնվեցին կավանոթների, երկաթյա դանակի բեկորներ, մածուկից ուլունքներ և ծովախխունջ կաորի (Աղ. 11, նկ. 8):

Դամբարան N 16: Արտաքին կառույցների հետքեր չէին պահպանվել: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Հատակը մայր հողն է: Խցի չափերը 1,3 x 1,05 x 0,8 մ: Մաքրման աշխատանքների ընթացքում պարզվեց, որ դամբարանը կողոպտվել է: Դամբանախցի լիցքը ամբողջովին խառնված էր: Գտնվեցին մարդու կմախքի մի քանի ոսկոր, կենդանիների ոսկորներ և խեցու մի քանի բեկոր (Աղ. 12, նկ. 1-4):

Դամբարան N 17: Արտաքին կառույցների հետքեր և ծածկասալը չէին պահպանվել: Դամբանախուցը հարթ կտրված սալաքարերով կառուցված «քարարկղ» է: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Խցի չափերն են՝ 2 x 1,25 x 1,1 մ (Աղ. 12, նկ. 5): Դամբանախցի լիցքը մոտ 0,2 մ խորությամբ փափուկ հող է, մեջը մանր քարեր: Այնուհետև գալիս է խոշոր և միջին մեծության քարերի լիցք, որը կարծես թե եզրագծում և փակում է թաղումն ու ուղեկցող գույքը:

Գրանցվեց անհատական՝ կմախքի անատոմիական դիրքը խախտված դիաթաղում (աճյունի մնացորդների վերաթաղում): Հանգուցյալը 40-50 տարեկան տղամարդ է: Գանգը գտնվում էր խցի հյուսիսարևելյան անկյունում, շրջված վիճակում: Ներքին ծնոտի ոսկորները գտնվում էին հարավային պատին կից, գանգից 0,7 մ հեռավորության վրա: Հյուսիսային պատի կենտրոնական հատվածում՝ պատին անմիջապես կից, գտնվեց կոնքոսկրի մի ոսկոր, որից մի փոքր հարավ՝ ոտքի ազդրոսկրի և կողոսկորներ:

Կենդանու ոսկորները դուրս էին գալիս խցի ամբողջ տարածքից: Գտնվեցին նաև երկաթե դանակի բեկորներ, տեգի ծայր և մի քանի սարդիոնե ուլունքներ (Աղ. 59, նկ. 10): Մեկ-երկու տեղով գրանցվեցին վառված փայտի կտորներ: Պետք է նշել, որ կավանոթի

բեկորներ գտնվեցին լիցքի վերին մասում և դամբանախցի շրջակայքում: Գտնված բեկորներով հնարավոր եղավ այս կամ այն չափով վերականգնել 2 անոթ:

Դամբարան N 18: Արտաքին կառույցների և ծածկասալերի հետքեր չէին պահպանվել: Դամբանախուցը հարթ կտրված սալաքարերով կառուցված «քարարկղ» է: Արևմտյան գլխապատը կառուցված էր երկու սալաքարերով: Դամբանախուցը հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք.: Խցի չափերն են՝ 1,4 x 1,2 x 0,85 մ: Խցի լիցքը մինչև 0,6 մ խորության վրա փափուկ հող է, մեջը մանր քարեր: Այնուհետև գալիս են միջին մեծության քարաբեկորների շերտը և ուղեկցող գույքը:

Գրանցվեց 20-25 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Կիսով չափ պահպանված գանգը գտնվեց արևմտյան պատի տակ: Նրանից 0,5 մ հարավ գտնվեցին ոտքի ոսկորներ, իսկ հարավային պատի տակ՝ ներքին ծնոտի վատ պահպանված ոսկորները: Պետք է նշել, որ կմախքի ոսկորները գտնվում էին խեցու բեկորների տակ:

Խցի տարբեր հատվածներից դուրս էին գալիս կենդանիների ոսկորներ: Գույքը բաղկացած էր բացառապես կավանոթներից, որոնք դրված էին գանգի վրա և նրա շրջակայքում: Անոթների բեկորների դիրքից կարելի է ենթադրել, որ որոշ անոթներ դրվել են իրար վրա (Աղ. 13):

Դամբարան N 19: Արտաքին կառույցների հետքեր և ծածկասալը չէին պահպանվել: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Խցի չափերն են՝ 1,45 x 1 x 0,8 մ: Խցի լիցքը մինչև 0,5 մ խորության վրա մանր և միջին մեծության քարերով առատ, փափուկ հող է: Այնուհետև գալիս է միջին մեծության քարաբեկորների լիցքը, որը փաստորեն եզրագծում և ծածկում է թաղումը և ուղեկցող գույքը: Գրանցվեց 55-75 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Գանգը չկար: Կմախքի եղած ոսկորները դրված էին արևելյան գլխապատի լայնքով (ներքին ծնոտը՝ հյուսիսային հատվածում, տազը՝ կենտրոնում, ոտքի ոսկորները՝ հարավային հատվածում):

Կենդանիների ոսկորները հիմնականում դուրս էին գալիս խցի հյուսիսային և հարավարևմտյան հատվածներից: Կավանոթների բեկորները դրված էին արևմտյան և արևելյան գլխապատերի մոտ: Երկու տեղով գրանցվեցին փայտի մնացորդների հետքեր (Աղ. 14):

Դամբարան N 20: Արտաքին կառույցների հետքեր և ծածկասալը չէին պահպանվել: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով, երկայնական առանցքով

ուղղված արևելքից-արևմուտք: Խցի չափերն են՝ 2 x 1,2 x 0,8մ: Դամբանախցի լիցքը մինչև 0,5 մ խորությամբ մանր և միջին մեծության քարերով առատ փափուկ հողն է, այնուհետև գալիս է միջին մեծության քարերի լիցքը, որը եզրագծում և ծածկում է թաղումն ու թաղման գույքը:

Գրանցվեց աճյունի մնացորդների վերաթաղում: Գտնվեցին 40-45 տարեկան տղամարդու և 10-11 տարեկան երեխայի կմախքի ոսկորներ: Տղամարդու գանգը դրված էր արևմտյան պատի մոտ: Ոտքի ոսկորները դուրս եկան խցի հյուսիս - արևմտյան հատվածից: Ոտքի մեկ ոսկոր դուրս եկավ խցի հյուսիսարևելյան մասում: Ծնոտը գտնվեց գանգից հեռու, կուտակված ոսկորներին կից:

Մեկ փոքրիկ գավաթ դուրս եկավ խցի հարավարևելյան անկյունից: Սրան կից դրված էր լայնաբերան կճուճ, մեջը փոքրիկ սափոր: Մեկ այլ կճուճ գտնվեց գանգին կից: Անոթներից հարավ գտնվեցին մեկ տասնյակի հասնող շաղախից ուլունքներ: Խեցանոթի բեկորներ դուրս էին գալիս նաև խցի հյուսիսարևմտյան անկյունից: Կենդանիների ոսկորներ հիմնականում հանդիպում էին խցի հարավարևելյան հատվածում: Կենտրոնում՝ երկու տեղով գրանցվեցին այրված փայտի մնացորդների հետքեր (Աղ. 15, Աղ. 59, նկ. 4-6):

Դամբարան N 21: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր երկու մեծ սալաքարերով: Խցի չափերն են՝ 1,45 x 0,8 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը մինչև 0,6 մ խորության վրա մանր քարերով առատ, փափուկ հող է, այնուհետև գալիս է միջին մեծության քարաբեկորների լիցքը, որը եզրագծում և ծածկում է թաղումն ու թաղման գույքը:

Գրանցվեց աճյունի մնացորդների վերաթաղում: Առկա էր 22-30 տարեկան կնոջ կմախքի ոսկորների մի մասը: Վերջիններս անկանոն շարված էին խցի հյուսիս - արևելյան անկյունում: Գանգը չկար: Ներքին ծնոտի ոսկորները դրված էին արևելյան պատին կից:

Կենդանիների ոսկորներ դուրս եկան խցի կենտրոնական և հարավային հատվածից: Կենտրոնում երկու տեղով գրանցվեցին վառված փայտի մոխիրի հետքեր: Խեցու բեկորները դրված էին դամբանախցի չորս անկյուններում, ընդ որում՝ միևնույն կավանոթի բեկորները գտնվում էին խցի տարբեր հատվածներում: Անոթները ներկայացված են երեք նմուշներով (Աղ. 16):

Դամբարան N 22: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ սալաքարով: Խցի չափերն են՝ 1,1 x 0,7 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը մինչև 0,3-0,4 մ խորության վրա մանր քարերով առատ

փափուկ հող է: Այնուհետև գալիս է միջին մեծության քարաբեկորների լիցքը: Ննջեցյալի կմախքի ոսկորներ չգտնվեցին: Առկա էին կենդանիների ոսկորներ և խեցու ջարդոտված բեկորներ:

Դամբարան N 23: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր երկու սալաքարերով: Աճյունի հետքեր չգրանցվեցին:

Առկա էին կենդանիների ոսկորներ և խեցու մի քանի բեկոր: Գտնվեցին նաև վատ պահպանված երկաթյա դաշույնի շեղբի բեկորներ և փայտի մնացորդներ: Կենտրոնական հատվածում գրանցվեցին վառված փայտի մոխրի հետքեր: Խցի չափերն են՝ 1,35 x 0,9 x 1 մ (Աղ. 59, նկ. 11):

Դամբարան N 24: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր երկու սալաքարերով: Խցի չափերն են՝ 1,25 x 0,75 x 0,7 մ: Դամբանախցի լիցքը մինչև 0,3 մ մանր քարերով առատ փափուկ հողն է, այնուհետև գալիս է միջին մեծության քարաբեկորների լիցքը, որը եզրագծում և ծածկում է թաղումն ու թաղման գույքը: Գրանցվեց 20-25 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Գանգը գտնվում էր խցի հյուսիսարևմտյան անկյունում: Կմախքի ոչ լրիվ պահպանված ոսկորները խառը վիճակում դրված էին արևմտյան գլխապատի լայնքով:

Խցի կենտրոնական հատվածում գտնվեցին կենդանիների ոսկորներ, որոնց միջակայքում երկու տեղով գրանցվեցին այրված փայտի մնացորդների հետքեր: Կավանոթների բեկորներ գտնվեցին կմախքի ոսկորների տակ, խցի հարավարևմտյան հատվածում: Գտնվեցին նաև երկաթե դանակի վատ պահպանված մնացորդներ և սարդիոնե մի քանի ուլունք (Աղ. 18, Աղ. 59, նկ. 12)

Դամբարան N 25: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ սալաքարով: Խցի չափերն են՝ 1,45x1x0,8 մ: Դամբանախցի լիցքը 0,4-0,5 մ խորության վրա մանր քարերով առատ փափուկ հողն է, որից հետո գալիս է միջին մեծության քարերի լիցքը:

Գրանցվեց 25-30 տարեկան տղամարդու դիաթաղում: Հանգուցյալի դին դրվել է հյուսիսային պատի երկայնքով՝ հենած խցի հյուսիսարևելյան անկյունին: Կմախքի բոլոր ոսկորները տեղում էին: Գանգի ոսկորը 0,3 մ-ով բարձր էր կմախքի մնացած մասերից: Հանգուցյալը դեմքի մոտ ձեռքերին պահել էր մի ափսե: Ներքին ծնոտի ոսկորը

շրջված վիճակում գտնվում էր գանգին կից, կպած արևելյան պատին:

Խցի տարբեր հատվածներից (հատկապես հարավարևմտյան կեսում) դուրս եկան մեծ քանակությամբ կենդանիների ոսկորներ: Ոտքերի տակ դրված էր մեծ կճուճ, որի տակ գտնվեցին սարդիոնե ուլունքներ: Գանգից մի փոքր վերև գտնվեց բրոնզե նիզակի ծայր: Կավանոթի բեկորներ գտնվեցին խցի արևելյան և հարավային պատերին կից: Խցի կենտրոնում՝ կենդանիների ոսկորների մեջ, մեկ տեղով գրանցվեց վառված փայտի մնացորդների հետքեր: Ուղեկցող գույքը ներկայացված էր հետևյալ նմուշներով. տերևաձև շեղբով, թեք ուսերով, խողովակակոթառ բրոնզե նիզակ, լավ հղկած, գնդաձև սարդիոնե ուլունքներ, կավից, երկու կողմից հարդարված իր, (Աղ. 59, նկ. 1, 7, 8) մոխրագույն՝ փայլատ մակերևույթով, ուռուցիկ գնդաձև իրանով, կարճ վզով անոթ: Վզի տակ և ուսին արված են լայն ակոսագոտիներ: Կենտրոնական մասում զարդարված է երկշար եղունգանախշով, շուրթի վրա արված է բարակ հորիզոնական գծազարդ: Անոթը մրապատ է: Սև, փայլատ մակերևույթով, պատերը մի փոքր կորացող միականթ թաս: Կանթը արված է ներսի կողմից: Նույն կողմից զարդարված է շուրթի տակ՝ ակոսագոտիով, մի փոքր ներքևում՝ հորիզոնական գծազարդով: Սև, փայլեցրած, կորացող պատերով, ուղիղ կլորացող շուրթով քրեղան: Պահպանվել է մի մասը: Շուրթի տակ արված է լայն ակոս-գոտի: Դրսից և ներսից զարդարված է փայլանախշով արված ուղղահայաց գծերով: Գտնվել են նաև 2 տարբեր անոթների բեկորներ (Աղ. 19, նկ. 4-6, 7):

Դամբարան N 26: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,25 x 0,8 x 0,8 մ: Խցի լիցքը մինչև 0,5-0,6 մ խորության վրա մանր քարերով առատ փափուկ հողն էր: Այնուհետև գալիս է միջին մեծության քարերի լիցքը: Գրանցվեց 30-35 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Ոտքի ոսկորները գտնվեցին խցի արևմտյան և հյուսիսարևմտյան հատվածներում, գանգի ոսկորների մնացորդները՝ կենտրոնում:

Հյուսիսային պատին կից և հարավարևմտյան անկյունում գտնվեցին ոչխարի ծնոտի ոսկորներ: Կենդանիների ոսկորներ դուրս էին գալիս նաև խցի հարավարևելյան հատվածից: Խցի հարավարևմտյան անկյունում գտնվեց մեկ ամբողջական կճուճ, իսկ կենտրոնում և արևելյան գլխապատին կից՝ տարբեր անոթների բեկորներ: Կենտրոնական հատվածում երկու տեղով գրանցվեցին վառված փայտի մնացորդների հետքեր: Գտնված կավանոթները ներկայացված են երեք նմուշներով (Աղ. 20):

Դամբարան N 27: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված

հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Չափերն են՝ 1,3 x 1 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը մինչև վերջ մանր քարերով առատ փափուկ հողն էր: Գրանցվեց 25-30 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Մարմնից անջատված գանգը գտնվեց խցի հարավարևմտյան հատվածում: Ոտքի ոսկորները գտնվեցին հյուսիսարևելյան հատվածում և հարավային պատին կից: Ողնաշարի ողի ոսկորները դրված էին արևելյան գլխապատի մոտ:

Խցի ամբողջ տարածքից և հատկապես արևմտյան հատվածից դուրս էին գալիս կենդանիների ոսկորներ: Գտնվեցին մի քանի անոթի բեկորներ: Մեկ տեղով գրանցվեցին վառված փայտի մնացորդներ (Աղ. 21):

Դամբարան N 28: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ սալաքարով: Խուցը արևմտյան կողմից գլխապատ չունի: Չափերն են՝ 1,4 x 0,9 x 0,8: Դամբանախցի լիցքը վերին մասում մանր քարերով առատ փափուկ հողն է, որից հետո գալիս է միջին մեծության քարերի լիցքը: Գրանցվեց 25-30 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Կմախքը ամբողջական չէր: Գանգը գտնվեց արևելյան պատի կենտրոնական հատվածին կից: Գանգի տակ բացվեցին ոտքի ոսկորները: Ոտքի մեկ ոսկորը գտնվեց խցի արևմտյան հատվածում: Տազի մեկ ոսկորը գտնվում էր հյուսիսային պատի արևելյան հատվածում:

Կոնքոսկորի և գանգի ոսկորների միջև դրված էին 3 կավանոթ: Կենդանիների ոսկորներ դուրս էին գալիս խցի արևմտյան հատվածում: Կենտրոնում գրանցվեցին վառված փայտի մնացորդների հետքեր: Ծնոտի ոսկորների մնացորդներ գտնվեցին տազի ոսկորների մոտ: Գտնված անոթները ներկայացված են չորս նմուշներով (Աղ. 22):

Դամբարան N 29: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ սալաքարով: Խուցը արևմտյան մասում գլխապատ չունի: Չափերն են՝ 1,35 x 1 x 0,8 մ: Խցի լիցքը վերին մասում 0,4-0,6 մ խորության վրա մանր քարերով առատ փափուկ հողն է, որից հետո գալիս է միջին մեծության քարերի լիցքը: Գրանցվեց 30-35 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Գտնվեցին կմախքի մի քանի ոսկորի կտորներ և մի քանի ատամ: Գանգի ոսկորի մնացորդները խցի կենտրոնական հատվածում էին՝ հյուսիսային պատին ավելի մոտ՝ շրջված բերանով կավանոթի տակ:

Խցի կենտրոնական և հարավարևմտյան հատվածներից դուրս էին գալիս մանր և խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ: Գտնվեցին նաև ապակու շաղախից կապույտ ուլունքներ (մի քանի հատ): Կենտրոնական մասում գրանցվեցին վառված փայտի մնացորդների հետքեր: Գտնվեցին նաև կավանոթի մի քանի բեկոր: Ամբողջական անոթը բաց դարչնագույն, փայլատ մակերևույթով, ուռուցիկ իրանով, գլանաձև վզով մեծ, երկկանթ սափոր է: Կանթերն արված են ուռուցիկ մասում: Զարդարված է երկու ակոս-գոտիներով (Աղ. 23):

Դամբարան N 30: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը մանր քարերով առատ փափուկ հողն էր:

Գրանցվեց 25-30 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Գանգը ճզմված վիճակում գտնվում էր արևելյան գլխապատի կենտրոնական մասում: Ոտքի և ձեռքի մի քանի ոսկորներ գտնվում էին գանգի դիմաց և նրա տակ, ինչպես նաև հարավային պատի արևելյան անկյունում: Կենտրոնում (գանգի դիմաց) բացվեց գառան ամբողջական կմախք՝ դրված խցի լայնքով: Խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ դուրս եկան արևմտյան հատվածից: Հյուսիսարևմտյան մասում դրված էին երեք կավանոթ: Գրանցվեցին վառված փայտի մնացորդների հետքեր: Գտնված կավանոթները ներկայացված են չորս նմուշներով (Աղ. 30):

Դամբարան N 31: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Խուցը արևմտյան կողմում գլխապատ չունի: Ծածկված էր մեկ սալաքարով : Չափերն են՝ 1,5 x 0,95 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը՝ մինչև 0,5-0,6 մ խորության վրա, մանր քարերով առատ փափուկ հողն է: Այնուհետև գալիս է միջին մեծության քարերի լիցքը: Գրանցվեց հասակավոր մարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Կենտրոնական հատվածում առկա էին մարդու կմախքի մի քանի ոսկոր: Մեծ քանակությամբ կենդանու ոսկորներ դուրս էին գալիս խցի տարբեր հատվածներից: Գտնվեցին կավանոթի բեկորներ, երկաթի դանակի և դաշույնի մնացորդներ, բրոնզե միաձույլ լարից ատամնավոր օղ: Գույքը հիմնականում դրված էր խցի կենտրոնական մասում: Կավանոթները ներկայացված են երեք նմուշներով (Աղ. 31, Աղ. 59, նկ. 3, 14, 15):

Դամբարան N 32: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Խուցը արևմտյան կողմում

գլխապատ չունի: Ծածկված էր երկու խոշոր և երկու մանր սալաքարերով: Չափերն են՝ 1,3 x 0,8 x 0,8 մ: Դամբանախցի լիցքը վերևում մանր քարերով առատ փափուկ հողն է, որից հետո գալիս է միջին մեծության քարերի լիցքը:

Գրանցվեց 40-50 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Խիստ վնասված գանգը դրված էր հարավային պատի տակ, կենտրոնական հատվածում: Ոտքի ոսկորները գտնվում էին խցի հարավարևելյան անկյունում: Տազի ոսկորները գտնվում էին արևելյան պատի կենտրոնական, իսկ ծնոտի ոսկորները՝ խցի արևմտյան հատվածներում: Մեծ քանակությամբ կենդանիների ոսկորներ սփռված էին ամբողջ խցով մեկ: Մեկ կավանոթի տարբեր մասերը դուրս եկան խցի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան հատվածներից: Բրոնզե բարակ թիթեղից կլոր մի կախիկ գտնվեց սալաքարերի վրա (Աղ. 19, նկ. 12, Աղ. 59, նկ. 2):

Դամբարան N 33: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր երկու սալաքարով: Դամբանախցի չափերն են՝ 1,4 x 0,8 x 0,8 մ: Լիցքը մանր քարերով առատ փափուկ հողն է, որից հետո գալիս է միջին մեծության քարերի լիցքը:

Գրանցվեց 25-30 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների վերաթաղում: Գանգը գտնվում էր խցի հարավարևմտյան անկյունում: Ոտքի ոսկորները դրված էին հարավային պատի մոտ, արևելյան հատվածում, իսկ տազի ոսկորները դուրս եկան հյուսիսարևմտյան հատվածում: Ծնոտը գտնվում էր գանգից 0,3 մ հյուսիս՝ ծոծրակի կողմից: Տազի մյուս ոսկորը գտնվում էր գանգին կից: Գտնվեցին կավանոթի մի քանի բեկոր:

Դամբարան N 34: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆե սալաքարերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,9 x 0,9 մ: Դամբանախցի լիցքը փափուկ հող էր, երբեմն հանդիպում էին քարաբեկորներ: Գտնվեցին ոսկորի և խեցու մի քանի բեկորներ (Աղ. 26):

Դամբարան N 35: Ծածկված է երկու մեծ և փոքր սալաքարերով: Դամբանախուցը «քարարկղ» է՝ կառուցված հարթ կտրված տուֆասալերով: Հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված արևելքից արևմուտք: Արևմտյան կողմում գլխապատ չունի: Չափերն են՝ 1,8 x 1,1 x 1 մ: Խցի լիցքը փափուկ սևահող է, իսկ հատակամերձ մասում միջին մեծության քարաբեկորներ էին դրված, որոնք եզրագծում էին թաղումը:

Գրանցվեց 45-50 տարեկան տղամարդու աճյունի մնացորդների

վերաթաղում: Կմախքի անատոմիական դիրքը և կազմը խախտված էր և թերի: Գանգը բացվեց հյուսիս - արևելյան հատվածում, որի շուրջ դրված էին կմախքի ևս մի քանի ոսկոր: Խցի տարբեր հատվածներից դուրս եկան խեցու բեկորներ և կենդանիների ոսկորներ: Խեցու բեկորներից մի քանիսի շուրջ գրանցվեցին մոխրի հետքեր: Հարավային պատի կենտրոնում, պատին կից դուրս եկան 4 նետասլաքներ, 3 բրոնզե և 10 սարդիոնից ուլունքներ: (Աղ. 60, նկ. 5-8, 22, Աղ. 27, նկ. 4-10):

Դամբարան N 36: Ձևով նման է նախորդին: Ծածկված է մեկ տուֆե սալաքարով: Չափերն են՝ 1,7 x 1 x 1 մ: Հատակամերձ մասում քարաբեկորները ծածկում և եզրագծում են թաղումը: Գրանցվեց 35-45 տարեկան կնոջ թաղում: Կմախքի անատոնիական դիրքը և կազմը խախտված էր և թերի (վերաթաղում): Աճյունի մնացորդները դրված էին հարավային պատի երկայնքով՝ գանգը արևմտյան հատվածում, վերջույթների ոսկորները՝ դեպի արևելք և գանգի տակ: Ներքին ծնոտը բացվեց հարավարևմտյան անկյունում: Կմախքի ոսկորներին կից, դեպի կենտրոն գրանցվեցին մոխրի հետքեր: Խցի տարբեր հատվածներից դուրս էին գալիս խեցու բեկորներ և կենդանիների ոսկորներ (Աղ. 29, նկ. 5):

Դամբարան N 37: Ձևով նման է նախորդներին: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 2 x 1,3 x 1 մ: Գրանցվեց 45-65 տարեկան տղամարդու թաղում: Աճյունը դրված էր խցի կենտրոնում, աջ կողքի վրա, խիստ կծկված վիճակում՝ գլխով արևմուտք: Աջ ձեռքը ծալված է եղել դեպի գլուխը, ձախը՝ կրծքավանդակի վրա: Երկու կավանոթներ բացվեցին ոտքի ոսկորների միջև, մեկ լայնաբերան կճուճ՝ կմախքի վրա, երեք կավանոթներ դրված էին հյուսիսարևելյան, երկուսը հարավարևելյան հատվածներում: Բրոնզե, եզրերը զարդարուն գոտին բացվեց հյուսիսային պատի արևմտյան հատվածում: Ի տարբերություն նախորդների՝ այստեղ թաղումը քարերով չի պատվել, և խցի արևելյան հատվածում դրված էին երկու մեծ որձաքարեր (Աղ. 28, Աղ. 60, նկ. 1):

Դամբարան N 38: Ձևով նման է N 34 դամբարանին: «Քարարկղի» չորս պատերն էլ առկա էին: Ծածկված էր մեկ մեծ, ճաքճքված սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 0,9 x 0,9 մ: Խցի լիցքը մանր քարերով առատ հողն է: Հատակամերձ մասում քարաբեկորները եզրագծում և ծածկում են թաղումը: Հարավային պատի երկայնքով բացվեցին տարիքավոր կնոջ կմախքի ոսկորների մի քանի մնացորդներ (վերաթաղում): Խցի ամբողջ տարածքից դուրս էին գալիս խեցու բեկորներ և մանր եղջերավոր անասունի մի քանի ոսկոր (Աղ. 27, նկ. 1-3):

Դամբարան N 39: Ձևով նման է նախորդին: Ծածկված էր փոքր սալաքարերով: Չափերն են՝ 1,4 x 1,1 x 1 մ: Գրանցվեց 18-25 տարեկան կնոջ աճյունի մնացորդների վերաթաղում: Կիսով չափ պահպանված գանգը բացվեց խցի հարավարևմտյան անկյունում, ջարդված կճուճի կեսի մեջ: Վերջույթների մի քանի ոսկոր շարված էին հարավային պատի երկայնքով, արևելյան հատվածում: Արևելյան պատի տակ բացվեցին սարդիոնե մեկ ուլունք և երկաթյա օղի կես մասը: (Աղ. 19, նկ. 9): (Աղ. 60, նկ. 19, Աղ. 61. նկ. 7):

Դամբարան N 40: Ձևով նման է նախորդին: Ծածկված էր երկու սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1 x 1 մ: Թաղումը պատված էր քարերով: Գրանցվեց 20-25 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց խցի հյուսիսարևմտյան անկյունում: Վերջույթների ոսկորները բացվեցին կենտրոնում՝ դրված խցի լայնքով: Ներքին ծնոտի կեսը գտնվում էր հարավարևելյան անկյունում, մյուս կեսը՝ հյուսիսային պատի տակ, կենտրոնական հատվածում: Ամբողջական կամ ջարդոտված խեցեղեն չգտնվեց: Գանգի և լայնակի դրված ոսկորների միջև բացվեցին 3 բրոնզի և 7-8 շաղախից մանր ուլունքներ:

Դամբարան N 41: Ձևով նման է նախորդին: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1 x 0,9 մ: Գրանցվեց 55-65 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց խցի հյուսիսարևելյան անկյունում: Կմախքի մնացած ոսկորները խառը վիճակում բացվեցին արևելյան պատի երկայնքով: Ոսկորների քննությունը ենթադրել է տալիս, որ մահացածի մարմինն ինչ-որ ձևով հենել են արևելյան պատին, թեև բոլոր դեպքերում երևում էր, որ կմախքի անատոմիական դիրքը խախտված էր: Խցի տարբեր հատվածներից դուրս եկան խեցու բեկորներ, կենդանիների ոսկորներ: Արևելյան պատի կենտրոնական մասից դուրս եկավ փոքրիկ սափոր՝ մոտ 30 սմ դեպի կենտրոն, երկաթյա դանակի և դաշույնի բեկորներ: Գանգի վրա բացվեց շատ վատ պահպանված բրոնզյա թիթեղից գլխազարդ, ծոծրակի մոտ՝ գայիսոնի բրոնզյա գլխադիր: Մի քանի տեղով գրանցվեցին մոխրի հետքեր: (Աղ. 19, նկ. 10-11, Աղ. 60, նկ. 4, Աղ. 61, նկ. 4, 6, 9):

Դամբարան N 42: Ձևով նման է նախորդներին: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1 x 0,9 մ: Գրանցվեց 20-25 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը գտնվեց խցի հյուսիսարևելյան անկյունում, իսկ կմախքի մնացած մի քանի ոսկորները՝ արևելյան պատի երկայնքով: Կմախքի ոսկորների մոտ և հարավային պատի տակ դուրս եկան ջարդոտված խեցու բեկորներ: Բացվեցին նաև մանր եղջերավոր անասունի մի քանի ոսկոր: Երկու տեղով, գանգի մոտ արձանագրվեցին կրակի հետքեր: (Աղ. 19, նկ. 1-3):

Դամբարան N 43: Ձևով նման է նախորդներին: Չափերն են՝ 1,5 x 1,1 x 0,9 մ: Ծածկված է երեք սալաքարերով: Գրանցվեց 50-60 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց արևմտյան պատի

մոտ, կենտրոնական հատվածում, վերջույթների ոսկորները՝ արևելյան պատի տակ: Գանգի մոտ (ծոծրակի կողմից) բացվեց բրոնզից զարդ, տափակ, երկու կողմից մշակված կավե իր, դանակի բեկոր և խխունջից զարդ: Գտնվեցին նաև երկաթյա օղի մաս և մեկ ամբողջական կավանոթ: Գանգի շրջակայքից և խցի կենտրոնական հատվածից դուրս եկան մեծ քանակությամբ շաղախից մանր ուլունքներ: (Աղ. 19, նկ. 8, Աղ. 60, նկ. 12-13, 15-17, 21, 23, Աղ. 61, նկ. 5, 8):

Դամբարան N 44: Ձևով նման է նախորդներին: Գրանցվեց 45-55 տարեկան տղամարդու վերաթաղում: Կմախքը բաժանված էր երկու մասի՝ գանգը, թևերի և ողնաշարի ոսկորները գտնվում էին խցի հյուսիսարևմտյան հատվածում, ոտքի ոսկորները՝ իրար վրա դրված՝ հարավարևելյան հատվածում: Կմախքի ոսկորների կույտերի միջև բացվեցին 4 կավանոթներ: Ներքին ծնոտի ոսկորը դուրս եկավ հյուսիսարևելյան մասում: Հարավ-արևելյան անկյունում բացվեց երկաթյա նիզակի ծայր, գանգի մոտ՝ շաղախից մանրուլունքներ և բրոնզե մեկ ուլունք: Բացվեցին նաև կենդանիների ոսկորներ, ջարդոտված խեցու բեկորներ: Կենտրոնական հատվածում գրանցվեցին կրակի հետքեր: (Աղ. 29, նկ. 1-4, Աղ. 61, նկ. 2,3):

Դամբարան N 45: Ձևով նման է նախորդներին: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 1,1 x 0,9 մ: Գրանցվեց 25-35 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց հարավարևելյան հատվածում, վերջույթների ոսկորները՝ հյուսիսարևմտյան անկյունում: Խցի ամբողջ տարածքը լցված էր խոշոր և մանր եղջերավոր անասունի ոսկորներով: Գտնվեցին մեկ մեծ կավանոթ և խեցու բազմաքանակ բեկորներ: Կենդանիների ոսկորների հետ մեկտեղ, տարբեր հատվածներում գտնվեցին բրոնզե բարակ թիթեղի բեկորներ: Երկու տեղով գրանցվեցին կրակի հետքեր: (Աղ. 29, նկ. 6):

Դամբարան N 46: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 1,2 x 1 մ: Գրանցվեց 30-40 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց խցի հյուսիսային պատի կենտրոնական հատվածում: Վերջույթների ոսկորները բացվեցին խցի հարավարևելյան անկյունում: Գանգի տակ դրված էր բրոնզյա նիզակի ծայր: Արևմտյան պատի տակ, խցի լայնքով դրված էր երկաթյա թուր, նրան կից՝ երկաթյա դաշույն: Գանգի շուրջ դուրս եկան բրոնզե գոտու բեկորներ, կիսով չափ պահպանված երկաթյա օղ: Երկու տեղով գրանցվեցին կրակի հետքեր: Խցի տարբեր հատվածներից դուրս էին գալիս կենդանիների ոսկորներ: (Աղ. 60, նկ. 2, 18, Աղ. 64, նկ. 5, Աղ. 61, նկ. 1, Աղ. 63, նկ. 1):

Դամբարան N 47: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու մեծ սալաքարերով: Չափերն են՝ 1,9 x 1,2 x 1 մ: Կմախքից պահպանվել էր մի երկու ոսկորի կտոր: Երկու, գրեթե ամբողջական անոթներ դրված էին խցի հյուսիսային-արևելյան անկյունում: Ջարդոտված կավանոթների բեկորներ դուրս եկան նաև այլ հատվածներից: Խցի հարավ-արևմտյան անկյունում բացվեց երկաթյա նիզակի կոթառ, կենտրոնում՝ բրոնզյա թիթեղի մասեր: (Աղ. 30):

Դամբարան N 48: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,8 x 0,8 մ: Գրանցվեց 45-55 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց խցի կենտրոնական հատվածում, արևելյան պատի մոտ: Կմախքի մնացած ոսկորները, խառնիխուռն իրար վրա լցված, գտնվում էին արևմտյան պատի տակ: Կենդանիների ոսկորներ գրանցվեցին խցի տարբեր հատվածներում: Մեկ կավանոթ բացվեց հյուսիսարևելյան անկյունում, երրորդը՝ հարավային պատի տակ, արևելյան հատվածում: Գանգից մի փոքր վեր՝ արևմտյան պատի տակ, դրված էր գայիսոնի բրոնզյա գլխադիր: Գրանցվեցին կրակի հետքեր: (Աղ. 63, նկ. 12, Աղ. 31:

Դամբարան N 49: Ձևով նման է նախորդներին: Ծածկված է մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,8 x 0,8 մ: Գրանցվեց 25-30 տարեկան կնոջ վերաթաղում: Կմախքի ոսկորները բացվեցին խցի կենտրոնական հատվածում (դրված են խցի լայնքով): Գանգից պահպանվել էր մի քանի բեկոր: Բացվեցին նաև մանր եղջերավոր անասունի ոսկորներ: Խցի տարբեր հատվածներում առկա էին ջարդոտված խեցու բեկորներ: Գտնվեցին շաղախից մի քանի մանր ուլունքներ: (Աղ. 32, նկ. 1):

Դամբարան N 50: Ձևով նման է նախորդներին: Ծածկված է երկու սալաքարերով: Չափերն են՝ 1,4 x 0,9 x 0,7 մ: Գրանցվեց 35-45 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց արևմտյան պատի տակ, երկու մեծ կավանոթների միջև: Կմախքի ոսկորների մի քանի բեկոր բացվեց խցի կենտրոնական հատվածում: Մանր եղջերավոր անասունի ոսկորները կույտով բացվեցին արևելյան պատի տակ: Մեկ փոքրիկ կավանոթ դրված էր խցի հարավարևելյան անկյունում: Կենտրոնում մեկ տեղով գրանցվեցին մոխրի հետքեր: (Աղ. 32, նկ. 50):

Դամբարան N 51: Ձևով նման է նախորդներին: Կմախքի ոսկորների առկայության և պահպանվածության աստիճանը հնարավորություն չտվեց որոշելու ննջեցյալի սեռն ու տարիքը: Գույքը բացվեց խցի հյուսիսարևելյան հատվածում՝ 4 ամբողջական և մեկ թերի պահպանված կավանոթներ: Նրանց միջակայքում բացվեցին կմախքի վերջույթների մի քանի ոսկոր և կենդանիների ոսկորներ: (Աղ. 33):

Դամբարան N 52: Արտաքինից երևում էին ծածկի սալաքարերը, որոնց նախնական դիրքը խախտված էր: Նախորդներից տարբերվում էր նրանով, որ արևելյան և արևմտյան գլխապատեր չուներ: Չափերն են՝ 1,4 x 0,8 x 0,7 մ: Գրանցվեց 25-35 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը դրված էր հյուսիսային պատի տակ, արևել-

յան հատվածում: Կմախքի վերջույթների ոսկորները շարված էին հարավային պատի երկայնքով: Գանգի տակ բացվեց փոքրիկ «աղաման»: Սրունքի ոսկորի և գանգի միջև բացվեց երկաթյա մանգաղ: (Աղ. 34, նկ. 1-2, Աղ. 64, նկ. 2):

Դամբարան N 53: Ծածկված էր մեկ սալաքարով: Արևմտյան կողմում գլխապատ չուներ: Չափերն են՝ 1,6 x 1 x 0,9 մ: Խցի լիցքը մինչև հատակ կավահող էր: Թաղումը կատարվել էր հատակից մոտ 12 սմ բարձրության վրա: Գրանցվեց 18-25 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց խցի կենտրոնական հատվածում, դրված շրջված վիճակում: Վերջույթի մեկ ոսկոր՝ հարավարևելյան անկյունում: Հարավային պատին կից դրված գույքը բաղկացած էր մեկ մեծ կավանոթից, «աղամանից» և կավանոթի հատակի բեկորներից: (Աղ. 34, նկ. 3-5):

Դամբարան N 54: Ծածկված էր մեկ սալաքարով: Արևմտյան կողմում գլխապատ չուներ: Չափերն են՝ 1,6 x 1 x 1 մ: Խցի լիցքը մինչև հատակ կավահող էր: Թաղումը կատարվել էր հատակից մոտ 30 սմ բարձրության վրա: Գրանցվեց 20-30 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց խցի հարավարևելյան հատվածում, վերջույթի մի քանի ոսկոր՝ հյուսիսային պատի տակ: Անմիջապես հատակին բացվեցին մանր եղջերավոր անասունի ոսկորներ: Գույքը բաղկացած էր երկու ամբողջական անոթներից, կավանոթների բեկորներից, բրոնզե ասեղից, երկաթյա դանակի շեղբի բեկորից և կաորի խխունջից: (Աղ. 64, նկ. 5, Աղ. 35, Աղ. 62, նկ. 6):

Դամբարան N 55: Ծածկված էր մեկ սալաքարով: Արևմտյան կողմում գլխապատ չուներ: Չափերն են՝ 1,7 x 1 x 1,1 մ: Թաղումը պատված էր քարերի շերտով: Գրանցվեց 30-35 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգի ոսկորի բեկորներ բացվեցին խցի հարավային արևմտյան հատվածում, վերջույթի մի քանի ոսկորներ՝ արևելյան և արևմտյան պատին կից: Տարբեր հատվածներից դուրս էին գալիս կենդանիների ոսկորներ և խեցու բեկորներ: (Աղ. 36):

Դամբարան N 56: Ծածկասալը չէր պահպանվել: Մաքրման աշխատանքները ավարտելուց հետո պարզ դարձավ, որ այն ամբողջովին ավերված էր: Գտնվեցին խեցու մի քանի բեկորներ:

Դամբարան N 57: Արտաքինից երևում էին ծածկի երեք սալաքարերը: Հատակագծում ուղղանկյուն դամբանախուցը «քարարկղ» է, կառուցված անտաշ խոշոր քարերով: Արևելքից և արևմուտքից գլխապատեր չուներ: Երկայնական առանցքով ուղղված է արևելքից արևմուտք: Հյուսիսային պատը շարված էր երեք խոշոր և մեկ փոքր, հարավայինը՝ երկու խոշոր որձաքարերով: Խցի լիցքը կավահողն է: Չափերն են՝ 2,9 x 0.9 x 0,8 մ:

Գրանցվեց խմբային թաղում: Արևմտյան հատվածում, խցի լայնքով թաղվել են երկու տղամարդ՝ աջ կողքի վրա կծկված դիրքով, գլխով դեպի հյուսիս (անմիջապես արևմտյան պատի տակ թաղվածի տարիքը՝ 25-30 տարեկան, հաջորդինը՝ 50-60 տարեկան): Ընդ որում, այս վերջին անձնի կծկման աստիճանը այնքան մեծ էր, որ ոտքի ոսկորները կպչում էին կողոսկրներին: Երիտասարդ տղամարդու ոտքերի վրա բացվեցին մանր եղջերավոր անասունի ոսկորներ: Խցի արևելյան հատվածում 30-40 տարեկան կնոջ և 2-3 տարեկան երեխայի անձնների մնացորդներն էին: Կմախքի ոսկորները խառը լցված էին իրար վրա: Խցի կենտրոնական հատվածում լայնքով դրված էր քարերի շար, որը փաստորեն միջնապատի դեր էր կատարում՝ միմյանցից անջատելով այս թաղումները: Երիտասարդ տղամարդու դիմահայաց մասում և ծոծրակի մոտ բացվեցին բրոնզից նիզակի և տեգի ծայրեր, շքասեղ: Կավանոթների մեծ մասը (12 անոթ) դրված էին այս անձնի չորս բոլորը և վրան: Թերի պահպանված կավանոթներ բացվեցին նաև կնոջ և երեխայի ոսկորների միջակայքում: Խցի կենտրոնական հատվածում երկու-երեք տեղով գրանցվեցին կրակի հետքեր: (Աղ. 37, Աղ. 62, նկ. 1, 2, 5):

Դամբարան N 58: Ծածկված էր մեկ սալաքարով: Արևմտյան կողմից գլխապատ չուներ: Չափերն են՝ 1,4 x 0,9 x 0,6 մ: Դամբարանի լիցքը կավահող էր: Գանգի և վերջույթների մի քանի ոսկորներ բացվեցին խցի հյուսիսային արևմտյան հատվածում: Վեց կավանոթներ շրջանաձև շարված էին կմախքի մնացորդների շուրջը: (Աղ. 38):

Դամբարան N 59: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,7 x 0,6 մ: Գրանցվեց 18-20 տարեկան կնոջ վերաթաղում: Կմախքի մնացորդները բացվեցին խցի կենտրոնական հատվածում: Խցի արևմտյան հատվածում բացվեց բրոնզե բարակ լարից ապարանջան: (Աղ. 39, Աղ. 63, նկ. 10a):

Դամբարան N 60: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,9 x 0,7 մ: Բացվեցին կմախքի ոսկորների մի քանի բեկորներ՝ խցի արևմտյան հատվածում, հարավային և հյուսիսային պատերին կից: Սեռը և տարիքը հնարավոր չեղավ որոշել: Գույքը՝ 4 ամբողջական կավանոթ և խեցու բեկորներ, դրված էին կենտրոնական հատվածում՝ խցի լայնքով: (Աղ. 40):

Դամբարան N 61: Ձևով նման է նախորդներին: Արտաքինը մի փոքր խաթարված էր: Պահպանվել էին ծածկի երկու սալաքարերը: Չափերն են՝ 1,4 x 0,6 x 0,7 մ: Կմախքի ոսկորների հետքեր չգրանցվեցին: Գույքը՝ բաղկացած 6 կավանոթներից (2-ը բեկորային վիճակում), դրված էր կենտրոնական հատվածում՝ խցի լայնքով: (Աղ. 41, Աղ. 62, նկ. 3-4):

Դամբարան N 62: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր երեք սալաքարերով: Չափերն են՝ 1,5 x 0,9 x 0,9 մ: Կմախքի ոսկորնե-

որի հետքեր չգրանցվեցին: Գույքը բաղկացած էր 3 կավանոթներից, մեկը դրված հյուսիսային պատի մոտ, երկուսը հարավային պատին կից՝ խցի կենտրոնական հատվածում: (Աղ. 42):

Դամբարան N 63: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,8 x 0,6 մ: Բացվեցին կմախքի վերջույթների երեք ոսկորի բեկոր: Գույքը բաղկացած էր բրոնզե ապարանջանից (դուրս եկավ բազկոսկրի բեկորին կպած՝ խցի կենտրոնական հատվածում) և 5 կավանոթներից՝ 2-ը դրված հյուսիսարևելյան անկյունում, 2-ը՝ հարավային պատին կից՝ կենտրոնական հատվածում, մեկը՝ թերի պահպանված հյուսիսային պատին կից՝ արևմտյան հատվածում: (Աղ. 43, Աղ. 63, նկ. 11b):

Դամբարան N 64: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ, տձև քարաբեկորով, որի շուրջ դրված էին երեք միջին մեծության քարեր, որոնք լրացնում էին ծածկը: Չափերն են՝ 1,5 x 0,8 x 0,6 մ: Գրանցվեց 45-60 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց արևմտյան գլխապատի կենտրոնական հատվածում, վերջույթի ոսկորները՝ գանգին կից հարավարևմտյան անկյունում իրար վրա լցված անոթների տակ: Գանգին կից դրված էր բրոնզյա «սևանյան» տիպի դաշույն՝ ցանցկեն գլխիկով: Հարավային պատին կից, արևմտյան անկյունից սկսած դրված էին 4 կավանոթներ: (Աղ. 44):

Դամբարան N 65: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,9 x 0,8 մ: Կմախքի ոսկորներ բացվեցին խցի հարավարևմտյան հատվածում: Սեռը և տարիքը հնարավոր չեղավ որոշել: Գույքը բաղկացած էր 4 կավանոթներից, դրված՝ մեկը արևմտյան անկյունում, երկուսը՝ իրար վրա՝ հարավային պատին կից, կենտրոնական հատվածում, մեկը հյուսիսային պատին կից, արևելյան հատվածում: (Աղ. 45):

Դամբարան N 66: Ձևով նման է նախորդներին: Արտաքինից մի փոքր խաթարված էր: Պահպանվել էին ծածկասալերից երկուսը: Չափերն են՝ 1,9 x 0,9 x 0,6 մ: Արևմտյան հատվածում գտնվեցին ոսկորի մնացորդներ: Գույքը, բաղկացած 3 անոթներից, դրված էր արևմտյան գլխապատին կից: (Աղ. 46):

Դամբարան N 67: Ձևով նման է նախորդներին: Երկայնական առանցքով ուղղված էր գրեթե հյուսիսից-հարավ: Արտաքինից խաթարված էր: Պահպանվել էին ծածկի երկու քարերը: Խցում գույք և ոսկորներ չկային, բացառությամբ խեցու մի քանի բեկորների: Չափերն են՝ 1,4 x 0,7 x 0,7 մ:

Դամբարան N 68: Ձևով նման է նախորդներին: Չափերն են՝ 1,5 x 0,8 x 0,6 մ: Ծածկված էր երկու սալաքարերով: Բացվեցին ոսկորի մի քանի բեկոր: Գույքը բաղկացած էր 4 կավանոթներից՝ 3-ը դրված հյուսիսային պատին կից, մեկը՝ հարավային պատին կից, խցի

կենտրոնական հատվածում: Արևելյան գլխապատին կից դրված էր խոշոր քարաբեկոր:

Դամբարան N 69: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 0,8 x 0,6 մ: Խցի արևմտյան գլխապատի տակ, երկու անոթների միջակայքում բացվեց գանգի ոսկորների մի քանի բեկոր: (Աղ. 47):

Դամբարան N 70: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,2 x 0,8 x 0,6 մ: Խցի տարբեր հատվածներից դուրս եկան ոսկորի մի քանի մնացորդներ: Կենտրոնական հատվածում կային 3 կավանոթներ և խեցու բեկորներ՝ իրար վրա դրված, մեկ անոթ հյուսիսային պատին կից՝ կենտրոնական հատվածում: (Աղ. 48):

Դամբարան N 71: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ մեծ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 0,8 x 0,6 մ: Խցի տարբեր հատվածներից դուրս եկան ոսկորի մնացորդներ: Գույքը դրված էր խցի կենտրոնական հատվածում՝ բաղկացած 6 կավանոթներից և շերեփից: (Աղ. 49):

Դամբարան N 72: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,8 x 0,6 մ: Խցի արևմտյան գլխապատի տակ, երկու կավանոթների միջակայքում դուրս եկան ոսկորի մնացորդներ:

Դամբարան N 73: Ձևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,8 x 0,6 մ: Բացվեցին ոսկորի մի քանի բեկոր և 5 կավանոթներ: Երեքը՝ հյուսիսային պատի, երկուսն իրար մեջ դրված՝ հարավային պատի տակ, կենտրոնական հատվածում: (Աղ. 50):

Դամբարան N 74: Ձևով նման է նախորդներին: Ծածկասալերը չէին պահպանվել: Չափերն են՝ 1,1 x 0,8 x 0,6 մ: Դամբարանը թալանված էր: Գտնվեցին խեցու մի քանի բեկոր:

Դամբարան N 75: Ծածկված էր մեկ սալաքարով: Հատակագծում ուղղանկյուն «հիմնահողային» դամբանախուցը երկայնական առանցքով ուղղված էր արևելքից-արևմուտք: Չափերն են՝ 1,6 x 1,2 x 0,7 մ: Խցի լիցքը ամուր կավահողն է: Գրանցվեց 20-25 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց կենտրոնական հատվածում: Մնացած ոսկորները խառը լցված էին գանգի տակ և շուրջը: Երեք կավանոթներ դրված էին խցի արևմտյան գլխապատի տակ: Մեծ քանակով սարդիոնից և խխունջից ուլունքներ դուրս եկան գանգի մոտից, բրոնզե ապարանջան, բրոնզից զարդ, կոճակներ՝ ոսկորների մեջից: (Աղ. 51, Աղ. 63, նկ. 2-9, 11a):

Դամբարան N 76: Ձևով նման է N 58-ին և հաջորդներին: Պահպանվել էր ծածկասալերից մեկը: Չափերն են՝ 1,3 x 0,7 x 0,6 մ:

Գտնվեցին ոսկրի և խեցու մի քանի բեկորներ (Աղ. 52):

Դամբարան N 77: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,8 x 0,6 մ: Աճյունի հետքեր չգրանցվեցին: Խցի կենտրոնում դրված էր մեկ մեծ ծձում: (Աղ. 53):

Դամբարան N 78: Չևով նման է N 38-ին և հաջորդներին: Ծածկված էր սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,8 x 0,7 մ: Խցի կենտրոնական հատվածում բացվեցին ոսկրի և խեցու մի քանի բեկոր: Մեկ ամբողջական անոթ դրված էր հարավարևելյան անկյունում:

Դամբարան N 79: Չևով նման է նախորդին: Ծածկված էր մեկ խոշոր սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 1 x 0,9 մ: Աճյունի հետքեր չգրանցվեցին: Առկա էին խեցու մի քանի բեկոր և երկկանթ անոթ: (Աղ. 54):

Դամբարան N 80: Չևով նման է նախորդին: Ծածկված էր սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 0,9 x 0,8 մ: Աճյունի հետքեր չգրանցվեցին: Առկա էին խեցու մի քանի բեկոր:

Դամբարան N 81: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1 x 0,8 x 0,6 մ: Աճյունի հետքեր չգրանցվեցին: Գտնվեց խեցու մի քանի բեկոր:

Դամբարան N 82: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1 x 0,8 մ: Խցի հյուսիսային արևմտյան անկյունում բացվեցին ոսկրի մնացորդներ և մեկ կավանոթ:

Դամբարան N 83: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 0,9 x 1 մ: Խցի արևմտյան հատվածում դուրս եկան ոսկրի և խեցու մի քանի բեկորներ:

Դամբարան N 84: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 1 x 0,9 մ: Աճյունի և գույքի հետքեր չգրանցվեցին:

Դամբարան N 85: Չևով նման է N 77-ին և նախորդներին: Ծածկված էր երկու սալաքարով: Չափերն են՝ 1,9 x 0,8 x 0,8 մ: Գրանցվեց 55-65 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը բացվեց խցի կենտրոնական հատվածում, վերջույթների ոսկորները՝ հարավային պատին կից: Խցի հյուսիսարևելյան անկյունում՝ իրար վրա դրված բացվեցին երկու անոթներ, մեկ անոթ՝ հյուսիսային պատի կենտրոնական հատվածում և մեկ շրջված վիճակում դրված, արևմտյան հատվածում: Գանգին անմիջապես կից բացվեց բրոնզյա զարդարուն գոտի և գավազանի գլխադիր: (Աղ. 55, Աղ. 63, նկ. 13, Աղ. 65):

Դամբարան N 86: Չևով նման է N 84-ին և նախորդներին: Ծածկված էր երեք սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 1 x 0,8 մ: Գրանցվեց 40-45 տարեկան տղամարդու վերաթաղում: Գանգը և վերջույթի ոսկորները խառը վիճակում բացվեցին խցի կենտրոնում: Գանգի դիմաց, հյուսիսային պատին կից, դրված էր կարմրավուն մեծ անոթ:

Մեկ այլ, օձագալարով զարդարված անոթ դրված էր հարավային արևմտյան անկյունում, մեկ փոքրիկ անոթ՝ արևմտյան պատի կենտրոնական հատվածում: Մեծ քանակությամբ խեցու բեկորներ և կենդանիների ոսկորներ բացվեցին տարբեր հատվածներում: (Աղ. 56, Աղ. 64, նկ. 4):

Դամբարան N 87: Չևով նման է նախորդին: Ծածկված էր մեկ սալաքարով: Չափերն են՝ 1,4 x 1,1 x 0,8 մ: Խցի կենտրոնում առկա էին ջարդոտված խեցու բեկորներ:

Դամբարան N 88: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու քարաբեկորներով: Չափերն են՝ 1,2 x 0,8 x 0,9 մ: Խցի հարավային պատի տակ բացվեցին ոսկրի մնացորդներ և խեցու բեկորներ:

Դամբարան N 89: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու սալաքարով: Չափերն են՝ 1,2 x 0,8 x 0,7 մ: Գրանցվեց 20-25 տարեկան տղամարդու դիաթաղում: Գանգը բացվեց խցի հարավային արևմտյան անկյունում, անոթի վրա դրված, վերջույթի մի քանի ոսկոր՝ հարավային պատի տակ: Հյուսիս-արևմտյան անկյունում բացվեց մեծ անոթի հատակամերձ մասը: Վերջույթի ոսկորների մեջ գտնվեց երկաթյա մանգաղ և բրոնզի լարից ապարանջան (Աղ. 57, 63, նկ 10բ, Աղ. 64, նկ. 1):

Դամբարան N 90: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու սալաքարով: Չափերն են՝ 1,3 x 0,3 x 0,7 մ: Աճյունի մնացորդներ չգրանցվեցին: Առկա էին խեցու մի քանի բեկոր:

Դամբարան N 91: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր մեկ խոշոր սալաքարով: Ըստ երևույթին ծածկասալերը եղել են երկուսը: Չափերն են՝ 1,3 x 0,9 x 0,8 մ: Գրանցվեց 25-30 տարեկան կնոջ վերաթաղում: Գանգը բացվեց խցի հյուսիս-արևմտյան անկյունում: Տարբեր հատվածներից դուրս եկան մեծ քանակությամբ խեցու բեկորներ:

Դամբարան N 92: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երեք սալաքարով: Չափերն են՝ 1,5 x 1 x 0,8 մ: Խցի կենտրոնում բացվեցին ոսկրի մնացորդներ, հարավարևելյան անկյունում՝ կավանոթ: (Աղ. 58):

Դամբարան N 93: Չևով նման է նախորդներին: Ծածկված էր երկու մեծ սալաքարերով: Չափերն են՝ 1,5x1,1x0,8 մ: Խուցն ամբողջ մակերեսով, մինչև 0,4 մ խորության վրա պատված էր մանր ու միջին մեծության քարերով: Գրանցվեցին երկու տղամարդու (35-45 և 45-55 տարեկան) աճյունների մնացորդներ: Կմախքի ոսկորների միջև դրված էին երկու տարբեր կճուճների բեկորներ, մեկ ամբողջական կճուճ և երկաթյա նիզակի կոթառ (Աղ. 11, նկ. 3, 4):

Դամբարանային կառույցներ և թաղման ծես: Թալինի բոլոր դամբարաններն այսպես կոչված «սալարկղեր» են: Դամբանախցերի այս տիպը լայն տարածում է ստանում հատկապես վաղ երկաթե

դարում. Կարմիր բերդ, Հոռոմ, Էլառ, Ռեդկին Լագեր, Գոլովինո, Մակարաշեն, Մուսիերի և այլն[37]: Գերակշռում են անհատական թաղումները: Բացառություն են կազմում զույգ թաղումներով NN 20, 93 և խմբային թաղումով N 57 համալիրները: Հարկ է նշել, որ Թալինում, ինչպես և այլուր, զգալի թիվ են կազմում հուշադամբարանները՝ 13 դամբարան: Հատկանշական է, որ Թալինի՝ ծծում պարունակող երկու համալիրները (NN 1 և 77) հուշադամբարաններ են:

Թալինի դամբարանադաշտում արձանագրված ուշագրավ փաստերից մեկն էլ այն է, որ այստեղ բացարձակ մեծամասնություն են կազմում վերաթաղումները: Խախտված անատոմիական կազմով ու դիրքով կմախքների մնացորդների մանրամասն գրանցումը և համեմատությունը թույլ են տալիս վստահաբար պնդելու, որ դամբարաններում վերաթաղվել են արդեն փափուկ հյուսվածքներից անջատված կմախքի ոսկորները միայն: Թաղման այս ձևը հաճախ է հանդիպում Անդրկովկասի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների հուշարձաններում՝ Աթարբեկյան, Արթիկ, Նորատուս, Խանլար, Մինգեչաուր և այլուր[38]: Անատոմիապես անխաթար կմախքի մնացորդներ պարունակող դամբարաններում (NN 6,25, 37, 57) գրանցվել են դիադրման տարբեր ձևեր: Մասնավորապես, N 25-ում ննջեցյալին հենել են պատին, NN 6 և 37–ում՝ ննջեցյալները թաղվել են աջ կողքի վրա, կծկված դիրքով: Ի տարբերություն սրանց, N 57 դամբարանում, աջ կողքի վրա, կծկված երկու կմախքները դրված էին խցի լայնքով: Հատկանշական է, որ Էլառի սալարկղերում նույնպես ննջեցյալներին թաղել են խցի լայնքով[39]: Նշենք նաև, որ գրեթե բոլոր դամբարաններում հանդիպում են զոհաբերված կենդանիների ոսկորներ: Անոթների մեջ առկա են նաև, որպես սնունդ օգտագործված կենդանական մնացորդներ: Թաղման ծեսի հետ կապված՝ Թալինի դամբարաններում գրանցվել է հետաքրքիր մի սովորություն ևս:

[37] *Հ.Ա. Եսայան*, Ереван, с. 34-39, *Հ.Ա. Եսայան*, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 113-123, *Р.С. Бадалян, О.К. Агекян*, Раскопки Оромского некрополя (предварительный отчет о работах 1987 года), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան 1992, էջ 67-74, *Է.Վ. Խանզադյան*, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 88-89, *Հ. Մնացականյան*, Դամբարանի պեղումները Գոլովինո գյուղում, Աշխատություններ Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի, հ. V, Երևան, 1959, էջ 5-62, *А.А. Мартиросян*, Армения в эпоху ..., с. 142-143, *J. de Morgan*, Mission Scientifique au Caucase, Paris, 1889, p. 64-74.

[38] *А. Мнацаканян*, Раскопки могильников в селении Атарбекян в Армянской ССР, Краткие Сообщения Института Материальной Культуры, вып. 60, 1955, с. 35, *Т.С. Хачатрян*, Артикский Некрополь, Ереван, 1979, с. 40-41, 43, 45, *А.А. Мартиросян*, Армения в эпоху ..., с. 194-196, *Я. Гуммель*, Археологические очерки, Баку, 1940, с. 32, 61, *Г.М. Асланов, Р.М. Ваидов, Г.И. Ионе*, Древний Мингечаур, Баку, 1959, с. 50-52, 57, 62.

[39] *Է.Վ. Խանզադյան*, Էլառ-Դարանի, էջ 88:

Վերաթաղումների մեծ մասում կմախքի ոսկորների կույտերը կամ առանձնացված գանգերը դրված էին երկու անոթների միջև՝ սովորաբար արևմտյան գլխապատի տակ: Անխտիր բոլոր դամբարաններում փաստագրվել են փայտածուխի մնացորդներ, ինչպես թաղվածի շուրջ, այնպես էլ զոհաբերված կենդանիների ոսկորների միջակայքում:

Թալինի համալիրների գույքի տիպաբանական կազմը և տեսականին: Թալինի դամբանադաշտից հայտնաբերված գտածոների մեջ զգալի թիվ են կազմում զենքերը՝ բրոնզե և երկաթե նիզակներ, դաշույններ, բրոնզե նետասլաքներ, տեգ, երկաթյա սուր:

Բրոնզե նիզակները ներկայացված են երկու տիպով: Նիզակների՝ Ս. Եսայանի[40] կողմից առանձնացված I տիպին բնորոշ հատկանիշներ ունի N 57 դամբարանի նմուշը (Աղ. 62, նկ. 1): Փետրածև (թույլ ընդգծված ողով) սայրով այս նիզակի բրոնզե զուգահեռները հիմնականում հայտնի են ուշ բրոնզի կամ ուշ բրոնզ-վաղ երկաթ անցման փուլի համալրներից՝ Լճաշեն, Գյումրի, Նորատուս, Կալաքենդ և այլուր[41]: Փետրածև սայրը և կոթառի կարճությունը վկայում են, որ Թալինի օրինակը պատկանում է ուշ բրոնզի տիպաբանական կազմին: Ասվածի լավագույն ապացույցը Օշականի N 94 դամբարանի օրինակն է, որը բառացիորեն նույնանում է Թալինի գտածոյի հետ[42]: Հատկանշական է, որ նույնատիպ նիզակով Անգեղակոթի N2 դամբարանի թաղման իրավիճակը հիշեցնում է քննարկվող համալիրում արձանագրվածը[43]: Նիզակների II տիպին[44] բնորոշ հատկանիշներ ունեն NN 2, 13, 25, 46 դամբարաններից հայտնաբերվածները (Աղ. 59, նկ. 1, Աղ. 60, նկ. 2): Նշվածների զուգահեռները հանդիպում են հատկապես վաղ երկաթի դարի համալիրներում: Եթե ուշ բրոնզի դարի տիպաբանական կազմին վերագրվող օրինակները որպես կանոն «դափնատերև» սայրով են[45], ապա քննարկվող նմուշներն ունեն նեղ և երկարավուն սայր, ինչը տիպական է վաղ երկաթեդարյան օրինակների համար[46]: Բացի այս, ժամանակին արդեն նշվել է մասնագիտական գրականության մեջ, որ երկաթյա նիզակների վաղագույն նմուշների կոթառն անհամեմատ ավելի երկար է, քան սայրը, ինչը լավ արտացոլված է Թալինի N 44 դամբարանից գտնված (Աղ.

[40] *Հ.Ա. Եսայան*, Оружие и военное дело древней Армении (III-I тыс. до н.э.), Ереван, 1966, с. 16.

[41] *А.А. Мартиросян*, Армения в эпоху бронзы..., Т. IX, рис. 49, 81, *W. Nagel, E. Strommenger*, Kalakent, Berlin, 1985, T. 47:7, Abb. 26:a3, Abb. 27.

[42] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանտարյան*, Ошакан I, Ереван, 1988, Т. XCVI:1.

[43] *Ս. Հայրիրյան*, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 174, Աղ. 22բ:

[44] *Հ.Ա. Եսայան*, Оружие и военное дело древней Армении, с. 20.

[45] *Т.С. Хачатрян*, Древняя культура Ширака, Ереван, 1975, рис. 116.

[46] *А.А. Мартиросян*, Армения в эпоху бронзы и раннего железа, рис 54, С.А. Есаян, Ереван, Т. 26:3, *Է.Վ. Խանզադյան*, Էլառ-Դարանի, Աղ. XVIII:7,

61, նկ. 2) և համաժամանակյա այլ հուշարձաններից հայտնի երկաթյա օրինակների վրա[47]:

Դամբանադաշտից հայտնաբերված զենքի նմուշների մեջ զգալի թիվ են կազմում դաշույնները: Սրանց երկաթյա օրինակների մեծ մասը խիստ քայքայված է: Համեմատաբար լավ պահպանված բեկորներից երևում է, որ դաշույնների երկաթյա օրինակների շեղբերը կտրվածքում ռոմբաձև, լայն հիմքով, ձգված եռանկյունու տեսք ունեն: Հիմքի կենտրոնից շարունակվող պոչուկը ծողաձև է (Աղ. 61, նկ. 3): Քննարկվող առաջին օրինակը գործնականում նույնն է, ինչ դաշույնների «սևանյան» տիպը, միայն այն տարբերությամբ, որ չունի բրոնզե գոտեկապ: «Սևանյան» տիպի բրոնզե դաշույնի դասական մի օրինակ ունենք N 61 դամբարանից (Աղ. 62, նկ. 3): Թալինի դամբարաններում առկա են նաև բրոնզե և երկաթե դաշույնների այնպիսի օրինակներ, որոնց պոչուկն ստացվել է շեղբի հիմքն աստիճանաբար նեղացնելու շնորհիվ (Աղ. 60, նկ. 3): Ներկայացված դաշունատեսակների ժամանակագրության և տարածման սահմանների մասին հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աստիճանաբար նեղացող հիմքով բրոնզե նմուշները հանդես են գալիս ուշ բրոնզի վաղ փուլերից և հարատևում մինչև վաղ երկաթի դարը: «Սևանյան» տիպի դաշունատեսակների բրոնզե նմուշները մասսայական են դառնում ուշ բրոնզի վերջում և հատկապես մ.թ.ա. II-I հազարամյակների սահմանագծին[48]: Մասնավորապես, քննարկվող նմուշի անմիջական զուգահեռները (ներառյալ բրոնզե ցանցկեն գլխիկը (Աղ. 62, նկ. 4)) հայտնի են Զոլաքարից[49]: Թալինից հայտնաբերված բրոնզե նետասլաքները (Աղ. 60, նկ. 5-9) Այսրկովկասի վաղ երկաթի համալիրներում մասսայաբար հանդիպող նմուշների կրկնօրինակներն են: Լճաշենի N 11 կուրգանից, Արթիկի 109 կատակոմբից հայտնաբերված օրինակները վկայում են, որ նետասլաքների այս տիպի նախօրինակները Հայաստանում հանդես են գալիս ուշ բրոնզի վաղ փուլերից սկսած[50]: N 46 դամբարանից հայտնաբերված երկաթյա սրի դաստակը չի պահպանվել, ուստի վերջինիս ընդհանրությունները համաժամանակյա նմուշների հետ հնարավոր է արձանագրել շեղբով միայն (Աղ. 64, նկ. 5): Ընդգծված կենտրոնական ող ունեցող շեղբով սրերը Հայաստանում հանդես են գալիս երկաթի դարի վաղ փուլերից և հատկապես մասսայական դառնում մ.թ.ա VIII

[47] *Г.Е. Арешян,* О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе, Историко-Филологический Журнал, 2, 1974, с. 197-198.

[48] *С.А. Есаян,* Оружие и военное дело древней Армении, с 58-77, *Օ.Ս. Խնկիկյան,* Հին Հայաստանի դաշույնատեսակների տեղայնացման փորձ (Ուշ բրոնզ-վաղ երկաթ), Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1991, էջ 79-91:

[49] *Ա.Ս. Փիլիպոսյան,* Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Երևան, 1999, Աղ. 56:3,4:

[50] *Т.С. Хачатрян,* Древняя культура Ширака, с. 181.

դարից: Մեծ խումբ են կազմում երկաթյա դանակները: Սրանք նույնպես վատ են պահպանվել: Հանդիպում են ինչպես ուղիղ շեղբով (Աղ. 59, նկ. 13), այնպես էլ կորացող շեղբով (Աղ. 61, նկ. 3-4) և միայն շեղբի ավարտը կեռ տարբերակները: Հատկանշական է, որ դանակները հանդիպում են հիմնականում կանանց թաղումների դեպքում: Դանակների հիշյալ տարբերակներն արձանագրվում են երկաթի գրեթե բոլոր փուլերի համալիրներում[51]:

Առանձին խումբ են կազմում մականի բրոնզե գլխիկները (Աղ. 63, նկ. 12-13): Այսպես կոչված «զինվորի դամբարանների» ի հայտ գալու հետ մեկտեղ, վերոհիշյալները լայն տարածում են ստանում Այսրկովկասում[52]:

Ուշագրավ նմուշներով են ներկայացված գոտիները: Թալինի անզարդ գոտիների մեծ մասը պահպանվել է բեկորային վիճակում: Սրանց զուգահեռները հանդիպում են վաղ երկաթի բազմաթիվ հուշարձաններում (Կարմիր Բերդ, Օշական, Մակարաշեն և այլուր): Ամբողջական պահպանված օրինակներից մեկի եզրերը զարդարված են ցանցագոտիով (Աղ. 60, նկ. 1), որը նույնանում է Կարմիր Բերդից հայտնաբերված նմուշի հետ[53]: Շատ ավելի հարուստ զարդարանք ունի N 85 դամբարանից հայտնաբերվածը: Շուրջ 80 սմ երկարություն և 9 սմ լայնություն ունեցող այս նմուշի ողջ մակերեսը հարդարված է «հյուսածո» զարդաշղթաներով (Աղ. 85): Հատկանշական է, որ նշված զարդաշղթայով գոտիներ մեծ քանակով հայտնի են հատկապես Կալաքենդից[54]: Հարկ է թերևս ավելացնել, որ գոտիներով ներկայացված կալաքենդյան համալիրները զուգորդվում են քննարկվող դամբարանների հետ մետաղական գտածոների բազմաթիվ նմուշներով, ինչի մասին խոսվել է վերևում: Հատկանշական է, որ քննարկվող գոտու զարդաձևը տեսնում ենք նաև Սպանդարյանի դամբարանից գտնված օրինակի վրա, որի գտածոների զուգահեռները Թալինի համալիրներում են[55]:

[51] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, Т. XI:1, *Т.С. Хачатрян,* Древняя культура Ширака, рис. 151, *Ս. Հարությունյան,* Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Աղ. 5բ:

[52] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, Т. XI, XVI:6, *Б.А. Куфтин,* Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, Т. XXXIV, *Г.М. Асланов, Р.М. Ваидов, Г.И. Ионе,* Древний Мингечаур, Баку, 1959, Т.XVI, *К.Н. Пицхелаури,* Основные проблемы истории племен Восточной Грузии в XV-VII вв. до н.э., Тбилиси, 1973, Т. LXIX:235, *А.Н. Каландадзе,* Археологические памятники доантичной эпохи Самтавро. Мцхета, Т. VI, Тбилиси, 1982, 18:547, *W. Nagel, E. Strommenger,* Kalakent, Abb. 49, T. 47, 69.

[53] *С.А. Есаян,* Ереван, Т. 27:2.

[54] *W. Nagel, E. Strommenger,* Kalakent, T. 20, 26, 43, 55, 66.

[55] *Г. Е. Арешян,* О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе, с. 198.

Ա. Փիլիպոսյան, Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Աղ. 57:

Դամբանադաշտից հայտնաբերված պերճանքի առարկաները ներկայացված են այնպիսի նմուշներով, որոնք մասսայաբար հանդիպում են Անդրկովկասի ուշ բրոնզ-երկաթի դարերի գրեթե բոլոր համալիրներում: Մասնավորապես N 57 դամբարանի, գալարափաթ գլխիկով զարդաքորոցի (Աղ. 62, նկ. 5) զուգահեռները հայտնի են հատկապես ուշ բրոնզի համալիրներում՝ Արթիկ, Բեշտաշեն, Բորնիգելե, Թլի և այլն[56]: Սամքավորոյից հայտնաբերված նմանատիպ զարդաքորոցների ուսումնասիրությունը վկայում է, որ Անդրկովկասում վերջիններս ի հայտ են գալիս միջին բրոնզի փուլից, առավել տարածում ստանում ուշ բրոնզում: Ամենաուշ օրինակները հանդիպում են վաղ երկաթի այն համալիրներում, որոնք բազմաթիվ հատկանիշներով դեռևս աղերսվում են նախորդ փուլի համալիրների հետ[57]: Հետաքրքիր նմուշ է նաև N 6 դամբարանից հայտնաբերված օվալածև գլխիկով զարդաքորոցը (Աղ. 60, նկ. 11): Զարդաքորոցների այս տիպը մեծ տարածում է ստանում միջին բրոնզի դամբարաններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. III-II հազարամյակների սահմանագլխից մինչև մ.թ.ա. XVIII դ. վերջը: Հետագայում հատ ու կենտ օրինակներով դրանք արձանագրվում են ուշ բրոնզի տարբեր ենթափուլերի համալիրներում: Նշված զարդաքորոցների գոյատևման վերին սահմանն ըստ երևույթին ընկնում է մ.թ.ա. XII-XI դդ. շրջանակներում[58]: Հիշյալ ժամանակահատվածով են թվագրվում Թլիի դամբարանները, ուր և արձանագրվել է քննարկվող տիպի ամենամեծ խմբաքանակը[59]: Առանձին խումբ են կազմում Թալինից հայտնաբերված երկաթյա մանգաղները (Աղ. 64, նկ. 1, 2): Վերջիններս թե ձևերով, և թե չափե-

[56] *Т.С. Хачатрян,* Древняя культура Ширака, с. 186, рис. 91, *Б.А. Куфтин,* Археологические раскопки в Триалети, рис. 80:1, Т. LII, *О.С. Гамбашидзе, И.О. Гамбашидзе,* Работы Месхет-джавахетской экспедиции, Полевые Археологические Исследования в 1987г., Тбилиси, 1995, Т. 63:12, 65:1, 68:10, *Б.В., Техов,* Центральный Кавказ в XVI-X вв. до н.э., Москва, 1977, с. 45.

[57] *Н.И. Окропиридзе,* Бронзовые витоголовые булавки из грунтовых погребений Самтаврского могильника, Материалы по истории Грузии и Кавказа, вып. 29, Тбилиси, 1951, с. 141-151.

[58] *В. Садрадзе,* Археологические памятники "Мцхета Великой" эпохи средней бронзы, Тбилиси, 1993, Т.XXXVII:7, *К.Н. Пицхелаури, В.В. Варазашвили, М.В. Кинцурашвили, Ц.Н. Менабде, Д.Л. Квавадзе,* Археологические исследования в Кахети, Полевые Археологические Исследования в 1984-85 гг., Тбилиси, 1987, Т. XLIV:3, *P. Avetisyan, R. Badalyan, A. Gevorkyan, O. Khnkikyan,* The 1998 Excavation Campaign at the Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, Studi Micenei ed Egeo-Anatolici, XLII/2, Roma, 2000, Fig. 7:2-6, *Б.А. Куфтин,* Археологические раскопки в Триалети, рис. 80:4, *А.М. Апакидзе, В.В. Николайшвили, Г.Д. Гиунашвили, Г.Н. Манджгаладзе, М.С. Дзнеладзе, В.Г. Садрадзе, Р.В. Давлианидзе, Н.В. Глонти,* Археологические раскопки в Мцхета и ее округе, Полевые Археологические Исследования в 1982 г., Тбилиси, 1985, Т. LXVII:3, *J. De Morgan,* Mission Scientifique au Caucase, Paris, 1889, Fig. 91:7.

[59] *Б.В., Техов,* Центральный Кавказ в XVI-X вв. до н.э., Т. 41-42.

րով կրկնում են Անդրկովկասում հայտնի բրոնզե օրինակներին[60]:

Թալինի համալիրներից հայտնաբերված նյութերի մեծամասնությունը ներկայացված է խեցեղենի նմուշներով: Խեցեղենի կազմում առկա են ինչպես խոհանոցային և սեղանի սպասքի, այնպես էլ մթերման, պահեստավորման համար նախատեսված խեցանոթներ: Գերակշռում են դուրգով պատրաստված օրինակները:

Կճուճները սև մրապատ, գորշավուն, մոխրագույն, դեղնադարչնագույն անոթներ են՝ ներկայացված ձևաբանական հատկանիշներով միմյանցից տարբերվող մի քանի խմբերով: Կճուճների առաջին մեծ խումբն են կազմում ուռուցիկ իրանով, միջին լայնության, դուրս ծկված պռունկով օրինակները, որոնց հատակները համեմատաբար նեղ են և հաճախ զարդարված թեք գծիկներով: Այս խմբի անոթները գերազանցապես զարդարված են եղունգազարդով, երբեմն նաև հորիզոնական գծազարդերով: Կճուճների հիշատակված օրինակներն իրենց ձևաբանական հատկանիշներով (հարթուռուցիկ, համամասնաբար չափավոր լայն հատակ և պռնկի բացվածք, հատակների եզրերի զարդարում,) կրկնում են ուշ բրոնզի խեցեղենի տիպական նմուշներին: Անմիջական նախօրինակները հայտնի են ուշ բրոնզին վերագրված համալիրներում (Արթիկ, Մեծամոր, Լճաշեն, Քեթի, Քուչակ և այլն)[61]: Այս տիպի կճուճների ուշ օրինակների հատակներն ու պռնկի բացվածքներն ավելի լայն են, վերանում է հատակների եզրերի զարդագոտին: Ուշ բրոնզի տիպաբանական կազմին են հարում նաև խոր՝ կիսագնդաձև կամ երկկոն իրանով քրեղանները: Նշվածները, ինչպես նաև կարճ վզով, լայնաբերան սափորները բնորոշ են ուշ բրոնզի վերջին փուլերին վերագրված բազմաթիվ դամբարաններում[62]: Թալինի խեցեղենի տեսականու գերազանց մեծամասնությունը կրկնում է Հայաստանի և Անդրկովկասի վաղ երկաթեդարյան համալիրների գույքի կազմը: Բազմաթիվ են զուգահեռները հատկապես Վանի արքաների արշավանքների հետևանքով ավերված հուշարձանների համապատասխան շերտերում (Մեծամոր, Դվին, Կարմիր բլուր, Էլառ):

[60] *Т.С. Хачатрян,* Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, Աշխատություններ Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի, հ., 5, Երևան, 1959, էջ 213-218:

[61] *Т.С. Хачатрян,* Материальная культура древнего Армика, Ереван, 1963, Т. 26, E. Khanzadian, Metsamor 2 ..., Pl. 28:4, 31, 33:2, 39, *Լ.Ս. Պետրոսյան,* Լճաշենի պեղումները. Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1992, Աղ. XLI:5, XLII:4-5, XLIV:8-9, *նույնի՝* Քուչակի նախնադարյան հուշարձանները. նույն ժողովածուում, Աղ. LIII-LV, *նույնի՝* Раскопки памятников Кемы и Воскеаска (III-I тыс. до н.э.), Ереван, 1989, Т. 58:1, 60:2.

[62] *Т.С. Хачатрян,* Материальная культура древнего Армика, Т. 22:4,8, 23:6, *Լ.Ս. Պետրոսյան,* Քուչակի նախնադարյան հուշարձանները, Աղ. LIII-LVI, *Ս. Ղեբջյան,* Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, Աղ. VIII:12,13:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի մինչուրարտական համալիրների շերտագրական հաջորդականության պատկերն առավել հստակ արձանագրվել է Մեծամորի և Դվինի բազմաշերտ հուշարձաններում: Ընդ որում, եթե Դվինը չի բնակեցվել ուրարտական արշավանքներից հետո, ապա Մեծամորի «հրդեհված» շերտին հաջորդող «հնոցների» շերտն արդեն ներկայացված է «ուրարտական» և «տեղական» մշակույթներին բնորոշ իրերի համատեղությամբ: Այս հանգամանքը ելակետային նշանակություն ունի Հայաստանի երկաթեդարյան հուշարձանների փուլաբաժանման չափանիշները հստակեցնելու առումներով: Բանն այն է, որ 1960-ական թթ., երբ շրջանառության մեջ դրվեց Հ. Մարտիրոսյանի ժամանակագրական սանդղակը, հրապարակի վրա ունեինք միայն Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիի շերտագրության կցկտուր տվյալները, որոնք ակնհայտորեն բավարար չէին ժամանակագրության հարցերին վերջնական պատասխան տալու համար: Ավելին, Հ. Մարտիրոսյանը Կարմիր բլուրի վաղագույն նստվածքները համաժամանակեցրեց հուշարձանների լճաշենյան խմբի ուշ դրսևորումների հետ, որոնք ըստ հեղինակի՝ թվագրվում էին ոչ վաղ, քան մ.թ.ա. XIIդ. կեսերը: Հետագայում լճաշենյան խմբի հուշարձանների համար առաջարկվեցին թվագրության նոր սահմաններ, բայց Կարմիր բլուրի համապատասխան շերտերը մնացին տեսադաշտից դուրս և մինչ օրս էլ թվագրվում են նախկին չափանիշներով: Ընդ որում, թվագրությունների այդ համակարգով նախաուրարտական Կարմիր բլուրն անընդմեջ բնակեցվել է մինչև մ.թ.ա. VIIIդ. առաջին քառորդը[63]: Ակնհայտ է, որ հուշարձանի բնակեցման վաղագույն փուլը (N 3 պեղավայրի III-V հորիզոնները և կառույցների I համալիրը, ինչպես նաև կառույցների II համալիրի N 6 շինության հատակի տակ բացված դամբարանը) պետք է համապատասխանեցնել Լճաշենի մ.թ.ա. XV-XIIIդդ. թվագրվող համալիրների հետ վերագրելով այն ուշ բրոնզի վաղ փուլերին: Շինությունների II համալիրից և N 3 պեղավայրի վերին հորիզոններից (II շերտ) գտնված խեցեղենը բազմաթիվ զուգահեռներով աղերսվում է Դվինի և Մեծամորի „հրդեհված» շերտերի նյութերին[64]: Հարկ է նշել, որ Վ. Սորոկինը ժամանակին փաստագրել է «հրդեհված» շերտի առկայությունն

[63] *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, с. 37-67.
[64] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, с. 160-170, 175, *Է.Վ. Խանզադյան,* ... Մեծամոր, էջ 56, *К.Х. Кушнарева,* Древнейшие памятники Двина, с. 10-39.

իր պեղած հատվածներում[65]: Հատկանշական է, որ ըստ Վ. Սորոկինի՝ մինչուրարտական Կարմիր բլուրի կործանման և Թեյշեբաինի քաղաքի կառուցման միջև հարյուր տարվա ժամանակագրական անջրպետ կա, որը հերքում է Հ. Մարտիրոսյանը: Սակայն Հ. Մարտիրոսյանի դիտարկումներում ակնհայտ հակասականություն ենք տեսնում: Հեղինակը հուշարձանի բնակեցման ժամանակագրական երկրորդ փուլը միանշանակ համաժամանակեցնում է Դվինի «հրդեհված» շերտի հետ և թվագրում մ.թ.ա. IX-VIIIդդ. առաջին քառորդով[66]: Այնուհետև, նկատի ունենալով ուրարտական և մինչուրարտական շինությունների փոխհարաբերության հանգամանքը, գտնում է, որ դրանց միջև ժամանակագրական անջրպետ չկա: Այս դիտարկումը բավարար չհամարելով (ինչն իսկապես նման ենթադրություն անելու բավարար հիմք չէ)՝ հեղինակը մատնանշում է 1956 թ. բացված N 3 դամբարանի նյութերը: Նշելով, որ դամբարանի խեցեղենը ոչնչով չի տարբերվում մ.թ.ա. IX-VIIIդդ. համալիրների նյութերից, առանձնացնում է ուլունքները, որոնք ըստ հեղինակի՝ թվագրվում են միայն VIII-VIIդդ.[67]: Հետագայում անդրադառնալով Նորատուսի դամբարանների թվագրությանը, հեղինակը բացարձակապես նույն ուլունքներով N 11 համալիրը թվագրում է մ.թ.ա. X-IXդդ, իսկ N 10-ը՝ մ.թ.ա IX-VIIIդդ[68]: Կարմիր բլուրի նախաուրարտական և ուրարտական շերտերի քննությունը թույլ է տալիս ասելու, որ այստեղ տեսանելի է բնակեցման երեք փուլ (հետուրարտական բնակեցման փուլերն այս թվարկումից դուրս են), որոնք կարելի է թվագրել մ.թ.ա XV-XIII, XI-IX/VIII և VII-VI դարերով: Նշենք նաև, որ հուշարձանի պեղումներից ձեռք բերված կավանոթների բեկորների մեջ կան նմուշներ, որոնց զուգահեռները հայտնի են հատկապես միջին բրոնզի համալիրներում[69]: Կարմիր բլուրի դամբարանադաշտում պեղված և հրատարակված համալիրները համապատասխանում են հուշարձանի բնակեցման վերն առանձնացված փուլերից վերջին երկուսին (հետուրարտական շրջանի դամբարանների մասին կխոսվի առանձին): Ընդ որում, եթե NN 3-5 դամբարանների գույքի զուգահեռները տեսանելի են Մեծամորի «հրդեհված շերտի» նյութերում և կարող են թվագրվել ոչ ավելի ուշ քան մ.թ.ա. VIIIդ. սկիզբը, ապա 1954 թ. պեղված N 1 դամբարանից հայտնաբերված իրերը շաղկապվում են ուրարտական էքսպանսիայից հետո ձևավորված իրողությունների հետ (նյու-

[65] *В. Сорокин,* Следы древнейшего поселения у Кармир-Блура, Советская Археология, 1958, 2, с. 150-152.
[66] *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, с. 59.
[67] *А.А. Мартиросян,* ук. соч., с 63.
[68] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, с.196, 208-209.
[69] *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, с. 41.

թերի քննությունը տե՛ս ստորև):

Հայաստանի վաղ երաթեդարյան համալիրների ժամանակագրական առաջին սանդղակը շրջանառության մեջ մտավ մինչ Մեծամորի պեղումները[70]: Բնականաբար, շերտագրական դիտարկումների բացակայության պայմաններում, ժամանակագրական սանդղակի մեջ տեղ գտած հիմնավորումները հնարավոր էին դամբարաններից ձեռք բերված նյութերի համեմատական-տիպաբանական վերլուծությամբ միայն: Ուրարտական արշավանքների հետևանքով այրված շերտերի պեղումների շնորհիվ մեծաքանակ դամբարանների բացարձակ թվագրություններն ենթադրությունների մակարդակից տեղափոխվեցին փաստագրական հիմնավորումների դաշտ: Այս առումով անգնահատելի են Մեծամորի «հրդեհված», «հնոցների» շերտերի նյութերի համեմատական վերլուծության արդյունքները[71]: Այս հանգամանքը մեկ անգամ ևս կարևորում ենք մեր կողմից քննարկվող համալիրների թվագրման ելակետային չափանիշները մատնանշելու համար: Ակնհայտ է, որ Մեծամորի, Դվինի, Կարմիր բլուրի այրված շերտերի հետ գույքով շաղկապվող համալիրները պետք է թվագրվեն ոչ ուշ, քան մ.թ.ա. VIIIդ. առաջին քառորդը: Ներկայումս այս թվագրությամբ սահմանաբաժանվում են ոչ միայն Արաքսից հյուսիս ընկած տարածքների մինչուրարտական և ուրարտական, այլև երկաթի դարի երկու հիմնական՝ «վաղերկաթեդարյան» և «երկաթի լայն տարածման» փուլերը: Այսինքն՝ վաղ երկաթի ավարտն ընկնում է մ.թ.ա. IXդ. վերջ-VIIIդ. առաջին քառորդի շրջանակներում: Եթե վաղ երկաթի դարաշրջանի ավարտը կապվում է կոնկրետ պատմական իրադարձությունների (Իշպուինեյի և Մենուայի համատեղ կառավարման տարիների, Արաքսից հյուսիս արշավանքների[72] և Էրեբունիի կառուցման միջև ընկած ժամանակահատվածի) թվագրության հետ, ապա շրջափուլի ստորին սահմանի թվագրությունն առ այսօր կարող ենք հիմնավորել զուտ հնագիտական տվյալների համեմատության միջոցով: Մասնավորապես, Կարմիր բլուրի, Մեծամորի, Դվինի, Ախթամիրի պեղումները ցույց են տալիս, որ այս հուշարձանների վաղ երկաթեդարյան շերտերը ներկայացված են մեկից ավելի շինարարական հորիզոններով: Կարմիր բլուրում Հ. Մարտիրոսյանն արձանագրել է չորս մինչուրարտական շերտեր՝ 4 մ ընդհանուր հզորությամբ: Նկատի ունենալով, որ հարյուր տարի գոյատևած վերին (ուրարտական) շերտը ներկայացված է 1 մ հաստությամբ, հեղինակը նախորդող յուրաքանչյուր 1 մետրանոց շերտի համար նույնպես գոյատևման ժամանակահատվածը տեսնում է մեկ դարի սահմաններում, ինչն ընդունելի է առանց վերապահումների[73]: Այս դեպքում Կարմիր բլուրի, Մեծամորի, Դվինի «հրդեհված շերտերի» գոյատևման ստորին սահմանը հնարավոր է թվագրել առնվազն մ.թ.ա. X-IX դդ սահմանագծով: Մեծամորի «հրդեհվածին» նախորդող և դեռևս վաղ երկաթեդարյան նյութերով ներկայացված II շերտի հզորությունը նույնպես հասնում է մեկ մետրի[74], ինչն իր հերթին հուշում է, որ վերջինս նույնպես գոյատևել է շուրջ հարյուր տարի՝ մ.թ.ա. XI-Xդդ. շրջանակներում: Արարատյան դաշտի հուշարձանների շերտագրական այս պատկերը լրացնում են Շիրակավանի պեղումները[75]: Թվարկված հուշարձաններից բացի, առկա են մեծ քանակությամբ վաղ երկաթեդարյան դամբարաններ, որոնցում արձանագրվում են Մեծամորի հիշատակված II շերտին և ուշ բրոնզին բնորոշ իրեր: Բնականաբար նման գույքի կազմ ունեցող համալիրները ժամանակագրորեն ավելի վաղ թվագրություն են ենթադրում՝ ներկայացնելով վաղ երկաթի դարի սկզբնափուլը: Այս առումով ուշագրավ նյութեր ունենք Թալինի դամբանադաշտում: Հուշարձանի տարածքում պեղված NN 57-61, 65, 71 դամբարաններում համատեղ հանդիպում են ինչպես վաղ երկաթի, այնպես էլ ուշ բրոնզի դարաշրջաններին բնորոշ խեցանոթներ: Համալիրների այս խմբում N 61-ն ամենավաղն է և իր նյութերով զուգորդվում է Հայաստանի տարածքի ուշ բրոնզեդարյան դամբարանների հետ[76], որոնք թվագրվում են մ.թ.ա. XIII-XIIդդ.: Թվարկված մյուս համալիրների գույքի կազմում առկա են (ինչպես Արթիկի, Ստեփանավանի, Օշականի և այլ համաժամանակյա դամբարաններում) նաև խեցեղենի այնպիսի օրինակներ, որոնք արձանագրվել են Մեծամորի «հրդեհված» շերտին նախորդող հորիզոններում[77]: Այսինքն կարող են թվագրվել մ.թ.ա. XIIդ. կեսերից մինչև XIդ. վերջն ընկած ժամանակահատվածով: Մ.թ.ա. IXդ. վերջ -VIII դարի առաջին քառորդի սահմաններում կարող են թվագրվել NN 31, 47, 48, 51 դամբարանները: Թալինի մնացած համալիրների նյութերը գործնականում կրկնում են Արարատյան դաշտի հուշարձանների «հրդեհված շերտերի» գտածոներին, ինչը թույլ է տալիս դրանք թվագրել մ.թ.ա. X-IXդ. առաջին քառորդով: Վաղ եր-

[70] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, с. 113-232.
[71] *Է.Վ. Խանզադյան,* Մեծամոր, էջ 37-56:
[72] *Վ.Ս. Իգումնով, Հ.Հ. Կարագյոզյան, Ս.Գ. Հմայակյան,* Օձասարի սեպագիր արձանագրությունը, Պատմա Բանասիրական Հանդես, 1997, 1, էջ 193 – 202:

[73] *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы ..., с. 169-170.
[74] *Է.Վ. Խանզադյան* ..., Մեծամոր, էջ 32:
[75] *Ռ.Մ. Թորոսյան, Օ.Ս. Խնկիկյան, Լ.Ս. Պետրոսյան,* Հին Շիրակավան (հնագույն բնակավայրն ու դամբարանադաշտը), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան 1992, էջ 15-19:
[76] *E. Khanzadian,* Metsamor 2, PL. 28, 31,33,48.
[77] *Է.Վ. Խանզադյան...,* Մեծամոր, Աղ. IX:

կաթի երեք ենթափուլերով ներկայացված այս դամբարանադաշտի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ ուրարտական արշավանքները՝ 200-ից 250 տարի գոյատևած այս համայնքի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքը որևէ լուրջ փոփոխություն չի կրել: Փոփոխություններ չեն նկատվում ո՛չ թաղման կառույցների ձևերում ու թաղման ծեսը բնութագրող այլ հատկանիշներում, ո՛չ էլ նյութական մշակույթի դրսևորումներում: Դամբանադաշտի տարբեր հատվածներում կատարված պեղումները ցույց են տալիս, որ մ.թ.ա. VIIIդ. այստեղ արդեն թաղումներ չեն կատարվել, ինչը պետք է շաղկապել ուրարտական արշավանքների հետ: Ամենայն հավանականությամբ Թալինի այս համայնքի բնակչությունը տեղահանվել և վերաբնակեցվել է Վանի տիրակալների առաջին արշավանքների ընթացքում:

ԳԼՈՒԽ II

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. VIII-VI ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուրարտական էքսպանսիայի հետևանքով Արաքսից հյուսիս ընկած տարածքն արագորեն ինտեգրվեց «տերունական մշակույթի» ոլորտը, վերածվելով դրա խոշորագույն անկլավի՝ ներառելով ինչպես ուրարտական, այնպես էլ «տեղական» մշակույթներին բնորոշ հատկանիշները: Խիստ ինքնատիպ այս մշակութային արեալի ձևավորման սկիզբը դրեց Մենուան[78]: Արդեն Մենուայի, առավել ևս Արգիշտի I օրոք տարածաշրջանում ուրվագծվեց ուրարտական քաղաքականության հիմնական ուղենիշները: Բացառված չէ, որ պատմական Արտաշատի պեղումների ժամանակ բացված ուրարտական խոշոր քաղաքի մնացորդները վկայակոչում են վերոհիշյալ իրողությունը[79]:

Արարատյան դաշտի հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվում է ուրարտական քաղաքաշինության և ամրոցաշինության երկու փուլեր՝ վաղ և ուշ: Ուշ փուլի համալիրների կառուցումը կապվում է Ռուսա II–ի գործունեության հետ: Այնուհանդերձ կան հուշարձաններ, որոնք շերտագրորեն համապատասխանում են երկու փուլերին՝ գոյատևելով շուրջ երկու հարյուր տարի: Արարատյան դաշտում՝ այսինքն Արաքսից հյուսիս ուրարտական թագավորների արշավանքների և Էրեբունիի կառուցման միջև ընկած ժամանակահատվածից սկսում է նաև այսպես կոչված «երկաթի լայն տարածման» փուլը: Մ.թ.ա. VIII – VI դդ համալիրներից պեղված նյութերը, «ուրարտական» և «երկաթի լայն տարածման» հուշարձանների ուսումնասիրության համատեքստի շրջանակներում, հանդես են գալիս բիայնական և տեղական մշակույթների փոխներթափանցման լայն սպեկտրով: Ավելին, մ.թ.ա. VII-VI դարերի հուշարձանները և հայտնաբերված նյութերը հաճախ հնարավոր չէ միանշանակորեն վերագրել այդ մշակույթներից որևէ մեկին: Այդ երկու մշակույթներին բնորոշ իրողությունները՝ սկզբնական, վաղ փուլում տեսանելի են ինչպես մեկուսացված, այնպես էլ տեղական և ուրարտական մշակույթներին բնորոշ իրերի համատեղություններով: Ուշ փուլում նշված ժամանակաշրջանը բնորոշվում է խաչասերման հետևանքով ձևավորված հնագիտական նոր իրողությունը-

[78] *Մ.Վ. Никольский*, Клинообразные надписи Закавказья. Материалы по археологии Кавказа, вып. V, М., 1896, с. 14-17.

[79] *Ժ.Դ. Խաչատրյան*, Արտաշատի պեղումները, ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987 թ., էջ 40-42:

ներով: Այդպիսի համալիրների հանդիպում ենք Օշականի, Մեծամորի, Լոռի բերդի, Արտաշավանի և այլ դամբանային հուշարձաններում: Այս խնդիրների պարզաբանման համար, հետաքրքիր տվյալներ են տվել Ձորակի ամրոցի հետախուզական պեղումները[80]: Հզոր պարսպապատով այս ամրոցը գտնվում է Օշականից 2,5 կմ հարավարևմուտք, ոչ մեծ բլրի վրա: Ուղղանկյուն ձգված ամրոցն ունի 235 մ երկարություն, 80 մ լայնություն, որը օղակված է երկու շարք պարսպապատերով: Առանձին հատվածներում պահպանված պարսպաշարի բարձրությունը հասնում է 2,5 մ-ի: Ամրոցից դուրս բնակավայրի հետքեր չեն հաստատագրվել : Ամրոցի տարածքում կատարված ստուգողական պեղումներով պարզվեց, որ մշակութային շերտի հզորությունը կազմում է 0,5-0,7 մ: Առաջին փոսորակում բացվեց քարասալերով պատված հատակ, որի վրա հաստատագրվեց 0,44 մ տրամագծով, 0,28 մ բարձրությամբ տուֆից սյան խարիսխ՝ բազա: Նման բազաներ բացվել են Օշականում, Արագածում և այլ համաժամանակյա հուշարձաններում: Երկրորդ փոսորակում պեղվեց ամուր տոփանված քարահողային, առանձին հատվածներում կավածեփ հատակ, որտեղ in situ կարմիր տուֆից սյուն-կուռք բացվեց: Երկու փոսորակներից հայտնաբերված հնագիտական նյութը կազմված է աշխատանքային գործիքներից, խեցանոթներից, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներից: Աշխատանքային գործիքները հիմնականում բազալտե աղորիքներ են, սանդեր և այլն: Կարևոր նշանակություն ունի պեղված խեցանոթների՝ որոնք հիմնականում բեկորային են, ուսումնասիրությունը: Պայմանականորեն այն կարելի է ստորաբաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ առանձնանում են դեղին, կարմիր անգոբապատ ուրարտական խեցեղենի կազմին բնորոշ անոթները՝ եզրագծված կողերով քրեղան – թասեր, մեկ կանթանի, օյնախոյ տիպի սափորներ, միջին չափի կարասների բեկորներ, որոնք կրկնում են Օշականի պալատական համալիրների և Արագածի նյութերը: Շատ հետաքրքիր սափորի կանթ գտնվեց առաջին փոսորակից: Վերջինս վրան ուներ վարպետի նշան՝ խազագծով արված խաչ, որը ձևով կրկնում է Թեյշեբաինի նյութերը, իսկ կատարման եղանակով դաջվածք չէ: Նման տեխնիկայով արված վարպետի նշանով անոթներ պեղվել են Արագածի համալիրներում: Խեցեղենի հաջորդ խումբը, որը ավելի մեծ քանակ է կազմում, ներկայացված է սև, դարչնագույն, դեղնավուն կավանոթների բեկորներով: Դրանք սափորների, քրեղանների, կճուճների առանձին օրինակներ են, որոնք ձևաբանությամբ և զարդանախշի կատարման տեխնիկայով լայն աղերսներ ունեն մ.թ.ա. VII–V դարերի հուշարձաններում: Նշվածները սևափայլ մակերևույթով, փայլաներկով

[80] *Ս.Ա. Եսայան,* Работы в Ошакане, Археологические Открытия,1986, Москва, с. 471.

արված, ինչպես նաև զիգզագի, հասկանախշի, եղնգանախշի հորինվածքով զարդարված կավանոթներ են, բնորոշ երկաթի լայն յուրացման փուլի համալիրներին: Ամենայն հավանականությամբ Ձորակի ամրոցը հանդիսացել է Օշականի Ֆորտ-պոստը պաշտպանելով վերջինս հարձակումներից:

Արագածոտնում տեղադրված հաջորդ ուրարտական համալիրը Փարպի գյուղի տարածքում կառուցված ամրոցն է: Այն գտնվում է Աշտարակից մոտ 3,5 կմ հյուսիս-արևմուտք, զառիթափ ոչ բարձր հրվանդանի վրա: Ամրոցի տարածքը պատված է այգիներով և գյուղի ժամանակակից գերեզմանոցով: Առանձին հատվածներում պարզորոշ երևում են հզոր պարսպապատերը, որոնք տեղ-տեղ ամրացված են որմնահեծերով և աշտարակներով: Ամրոցի պարսպապատերի շարվածքը կրկնում է Օշականի, Արագածի, Արամուսի շինությունների շարվածքի ձևը: Տարածքում հավաքվել են տարբեր ժամանակաշրջանների վերաբերող խեցեղեն, այդ թվում նաև ուրարտական: Այս ամրոցն Արագած լեռան փեշերով եզրագծվող պաշտպանական համակարգի՝ Արագած, Օշական, Ձորափ շղթայի կարևորագույն հանգույց է հանդիսացել:

Արարատյան դաշտում մ.թ.ա. VIII–VIդդ. պատկանող դամբարանային համալիրների մեջ առանձնանում են երկու խումբ՝ ուրարտական և այսպես կոչված «տեղական»: Բացի այդ, հետազոտությունները ցույց են տալիս, որ կան նաև դամբարաններ, որոնց գույքի կազմը բաղկացած է երկու իրողություններով արտահայտված հնագիտական նյութերով: Նման պատկեր արձանագրված է Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, որոնց արժեվորման հնագիտական ասպեկտներին անդրադարձել են մի շարք մասնագետներ[81]:

Անցած դարի 40-ական թվականներից, Վանի թագավորության Արարատյան դաշտի խոշոր կենտրոնները՝ Էրեբունի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի և այլն, իրենց հնագիտական նյութերով բնութագրվեցին որպես «ուրարտական մշակույթին» բնորոշ իրողություններ, իսկ համաժամանակյա հնագիտական այլ համալիրները

[81] *Գ.Ա. Տիրացյան, Գ.Ե. Արեշյան,* Հնագիտությունը և Ուրարտու – Հայաստան պրոբլեմը, Պատմա Բանասիրական Հանդես, 1990, 3, էջ 70-75, *Ս.Ա. Եսայան, Լ.Հ. Բիյագով, Ս.Գ. Ամայակյան, Ա.Գ. Կանեցյան,* Биайнская гробница в Ереване, Археологические Памятники Армении, հ. 15 պրակ II, Երևան, 1991, էջ 5-26, *Ս.Գ. Ղմայակյան,* Ուրարտական պետության և մշակույթի դրսևորման խնդրի շուրջ, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995, էջ 105-106, *Ա.Ս. Փիլիպոսյան, Լ.Ե. Խաչատրյան,* Գեղհովտի վանտոսպյան վիմափոր դամբարանը, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995, էջ 80-92, *Ռ.Ս. Մկրտչյան, Պ.Ս. Ավետիսյան,* Ուրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը, մ.թ.ա. 8-6-րդ դդ. պատմահնագիտական կոնտեքստում, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995, էջ 98-104:

խմբավորվեցին «տեղական» կամ «երկաթի լայն տարածման» ժամանակաշրջանի մշակույթ հասկացության շրջանակներում[82]: Սակայն Վանի թագավորության մշակույթի արմատավորման գործընթացի հետ միասին, Ազա երկրում մ.թ.ա. VIII–VIդդ. որոշակիորեն տեսանելի են մշակութային «փոխներթափանցման» և «խաչասերման» գործընթացները: Ըստ որում, ներկայումս միտումներ կան Վանի թագավորների նվաճումների հետևանքով փաստագրված նոր իրողությունները խմբավորել «Վանտոսպյան մշակույթ» հասկացության շրջանակներում, իսկ «ուրարտական մշակույթ» սահմանումով արժեվորել այն հուշարձանները, որոնցում հաստատագրվում են «խաչասերման» գործընթացները[83]:

Արարատյան դաշտում նման իրողությունները հստակորեն փաստագրվել են դամբանային մի շարք համալիրներում: Այս առումով, Օշականի դամբարանադաշտում պեղված համալիրներից, հատկապես առանձնանում են NN 25, 59, 62-ը և այլն[84]:

Դամբարան N 25: Տեղադրված է պալատական համալիրներից 200 մ հյուսիս արևելք: Իրենից ներկայացնում է արևելք-արևմուտք կողմնորոշումով խոշոր քարարկղ: Հատակագծում ուղղանկյուն դամբանախցի ներքին չափերն են 3,1×1,9×1,45 մ: Պատերը և ծածկը կառուցված են կարմրավուն տուֆի, միջին չափի սալաքարերից: Դամբանախցում բացվեցին 27 վատ պահպանված կմախքներ: Հանգուցյալներին թաղել են նստած վիճակում, որի մասին վկայում են ոսկորների անատոմիական դիրքը: Նման խմբային թաղման փաստը հավանաբար պետք է կապել ռազմական գործողությունների կամ համաճարակի հետ[85]: Դամբարանում, տարաբնույթ հնագիտական գտածոներից բացի, հայտնաբերվել է կավից սարկոֆագ, որը նախապես կոտրատվել և դրվել է ամեն մի թաղվածի հետ առանձին - առանձին: Ուրարտական տարբեր կառույցների դամբարաններին բնորոշ են նաև սարկոֆագով[86] թաղումներ (Աղ. 66, 67):

Օշականի N 25 դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութը կազմված է խեցեղենից, զենքից և պերճանքի առարկաներից,

[82] *Б.А. Куфтин,* Урартский колумбарий у подошвы Арарата, Вестник Гос. Музея Грузии, XIII, В., Тбилиси, 1943, с. 1-72, *Б.Б. Пиотровский,* Ванское царство, Москва, 1959, *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Ереван, 1954, *А.А. Мартиросян,* Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода /IX – VIII вв. до н.э./, Вестник Общественных Наук, 1956, 9, 61-84, *А.А. Мартиросян,* Армения в эпоху ... с. 193-293, *С.А. Есаян и др.,* Биайнская гробница ..., с. 26.

[83] *Ս.Գ. Հմայակյան,* Ուրարտական պետության ..., էջ 105-106:

[84] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Ереван, 1988, с. 68-81.

[85] *С.А. Есаян, А.А. Калантарян,* նշվ. աշխ., էջ 69:

[86] *Г.Г. Аветисян,* Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992, с. 85-86.

որոնք կարելի է բաժանել երկու հիմնական՝ «ուրարտական» և «տեղական» խմբերի: Խեցանոթները բաժանվում են մի քանի տիպերի (Աղ. 67): Մեկ կանթանի, նաև օյնախոյանձև սափորները լավ թրծված կարմիր անգոբապատ են, ունեն ուռուցիկ իրան, կարճ վիզ, կանթերը կտրվածքում կլոր են, որը այդ անոթների համար ենթադրում է ավելի ուշ թվագրություն՝ մ.թ.ա. VI–Vդդ.: Անոթներից մեկի իրանը հարդարված է գծազարդ, հորիզոնական գոտիներով, ինչը բնորոշ է մ.թ.ա. VII–VIդդ. խեցանոթներին՝ հայտնաբերված Հայաստանի մի շարք հնավայրերից[87]:

Լայնաբերան սափոր – թեյնիկների հետ միասին N 25 դամբարանից հայտնաբերվել են կարմիր անգոբապատ երկկանթանի սափորներ, որոնք հայտնի են ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջանում[88]: Գտնվել են նաև անկանթ սափորներ, որոնք ունեն ուռուցիկ իրան, կարճ վիզ, դուրս ծկված շուրթեր: Այս անոթներից երկուսը սև են և ունեն թույլ փայլեցված մակերես: Սափորներից մեկը դեղնավուն է, և ինչպես նշում է Ս. Եսայանը,[89] հավանաբար վերաբերվում է մ.թ.ա. VI դարին:

Մեծ խումբ են կազմում քրեղանները ու թասերը: Այս տիպին պատկանող խեցանոթները ունեն հարթ, ներծկված հատակներ, կլորացող և եզրագծված կողեր, դուրս ծկված, հարթ շուրթեր (Աղ. 67, նկ. 21-36): Ուրարտական խեցեղենին տիպական այս անոթների հետ միասին Օշականի N 25 դամբարանից հայտնաբերվել են նաև տեղական ծագում ունեցող օրինակներ: Դրանց թվին է դասվում սև փայլեցված մակերևույթով անոթը: (Աղ. 67, նկ. 14): Վերջինս ունի ոչ մեծ, հարթ հատակ կլորացող դեպի վեր եզրագծված իրան, քիչ դուրս ծկված շուրթ: Տեղական խեցեղենի ինքնատիպ օրինակներ են հանդիսանում նույն համալիրից գտնված քրեղանները: (Աղ. 67, նկ. 26, 32, 34): Պեղումներից գտնված անոթներից առանձնանում են կարմիր և սև մակերևույթով կարճ ու ծգված իրանով, նեղացող վզով, քիչ դուրս ծկված շուրթով գավաթ-բաժակները, (Աղ. 67, նկ. 10) որոնց նմանակները հայտնի են Հայաստանի մ.թ.ա. VII–VIդդ. դամբարաններից, իսկ երբեմն նաև հանդիպում են մ.թ.ա. Vդ. համալիրներում[90]: Հետաքրքիր են նաև դեղնա-վարդագույն անգոբապատ անոթները[91]:

Օշականի N 25 դամբարանից գտնվել են նաև մետաղից առարկաներ: Պեղումներից հայտնաբերվել է երկաթից դանակի բեկոր, որի պոչուկին արված է անցք՝ դանակի կոթառը գամով ամրացնելու

[87] *С.А. Есаян, А.А. Калантарян,* նշվ. աշխ., էջ 70:

[88] *С.А. Есаян, А.А. Калантарян,* նշվ. աշխ., էջ 71:

[89] Նույն տեղում:

[90] *С.А. Есаян, А.А. Калантарян,* նշվ. աշխ., էջ 72:

[91] Նույն տեղում:

համար (Աղ. 66, նկ. 1): Նման դանակները գտնվել են ինչպես Օշականում, այնպես էլ Նորատուսում, Նոր Արեշում, Աստղաձորում և այլուր[92]: Դամբարանից հայտնաբերված բրոնզից և երկաթից (Աղ. 66, նկ. 2-13). նետասլաքները պատկանում են սկյութական տիպին, որոնք եռանիստ են և երկթև[93]: Նման նետասլաքները հայտնի են նաև Արարատյան դաշտի մի շարք հնավայրերից: Դրանք որպես կանոն հաճախակի հանդիպում են մ.թ.ա. VII–VIդդ. հուշարձաններում, չնայած առանձին նմուշներ հայտնի են նաև մ.թ.ա. VIII դարում[94]:

Օշականի N 25 դամբարանից հայտնաբերվել են նաև արծաթից ու բրոնզից հարթ, հատիկանախշ մակերևույթով, սրացող կամ օձագլուխ ծայրերով ապարանջաններ (Աղ. 66, նկ. 15-21), որոնք թվագրվում են մ.թ.ա. VIII–Vդդ.[95]: Դամբարանից գտնված պերճանքի առարկաներից հաջորդ խումբը ներկայացված է արծաթից և բրոնզից ականջողերով, որոնք կտրվածքում կլոր են, ունեն սրացող ծայրեր, իրանի կենտրոնում ուռուցիկ զարդանախշ: Դրանց մի մասի ծայրերը գալարաձև են (Աղ. 66, նկ. 48-61, 39-41, 45, 46): Նման զարդերը գտնվել են նաև NN 73, 77 դամբարաններում[96]: Մյուս խումբը բրոնզից աղեղնաձև իրանով, երկաթից ասեղով շիգդերն (ֆիբուլա) են: Նման զարդեղեն հայտնաբերվել է նաև NN 46, 73 դամբարաններից և մ.թ.ա. VII–Vդդ. հուշարձաններից, Կարմիր բլուր, Նորաշեն, Դիլիջան և այլն: Առանձին խումբ են կազմում սաթից, սերդոլիկից և մածուկից ուլունքները, քարից զրահակոճակները (Աղ. 66, նկ. 1, 2, 24-29, 32-34, 36, 43, 44):

Դամբարանից հայտնաբերված վերջին խումբ գտածոները ներկայացված են քարից և բրոնզից կենդանական և երկրաչափական հորինվածքով կնիքներով (Աղ. 66, նկ. 30, 35)[97]: Երկու խումբ ներկայացնող՝ ուրարտական և «լայն երկաթի դարի» գտածոները իրենց որոշակի զուգահեռները ունեն Արարատյան դաշտի և Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում:

Օշականի N 25 դամբարանի նյութի վերլուծությունը մատնանշում է, որ այստեղ կատարվել է կոլեկտիվ թաղում յուրօրինակ ծիսակարգով: Հնագիտական նյութի քննությունը հնարավորություն է տալիս դամբարանը թվագրել մ.թ.ա. VII–VIդդ., իսկ առանձին գտածոներ մատնանշում են մ.թ.ա. VIդ. կեսերի սկիզբը[98]:

Դամբարան N 59: Տեղադրված է պալատական համալիրներից

[92] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 72:
[93] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 74 - 75:
[94] *Հ.Գ. Սվեդիրյան,* Արագած, Երևան 2001, էջ 52-53:
[95] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 72 - 73:
[96] Նույն տեղում:
[97] Նույն տեղում:
[98] Նույն տեղում:

750 մ հեռավորության վրա դամբարանադաշտի երրորդ տեղամասի կենտրոնական հատվածում, փոքր բլրի արևելյան լանջին: Դամբարանն ունի 8,2 մ տրամագծով կրոմլեխաշար, որի ներսում բացվեց 3,4×3,1×1,45 մ չափերով քարարկղ: Դամբարանը ուղղված է հյուսիսից հարավ՝ դեպի արևելք շեղումով: Հարավային հատվածում ունի դրոմոս: Պեղումներից պարզ դարձավ, որ այն թալանվել էր: Կատարվել էր կոլեկտիվ թաղում, ոսկորների անատոմիական դիրքը խիստ անկանոն էր: Գտնվեց 11 գանգ: Ս. Եսայանի կարծիքով մահացածներին թաղել են նստած վիճակում[99]: Հայտնաբերված գույքը բաժանվում է մի քանի խմբի՝ խեցեղեն, երկաթից զենք և մեծ քանակությամբ պերճանքի առարկաներ: (Աղ. 70-72): Խեցեղենը կազմված է սափորներից, կճուճներից, քրեղաններից, թասերից, որոնց մեջ բացի ուրարտական խեցանոթներից, հանդիպում են նաև երկաթի դարին վերաբերող սև կամ գորշ գույնի փայլեցված մակերևույթով գտածոներ: Կճուճները որպես կանոն հարդարված են հորիզոնական, գծանախշի, եղնգանախշի հորինվածքով: Հետաքրքիր գտածո է հանդիսանում սև գույնի, կլորացող իրանով հարթ հատակով, քիչ դուրս ճկված շուրթով թասը, որի վրա պահպանվել է վարպետի նշան[100]: (Աղ. 71, նկ. 14): Մետաղական գտածոներից առանձնանում է երկաթից դանակը (Աղ. 72, նկ. 28), բրոնզից ապարանջանները, ականջողները, շիգդերը: Պերճանքի առարկաների մյուս խումբը ագաթից, սերդոլիկից, մածուկից ուլունքներ են: Հատկապես արվեստի բարձրարժեք նմուշ է հանդիսանում դամբարանից հայտնաբերված առյուծների պատկերով գտածոն [101] (Աղ. 71, նկ. 6,7):

Դամբարան N 62: Տեղադրված է N 59 դամբարանից 6 մ արևմուտք: Ուղղված է հյուսիսից հարավ՝ քիչ շեղված արևելք: Կառուցվածքով նման է N 59 դամբարանին: Կրոմլեխի տրամագիծը 8,5 մ է, իսկ ուղղանկյուն խուցը ունի 4,5×3,5×1,7 մ չափեր: Դամբարանը նախորդների նման թալանված էր: Նախնական դիտարկումներից պարզվեց, որ կատարվել է կոլեկտիվ թաղում: Հավանաբար 10-12 մարդ է թաղվել: Գույքը անկանոն սփռված էր դամբարանում: Գտածոները բաժանվում են խեցեղենի և պերճանքի առարկաներից կազմված որոշակի տիպերի[102] (Աղ. 68, նկ. 13-16): Խեցանոթները բեկորային են: Դրանք հիմնականում տեղական սև կամ գորշ երանգավորումով սափորներ, կճուճներ և թասեր են: Նեղվիզ սափորները զարդարված են շեվրոններով, թեք գծերով, հորիզոնական և ալիքանախշ գոտիներով: Կճուճների վրա արված են եղնգանախշի, հաս-

[99] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 77:
[100] Նույն տեղում:
[101] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 80:
[102] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 80:

կանախշի, թեք կետագծերի փայլեցրած և խորադիր գոտիներ: Անոթների մեջ կա նաև կարմիր անգոբապատ մակերևույթով քրեղան, որը ունի հարթ հատակ, կլորացող կողեր դեպի ներս ճկված կլորացող շուրթ: Համեմատաբար վաղ խեցեղենի նմուշները կրկնում են N 59 դամբարանի գտածոները[103]: Հայտնաբերված զարդեղենը ներկայացված է տարբեր տիպերի ագաթից, սերդոլիկից գնդաձև, երկկոն ուլունքներով: Բացի քարե ուլունքներից դամբարանից գտնվել են նաև մածուկից, խխունջից գտածոներ: Պերճանքի նքուշների մեջ առանձնանում է կշռաքարի տիպի կապտագույն շաղախից խաչի նախշազարդով կախիկը, հյուսածո նախշազարդով աղեղնաձև շիգը, ոսկուց խողովակաձև ուլունքը, որի զուգահեռները հայտնի են Կարմիր բլուրում[104]:

Բացի վերը նկարագրած դամբարաններից, Օշականի համալիրներից մի քանիսը՝ NN 46, 47, 61, 73, 77, 85, 87, 91 և այլն,[105] հնագիտական նյութի կազմով կրկնում են կամ ուրարտական կամ տեղական գտածոները, իսկ երբեմն հանդես են գալիս փոխազդեցության համատեքստում ձևավորված արտեֆակտերով: Օշականի դամբարանադաշտի համալիրների մինչխմբային համեմատականը մատնանշում է, որ դրանք բաժանվում են երկու ժամանակագրական փուլերի՝ համեմատաբար վաղ՝ մ.թ.ա. VIII–VIIդդ. դարերով (N 59 դամբարան) թվագրվող և մ.թ.ա. VII–VI/Vդդ. համալիրներ (N 25 դամբարան): Որոշ գտածոներ, որոնք պեղվել են Օշականի, մ.թ.ա. VIII–VI/Vդդ. թվագրվող դամբարաններում իրենց զուգահեռները ունեն Արարատյան դաշտի և Հայաստանի հուշարձաններում:

Ազա երկրի մ.թ.ա. XI/VIII–VII/VIդդ. թվագրվող համալիրներից հատկապես առանձնանում են Մեծամորի դամբարանները, որոնք աչքի են ընկնում իրենց թաղման սովորույթներով, նյութական մշակույթի հարուստ և ինքնատիպ տեսականիով[106]: Ներկայացվող դամբարանները՝ NN 4, 6, 7 և այլն իրենց յուրահատկություններով հանդերձ որոշակի զուգահեռներ ունեն համաժամանակյա հուշարձանների հետ: Դամբարան N 6: Իրենից ներկայացնում է արևելքից արևմուտք ուղղված քարարկղ: Հատակագծում ուղղանկյուն խցի չափերն են՝ 1,5×1 մ: Պատերը կառուցված են 5-6 քարի շարով, ծածկասալերը երկուսն են: Դամբարանում կատարվել է երկու շերտով թաղումներ: Գտնվել է միայն խեցեղեն: Վերին շերտում աջ կողքի կծկված վիճակում պառկած ննջեցյալը դեմքով ուղղված էր արևմուտք: Կավանոթները, որոնցից մի քանիսում հայտնաբերվեցին

[103] *Հ.Ա. Եսայան, Ա. Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 80-81:
[104] Նույն տեղում:
[105] *Հ.Ա. Եսայան, Ա. Ա. Կալանթարյան,* նշվ. աշխ., էջ 82-106:
[106] *Է.Վ. Խանզադյան* ..., Մեծամոր, էջ 166-185:

կենդանիների ոսկորներ, դրված էին ննջեցյալի ծոծրակի, գոտկատեղի մոտ և ոտքերի տակ: Հայտնաբերված 19 կավանոթներից վեցը վերաբերվում էին ստորին շերտին: Այս շերտում հաստատագրված կմախքը թաղված էր ձախ կողքի վրա, կծկված վիճակում դեմքով ուղղված դեպի արևելք[107]: Վերին շերտից հայտնաբերված խեցանոթները ժամանակագրական առումով չեն տարբերվում ստորին շերտի գտածոներից[108]: Դրանք սև, մոխրա-դարչնագույն լայնաբերան կճուճներ են, սափորներ, որոնց ուսերը զարդարված են հորիզոնական, խորաքանդակ գոտիներով, ալիքներով և թեքագիծ հատիկանախշով: Ստորին շերտից հայտնաբերված կավամանները ունեն բազմաշար ալիքների զարդանկարով, սև խամրած փայլով մակերես, որոնց զուգահեռները հայտնի են Մեծամորի միջնաբերդի «հրդեհված» շերտերում, իսկ զույգ թեք կիսաշրջան կանթերով, կետազարդ եռանկյունիներով նստուկավոր անոթները որոշակի համեմատականներ ունեն Նոր Բայազետի դամբարանային համալիրներում[109]:

Դամբարան N 7: Մեծամորին մոտեցող ճանապարհի եզրին 1,5 մ խորությամբ բացված դամբարանը[110] հատակագծում ուղղանկյուն, արևելքից արևմուտք ուղղված քարարկղ է՝ 1,65×1,1 մ չափերով: Այն ծածկված էր երկարավուն նեղ սալով: Խցի արևելյան կողմում բացվեց ննջեցյալի գանգը՝ դեմքով ուղղված հյուսիս: Երկրորդ գանգը հայտնաբերվեց դամբարանախցի արևմտյան կողմում, դեմքով դեպի հարավ: Կմախքները վատ էին պահպանվել, բայց և այնպես ննջեցյալի ձեռքերին կային ապարանջաններ, իսկ մատներին՝ մատանիներ: Դամբարանից խեցեղեն չի հայտնաբերվել: Ուղեկցող գույքը ներկայացված է զարդեղենով (Աղ. 81): Դրանք բրոնզից ապարանջաններ են, մատանիներ, շիգեր, ասեղներ, ագաթից, սարդիոնից, ապակուց ուլունքներ:

Մեծամորի N 7 դամբարանից հայտնաբերված բրոնզից ապարանջաններն օձագլուխ են, որոնց աչքերը արտահայտված են ռելիեֆ, կիսագնդաձև ելուստներով (Աղ. 81, նկ. 1-3): Դրանք Հայկական լեռնաշխարհում լայն տարածում են ստանում հատկապես ուրարտական ժամանակաշրջանում[111]: Դամբարանից հայտնաբերված աղեղնաձև շիգերը (Աղ. 81, նկ. 4, 5) լայն տարածում ունեն և ինչպես նշում է Բ. Բ. Պիոտրովսկին, հավանաբար դրանք կարելի է համարել տեղական, անդրկովկասյան[112]: Զարդեղենի մեջ առանձ-

[107] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 167-168:
[108] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 171:
[109] Նույն տեղում:
[110] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 168:
[111] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 172:
[112] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, с. 41, рис. 23, նույնի՝ Кармир-Блур III, с. 34, рис. 18.

նանում են օձագլուխ փոքրիկ մատանին, ասեղը, օղերը, ուլունքաշարի մասերը[113]: Ինքնատիպ խումբ են հանդիսանում տարբեր գույների և չափերի բազմաքանակ ապակե՝ գնդաձև, երկկոնիկ ուլունքները: Սարդիոնից, սաթից ուլունքները նույնպես բաժանվում է մի քանի տիպերի, գնդաձև, տակառաձև, գլանաձև, երկարավուն ձվաձև, երկկոնիկ և այլն, որոնք ունեն վարդագույն, կարմրաշագանակագույն երանգավորում[114]:

Դամբարան N 4: (Աղ. 80): Իրենից ներկայացնում է քարարկղային, հատակագծում ուղղանկյուն հարավ-արևելք ուղղվածությամբ շինություն՝ 1,7×1 մ չափերով[115]: Դամբարանախուցը ծածկված էր երեք սալերով: Պեղումներից պարզ դարձավ, որ դամբարանն ունի երկու շերտ: Վերին շերտում թաղումները կատարվել են խցի հարավային և հյուսիսային հատվածներում: հարավային մասում գտնվեց մեկ կմախք՝ ուղեկցող նյութերով, իսկ հյուսիսային կեսում բացվեցին երեք գանգեր, նրբագեղ կարմիր անգոբապատ սկահակ, բրոնզե քորոց և սակավաթիվ գտածոներ: Վերին շերտը մաքրելուց հետո բացվեց ստորինը, որտեղ հայտնաբերվեց մեկ գանգ երեք սև կճուճներով և ուլունքներ: Վերին շերտի հարավային մասում թաղվածը պառկած էր խցի լայնությամբ, աջ կողքով, ոտքերը կծկված, ձեռքերը դեմքի դիմաց, իսկ մատներին դրված էին պարուրաձև մատանիներ: Գանգի տակ, ականջի և քունքի հատվածներում բացվեցին արծաթից պարուրաձև զարդեր, որոնք բոլորանախշի ձևով ներսում ունեին մեկական կիսալուսիններ (Աղ. 80, նկ. 6-8): Ննջեցյալի վզին կար բազմատեսակ ուլունքաշար, կոնքոսկրերի մոտ դրված էր սև, իրանին ուռուցիկ ելուստանախշով կճուճ: Կրծքին դրված էր բրոնզից բարձրարվեստ ոճավորված գոտի: Հայտնաբերվեցին երկու քորոցներ, մեջքի հատվածում կարմիր աճյունասափոր, կոտրված օղակաձև նստուկով կարմիր անգոբապատ թաս, բրոնզից իր, պիրիտից խորանարդիկ[116]:

Մեծամորի N 4 դամբարանից հայտնաբերվել է մեկ ամբողջական կմախք և չորս գանգ, համապատասխան շերտագրությամբ և ուղեկցող գույքով: Վերջինիս կազմը ինքնատիպ է: Եթե վերին թաղումները գույքի հետ միասին բնորոշ է մ.թ.ա. VIII–VIդդ., ապա ստորին թաղումը պետք է թվագրել մ.թ.ա. IX–VIIIդդ.,[117] ինչի մասին վկայում է գտածոների՝ մասնավորապես խեցեղենի տիպաբանական վերլուծությունը: Այսպես խեցեղեն հավաքածուն բաժանվում է երկու

[113] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 172-174:
[114] Նույն տեղում:
[115] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 175-176:
[116] Նույն տեղում:
[117] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 176:

տիպի՝ սև փայլեցրած 4 անոթներ՝ երեքը ստորին թաղումից և կարմիր անգոբապատ ուրարտական սպասք: Եթե վերին թաղման սև մակերևույթով անոթը իր զուգահեռներն է գտնում Կիրովականի, Դիլիջանի նույն ժամանակի համալիրներում, ապա ստորին թաղումից հայտնաբերված երեք սև, խորաքանդակ հորիզոնական գոտիներով եղնգանախշով և կանելուրազարդով կավամանները իրենց զուգահեռներն ունեն Էլարում, Կարմիր բլուրում, ինչպես նաև Մեծամորի միջնաբերդի «հնոցների» ժամանակաշրջանի շերտերում,[118] Արարատյան դաշտի հուշարձանների մ.թ.ա. I հազարամյակի սկզբի նյութերում:

Դամբարանից հայտնաբերված պերճանքի առարկաների մեջ առանձնանում են ագաթից, սարդիոնից, մածուկից, ապակուց և սաթից տարբեր չափերի և ձևերի բազմերանգ ուլունքները, որոնք ժամանակագրորեն համապատասխանում են մ.թ.ա. XI–VIդդ.[119]: Պեղված գույքի հաջորդ խոշոր խումբը ներկայացված է մետաղական՝ բրոնզից և արծաթից գտածոներով: Արծաթից պարուրաձև հերազարդերը ներսի կողմից հավելազարդարված են նրբագեղ լուսնի զույգ մահիկներով: (Աղ. 80, նկ. 6, 7): Հարկ է նշել, որ լուսնի նախշազարդով հարդարվել է նաև դամբարանից հայտնաբերված կարմիր անգոբապատ սափորը: Օձապտույտ բրոնզից մատանիները իրենց լայն տարածումն ունեն Հայաստանում և Անդրկովկասում[120]:

Դամբարանից հայտնաբերված արվեստի բարձրարժեք նմուշներ են հանդիսանում շքասեղները: Դրանցից երկուսի գագաթները պսակված են խոյակներով և թռչնատիպ ֆիգուր քանդակներով, իսկ երրորդինը սկավառակաձև վարդյակ զարդանախշով (Աղ. 80, նկ. 11-13): Նման շքասեղները լայն տարածում ունեն ուրարտական համալիրներում, մասնավորապես տիպական նման գտածոների հետ նաև հանդիպում են բրոնզից գոտիներ: Մեծամորի N 4 դամբարանից հայտնաբերված գոտին բացառիկ կարևոր նշանակություն ունի թվագրության համար:

Ինչպես Օշականի, այնպես էլ Մեծամորի դամբարանադաշտի համալիրների միջխմբային համեմատական քննությունը վկայում է մ.թ.ա. VIII-VIդդ. հնագիտական իրողությունների նույնականության մասին: Այն իր արտահայտությունն է գտնում և՛ թաղման ծեսի և՛ դամբարանային գույքի լայն զուգահեռների համատեքստում:

Խնդրո առարկայի վերաբերյալ կարևոր արդյունքներ են արձանագրվել Արտաշավանի դամբարանադաշտի պեղումներից:

Մշակութա-ժամանակագրական քննարկվող փուլը ներկայաց-

[118] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 176-177:
[119] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 178-179:
[120] *Է.Վ. Խանզադյան* ..., նշվ. աշխ., էջ 180-185:

ված է նաև Արտաշավանի դամբարանադաշտում[121], որը վերաբերում է «երկաթի լայն յուրացման» դարաշրջանին: Հիշյալ փուլին բնորոշ նյութեր են արձանագրվել NN 3 և 4 դամբարանների վերին թաղումներում և N 6 դամբարանում:

Դամբարան N 3: (Աղ. 76): Դամբարանի վերին շերտը խաթարված էր: Թաղման նախնական վիճակը վերականգնելու հնարավորությունը կորցրած այս շերտում արձանագրվել են մարդու վատ պահպանված գանգ, երկու տարբեր ծնոտների բեկորներ, ցլի ամբողջական գանգ, ոչխարի ծնոտ, ձիու ներքին ծնոտ և ատամներ, շան թերի պահպանված գանգ: Դամբարանասրահի հարավային հատվածում կույտի վերածված ոսկորների հետ հայտնաբերվեցին բրոնզե զարդավահանակ, (Աղ. 76, նկ. 20) երկաթե նետասլաք (Աղ. 76, նկ. 23), մածուկից պատրաստված գլանաձև ուլունքներ (Աղ. 76, նկ. 18): Դամբանասրահի մյուս հատվածներից գտնվեցին չորս երկաթյա դանակների մնացորդներ (Աղ. 76, նկ. 26-27), գնդիկավոր արծաթյա երեք ականջօղ (Աղ. 76, նկ. 12-14), արծաթյա եռագալար ծամկալ (Աղ. 76, նկ. 11), երկու խոշոր սարդիոնե ուլունք (Աղ. 76, նկ. 16, 17), «սևանյան տիպի» դաշույնի գոտեկապի բեկոր (Աղ. 76, նկ. 21), երկաթյա սղոցի բեկոր (Աղ. 76, նկ. 25), չորս տարբեր չափերի բրոնզե ականջօղեր (Աղ. 76, նկ. 8-10, 15), բրոնզե նետասլաքներ և զրահակոճակ (Աղ. 76, նկ. 19): Այս հատվածում դամբարանասրահի հյուսիս-արևելյան անկյունում առկա էր ցլի ևս մեկ գանգ: Դամբարանասրահի վերին, խառնված շերտից գտնված խեցու բեկորներից վերականգնվեցին 7 խեցանոթներ (Աղ. 76, նկ. 2-7): Գորշ և սև մակերևույթով, անհավասարաչափ թրծված խեցեղենը ներկայացված է լայնահատակ, նեղ-գլանաձև վզով սափորներով, միականք գավաթներով, երկկանք, կափարիչը պահպանված կճուճով և երկկանք ամֆորատիպ անոթով: Հարկ է նշել, որ դամբարանում արձանագրված վերին և ստորին թաղումները միանշանակ տարանջատվում են մեկմեկուց, քանի որ, վերին թաղումը կատարելուց առաջ նախորդը ծածկվել է կավահողի բավականին հաստ շերտով: Վերը ներկայացված խաթարված թաղումը ներկայացնող գույքը շերտագրորեն նստած է կավաշերտի վրա[122]:

Դամբարան N 4 (Աղ. 77): Շերտագրական այս նույն պատկերն ունենք նաև N 4 դամբարանում, վերին և ստորին թաղումները տարանջատվում են դեղնավուն կավահողի միջնաշերտով: Վերին թաղումն ամփոփող շերտում մարդկանց և կենդանիների ոսկորները, ջարդոտված խեցանոթների բեկորները (Աղ. 77, նկ. 2-5) անկանոն սփռված էին դամբարանասրահի ողջ մակերևույթով, տարբեր մակարդակների վրա: Թաղման կառույցի հյուսիսային պատի տակ առկա էր ցլի ներքին ծնոտի մի մասը և լայնաբերան թասերի բեկորներ: Այս նույն հորիզոնում գտնվեցին սայրը ծալված, խողովակակոթառ երկաթյա տեգ (Աղ. 77, նկ. 7), երկաթյա բիզ (Աղ. 77, նկ. 11), դանակի բեկոր (Աղ. 77, նկ. 8), բրոնզե ականջօղ, կապույտ ապակուց ուլունք: Հարավային հատվածում բացված ոսկորների կույտի մեջ առանձնանում են ցլի գանգը և վերջույթները, ոչխարի կմախքի ոսկորները և մարդու կմախքի ոսկորների մնացորդները (երեք կին՝ 30-35, 40-45 և անորոշ տարիքի, երկու տղամարդ՝ 40-50 տարեկան և տղամարդու վառված ծնոտի մաս): Այստեղից գտնված խեցու բեկորներից վերականգնվեց երկու կավանոթ՝ գորշ-մոխրագույն մակերևույթով, լայնաբերան կճուճ և միականք գավաթ: Դամբարանում առկա էին նաև ծարիրից կորիզաձև, բրոնզից գլանաձև, սարդիոնից և ամետիստից գնդաձև ուլունքներ, ջնարակապատ, բրոնզե ունկով կաթիլաձև կախիկ[123]:

Դամբարան N 6 (Աղ. 78, 79): Արտաշավանում պեղված վերջին, N 6 դամբարանը գտնվում է I դարավանդի հարավային եզրին: Դամբարանի շրջակայքն ավերված էր: Անկանոն լցված քարակույտից բացի (բարձրությունը 0,4-0,5 մ), արտաքին կառույցների հետքերը չէին պահպանվել: Քարալիցքի կենտրոնական հատվածում բացված թաղման կառույցը գետնափոր, հատակագծում ուղղանկյուն, կավածեփ հատակով, քարաշար դամբարանասրահ է, որն հյուսիսից ունի քարաշար մուտք-դրոմոս (խցի չափերն են 1,9×1,4×1,6 մ, մուտքի չափերը՝ 1,0×1,4×1,6 մ): Դամբարանասրահը ծածկված էր չորս հարթ, իսկ մուտքը՝ երկու սալաքարերով: Պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ այդ դամբարանը նույնպես հնում կողոպտվել է: Սողանցքում գտնվեցին երկաթյա երկու նետասլաքներ և բրոնզե օղ: Եվս երեք երկաթյա նետասլաքներ, բրոնզե օղ և խեցու բեկորներ գտնվեցին ծածկասալերի միջակայքում: Մուտքի հյուսիսային եզրից 1,5 մ հյուսիս-արևելք բացվեց բազալտե սալիկներից կառուցված ուղղանկյունաձև օջախ (չափերը 0,4×0,2 մ), լցված փայտածխի, վառված ոսկորների մնացորդներով և մոխրով (Աղ. 78, նկ. 2-1):

Կմախքի ոսկորները և ուղեկցող գույքը ջարդոտված, խառնիխուռն վիճակում սփռված էին խցով մեկ: Դատելով պահպանված գանգերի ոսկորներից դամբարանում թաղվել են մեկ տղամարդ, չորս կին և մեկ դեռահաս: Գտնվեց նաև ձիու երկու կմախք: Թաղումն ուղեկցող գույքը ներկայացված է զենքի, պերճանքի առարկաների կավանոթների հարուստ տեսականիով:

[121] *Գ.Մ. Սարգսյան,* Պեղումներ «Գազանոց» հնավայրում, ՀՀ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 19-20, *Պ. Աւետիսեան, Ն. Ենգիբարեան, Գ. Սարգսեան,* Հայաստանի նորահայտ հնագիտական յուշարձանները /Արտաշաւանի դամբարանադաշտ/, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա 1998, թիւ 1-12, էջ 193-247:

[122] *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ., էջ 210-211:

[123] *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ., էջ 211-212:

Երկաթյա կեռ միասայր շեղբով դանակ-դաշույն (Աղ. 79, նկ. 1), երեք դանակների բեկորներ (Աղ. 79, նկ. 8-11) հարթ, տերևաձև և նշաձև, ծողաձև պոչուկի հիմքը խնձորակով նետասլաքներ, երկմաս, հարթ, աղեղով, ուղիղ թևիկներով ֆիբուլա (Աղ. 79, նկ. 7), տարբեր չափերի և հատույթում քառակող իրանով երեք բզեր (Աղ. 79, նկ. 9, 12, 13), կիսախողովակաձև երկաթյա պիտույքներ, որոնք ըստ ամենայնի երեսապատել են փայտյա ծողը (կիսախողովակների վրա պահպանվել են գալարափաթ կաշեփոկի հետքերը) (Աղ. 79, նկ. 14):

Բրոնզից՝ ձուլածո, վեց ապարանջաններ, որոնցից չորսն ունեն հարթ, երկուսն ատամնավոր մակերես (Աղ. 79, նկ. 19, 20, 22, 23, 25, 26), բրոնզե բարակ լարից պատրաստված, ծայրերն իրար վրա բերված, ծայրերն իրար մոտեցող և օձագլուխ ապարանջաններ (Աղ. 79, նկ. 15-17), մեկ ծայրը ետ ծալված վզնոց (Աղ. 79, նկ. 29), բարակ լարից, սրվող ծայրերով հինգ ականջող (Աղ. 79, նկ. 30, 34, 35, 38, 39), մեկ ծայրը հետ ծալված և իրանին փաթաթված ականջողեր (Աղ. 79, նկ. 29-33), սարդիոնե ուլունքով հավելազարդված, թերի պահպանված ականջող (Աղ. 79, նկ. 37), կապարից, երեք գինդավոր ականջողեր (Աղ. 79, նկ. 31, 32, 36), միաձույլ, ատամնավոր մակերևույթով մատանի (Աղ. 79, նկ. 40), բրոնզե թիթեղից ճակատակալի բեկոր, պարուրաձև փաթաթված, բրոնզե տափակ լարից հերազարդ (Աղ. 79, նկ. 24), բրոնզե երկծալ թիթեղից պատրաստված ուղղանկյունաձև կապօղակներ (Աղ. 79, նկ. 41), ծալքավոր մակերևույթով, զանգաձև պիտույքներ, որոնք թերևս ձիու հանդերձանքի մաս են կազմել (Աղ. 79, նկ. 44-45), բրոնզե զանգակ, (Աղ. 79, նկ. 43), կոնաձև զրահակոճակներ (Աղ. 79, նկ. 42), ծռված ծայրերով բրոնզե ձող (Աղ. 79, նկ. 27):

Պերճանքի առարկաների մեջ առանձնանում է ոսկու նրբաթիթեղից պատրաստված, դիմահայաց նստած զույգ առյուծների պատկերով զարդը (Աղ. 79, նկ. 46): Գտնվել են նաև մեծ քանակությամբ սպիտակ և կապույտ շաղախից, սարդիոնից, ագաթից պատրաստված բազմատեսակ ուլունքներ, խնամքով հղկված, քարից գլանաձև կախիկ և ոսկրից զարդարուն մակերևույթով կապիչ-ճարմանդ: Առկա են նաև ոսկրից, զարդարուն մակերևույթով գլանաձև զարդատուփի մաս, ոսկրից կախիկ և կաորի խխունջից ուլունքներ (Աղ. 79, նկ. 47):

Գտածոների մեջ մեծ թիվ են կազմում կավանոթները, որոնք ներկայացված են խոհանոցային և սեղանի սպասքի ընդգրկուն տեսականջով (Աղ. 78, նկ. 2-14): Գորշ և սև մակերևույթով, գնդաձև իրանով կճուճներ (Աղ. 78, նկ. 6-8), ուռուցիկ իրանով, ամֆորատիպ երկկանթ անոթ (Աղ. 78, նկ. 14), ծագարաձև նեղ վզով սափորներ (Աղ. 78, նկ. 7, 13), մոխրագույն, գլանաձև վզով, ուսին կեղծ կանթով սափոր (Աղ. 79, նկ. 5), գնդաձև իրանով, ընդգծված վզով սափոր: Գտնվել են նաև սափորների և կճուճների առանձին բեկորներ, որոնց

մեջ առանձնանում են անկյունաձև փորվածքներով զարդարված և ծալքավոր բռնակների բեկորները: Ինքնատիպ ձևերով են ներկայացված ափսեները և քրեղանները, որոնց մեջ առանձնանում են գորշ մակերևույթով, կորացող պատերով, պսակը թեք շուրթով ընդգծած թասը, սև փայլանախշ գծերով զարդարված, օղակաձև նստուկով և ելուստ-կանթով քրեղանը (Աղ. 78, նկ. 15-20)[124]:

Կաղնի խաչի հնագիտական հավաքածուն: Նշված համալիրը՝ դամբարանադաշտ է, որը զբաղեցնում է մոտ 2 հա տարածք[125]: Այն տեղադրված է Դիլիջան քաղաքի արևելյան ծայրամասում: Ուսումնասիրվեց քարարկղային տիպի ինը դամբարան:Դրանք կառուցված են բազալտե կոպտատաշ քարաբեկորներից, ծածկի սալերը նույն եղանակով ճեղքված 1-3 քարաբեկորներ են: Դամբարանները ունեն հյուսիս-հարավ կողմնորոշում մինչև 30^{0} շեղումով արևմուտք: Թաղումները անհատական են տեղադրված դամբանախցի կենտրոնում կծկված, գլխով ուղղված հյուսիս: Մարդաբանական նյութը խիստ քայքայված է: Երկու դամբանախցերում թաղվածների կոնքոսկրների տակից հայտնաբերվեցին ձիու գանգոսկրեր, որոնցից մեկի հետ դրված էր ոսկորից ձիասարքի՝ սանձի մաս: Ուղեկցող գույքը դամբանախցերում որպես կանոն տեղադրված է թաղվածի գլխի կամ ոտքերի մոտ: Հնագիտական նյութի կազմը տարաբնույթ է: Գտնվել են մեկկանթանի, անկանթ սափորների, քրեղանների, թասերի, երկաթից նիզակի, պերճանքի առարկաների՝ ագաթից, սերդոլիկից և ոչ մեծ քանակությամբ մածուկից վզնոցի զարդաշար «դոմինո» տիպի: Խեցեղենը հիմնականում գորշ, փայլատ, դեղնավուն մակերևույթով օրինակներ են: Դրանց ձևերը և զարդամոտիվների հորինվածքը՝ փայլանախշ, գծանախշ, ուռուցիկ գոտիներով սահմանազատված զիգզագ, ալիքանախշ, կանելյուրներ, կանթերի վրա ուռուցիկ ելուստանախշ, կանթերին սեպանախշ և այլն, բնորոշ են վերը ներկայացված համալիրների նյութերին և ունեն հստակ թվագրություն: Համալիրները որոշակիորեն թվագրվում են մ.թ.ա. VII-VIդդ. վերջով:

Օշականի, Մեծամորի և Արտաշավանի վերը քննարկված դամբարանային համալիրները բնորոշվում են խաչասերման հետևանքով ձևավորված նոր իրողությունների համատեքստով: Այս առումով բացառիկ նշանակություն են ձեռք բերում հենց նույն դամբարանային համալիրներում տարբեր տիպաբանական կազմերի համատեղությունը փաստող հնագիտական նյութերը: Այսպես Օշականի NN 25, 59, 62, 47 և այլն, Մեծամորի NN 6, 4, Արտաշավանի NN 3, 6 դամբարաններից գտնված մի շարք խեցանոթներ ներկայացված են

[124] *Պ. Ավետիսեան* ..., նշվ. աշխ., էջ 212-216:
[125] *Г.Г. Аветисян*, Раскопки Кагни Хача, Археологические Открытия, Москва, 1986, с. 425.

այնպիսի նմուշներով, որոնք խիստ բնորոշ և տիպական են Արարատյան դաշտի և Հայաստանի մինչուրարտական համալիրներին:

Դրանք մասնավորապես, շեփորածև պսակով հարթ հատակներով, կլորացող իրաններով հասկազարդով, ալիք գծազարդերով հարդարված երբեմն ուսերին ունկ ունեցող սափորներ են (Աղ. 76, նկ. 2, 3; Աղ. 78, նկ. 5, 6, 13): Հաջորդը՝ երկկանթ ամֆորատիպ անոթներ են, որոնք փայլագծերով փայլուն գոտիներով և փորագիր զիգզագ ալիքազարդերով հարդարված անոթներ են (Աղ. 78, նկ. 14, 19): Մյուս խումբը շուրթից սկսվող միականթ բռնակով գավաթներն են (Աղ. 78, նկ. 4, 5 ; Աղ. 76 ; նկ. 7), երկկանթ կափարիչով անոթները (Աղ. 76, նկ. 6 ; Աղ. 69, նկ. 6): Սրանք աղերսներ ունեն Դվինի, Մեծամորի «հրդեհված» շերտերի նյութերում և վաղ երկաթի շրջափուլին վերագրվող դամբարաններում: Կարմիր բլուր, դամբարան N 3, Արթիկ, Սպանդարյան, Կարմիր բերդ, Թալին և այլն[126]: Դվինից, Շամիրամից, Արամուսից հայտնաբերված ուրարտական երկաթե նետասլաքները (Աղ. 82) խոսում են հիշյալ քաղաքները կործանող բանակի մասին, ինչն հնարավորություն է տալիս «հրդեհված» շերտերի նյութերը ժամանակագրել մ.թ.ա. IX դարի վերջ – VIII դարի I քառորդի սահմաններում[127]: Սրա հետ մեկտեղ, Արտաշավանի վերը բերված խեցանոթների նույնածևերը հայտնի են շատ ավելի ուշ ժամանակագրություն ենթադրող մի շարք հուշարձաններում՝ Քուչակ I դամբարանադաշտի N 4, Երևան Բուսաբանական այգու, Էրեբունիի, Օշականի N 47, Կարճաղբյուրի N 23 և 28, Լոռի բերդի N 2 դամբարաններում և այլն[128]: Թվարկված դամբարանների մեծ մասի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանցում կան ուրարտական խեցանոթների ձևերը նմանակող օրինակները: Այս պարագան հատուկ ընդգծվում է Արտաշավանի N 3 դամբարանի սև անփայլ մակերևույթով միականթ անոթի վրա (Աղ. 76, նկ. 7): Տեխնիկա-տեխնոլոգիական հատկանիշներով (խեցու բաղադրություն, արտաքին մակերեսի հարդարում և գունավորում, թրծման աստիճան) այն միանշանակ տարածաշրջանի վաղերկաթեդարյան խեցեգործության ավանդույթների կրողն է, բայց ձևաբանական առանձնահատկություններով («փռված» պսակ, շուրթի տակից սկսվող բռնակ) կրկնում է «վանտոսպյան» կարմրափայլ միականթ գավաթներին[129]: Անմիջական զուգահեռը կարելի է գտնել Երևանի Բուսաբանական այգում բացված դամբարանում: Բռնակի տեղադրությամբ և ձևով առանձնանում է վաղերկաթեդարյան նմուշներին կրկնող անոթը, որն աղերսվում է Լոռի բերդից հայտնի օրինակներին[130]: Կարևոր է ուրարտական մշակույթին բնորոշ, կարմրափայլ, բարձր պատերով, անհավասարաչափ թրծված սևդարչնագույն երանգներով օրինակը: Քրեղանի ուռուցիկ շուրթի վրա նշմարվում են երկշար հորիզոնական փայլագծերի հետքերը, որի դասական կարմրափայլ և վարդագույն զուգահեռները հայտնի են Արագածից, Արգիշտիխինիլիից, Կարմիր բլուրից, Լիճից, Էրեբունուց և այլ բիայնական համալիրներից[131]:

Ուրարտական մշակույթին բնորոշ խեցեղենի ձևերը կրկնող անոթներ գտնվել են Արագածում, Կարմիր բլուրում և Արտաշավանի N 4 դամբարանում: Դրանք վարդագույն մակերևույթով անոթներ են: Արտաշավանից ծագարը և թասը (Աղ. 77, նկ. 3, 4) իրենց զուգահեռներն ունեն միայն Վանի թագավորության խոշոր կենտրոններում և դամբարաններում՝ Օշական, Արամուս, Բաստամ, Կայալի դերե, Ալթին թեփե և այլուր[132]:

Ներկայացված թասերը դասական նմուշներից տարբերվում են միայն մակերեսի հարդարմամբ՝ խամրած, անփայլ, վարդագույն մակերես, ինչն հաճախ հանդիպում է ավելի ուշ՝ աքեմենյան վաղ շերտերում: Ներկայացված գույքի մեջ մեծ խումբ են կազմում կավա-

[126] *Հ.Հ. Մարտիրոսյան,* Գորոդ Թեյշեբաինի, Երևան, 1961, рис. 26 а, b, 27 а, 19 а, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, II, Երևան, 1967, Աղ. XII-XV, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, III, Երևան, 1972, Աղ. XIII-XII, *Է.Վ. Խանզադյան, Կ.Հ. Մկրտչյան, Է.Ս. Պարսամյան,* Մեծամոր, Երևան, 1973, Աղ. XXXIX, նկ. 2, *Կ.Հ. Կուշնարևա,* Դրևնեյшие памятники Двина, Ереван, 1977, рис. 15, 18/3, 31, 33, *Թ.Ս. Հաչատրյան,* Արտիկսկիյ некрополь. Каталог, Ереван, 1979, п-209, п-218, п-223,

[127] *Է.Վ. Խանզադյան և ուր.,* Մեծամոր, էջ 56-58; *Կ.Հ. Կուշնարևա,* Դրևնեյшие памятники Двина, с. 105-108:

[128] *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, II, Աղ. XVII, նկ. 4, *Ս.Գ. Դավեղյան,* Лори-Берд I, Таб. XXIX/4, 13, *Ս.Հ. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* Ошакан, I, Ереван, 1988, таб LXX/9, *N. Yengibaryan,* The Craves of the Urartian Period of Karchaghbyur, The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, Roma, 2002, Pl. XX/5, *Պ. Ավետիսյան ...,* նշվ. աշխ. էջ 219:

[129] *Հ.Հ. Մարտիրոսյան,* Արգиштихинили, Ереван, 1974, рис. 69/1, *Պ. Ավետիսյան...,* նշվ. աշխ. էջ 219:

[130] *Հ.Հ. Մարտիրոսյան,* Раскопки в Головино, Таб. XVI, *Հ.Հ. Մարտիրոսյան,* Армения в эпоху ..., рис. 84, 106.

[131] *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, I, Երևան 1964, Աղ. IX/7, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, III, Աղ. XXXI/8, *Հ.Հ. Մարտիրոսյան,* Արգиштихинили, рис. 68, *Գ.Գ. Ավետիսյան,* Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992, Таб. XXXVIII/1-4, *B. Ögün,* Die Urartaischen Bestattungsbräuche, in: Studien zur Religion und Kultur Kleinasiens. Festschrifit für F. K. Dorner, Leiden, 1978, *Պ. Ավետիսյան...,* նշվ. աշխ. էջ 220:

[132] *Հ.Հ. Մարտիրոսյան,* Գորոդ Թեյշեբաինի, Երևան, 1961, рис. 26 а, б, 27 а, 19 а, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, II, Երևան 1967, Աղ. XII-XV, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ, III, 1972, Աղ. VIII-XII, *Է.Վ. Խանզադյան, Կ.Հ. Մկրտչյան, Է.Ս. Պարսամյան,* Մեծամոր, Երևան, 1973, Աղ. XXXIX, նկ. 2, *Կ.Հ. Կուշնարևա,* Դրևնեյшие памятники Двина, Ереван,1977, рис. 15, 18/3, 31, 33, *Թ.Ս. Հաչատրյան,* Արտիկսկիյ некрополь, Каталог Ереван, 1979, п-209, п- 218, п-223, *Պ. Ավետիսյան ...,* նշվ. աշխ. էջ 218:

նոթների այնպիսի նմուշները, որոնք տեխնիկա-տեխնոլոգիական հատկանիշներով, ձևաբանությամբ աղերսվելով միջուրարտական հուշարձաններից հայտնի օրինակների հետ, հարդարման, զարդաբանման նկարագրով տարբերվում են վերջիններից: Գնդաձև իրանով երկկանթ սափորը (Աղ. 78, նկ. 19), սև փայլագծերով, անգոբի հեռացման եղանակով զարդարված, օղակաձև նստուկով և ելուստկանթով քրեղանը (Աղ. 78, նկ. 20), ռելիեֆ գոտիներով և կանթով հարդարված խորը թասը (Աղ. 78, նկ. 17), անկյունաձև կտրվածքներով հարդարված և ծալքավոր բռնակները բնորոշ են մ.թ.ա. VIII դարի I կեսից հետո ընկած ժամանակահատվածում թվագրման հնարավորություն ունեցող հուշարձաններին՝ Խրտանոց, Կարմիր բլուր, Օշական, Արագած, Արամուս, Ախթալա[133]:

Զուգահեռների համատեքստով ներկայացված նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ Օշականի, Մեծամորի և Արտաշավանի դամբարաններում առկա են կամ միջուրարտական հուշարձաններին տիպական կամ «խաչասերման» պարագան մատնանշող խեցեղեն բազմապիսի օրինակները: Օշականի, Մեծամորի և Արտաշավանի դամբարանների մետաղական գտածոների հիմնական մասը, բնութագրական հատկանիշներով նման են ուրարտական մշակույթի դասական օրինակներին: Մասնավորապես առանձնանում են երկաթյա կեռ սայրով, դանակ-դաշույններ, պոչուկի հիմքում խնձորակով նետասլաքները, երկար սայրով տեգը (Աղ. 79, նկ. 1, 2-6 ; Աղ. 77, նկ. 7): Այս նմուշները տարածաշրջանում ի հայտ են գալիս որպես կանոն միայն Վանի թագավորների արշավանքների ընթացքում և դրանից հետո: Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլիի, Սասունիկ, Նորատուսի, Կաղնի խաչի, Կարճաղբյուրի համալիրներից գտնվել են նման նյութեր[134]: Հատկանշական է, որ մ.թ.ա. VIII դարից սկսած Հայաստանի տարածքի հուշարձաններում կեռ սայրով դանակ-դաշույնները լայն տարածում են ստանում, դառնալով այս փուլի գույքի տիպաբանական առավել բնորոշ օրինակներից մեկը (Խրտանոց, Նորատուս, Սասունիկ, Կարճաղբյուր, Շեյթան դաղ, Մուսիերի և այլն)[135]: Երկաթից նման դանակներ հայտնաբերվել են նաև Արամուսից[136] :

Հետաքրքիր պատկեր ունենք նետասլաքների դեպքում: Վերջիններս փաստագրվում են առավելապես բիայնական բոլոր հայտնի ամրոցներում կամ դամբարաններում և հազվադեպ են հանդիպում այն համալիրներում, որտեղ գույքի տեսականու մեջ (հատկապես խեցեղենի) գերակշռում են «տեղական», զարգացած երկաթի փուլի նմուշները: Նման համալիրներում՝ Օշական, Արտաշավան և այլն, նետասլաքները հիմնականում ներկայացված են միջուրարտական հուշարձաններից հայտնի «ճանկավոր» նետասլաքների տարբերակներով (Աղ. 76, նկ. 9-10): Այս նույն պատկերն ունենք «սևանյան տիպի» դաշույնների դեպքում: Օրինակ, Արտաշավանի N 3 դամբարանում պահպանվել է միայն գոտեկապը, (Աղ. 76, նկ. 21): Դրանք որպես կանոն մաքուր ուրարտական համալիրներում չեն հանդիպում: Հատկանշական է, որ Կարմիր բլուրում գտնված արձանագիր տեքստերով բրոնզե ճանկավոր նետասլաքները Արաքսից հյուսիս ընկած միջուրարտական հուշարձաններին: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ արձանագիր նետասլաքները «տեղական» ծագում ունեն[137]:

Օշականի, Մեծամորի և Արտաշավանի նյութերում դանակները, սղոցները, շիգղերը (որոշ օրինակներ ոճավորված) շաղկապվում են Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլիի, Երևանի, Եղեգնաձորի ուրարտական, մ.թ.ա. VIII-VIIդդ. դամբարանային նյութերի[138] հետ: Երկաթից նմանօրինակ ֆիբուլաներ գտնվել են նաև Արագածի ամրոցում:

Արարատյան դաշտում և Հայաստանում ծիու թաղումներով և ասպազենի բազմապիսի դամբարանները ունեն լայն աշխարհագրություն: Այսպես, Օշականում և հատկապես Արտաշավանի դամբա-

---

[133] *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Таб. XI/6, 7, Таб. XIII/28, *А. Мартиросян,* Город Тейшебаини, рис. 41, 49, 54, *С.А. Есаян,* Древняя культура ..., Таб. 139/8, *С. Г. Деведжян,* Лори-Берд I, Таб. XVIII/1,2, *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан, Таб. XLIX/5, *J. De Morgan,* Mission Scientifique ou Caucase, Paris, 1889, fig. 157/3. *Պ. Ասատրյան* ..., նշվ. աշխ. էջ 220:

[134] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, Ереван, 1950, рис. 17, 22, 32, *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур II, Ереван, 1950, с. 20, *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 195, рис. 59, *А.А. Мартиросян,* Аргиштихинили, рис. 89 б., *Ա.Ս. Փիլիպոսյան,* Հին Արևելքի ..., Աղ. 4/17-20, *N. Yengibaryan,* The Craves of the Urartian, pl. V/3, XIII/1, XV/1, *Պ. Ասատրյան* ..., նշվ. աշխ. էջ 221:

[135] *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Таб. XIII/5, XVI/6, *А.А. Мартиросян,* Армения в эпоху ... Таб. XXX, *Ս.Ս. Եսայան, Լ.Ն. Բիյազով, Ս.Գ. Հմայկյան, Ա.Գ. Կանեցյան,* Երևանի Բիայնական դամբարանը /2/, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ III, Աղ. VII/6-9, *J. De Morgan,* Mission ..., fig. 121.

[136] *Հ.Գ. Ավետիսյան,* Արագած, էջ 49:

[137] *Պ. Ասատրյան*..., նշվ. աշխ. էջ 222:

[138] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, рис. 29, *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, рис. 33 а, *А.А. Мартиросян,* Аргиштихинили, рис. 89 а, *С.А. Есаян, О.С. Хникян,* Находки Биайнских изделий в Ехегнадзоре, Вестник Государственного Университета, 1990, 3, с. 37, Таб. I/14, *Ի.Ա. Կարապետյան,* Նորաշենի վաղ հայկական ամրոցը, 1974, 2, Աղ. IV/11,15, *Ն.Գ. Ենգիբարյան,* Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ՀՀ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 71, *N. Yengibaryan,* The Craves of the Urartian ..., Pl. XVIII/14, 17, *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур II, *Պ. Ասատրյան* ..., նշվ. աշխ. էջ 222:

ռաններում պահպանվել են ասպազենի մի շարք պիտույքներ, երեք համալիրներում առկա էին ձիու ոսկորներ: Ձիու կամ ձիերի ուղեկցությամբ թաղումները, մ.թ.ա. VIII դարից հետո ընկած ժամանակահատվածի համար, դառնում են առավել բնորոշ: Անդրկովկասում և Հայաստանի մ.թ.ա. VIII-VIդդ. հուշարձաններում փաստագրվում են մեծ քանակությամբ ասպազենի տարատեսակ նմուշներ Դիլիջանի Կաղնի Խաչի դամբարաններում, Մակարաշեն, Վանաձոր, Գոլովինո, Ոսկեհասկ, Լոռի բերդ, Սևանի ավազանի դամբարաններ և այլն: Քննարկվող հուշարձանից մասնավորապես Արտաշավանից հայտնաբերված զարդավահանակի, ծալքավոր մակերևույթով զանգաձև պիտույքների (Աղ. 79, նկ. 44, 45), կոնաձև զանգակի (Աղ. 79, նկ. 43) զուգահեռները տեսանելի են Մակարաշենում, Վանաձորում, Ոսկեհասկում, Օշականում, Սյունի բերդում, Մուսիերիում, Շեյթան դաղում, Աղթալայում, Անգեղակոթում և այլուր[139]: Վերջիններս լավ հայտնի են Արարատյան դաշտի խոշոր ուրարտական հուշարձաններից (Արգիշտիխինիլիից, Կարմիր բլուրից և այլն)[140]:

Պերճանքի առարկաներից առանձնանում են մասնավորապես, մեկ ծայրը սրվող գինդավոր ոսկուց, արծաթե և բրոնզե ականջօղերը (Աղ. 76, նկ. 12-14), որոնք համարվում են ուրարտական զարդի դասական նմուշներ: Դրանք հայտնի են Կարմիր բլուրից, Օշականից, Արգիշտիխինիլիից[141]: Հատկապես հետաքրքիր են Արգիշտիխինիլիից, հայտնի գինդավոր աղեղով ֆիբուլաները, որոնք հարդարված են նույն զարդերով, ինչպես ներկայացված ականջօղերը[142]: Արծաթյա լարից, սրացող ծայրով Արտաշավանի ականջօղերի (Աղ. 76, նկ. 8-10), բազմագալար հերազարդերի (Աղ. 76, նկ. 11), նմանակները նույնպես հանդիպում են մ.թ.ա. VIII դարի I քառորդից հետո թվագրվող հուշարձաններում՝ Լոռի բերդ, Օշական, Խրտանոց, Ալթին թեփե[143]: Վերը ներկայացված նմուշներն ունեն զուտ ուրարտական ծագում: Օշականից, Արտաշավանից երկծալ լարից ականջողերը հանդիպում են արդեն բացառապես «խաչասերման» պարագան նշանավորող հուշարձաններում՝ Կարճաղբյուր, Նորատուս, Սողք /Զոդ/, Գոլովինո, Գիիմլի[144]:

Մ.թ.ա. VIII-VIդդ. Մեծամորի, Օշականի, Արտաշավանի հուշարձանների գույքի կազմը բնորոշող տեսականու մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նաև միաձույլ՝ ատամնավոր մակերևույթով, հաճախ օձագլուխ տարբեր չափերի ապարանջանները, որոնք տիպական են մի շարք հուշարձաններին (Աղ. 66, նկ. 15-21 ; Աղ. 81, նկ. 1-3 ; Աղ. 68, նկ. 1, 2 ; Աղ. 74, նկ. 2, 7-10 ; Աղ. 79, նկ. 19-26): Նույնը կարելի է ասել կապ-օղերի, կախիկ-սրոցաքարերի կամ ոսկրից պատրաստված ճարմանդների մասին, որոնք լայն զուգահեռներ ունեն այսպես կոչված սկյութական ժամանակաշրջանի համալիրներում (Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր, Գուսանագյուղ, Հարժիս և այլուր)[145]: Հատկապես մեծ տարածում ունեն տարատեսակ սպիտակ կամ կապույտ շաղախից պատրաստված «դոմինո» կոչված ուլունքները (Աղ. 79, նկ. 47 ; Աղ. 74, նկ. 13 ; Աղ. 72, նկ. 32), որոնց նմանօրինակները հայտնի են համաժամանակյա գրեթե բոլոր հուշարձաններից: Սրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ զարդի այս նմուշները տիպական են նաև մինչուրարտական համալիրներին: Արաքսից հարավ պեղված բիայնական հուշարձաններում այս զարդը չի հանդիպում, ինչը հուշում է, որ Հայաստանի տարածքի ուրարտական համալիրներում փաստագրում ենք «տեղական» ծագումով իրերի ներթափանցման պարագան[146]:

Արտաշավանի N 6 դամբարանի նյութերի մեջ առանձնանում է ոսկրե զարդարուն մակերևույթով զարդատուփի բեկորը, որը դեկորատիվ կիրառական արվեստի մի ինքնատիպ նմուշ է: Դրա անմիջական զուգահեռները հայտնի են Էրեբունուց, Կարմիր բլուրից, Նորա-

---

[139] *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Таб. XVI, *А.А. Мартиросян,* Армения в эпоху ..., рис. 84, 106, Таб. XXI, *Ս.Ս.Հայրապետյան,* Հնագիտական հետազոտություններ Սիսիանում, պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, Աղ. 18բ, *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Таб. LIV, *Л.А. Петросян,* Раскопки в памятников..., Таб. 65/6, *J. de Morgan,* Mission ..., fig. 104, *Պ. Ասատրյան...,* նշվ. աշխ. էջ 223:

[140] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур II, рис. 6, *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур III, рис. 36, *Էրեբունի թանգարան,* գույք 82/13, 14, 16, 20, *А.А. Мартиросян,* Արտաշատի հուշարձաններ, рис. 84, *Պ. Ասատրյան...,* նշվ. աշխ. էջ 223:

[141] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, рис. 14, *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Таб. LIII/7-11, LX/8, *Պ. Ասատրյան ...,* նշվ. աշխ. էջ 223, *Ի.Ա.Կարապետյան, Ն.Գ.Ենգիբարյան,* Քրմի կնիքով թաղում Արգիշտիխինիլիից, Բանբեր Երևանի Համալսարանի, Երևան 2002, 2, էջ 220:

[142] *А.А. Мартиросян,* Արտաշատի հուշարձաններ, рис. 82/10, *Պ. Ասատրյան ...,* նշվ. աշխ. էջ 223:

[143] *Պ. Ասատրյան...,* նշվ. աշխ. էջ 223:

[144] *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Таб. XIII/36, *Ս.Ս. Եսայան,* Ուրարտական գոտիով դամբարան Զոդում, Պատմա Բանասիրական Հանդես, 1979, 3, Աղ. II/10, 11, *N. Yengibaryan,* The Craves of the Urartian..., pl. I/3, IX/17, XIV/14, *A. Erzen,* Giyimli bronz definesi ve Giyimli Kazisi, Türk Tarih Kurumu Belleten, 1974, C. XXXVIII, res. 26, *T. Özgüç,* Jewellery, Gold Votive Plaques and a Silver Belt from Altintepe, "Anatolian Studies", 1983, vol. 33, *Պ. Ասատրյան...,* նշվ. աշխ. էջ 223:

[145] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Таб. LX/3, *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур II, рис. 25, *Գ.Ս. Ղումանյան,* Գուսանագյուղի դամբարանը, ՀՀ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 29, *Օ.Ս. Խնկիկյան,* Դամբարանների պեղումներ Հարժիս գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1992, Աղ. XCVIII/7, *С.А. Есаян, М.М. Погребова,* Палочки-застежки в закавказских и скифских памятниках, Вестник Общественных Наук, 1980, 1, Таб. II/2.

[146] *Պ. Ասատրյան...,* նշվ. աշխ. էջ 223:

տուսից[147]: Ուրարտական ոսկերչության մի հրաշալի գտածո է N 6 դամբարանից հայտնաբերված 2,3×2,3 սմ չափերի զարդաթիթեղը (Աղ. 79, նկ. 46): Վերջինիս վրա կետազարդով արված շրջանակի մեջ, դրվագման եղանակով պատկերված են դեմ-դիմաց նստած առյուծների զույգ պատկերներ: Գիշատիչները նստած են առջևի թաթերը առաջ պարզած, հետևինները ծալած վիճակում: Բարակ գծերով ընդգծված են բաշերը, դեմքի որոշ մանրամասներ: Թիթեղի եզրին արված անցքերից կարելի է ենթադրել, որ վերջինս ամրացվել է կաշվի կամ փայտե միջուկի վրա[148]: Այս զարդի անմիջական զուգահեռը տեսանելի է Օշականի N 59 դամբարանում (Աղ. 71, նկ. 6, 7)[149]: Զարդաթիթեղն իր պատկերագրական և ոճական առանձնահատկություններով ընդհանրություններ ունի Սերբար թեփեից գտնված նվիրատվական թիթեղի վրա պատկերված առյուծի պատկերի, Գորիսի, Ալթին թեփեի, Կայալի դերեի առյուծների քանդակի հետ[150]: Նման պատկերով առյուծների ֆիգուրներ դրվագված են նաև ուրարտական գոտիների և վահանների վրա: Արտաշավանի, Մեծամորի, Օշականի համալիրները գույքի տեսականիով համապատասխանում են մ.թ.ա. VIII-VIդդ. ժամանակագրվող հուշարձաններին, որոնք մի կողմից ունեն մինչուրարտական, մյուս կողմից ուրարտական համալիրներին բնորոշ հատկանիշներ: Ժամանակի մեջ նոր իրողությունների համատեքստում որոշ գտածոներ սկսում են փոփոխություններ կրել իրենց մեջ պահպանելով նաև ուրարտական և տեղական գույքի տիպական հատկանիշները: Ուրարտական ստանդարտ մշակութային տարրերը նաև ստույգ թվագրության հատկանիշներ ունեն: Նման պարագայում բացառիկ նշանակություն են ստանում նաև, այսպես կոչված «տեղական» զարգացած երկաթեդարյան մշակույթին բնորոշ իրերի առանձնահատկությունները, որոնք մ.թ.ա. VIII-VIդդ. սահմաններում, ժամանակի մեջ լուրջ ձևափոխությունների են ենթարկվում: Մասնավորապես Մեծամորի, Դվինի «հրդեհված» շերտերի և դրանց հետ համաժամանակեցվող դամբարանների համեմատությունը ուրարտական նյութեր պարունակող համալիրների հետ, միանշանակ թույլ են տալիս առանձնացնելու գույքի որոշակի տեսականի, որի ժամանակագրության ստորին սահմանը չի կարող ավելի վաղ լինել, քան մ.թ.ա. VIIIդ.-ի I քառորդը, իսկ «տեղական» մշակույթը նշանավորող գույքի տեսականու հաջորդական ձևափոխությունը փաստագրվում է շերտագրական դիտարկումներով[151]:

Ինչպես նշվեց Մեծամորի NN4, 6 և Արտաշավանի դամբարաններում գրանցվել են կրկնակի թաղում: Ստորին մակարդակի նյութերը միանշանակ վերագրելի են վաղ երկաթի դարաշրջանին և նշանավորում են մինչուրարտական հուշարձանների խեցեղենի տեսականին: Վերին թաղման գույքն իր անմիջական նույնաձևերն ունի Մեծամորի «հնոցների» շերտում, որն հաջորդում է «հրդեհված» շերտին և ներկայացված է նաև վանտոսպյան խեցեղենի նմուշներով[152]: Ակնհայտ է, որ վերին թաղումը հնարավոր է ժամանակագրել մ.թ.ա. VIIIդ. I քառորդից հետո: Մեծամորի «հրդեհված» շերտի նյութերի հետ են նույնականանում N 4 դամբարանի ստորին մակարդակի գույքը, որի վերին թաղումն արդեն ներկայացված է ուրարտական խեցեղենով և մետաղով[153]:

Շերտագրական համեմատականը հնարավորություն է ընձեռում NN6 և 4 դամբարանների վերին թաղումները համաժամանակեցնել, թվագրելով դրանք մ.թ.ա. VIIIդ., I քառորդից հետո: Հարկ է նշել, որ N 6 դամբարանի խեցեղենն իր ձևաբանական հատկանիշներով քիչ է տարբերվում մինչուրարտական խեցեղենից: Մեծամորի N 6 դամբարանի նյութերի կրկնօրինակները տեսանելի են Կարմիր բլուրի N 5 և 3 դամբարաններում[154]: Եթե նկատի ունենանք, որ Կարմիր բլուրի միջնաբերդի հիմնադրումը ժամանակագրվում է մ.թ.ա. VIIդ. II քառորդով Ռուսա II գահակալման տարիներին և միջնաբերդից հայտնի «տեղական» խեցեղենը ակնհայտորեն տարբերվում է վերը ներկայացվածից, ապա պատկերը կամբողջանա: Այս փոփոխությունների դրսևորումները կարելի է մատնանշել Օշականի N 47 դամբարանում (Աղ. 69, նկ. 4-10), որը համաժամանակեցվում է Մեծամորի N 4 և Կարմիր բլուրի հիշատակված համալիրների հետ[155]: Օշականի N 47

---

[147] *Б.Б. Пиотровский,* Искусство Урарту /VIII-VI вв. до н. э./, Ленинград, 1962, рис. 59-60, *Ս.Ս. Եսայան,* Հնագիտական իրերի կատալոգ II, Աղ. XXXVI/1, *С. Ходжаш, Н. Трухтанова, К. Оганесян,* Эребуни, Москва, 1979, рис. 111, *Ն. Ենգիբարյան,* Ուրարտական դամբարաններ Նորատուսից, էջ 67, *Էրեբունի թանգարան,* գույք N 26/148-150, *Պ. Ալեքսիսեան ...,* նշվ. աշխ. էջ 224:

[148] *Պ. Ալեքսիսեան...,* նշվ. աշխ. էջ 224-225:

[149] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* Օշական I, рис. 4.

[150] *C.A. Burney,* A first season of excavations at the Urartian citadel of Kayalidere, "Anatolian Studies", vol. XVI, 1966, pl. IX/c, *H.-J. Kellner,* Bronzene Weih – und Votivgaben, Urartu, Ein Wiederentdeckter Rivale Assyriens, Ausstellungskatalog der prähistorischen Statssammlung, B. 2, München, 1976, fig. 47, 48, *O.A. Taşyurek,* Darstellungen des urartäischen Gottes Haldi, Studien zur Religion und Kultur Kleinasiens, S. 943, fig. 8.

[151] *Պ. Ալեքսիսեան ...,* նշվ. աշխ. էջ 225-226:

[152] *Է. Վ. Խանզադյան և ուր.,* Մեծամոր, 1974, էջ 171-185, նկ. 162-165, Աղ. XXXVIII-XXXIX, *Պ. Ալեքսիսեյան ...,* նշվ. աշխ. էջ 226:

[153] *Է.Վ. Խանզադյան և ուր.,* Մեծամոր, նկ. 169, Աղ. XLII-XLIII:

[154] *Ա.Ա. Մարտիրոսյան,* Город Теишебаини, рис. 28 а, б, 29, а, б, в, г., *Պ. Ալեքսիսեան...,* նշվ. աշխ. էջ 226- 227:

[155] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան,* Օշական I, Таб. LXX-LXXI, *Պ. Ալեքսիսեան...,* նշվ. աշխ. էջ 227:

դամբարանի գորշ մակերևույթով, լայնափող սափորի իրանի զիգզագ վերևից ներքև փայլագծերով զարդածևն արդեն տեսնում ենք Վանաձորի, Դիլիջանի, Խրտանոցի, Լոռի բերդի, Նորատուսի և այլ համալիրներում[156]: Այս դամբարանների գույքի նույնածևերի առկայությունը Կարմիր բլուրի միջնաբերդում, ինչպես նաև սկյութական զենքի և ասպազենի նմուշներ պարունակող համալիրներում, հիմք են տալիս վերջիններս ժամանակագրելու մ.թ.ա VII-VIդդ. սահմաններում: Ընդ որում, սկյութական նետասլաքների առկայությունը, սովորաբար շաղկապվում է Թեյշեբաինիի անկման ժամանակագրության, ուրարտական պետության կործանման հետ՝ մ.թ.ա. VIդ., առաջին երկու տասնամյակների շրջանակներում[157]: Վերջին տարիներին պեղված մեծաքանակ նյութերը հիմք են տալիս որոշակի շտկումներ կատարելու նշված ժամանակահատվածին վերաբերող հուշարձանների թվագրության հարցերում:

[156] *А.А. Мартиросян,* Раскопки в Головино, Таб. XIII, *А.А. Мартиросян,* Армения в эпоху ..., Таб. XXII, *С.Г. Деведжян,* Лори Берд I, Таб. XXVIII, *Г.Г. Аветисян,* Раскопки Кагни Хача, с. 425, *Պ. Ավետիսեան...,* նշվ. աշխ. էջ 227-228:
[157] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, с. 86-97, *Պ. Ավետիսեան...,* նշվ. աշխ. էջ 227:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արարատյան դաշտի հուշարձանների ավերումը և Վանի թագավորության վերացումը առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ Հայաստանում և Առաջավոր Ասիայի տարածքի բոլոր հուշարձաններում, որոնք ունեն ուրարտական մշակույթին բնորոշ շերտեր և հնագիտական գույք, որպես վերին ժամանակագրական սահման ունեն մ.թ.ա. 580-ական թվականները արձանագրող անսասան չափանիշ: Սակայն մի քանի համալիրներ մասնավորապես Օշականի N 25 դամբարանի նյութերը ցույց տվեցին, որ ուրարտական գույքով այդ համալիրն ավելի ուշ թվագրություն է պահանջում: Դրա մասին մատնանշում են նյութը հրատարակող գիտնականները[158]: Դամբարանից գտնված սակո-սարմատական տիպի եռաթև պոչուկավոր, երկաթյա նետասլաքի վաղագույն նախատիպերը հայտնի են Իրանից և Միջին Ասիայի հարավից: Մ.թ.ա. VII-VIդդ.. թվագրվող և սակերի մշակույթին վերագրված հուշարձաններում առկա են բացառապես եռաթև պոչուկավոր նետասլաքների բրոնզե օրինակներ[159]: Երկաթյա տարբերակներն հանդիպում են Իրանում մ.թ.ա. IV դարի կեսերից սկսած, իսկ ռուսական տափաստաններում վաղ սարմատական փուլից՝ մ.թ.ա. IV դարից հետո:[160] Հյուսիսային Կովկասի և հյուսիս-սևծովյան սկյութական հուշարձաններում զենքի այս տեսակն ըստ էության չի փաստագրվում մ.թ.ա. VII-Vդդ. սահմաններում: Այս հանգամանքը հուշում է, որ վերջիններիս առկայությունը Հայաստանի հուշարձաններում, սկյութական նետասլաքների հետ համատեղ, հնարավոր չէ ժամանակագրել մ.թ.ա. VII-VI դարերով և շաղկապել սկյութական արշավանքների հետ: Ավելին, Կարմիր բլուրի քաղաքային թաղամասում պեղված դամբարաններից, Արին բերդի աքեմենյան շերտերից գտնված օրինակները մատնանշում են, որ այս նետասլաքների ի հայտ գալն Հայաստանում պետք է կապել մարական կամ աքեմենյան արշավանքների հետ[161]:

Հանրահայտ է, որ սկյութական տիպի նետասլաքները մ.թ.ա. VII-VIդդ. լայն տարածում ունեին Միջին Ասիայում, Հյուսիսային մերձսևծովյան շրջաններում, Դոնում, Անդրկովկասում[162], իսկ մ.թ.ա

[158] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, с. 69-76.
[159] *И.Н. Медведская,* Некоторые вопросы хронологии бронзовых наконечников стрел Средней Азии и Казахстана, "Советская Археология", 1972, 3, с. 81-83, *Պ. Ավետիսեան...,* նշվ. աշխ. էջ 229:
[160] Степи Европейской части СССР в скифо-сарматское время, Москва, 1989, с. 165, 173.
[161] *А.А. Мартиросян,* Город Теишебаини, рис. 61, *Պ. Ավետիսեան...,* նշվ. աշխ. էջ 229:
[162] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, с. 74:

V դարի համալիրներում դրանք համեմատաբար սակավաքանակ են: Օշականի դամբարանային համալիրներից N 25–ում հայտնաբերած սկյութական տիպի նետասլաքները հար և նման են Թեյշեբաինի նետասլաքներին, որոնցով նետահարվել է ամրոցը: Այս հանգամանքը փաստելով անհրաժեշտ է քննարկվող դամբարանը թվագրել մ.թ.ա. VI դարի սկզբով կամ անգամ կեսով[163]: Կոնկրետ,

Տեղական և վանտոսպյան գույքի կազմի վերին ժամանակագրական սահմանի նման թվագրության կռվաններ ունենք նաև Լոռի բերդում: Ուրարտական ասպազենով, տեղական խեցեղենով, զարդի ու սպասքի հարուստ հավաքածուով ներկայացված N 62 դամբարանում գտնվել են նավկրատիսյան կոյաբզեզածև կնիքներ[164]: Ներկայումս, առավել հավանական է համարվում, որ Նավկրատիսը կառուցվել է VIIդ. վերջ, VIդ. սկզբներին: Քաղաքը ծաղկում է ապրել մ.թ.ա. VIդ. II քառորդից հետո, Ամասիսի օրոք (մ.թ.ա. 570-525թթ.)[165]: Նավկրատիսյան կնիքները Լոռի բերդում կարող էին հայտնվել մ.թ.ա. VIդ. կեսերից հետո կամ որպես մշակութային և առևտրական կապերի հետևանք, կամ, որն ավելի հավանական է, Կամբիզի արշավանքներից հետո: Այս դիտարկումները թույլ են տալիս ուրարտական և «տեղական» գույքի կազմով համալիրների թվագրության վերին ժամանակագրական սահմանը տեղաշարժել մինչև մ.թ.ա. VI վերջին քառորդ: Այդ են վկայում նաև Հայաստանի տարբեր դամբարանների նյութերը, որոնցում փաստագրվել են համապատասխան գույքով սկյութական նետասլաքներ՝ Մակարաշեն, Կուրթան, Ջրառատ, Աստղածոր, Ղաչաղան, Հարժիս և այլն[166]: Մ.թ.ա. VIIIդ.. II կես – VIդ. վերջին քառորդն ընկած ժամանակագրական սահմաններում Լոռի բերդի N 62, Օշականի N 25 դամբարանների հետ կարելի է համաժամանակեցնել Նորատուսի N 21 և 22 դամբարանները[167]: Վերջիններիս նյութերում առանձնանում են դեպի ներս թեքվող շուրթով թասերը, որոնց անմիջական զուգահեռը Արտաշավանի N 4 դամբարանում է: Ընդ որում, այս տիպի բաց անոթները բնորոշ են Էրեբունու, Օշականի, այսպես կոչված վաղ հայկական շերտին[168]: Սրա հետ մեկտեղ, N 4 դամբարանի լայնաբերան կճուճի և միականթ գավաթի անմիջական զուգահեռները փաստվում են Լոռի բերդի N 3

[163] Նույն տեղում:
[164] *Ս.Հ. Ղևեջյան,* Ուրարտական հուշարձաններից հայտնի կոյաբզեզածև կնիքների շուրջ, Էրեբունի-
Երևան, Երևան, 1998, էջ 3-4, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 229:
[165] *В.П. Яйленко,* Архаическая Греция и Ближний Восток, Москва, 1990, с. 197-209, *Պ. Աւետիսեան...,* նշվ. աշխ. էջ 229:
[166] *С.А. Есаян, М.Н. Погребова,* Скифские памятники Закавказья, Москва, 1985, с. 25-31, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 229:
[167] *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:
[168] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Таб. XXVIII/6, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:

դամբարանում[169]: Արտաշավանի N 3 դամբարանի կեղծ կանթով սափորի անմիջական զուգահեռը Քուչակի I դամբանադաշտի N 41 դամբարանում է, որի խեցեղենի կազմում առկա են ինչպես Վանաձորի, Լոռի բերդի սափորներին, այնպես էլ Բերդի ելուստ-կանթով փիալաներին աղերսող օրինակները[170]: Դամբարանի արծաթյա զարդերի նույնածևները տեսանելի են Օշականի N 25 դամբարանում[171]: Քուչակի և Օշականի դամբարանների տեսականու համատեղությունը Արտաշավանի N 3 դամբարանում, թույլ է տալիս թվագրելու այն մ.թ.ա. VIդ. II կեսի սահմաններում: Նորատուսի, Կարճաղբյուրի, Խրտանոցի դամբարանների խեցեղենի և զարդի նմուշներն առկա են նաև Արտաշավանի N 6 դամբարանում:[172] Սրա հետ մեկտեղ, դամբարանի խեցեղենի կազմում տեսանելի են օրինակներ, որոնց անմիջական զուգահեռներում փաստագրվում են մ.թ.ա. IX-VIIIդ. I քառորդի սահմաններով թվագրվող հուշարձաններում (Թալին, դամբ. N 51 և այռուր)[173]: Առյուծազարդ ոսկյա նրբաթիթեղի և երկծալ թիթեղի օղակապի աղերսներն Օշականի N 59 դամբարանի նյութերում են, որի գույքի տեսականին միանշանակ ավելի վաղ է, քան նույն հուշարձանի N 25 դամբարանը: Բացի այդ, Արտաշավանից գտնված թասի շուրթի ձևը հուշում է, որ այն ուրարտական դասական օրինակների նմանակման վաղ նմուշ է:[174] Բանն այն է, որ ուրարտական խեցեգործությանը բնորոշ շուրթի այս ձևը նմանակող ուշ զուգահեռների համար տիպական են լայնացող և դեպի ներս թեք տեղադրված տարբերակները: Նշվածը թույլ է տալիս Արտաշավանի N 6 դամբարանը ժամանակագրել Օշականի N 59 դամբարանից հետո, բայց ավելի վաղ, քան Օշականի 25-ը և նրան համաժամանակյա համալիրները: Եթե N 59 դամբարանի համար չի բացառվում մ.թ.ա. VIIIդ. վերջ – VIIդ. I կեսով թվագրության հնարավորությունը, ապա Արտաշավանի N 6 դամբարանը պետք է ժամանակագրվի մ.թ.ա. VIIդ. II կես – VIդ. սահմանագծով[175]:

[169] *С.Г. Деведжян,* Лори Берд I, Таб. XXIX, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:
[170] *А.А. Мартиросян,* Армения в эпоху ..., Таб. XXII/1, 2, 4, *С.А. Есаян,* Древняя Культура племен ..., Таб. 143, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:
[171] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Таб. XXVIII/6, *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:
[172] *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230-231:
[173] *Պ. Աւետիսեան ...,* նշվ. աշխ. էջ 230:
[174] Նույն տեղում:
[175] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ III

ԱՐԱԳԱԾԻ ԱՄՐՈՑԸ

Արագածի ամրոցը վաղուց գրավել է պատմաբանների և ճանապարհորդների ուշադրությունը: Ղ. Ալիշանի վկայությամբ Արագածը դիտարկել և գրչանկարել է ֆրանսիացի ճանապարհորդ Պուլե Լեկուզը 1647թ.: Ղ. Ալիշանը «Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց»[176] աշխատության մեջ նշում է. Ի վերոյ ափանց Մեծամօրի'ի ստորոտս Արագած լերին՝ առաջին գեօղք վիճակիս են Այարլու, մերձ'ի Բագռինճ /158/, և Արամլու կամ Հարամլու, երկոքին եւս թուրքաբնակք. որոյ 'ի հարաւոյ կայ առ նորընծայ Մեծամօրեավ հայաբնակն և հայանուն Աղաւնատուն, Ս. Աստուածածին կամ Ս. Գեորգ եկեղեցեաւ: Ի սորին հարաւոյ Խնաւուզ կամ Խլաւուզ հայաբնակ, Ս. Աստուածածին կամ Ս. Ստեփանոս եկեղեցեաւ: Սակաւուք'ի բացեայ'ի Հր. սորա՝ Ագճագալե /Ագճաղալա, որ է Սպիտակ բերդ/, Ս. Գեորգ կամ Ս. Փրկիչ եկեղեցեաւ: Ի գեղջս յայսմիկ գիշերօթեաց Պուլէյ-Լըկուզ փռանկ ուղեւոր յամի 1647 /10 նոյեմբ./, և ընծայէ այսպէս ըզպատկեր բերդին փոքու, զոր ետես' ի նմին, և մղոնաւ և աւելի հեռի ասէ զտեղին յարքունի պողոտայէն:» Հետագայում ամրոցը չափագրել է ճարտարապետ Թ. Թորամանյանը: Վաստակաշատ գիտնականը միևնույն ժամանակ համեմատում է ամրոցի չափագրությունը Ղ. Ալիշանի հրատարակած՝ Պուլե Լեկուզի գրչանկարի հետ՝ կատարելով վերջինիս վերլուծականը: Թ. Թորամանյանը, նշելով ամրոցի երկհարկանիությունը, ցավոք չի տալիս դրա վերակազմությունը: Նա Արագածի ամրոցը դասեց ուրարտական հուշարձանների շարքը: Այս եզրակացության համար հիմք հանդիսացավ ամրոցի ներքին ճարտարապետական ձևերի, մասնավորապես միջնաբերդի, որպես գլխավոր կառույցի, հատկանիշների վերլուծությունը[177]: Հարկ է նշել, որ Ղ.Ալիշանը հիշյալ կառույցը տեղադրում է Աղջաղալա գյուղի տարածքում և Թ. Թորամանյանի հետազոտություններից հետո պարզ դարձավ, որ այն ընկած է ներկայիս Արագած գյուղի մոտ և կապ չունի Աղջաղալայի տարածքում հայտնի ամրոցի ավերակների հետ: Ավելին, վաստակաշատ ճարտարապետի չափագրությունները և դիտարկումները ներկայումս սկզբնաղբյուրի նշանակություն են ձեռք բերում, քանի որ դարասկզբին ամրոցի պատերը շատ ավելի

[176] *Ղ. Ալիշան,* «Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց», Վենետիկ, 1890 թ., ս. Ղազար, էջ 202:

[177] *Թ. Թորամանյան,* Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942, էջ 33-34:

լավ էին պահպանվել և գիտնականի կողմից նկարագրված բազմաթիվ շինարարական մանրամասներն այսօր արդեն չեն պահպանվել:

«Շատ հետաքրքրական է գիտնալ, թե Պուլեյ Լըկուզ այս շենքը տեսած ժամանակ ամբո՞ղջ էր մինչև կտուրը և ամբողջությունը նկարեց իր տեսածի նմա՞ն, ինչպես կա Ալիշանի «Այրարատի» մեջ, թե՞ մասամբ քայքայված էր և վերակազմեց: Իհարկե, այդ մասին այժմ ստուգում կատարել անհնար է, սակայն մի բան պարզ է, որ ֆրանսացիի տեսած ժամանակ, երբ բոլորովին անաղարտ չէր, այնուամենայնիվ հիմիկվան նման կիսավեր չէր կարող լինել: Այժմ հազիվ ստորին հարկը մնացել է՝ արտաքուստ 3 մետր բարձրությամբ, և ներքին բաժանումների հատակագիծը՝ նույն բարձրության վրա: Բայց որովհետև շենքը գետնահարկ չունի, բնական երեք մետր բարձրությամբ ապառաժի վրա է շինված և միմիայն արտաքին պատերն են, որ ցածից շինել են և հարթ ճակատ ստեղծել: Հետևաբար, ներքին բաժանումների ստորին շարքերը մնացել են թեև տեղ-տեղ նույնիսկ ապառաժ, այնուամենայնիվ այժմ պարզ տեսնում ենք, թե ի՞նչ բաժանում ունեցել է շենքը: Այս հարկի ներքին բաժանումները հնար եղածին չափ չափագրված և հատակագծված է:

Շենքը երկու հարկանի էր, բայց մենք այժմ չենք կարող գիտնալ, թե ինչ ներքին բաժանումներ ուներ վերևի հարկը: Հարավային պատը, որ շենքի երկար կողմն է, ինչպես հյուսիսային հանդիպակաց պատը, հենորմերով է շինված, որոնց լայնությունը 3,80 մետր է և յուրաքանչյուր հենորմ պատից դուրս է ցցված 50 սանտիմետր: Այս հենորմերը, անշուշտ, շենքի հաստատության և ամրության համար շինված են: Շենքի չորս անկյուններուն վրա չորս մեծ քառակուսի բուրգեր են շինված մայր պատից դուրս և երևում է, որ այս բրգանման ցցված անկյունները շարունակված են դեպի վեր՝ մինչև տանիքը:

Հին ժամանակ, անշուշտ, այս շենքը եղել է իշխանական կամ տոհմապետական ամրոց. բացի շենքի ամուր կառուցվածքից, արտաքուստ հեռվից ևս շրջապատված է եղել կիկլոպյան պարիսպներով: Շենքի հյուսիսային և հարավային կողմի պարիսպները մինչև այսօր մեծ մասամբ կան, իսկ արևելյան և արևմտյան կողմի պարիսպները միանգամայն մաքրել են գյուղացիները և տեղերն այգի և մրգաստան են տնկել: Շենքը հեռվից շրջապատող պարիսպների հյուսիսային կողմինը հինգ մետր հեռավորության վրա է, իսկ հարավային կողմի պատը քսան և մեկ մետր հեռավորություն ունի:

Նայելով շենքի ներքին բաժանումների շատության և ընտանեկան բնակության հարմարություններին, այս շենքը ոչ միայն ամրոց էր, այլև իշխանական կամ տոհմապետական դղյակ: Թեև ներքին բաժանումների ճաշակը մեր այսօրվա ընտանեկան պահանջների և հասկացողության անհամապատասխան է, այնուամենայնիվ մեզ

համար հետաքրքրական է այն ժամանակի մարդկանց ճաշակը, որոնց պարզ արտահայտությունն է այս շենքի հատակագծային բաժանումները:

Գոնե մեզ և մեր գրականության համար անգնահատելի է Պուլեյ Լըկուզի նկարած պատկերը և Ղ. Ալիշանի ընդօրինակելը, որովհետև առաջին և վերջին օրինակն է թերևս, որ ունինք նախաքրիստոնեական շրջանից մնացած մի շենքի ներքին և արտաքին շինության ձևը և պատկերը: Այլևս կասկած չի մնում, որ Պուլեյ Լըկուզի նկարած և Ղ. Ալիշանի արտանկարած պատկերն այս շենքինն է: Պատկերի մեջ չորս անկյունի բրգանման դուրս ցցվածքները մինչև այժմ գոյություն ունին տեղին վրա՝ մոտ երեք մետր բարձրությունով. իսկ ինչ կվերաբերի պատկերի մեջ երևցող կամարակապ դռան, ամենայն հավանականությամբ նկարված է արևմտյան կողմից, որ այժմ գրեթե ամբողջովին փլատակ է: Ինչպես երևում է, այս կամարակապ դռան մասերը արևմտակողման փլատակների ներքև է և առանց պեղումների կարելի չէ տեսնել: Բայց որովհետև շենքի առաջին հարկի հատակն ամբողջությամբ ժայռ է, հետևաբար շենքի արևմտյան կողմը մի մասի տակ գետնահարկ ուներ, և այդ կամարակապ դուռը կպատկաներ փոքրիկ գետնահարկին և չի երևում որևէ կապ վերևի հարկի հետ:

Դրսից վերի հարկը բարձրանալու համար առանձին ճանապարհ և մուտք շինված է հարավային ճակատի արևելյան կողմին կից: Շենքի առաջին հարկի հատակը մոտավորապես երեք մետր բարձր էր, ուստի արտաքուստ, չորս մետր հեռվից, աստիճանաբար դեպի դուռը բարձրացող մի լայն ճանապարհ կա: Շեղակի դեպի դուռը բարձրացող ճանապարհի լայնությունն եղել է չորս մետր, այս չորս մետր լայնությունից անկախ, դեպի վերև շեղակի բարձրացող ճանապարհի ամրության և հաստատության համար շինել են 2,10 մ հաստությամբ պատեր՝ երկու կողմից, նույնպես շեղակի աստիճանաբար մինչև շենքը բարձրացող: Այս ճանապարհն ևս համայն շենքի նման անշաղախ մեծամեծ քարերով է շինված: Այս թեք ճանապարհով իշխանը կամ տոհմապետը, եթե ոչ կառքով, գեթ ձիով կարող էր բարձրանալ դղյակի արտաքին դռան առջև:

Շենքի հարավ-արևմտյան կողմը, հավանորեն արտաքին պարիսպներն ներս, պատահաբար բացված գերեզմաններից անկախ, երևում են կրոմլեխներ, որոնց երկու խոշորագույններն իշխանական դղյակին կից են: Պետք է ըսել, որ շատ քիչ է հետազոտվել այս դղյակի շուրջը, որ ամենայն հավանականությամբ նախաքրիստոնեական շատ հնություններ պիտի գտնվին, ուստի առայժմ կվերապահենք ուրիշ առթիվ մանրամասն հետազոտության:

Վերջապես, եզրակացնելով խոսքս, պիտի ըսեմ, որ թե՛ Խզնավուզի և թե՛ Աղավնատան բերդերի շուրջն անպայման պեղում պետք

է կատարել, որպեսզի լրիվ կերպով բաղդատել հնար լինի երկու մոտակա ամրոցների ստորին քարայրերը և թե ըստ կարելվույն կստուգվի Պուլեյ Լըկուզի նկարած վերակազմությունը, որով մենք կունենանք նաև մի նմուշ նախաքրիստոնեական տոհմապետական շենքի թե՛ արտաքին ճակատին և թե՛ ներքին բաժանումներին»[178]:

1954-55թթ. Արագածում հետախուզական պեղումներ կատարվեցին Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ (չափագրությունները Շ. Ազատյանի)[179]: Արագածի բնակավայրը ժամանակին օղակված էր հզոր պաշտպանական պատերով, որոնցից պահպանվել են միայն շարվածքի ստորին քարերը: Չնայած դրան, պատերի մնացորդները երևում էին առանձին հատվածներում: Կ. Հովհաննիսյանը գտնում է, որ այն շրջապատել է ամբողջ բնակավայրը: Արագածի բուն միջնաբերդը, ըստ Կ. Հովհաննիսյանի, երկհարկանի է եղել: Կ. Հովհաննիսյանին հաջողվել է վերականգնել ներկայումս չպահպանված հում աղյուսի երկու ստանդարտ չափերը՝ 14,8x35,0x51,8 և 14,8x51,8x51,8 սմ:

Արագածի վերաբերյալ հակիրճ նյութեր է հրատարակել Հ. Մարտիրոսյանը[180]:

Արագածի ամրոցի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Վ.Հարությունյանը, Կ. Ղաֆադարյանը, որոնք իրենց դիտարկումներն են շարադրել ճարտարապետության վերաբերյալ զուգահեռներ անցկացնելով Վանի թագավորության համաժամանակյա հուշարձանների հետ[181]:

«Հայկական ճարտարապետության պատմություն» գրքում նշվում է Արագածի մասին, որի հիմքում ընկած է վերոհիշյալ հեղինակների դիտարկումները[182]:

Ձեռնարկելով ամրոցի սիստեմատիկ պեղումները, որի անհրաժեշտության մասին նշվում էր նախորդ հեղինակների կողմից, փորձեցինք ճշտումներ և շտկումներ կատարել արված մասնակի դիտարկումներում, ամբողջացնելու համար ամրոցի ուսումնասիրությունը: Հուշարձանի տարածքում 1985 թվականին վերսկսված պեղումների հիմնական նպատակն էր ամբողջացնել ամրոցի ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալները: Բանն այն է, որ 1950-ա-

---

178 Նույն տեղում:

179 *Կ.Լ. Оганесян,* Урартское поселение в селе Арагац, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1958, 4, էջ 78-92:

180 *А.А. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 234.

181 *Վ. Հարությունյան,* Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 22-42, *նույնի՝* Каменная летопись Армянского народа, Ереван, 1985, с. 10-19, *Ղ. Ղաֆադարյան,* Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984, էջ 61:

182 Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 101, 129, 155-157:

կան թվականներին կատարված մասնակի պեղումների ընթացքում հնագիտական շերտերի նյութերի մասին որևէ տվյալ չէր փաստագրվել: Ավելին, հուշարձանի նախնական դիտարկումները ցույց էին տալիս, որ շրջանառվող չափագրությունները չեն համապատասխանում ամրոցի պաշտպանական համակարգի իրական ձևերին:

Դաշտային աշխատանքների ընթացքում պեղվեցին և մաքրվեցին բնակելի համալիրները. ա/ միջնաբերդի շինությունները, բ/ քաղաքային համալիրը, գ/ պաշտամունքային շինությունները: Ուսումնասիրվեցին երկրորդ հարկի, տանիքի, հատակի խնդիրները: Ձեռք բերված հնագիտական նյութերը՝ խեցեղեն, մետաղ, քար և այլն, դասակարգվեցին ամբողջությամբ, որը հնարավորություն ընձեռեց պարզելու ժամանակագրության և թվագրության մի շարք հարցեր: Այս աշխատանքի արդյունքում մշակվեցին և ի մի բերվեցին հայտնաբերված նյութերը: Համալիրը չափագրելուց և գծագրելուց հետո գլխավոր հատակագիծը ամբողջացվեց: Արագածի հուշարձանը, որը արմատական տարբերություններ ունի նախորդ դիտարկումներում ներկայացված նյութերից, մասնավորապես հրատարակված տվյալներից՝ լրացնում է մեր պատկերացումները Արարատյան դաշտում Ուրարտական մշակույթի դրսևորումների մասին:

§ 1. ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արագածի ամրոցը տեղադրված է էջմիածին քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Արագած գյուղի հարավային ծայրամասում[183]: Հնում ամրոցի շրջակայքում տարածվել է 30-40 հա բնակավայրը, որը ներկայումս ամբողջովին ավերված է (Աղ. 83, Աղ. 84, Աղ. 85, Նկ. 4-6): (Քարտեզ):

Ամրոցի միջնաբերդը, շուրջ 1500 քմ. տարածքով, գտնվում է 15մ բարձրությամբ ժայռոտ ոչ մեծ բլրի վրա: Այն հատակագծում ուղղանկյուն՝ չորս անկյունային աշտարակներից և որմնահեծերից բաղկացած շինություն է (Աղ. 86-88): Ամրոցի կառուցման համար բազալտե ելուստավոր ժայռաբեկորները կտրտվել և հավասարեցվել են՝ ստեղծելով աստիճանաձև հարթակներ, իսկ բեկոտված ժայռաբեկորները օգտագործվել պատեր կառուցելու համար: Հստակ ընդգծվող հարթեցրած ժայռերի մնացորդները յուրօրինակ հիմք են հանդիսացել միջնաբերդի և նրա մեջ ընդգրկված շինությունները կառուցելու համար:

Չնայած Արագածում չկան արհեստական դարավանդներ, որոնք բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցների և բնակավայրերի համար (Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի, Արամուս, Օշական և այլն), բայց բլրի թեք հատվածներում, ժայռը հարթեցնելուց բացի, փորվել են աստիճանատիպ իջվածքներ, որոնք ապահովել են պատերը սողանքի ենթարկվելուց:

Արագածի միջնաբերդի պատերը շարված են տարբեր մեծության, կոպիտ մշակված քարաբեկորներով: Ուղղագիծ շարվածքը պայմանավորել է միջնաբերդի հատակագծի ուղղանկյուն ձևը:

Արտաքինից ամրոցի և միջնաբերդի պարսպապատերը օժտված են որմնահեծերով, որոնք նույնպես տեղադրվել են ճեղքած, հարթեցրած ժայռահարթակների վրա: Խաղալով ամրապատի դեր՝ վերջիններս հզոր պարիսպներն ապահովում են փլուզումից: Այս փաստը ակնառու է հատկապես միջնաբերդի արևմտյան թևում, ուր որմնահեծերն առաջ են եկած հարթեցրած ժայռերի եզրերից 0,3-0,5 մ-ով: Միջնաբերդի պատերը շարված են երկկողմանի՝ զրահապատ քարե շարվածքով, որի միջուկը կազմված է մանր քարերով լցված կավե շաղախից: Սրա վրայից բարձրացել է աղյուսե շարը, որը բնորոշ է Վանի թագավորության շինարարական տեխնիկային:

Ամրոցը, չնայած փոքր չափերին, կարևոր նշանակություն ունի Արարատյան դաշտի ամրոցների պաշտպանական համակարգում:

---

[183] *Г.Г. Аветисян*, Раскопки поселения Арагац, Археологические Открытия 1986 г., Москва, 1988, с. 467, *նույնի* Արագածի ամրաշինությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1996, 1, էջ 41:

Այն ընկած է խոշոր քաղաքներ Արգիշտիխինիլիի, Էրեբունու, Թեյշեբաինիի (Աղ. 89) միջև: Աշխարհագրական դիրքը բավականին բարենպաստ է: Բլրի գագաթից (նկատի պետք է առնել նաև երկրորդ հարկը) հիանալի դիտվում է ոչ միայն Արգիշտիխինիլին /20 կմ/, Թեյշեբաինին /18 կմ/, այլև Օշականի[184] ամրոցը /12կմ/, (Աղ. 90): Տեսողական ազդանշանի միջոցով Օշականով կարելի է հաղորդակից լինել Ձորափ, Փարպի, Դովրի, Արամուս ամրոցներին, որից հետո անմիջական է դառնում կապը Սևանի ավազանի բերդերի հետ:

Արագածի ամրոցը հատակագծում ուղղանկյուն է՝ հյուսիս-հարավ կողմնորոշումով: Դիտարկումները ցույց տվեցին, որ առաջին՝ արտաքին պարսպապատը հյուսիսից հարավ ձգվում է 114 մ, իսկ արևելքից արևմուտք՝ 82 մ: Այսպիսով, նախնական տարածքը կազմում է շուրջ 1,2 հա: Նշված պարսպապատի հարավային հատվածում հստակ ընդգծվում են 3 մ երկարությամբ, 0,85 մ լայնությամբ՝ իրարից 6,4 մ հեռավորությամբ տեղադրված երկու որմնահեծերը:

Երկրորդ պարսպապատը նույնպես պահպանվել է մասամբ և ունի նույն կառուցողական հատկանիշները, որ բնորոշ են առաջինին: Պարսպապատերի միջև հեռավորությունը 12 մ է: Այստեղ պահպանվել են առանձին շինությունների մնացորդներ, ինչպես նաև ազատ տարածություններ, որոնք բակի դեր են խաղացել: Պարսպապատերը, որպես կանոն, ունեն 2,6 մ հաստություն և համապատասխանում են ուրարտական ստանդարտին:

Հաջորդ պարսպապատը անմիջականորեն օղակում է միջնաբերդը (Աղ. 87), ուր պեղվեց և ուսումնասիրվեց 21 կացարան, որոնք նկուղներ են, պահեստ-մթերանոցներ: Միջնաբերդի երկրորդ հարկը չի պահպանվել: Բուն միջնաբերդը, ամրոցի նման կրկնում է տեղանքի գծագրությունը: Այս ուղղանկյուն, հյուսիսից հարավ ձգվող շինությունն ամրացվել և պաշտպանվել է չորս անկյունային հզոր աշտարակներով:

Միջնաբերդի արևմտյան պարսպապատը 48մ երկարությամբ ձգվում է հյուսիս-արևմտյան անկյունային աշտարակից դեպի հարավ-արևմտյանը: 4,2 մ հաստությամբ այս հզոր պարսպապատը՝ պահպանված բարձրությունը մինչև 3 մ, ամրացված է 4 որմնահեծերով: Վերջիններիս երկարությունը 3-4 մ է, որոնք առաջ են գալիս 1մ-ով և իրարից հեռու են 4-5 մ-ով: Միջնաբերդի հարավային պարսպապատը 26,5 մ երկարությամբ ընկած է արևմտյան և արևելյան անկյունային աշտարակների միջև: Այն 4 մ հաստությամբ կրկնում է վերոհիշյալ արևմտյան պարսպապատի շինարարական կոնստրուկցիան: Մեկ մետր առաջ եկող երկու հզոր, 4 մ երկարությամբ որմնահեծերն ամրացնում են պարսպապատը: Որմնահեծերի միջև հեռավորությունը 6,5մ է: Միջնաբերդի հյուսիսային պարսպապատը համեմատաբար փոքր է: 13 մ երկարությամբ և 3,5 մ հաստությամբ այս պարսպապատը ձգվում է հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան աշտարակների միջև: Ի տարբերություն վերոհիշյալ պարսպապատերի՝ հյուսիսայինը ամրացված է երեք մետրանոց մեկ որմնահեծով, որը տեղադրված է պարսպապատի կենտրոնում՝ աշտարակներից հեռանալով 5 մետրով:

Միջնաբերդի արևելյան պարսպապատն ունի ավելի բարդ կառուցվածք: Տեղանքի գծագրությանը համապատասխան, այն բաժանված է երեք մասերի՝ 50 մ ընդհանուր երկարությամբ: Պարսպապատի առաջին հատվածը՝ 21 մ, ամրացված է 4 մ երկարությամբ որմնահեծով: Այստեղից հայտնաբերվեց երկթև «սկյութական» տիպի նետասլաք (Աղ. 105, նկ. 12): Երկրորդ հատվածի երկարությունը 10,5 մ է, իսկ երրորդինը՝ 18,5 մ: Վերջին երկու հատվածները զուրկ են որմնահեծերից, որը պայմանավորված է տեղանքի առանձնահատկություններով:

Արագածի պաշտպանական համակարգի կարևորագույն շինություններից է մուտքը, որն ունի բավականին յուրօրինակ կառուցվածք: Տեղադրված լինելով ամրոցի հյուսիս-արևմտյան հատվածում՝ այն ապահովում է միջնաբերդի անվտանգությունը: Ինքնատիպ այս շինությունը բաղկացած է երկու հատվածից: Առաջինը 16 մ երկարությամբ, 3 մ լայնքով դեպի միջնաբերդի պարսպապատը ձգվող թեքության վրա տեղադրված միջանցք է, որն ավարտվում է հյուսիս-արևմտյան աշտարակի հատվածում: Հենց այստեղ էլ բացվում է «դարպասի» տարածքը, որով ամբողջանում է այս ինքնատիպ համակարգը:

Արագածի միջնաբերդի պաշտպանական կառույցների մեջ հատկապես առանձնանում են անկյունային չորս աշտարակները: Դրանք շարված են զանգվածեղ, կիսակոպտատաշ քարաբեկորներից և տեղադրված են տարբեր հարթությունների վրա: Վերջիններս շարված են բլուրի ժայռոտ ելուստների վրա: Աշտարակների պահպանված բարձրությունը տեղ-տեղ հասնում է 2,5 մ-ի: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ աշտարակների սկզբնական բարձրությունը պետք է հասներ 10 մ-ի: Աշտարակներից երեքը հատակագծում ուղղանկյուն են, իսկ մեկը՝ հյուսիս-արևելյանը, քառակուսի: Դրանք միջնաբերդի պարսպապատերին համապատասխանաբար կից կառուցված շինություններ են: Հարավ-արևմտյան աշտարակը երկայնական առանցքով ուղղված է հյուսիսից հարավ: Այն հատակագծում ուղղանկյուն՝ 10 x 9 մ չափերով, պարսպապատերից 4 մ-ով առաջ եկող, 1,8 մ պահպանված բարձրությամբ շինություն է: Հարավ-արևելյան աշտարակը նույնպես ունի հարավ-հյուսիս կողմնորոշում: Հատակագծում ուղղանկյուն, 4 մ-ով պարսպապատերից

[184] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Ереван, 1988, с. 5.

հեռացող և 10x8 մ չափերի այս աշտարակի պահպանված բարձրությունը կազմում է 2 մ: Հյուսիս-արևմտյան աշտաբակը պարսպապատերից հեռանում է 4մ-ով: Այն ունի արևմուտքից արևելք կողմնորոշում, հատակագծում ուղղանկյուն է՝ 10x7մ չափերով, 2,2 մ պահպանված բարձրությամբ: Վերջին՝ հյուսիս-արևելյան աշտարակը հատակագծում քառակուսի է՝ 100 քմ, 10x10 մ չափերով: Հետաքրքիր է, որ հյուսիսային կողմով այն միջնաբերդի պարսպապատից հեռանում է 4 մ-ով, իսկ արևելյանի թռիչքը 5,5 մ է: Ներկայացված աշտարակի պահպանված բարձրությունը 1,3 մ է:

Ամրոցի այսպիսի պաշտպանական համակարգի առկայությունը, անշուշտ, պայմանավորված է ուրարտական ամրաշինության ավանդությամբ: Տեղանքի ռացիոնալ օգտագործումը և նախագծային լուծումները համապատասխանում են Վանի թագավորության շինարարական արվեստի ստանդարտներին: Ավելին, ամրաշինական հիմնական հատկանիշները՝ ուղղաձիգ պարսպի հաստությունը, միմյանց որոշակի հեռավորությամբ հաջորդող, մինչև 1մ առաջ եկող որմնահեծերը, աշտարակները բնորոշ են ոչ միայն Արարատյան դաշտին, այլև ամբողջ Վանի թագավորությանը: Սրա հետ մեկտեղ, Արագածի միջնաբերդի պարիսպներն ունեն ինքնատիպ լուծումներ, ինչով և տարբերվում են մոտ մեկ դար առաջ կառուցված Էրեբունիի և Արգիշտիխինիլիի միջնաբերդի պարսպապատերի տարածական ձևերից[185]: Բնորոշ որմնահեծերից զատ, Արագածի միջնաբերդի պարիսպները, ինչպես տեսանք, ամրացված են միմյանցից որոշակի հեռավորությամբ կառուցված անկյունային աշտարակներով: Ի տարբերություն Էրեբունիի, Արգիշտիխինիլիի և Թեյշեբաինիի, վերոհիշյալ 4 աշտարակները ելուստավորվում են պարսպապատի արտաքին կողմից՝ կազմելով 4 մ, իսկ հյուսիս-արևելյան աշտարակի արևելյան թռիչքը 5,5 մ: Աշտարակների և որմնահեծերի նման ներդաշնակ համադրությունը մատնանշում է, որ մեծապես կարևորվել է միջնաբերդի պաշտպանության հզորությունն ապահովելու պարագան: Որպես կանոն, Վանի թագավորության տարածքում Արագածի տիպի համեմատաբար փոքրածավալ հուշարձանները հանդես են գալիս ավելի ուշ: Արարատյան դաշտի համալիրների ուսումնասիրությունը հաստատում է այդ տեսակետը: Բացառված չէ, որ Արագածը կառուցված լինի Ռուսա Երկրորդի (մ.թ.ա. 685-645) թագավորության շրջանում, որը հայտնի է իր շինարարական գործունեությամբ: Նրա օրոք Արարատյան դաշտում վերակառուցվեցին և կառուցվեցին մի շարք քաղաքներ, ամրոցներ:

[185] *Կ. Դաֆթարյան*, նշվ. աշխ., էջ 65:

§ 2. ՄԻՋՆԱԲԵՐԴԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնաբերդի կառուցողական հատկանիշների և տեղանքի ծավալատարածական առանձնահատկությունից ելնելով, կացարանները բաժանված են միմյանց հաղորդակից երեք համալիրների միջև: Միջնաբերդի առաջին համալիրը ներկայացված է վեց շինություններով N N 1, 2, 3, 4, 11, 21, որոնք ընկած են միջնաբերդի հարավ-արևմտյան հատվածում:

Կացարան N 1: (Աղ. 91) Տեղադրված է միջնաբերդի հարավային պարսպապատի և N N 2, 3, 11 կացարանների միջև: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ այս շինության չափերն են 12x2,6 մ: Կացարանի պատերը միջնաբերդի պատերի պես ունեն չոր շարվածք և կառուցված են կիսակոպատաշ բազալտե սալերով: Պահպանված բարձրությունը 0,7 մ է: Հարավային պատը, որը միջնաբերդի պարսպապատն է, ունի 2,1 մ հաստություն: Կացարանի մնացած պատերի հաստությունն է 1,6 մ: Արևմտյան պատի մեջ բացվում է 1մ լայնքով դուռը, որը տանում է դեպի միջնաբերդի հարավ-արևմտյան անկյունային աշտարակը: Այս հատվածը խիստ ժայռոտ է և պահպանվել է կարմիր տուֆասալով շարված (0,3x1 մ չափի) աստիճանավանդակի մի մասը: Կացարանի հատակը տոփանված է: Առանձին հատվածներում պահպանվել է 3-5 սմ հաստությամբ կավից սվաղի հետքեր, ինչպես նաև սալապատ հատակի մնացորդներ: Այստեղ հաստատագրվել են հրդեհի հետքեր: Կացարանի հյուսիսային պատի տակ գտնվեց կարմիր տուֆից կուռք: Նյութական մշակույթի մնացորդներից են բրոնզե, կտրվածքում տափակ օղակը, գամի հետ միասին, բազալտից աղորիքները, տարբեր տիպի և չափի խեցու բեկորները՝ կարասներ, սափորներ, կճուճներ և այլն: Գտնվեցին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ (Աղ. 100):

Կացարան N 2: (Աղ. 92) Տեղադրված է N 1 կացարանից հյուսիս և միջանկյալ դիրք է գրավում N N 3, 5, 10, 11 կացարանների նկատմամբ: Ունի արևելք արևմուտք կողմնորոշում: Այս շինությունը հատակագծում ուղղանկյուն է՝ 6,2 x 2,0 մ չափերով: Պահպանված պատերի բարձրությունը 1մ է, հաստությունը՝ 2,1-3 մ: Հյուսիսային պատի արևելյան հատվածը, ինչպես N 1 կացարանինը, միաձուլվում է հարթեցրած ժայռերին, որը հանդիսացել է հիշյալ պատի բնական շարունակությունը: Մուտքը չի հայտնաբերվել: Կացարանի հատակը խիստ տոփանված է: Առանձին հատվածներում հաստատագրվեցին կավից սվաղի հետքեր: Այստեղից հայտնաբերվեցին խեցանոթների բեկորներ, բազալտից աղորիքներ, վանակատե ցլեփներ, եղջյուրից բիզ, ինչպես նաև կենդանիների ոսկորներ (Աղ. 101):

Կացարան N 3: (Աղ. 93) Հատակագծում ուղղանկյուն, հյուսիսից հարավ ուղղված 6,3 x 3,8 մ չափերով այս կացարանն արևելքից հարում է N 1, 3 կացարաններին: Պատերի պահպանված միջին բարձրությունը կազմում է մոտ 1 մ: Արևմտյան պատի հաստությունը 2,1, հյուսիսայինը՝ 2,6 և հարավայինը 3,5 մ է: Կացարանի հատակը սալապատված է կոպիտ մշակված քարերով, որի վրայից արված է 5-6 սմ հաստությամբ կավասվաղ: Հարավային պատին պահպանվել է աղյուսաշարի մնացորդ, որտեղ հաջողվեց հաստատագրել ամբողջական 51 x 25 x 17 սմ չափերի աղյուս: Կացարանի արևելյան պատի տակ բացվեց ուղղանկյուն 2,5 x 0,8 մ չափերով՝ 0,7 մ խորությամբ հոր: Վերջինիս մաքրման ժամանակ հայտնաբերվեցին բիայնական և միջնադարյան խեցանոթների բեկորներ (Աղ. 102), վանակատից ցլեփներ, ինչպես նաև մարդու ատամ[186]: Կացարանի հյուսիսային պատին զուգահեռ պեղվեց կավասվաղով հարթեցված մակերևույթով նստարան (մաստաբա): Այն կառուցված է կոպտատաշ քարաբեկորներով: Նստարանը ունի 2 մ երկարություն, 0,6մ լայնք և 0,4մ բարձրություն: Այստեղից գտնվեցին խեցեղենի բեկորներ և բազալտից աղորիքներ (Աղ. 102, նկ. 22-24):

Կացարան N 4: (Աղ. 94) : Տեղադրված է N N 3, 5 կացարանների միջև: Հատակագծում ուղղանկյուն է, ուղղված հյուսիսից հարավ, N 3 կացարանին զուգահեռ: Այս կացարանի չափերն են 6,3 x 3,7 մ: Հարավ արևելքից հարում է միջնաբերդի համապատասխան անկյունային աշտարակին: Հարավային և արևմտյան պատերի հաստությունը 1,6 մ է, արևելյանը 2,6 և հյուսիսայինը 3 մ: Պատերի պահպանված բարձրությունը 1,5 մ է: Կացարանի հատակը տոփանված է, առանձին հատվածներում՝ սալապատ: Վերջինիս վրա տեղ-տեղ պահպանվել են կավից սվաղի հետքեր: Հյուսիս արևմտյան մասում բացվեց դուռ, որը 1,6մ լայն բացվածքով տանում է դեպի N 5 կացարանը: Քանի որ դուռը տեղադրված է եղել 1,3 մ բարձրության վրա, ուստի կառուցվել է քառաշար աստիճանավանդակ 45° թեքությամբ: Այս համալիրի արևմտյան պատին կից կառուցվել է պաշտանմունքային հարթակ, որն ունի 3,2 մ երկարություն, 1,2 մ բարձրություն, 0,8մ լայնք: Հարթակն ամբողջովին սվաղված է կավաշերտով, որի վերին մասում հայտնաբերվեցին բազալտից և կարմրավուն տուֆից կուռքերի բեկորներ (Աղ. 103, նկ. 21, 22), կրակի հետքերով: Նման հարթակներ հայտնաբերվել են նաև Արամուսի և Օշականի պալատական համալիրներից,[187] ուր կատարվել են զոհաբերություններ և զանազան ծիսական արարողություններ: Կացարանի հատակին հաստատագրվեցին կավակերտ օջախի մնացորդներ՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների այրված ոսկորներով: Առատ են նաև հնագիտական մյուս գտածոները. խոշոր կարասների շուրթեր, կարմիր անգոբապատ խեցանոթների բեկորներ (թասեր, քրեղաններ), սև մրապատ, հասկանախշի հորինվածքով զարդարված կճուճներ և այլն (Աղ. 103):

Կացարան N 11: Տեղադրված է N N 1, 2, 10, 21 կացարանների և հարավ -արևելյան անկյունային աշտարակների միջև: Հատակագծում ուղղանկյուն, արևելքից արևմուտք ուղղված այս շինության չափերն են 6,2 x 2,5 մ: Պատերը վատ են պահպանվել: Կացարանի կենտրոնում բացվեց 1,2 մ խորությամբ ժայռափոր ծագարաձև հոր, որտեղ, հավանաբար ժամանակին ջուր են ամբարել: Հորի չափերն են՝ 2 x 1,6մ վերնամասում, հատակի հատվածում՝ 1,4 x 1,1 մ: Հորից հայտնաբերվեցին խեցանոթների բեկորներ, ինչպես նաև այրված հացահատիկի մնացորդներ:

Կացարան N 21: Հատակագծում ունի 3 x 2,6 մ չափերի ուղղանկյան տեսք: Կողմնորոշված է արևելքից-արևմուտք: Միջանկյալ տեղադրություն ունի N 11 և N 20 կացարանների, արևմտյան պարսպապատի և հարավ-արևելյան անկյունային աշտարակի նկատմամբ: Հյուսիսային պատի լայնքը 2,1 մ է, պահպանված բարձրությունը 1,3 մ: Տոփանված կավածեփ հատակի առանձին մասերում պահպանվել են սալ քարեր, որոնց մի մասը մրապատ է: Հնագիտական նյութը առատ չէ: Գտնվեցին խեցանոթների՝ կարասների, թասերի, քրեղանների, կճուճների, սափորների մնացորդներ, մանր և խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ:

Արագածի միջնաբերդի երկրորդ համալիրը տեղադրված է 1-ին և 3-րդ համալիրների միջև, միջնաբերդի կենտրոնական հատվածում: Ծավալներով ամենամեծն է: Վերջինս ունի հյուսիս-հարավ ընդհանուր կողմնորոշում և ներկայացված է 8 շինություններով՝ N N 5, 6, 7, 8, 9, 10, 19, 20:

Կացարան N 5: (Աղ. 95): Հատակագծում ուղղանկյուն 12,4x4,7 մ չափերով այս շինությունն ունի հյուսիսից հարավ կողմնորոշում: Տեղադրված է N N 3, 4, 6, 7, 10 կացարանների և միջնաբերդի արևելյան պարսպապատի միջև: Ունի երկու մուտք: N 4 կացարանի հետ հաղորդակցվում է կացարանի հարավ արևելյան մասում կառուցված հարթակով, իսկ երկրորդ դռան բացվածքը տեղադրված է կացարանի հյուսիս արևմտյան անկյունում, որով կարելի է անցնել N N 9, 10 կացարանները: Դռան բացվածքը 1 մ է: Կացարանի արևելյան պատը 1,8 մ երկարությամբ և 2,1մ հաստությամբ յուրօրինակ մույթի դեր է կատարել, տանիքի ամրությունն ապահովելու համար: Հյուսիսային պատի հաստությունը 2,1 մ է, իսկ հարավայինինը՝ 3 մ: Հատակը կառուցված է թեքամուտքին բնորոշ սկզբունքով: Այն կազմված է 3 հարթակներից, որոնք ունեն արևել-

[186] Բնորոշումը՝ ըստ մարդաբան Ռ. Մկրտչյանի:
[187] *С.А. Есаян, А.А. Калантарян,* ук. соч., с. 27.

քից արևմուտք ուղղված, իրարից 3,5 մ հեռացող աստիճանի ձև: Թեքամուտքի յուրաքանչյուր մաս հարթեցված է և սալապատ: Առաջին և երրորդ հարթակների տարբերությունը կազմում է 1,5 մ: Կացարանի հյուսիսային և հարավային պատերի տակ հայտնաբերվեցին կարմիր տուֆից, կլոր սյուն-կուռքեր (Աղ. 104, նկ. 16, 17): Արձանագրվեցին մեծ քանակությամբ սև և կարմիր անոթների բեկորներ՝ թասեր, սափորներ, կճուճներ, աշխատանքային գործիքներ՝ աղորիքներ, սանդեր, սանդկոթեր (Աղ. 104, նկ.1-15):

Կացարան N 6 (Աղ. 96): (Նկ. 7): Ի տարբերություն մյուս համալիրների, այս կացարանը հատակագծում քառակուսի է: Տեղադրված է N N 5, 7 կացարանների և արևելյան պարսպապատի միջև: Չափերն են 6,3x6,3 մ: Հատակը հարթեցրած ժայռն է: Կացարանի մուտքն ամենայն հավանականությամբ եղել է վերևից: Պատերի հաստությունը, բացի արևելյանից՝ 2,1մ է: Պահպանված բարձրությունը 1,5-2 մ է: Կացարանի հարավային պատի կենտրոնից, հյուսիս հարավ առանցքով կառուցվել է 2,1 հաստությամբ, 4,2 մ երկարությամբ խոշոր քարաբեկորներից կազմված հզոր մույթ (Նկ. 4): Պահպանված բարձրությունը կազմում է 1,5 մ: Մույթի արևելյան հատվածում կառուցվել է հյուսիս հարավ ուղղվածությամբ 0,8 մ բարձրությամբ քառաստիճան հենապատ: 0,4 մ բարձրությամբ, 0,5 մ երկարությամբ մի ուրիշ հենապատ կառուցվել է մույթի հյուսիսային ճակատամասում: Կացարանի արևմտյան հատվածն անմիջապես ժայռաբեկորներին է հարում, որը հարթեցվել է հողալիցքով: Վերջինս ամուր տոփանված է և ունի սվաղի հետքեր: Պեղումների ժամանակ կացարանից հայտնաբերվեցին խեցեղենի բեկորներ (Աղ. 105, նկ. 1-9), աղորիքներ և խոշոր ու մանր անասունների ոսկորներ: Գտածոների մեջ չափազանց հետաքրքիր են որմնանկարների մնացորդները՝ թափված վերևի հարկից: Որմնանկարներում պատկերներ չեն պահպանվել, հաստատագրվեցին միայն երկնագույն սվաղի, մնացորդներ:

Կացարան N 7: Տեղադրված է արևելյան պարսպապատի երկայնքով: Հատակագծում ուղղանկյուն, 16,8x3 մ չափերի այս երկարավուն շինությունն ունի հյուսիս հարավ կողմնորոշում: Այն գտնվում է N N 5, 6, 8, 9 կացարանների միջև: Պատերի հաստությունը 2,1 մ է, պահպանված բարձրությունը 0,5 մ: Արևմտյան պատի երկայնքով բացվեց 0,3 մ բարձրությամբ և նույնքան էլ հաստությամբ հենապատ, որը կավասվաղով էր պատած: Այս հենապատը կարող էր նաև նստարանի դեր կատարել: Կացարանի դուռը տեղադրված է եղել համալիրի հյուսիս-արևմտյան անկյունում, ուր հաստատագրվեց 0,8 մ լայնքով մուտքի բացվածքը: Կացարանի հատակը կազմված է ամուր տոփանված հողալիցքից, որի վրայից արվել է կավասվաղ: Առանձին դեպքերում պահպանվել են հատակի սալապատ

հատվածներ: Պեղումների ժամանակ կացարանից հայտնաբերվեցին կարասների, թասերի բեկորներ, բազալտից աղորիքներ և երկաթից շիգդ:

Կացարան N 8: (Աղ. 97) : Հատակագծում ուղղանկյուն, հյուսիս-հարավ կողմնորոշումով այս կացարանը տեղադրված է N N 7, 9, 12, 13, 19 շինությունների միջև: Կացարանի չափերն են 6,6x3,4 մ, հյուսիսային և արևմտյան պատերի հաստությունը 2,1 մ, իսկ արևելյան և հարավային պատերինը՝ 1,6 մ, պահպանված պատերի բարձրությունը 0,7 մ: Հատակը կազմված է տոփանված հողալիցքից և սալաքարերից: Առանձին հատվածներում հաստատագրվեց կավասվաղի հետքեր: Կացարանը բաժանարարի դեր է կատարել: Այստեղից կարելի է մտնել N N 7, 12, 9 և 19 կացարանները, համապատասխան հյուսիսային, հարավային, արևմտյան և արևելյան պատերի մեջ բացվող մուտքերի միջոցով: Դռների բացվածքը 1մ է, բացի N 7 կացարանը տանողից, որը կազմում է 0,8 մ: Այստեղից գտնվեցին կճուճների, թասերի, քրեղանների, սափորների մնացորդներ, բազալտից սանդեր, աղորիքներ, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ:

Կացարան N 9: (Աղ. 98): (Նկ. 8): Տեղադրված է միջնաբերդի կենտրոնական հատվածում: Հատակագծում ուղղանկյուն, հյուսիս հարավ կողմնորոշումով այս շինության չափերն են 11,6 x 6,8 մ: Պատերի հաստությունը 2,1 մ է, արևմտյանինը՝ 2,6 մ, պահպանված բարձրությունը 0,5 մ: Կացարանը տեղադրված է N N 7, 8, 10, և 19 կացարանների միջև: Հաղորդակից է N 8 և N 10 կացարանների հետ: Հյուսիսային դռան բացվածքը 1մ է, հարավայինը՝ 1,2 մ: Կացարանի կենտրոնական հատվածում բացվեց բազալտի խոշոր քարերից կառուցված 2,6 x2,1մ չափերով հյուսիս հարավ առանցքով մույթ, որի հյուսիսային ճակատամասից ոչ շատ հեռու պեղվեց 2,1 x 1,2 մ չափերի ուղղանկյուն հարթակ: Այս հարթակը կառուցվել է ոչ մեծ չափերի սալաքարերից, որի առանձին հատվածներում հաստատագրվեց կավից սվաղի հետքեր: Հարթակը ամբողջովին պատված էր մոխրաշերտով, որտեղից գտնվեցին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասունների այրված ոսկորներ: Պեղված հարթակն իր ձևով նման է Կարմիր բլուրի N 25 սենյակում պեղված շինությանը, որտեղ նույնպես հաստատագրվել է մեծ քանակությամբ կենդանիների այրված ոսկորներ հզոր մոխրաշերտի հետ միասին[188]: Թեյշեբաինի կարասային սենյակի (պահեստ) կենտրոնում հենապատների միջև բացվեց զոհաբերության օջախ, ուր առկա էին կենդանիների վառված ոսկորներ: Զոհարանից հյուսիս գտնվեց աղյուսից պատրաստված արկղ մոխրաշերտի համար, իսկ հակառակ ուղղութ-

[188] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур II, Ереван, 1952, с. 21-23.

յամբ սյան կողքին բացվեց փոքրիկ նստարան, որի մոտից գտնվեցին կարիճի և ձկան պատկերներով կավից աստվածների արձանիկներ: Այստեղից գտնվեց նաև զամբյուղ: Արագածի N 9 կացարանի նմանօրինակ շինությունը խոսում է այն մասին, որ այստեղ կատարվել են ծիսական արարողություններ: Կացարանի արևմտյան պատի երկայնքով հաստատագրվեցին 1/3 -ով հողի մեջ թաղված ուրարտական 6 խոշոր կարասների մնացորդներ: Բացի այդ, նույն պատին կցակառուցվել է 5,2 մ երկարությամբ, 0,5մ լայնքով, 0,4մ բարձրությամբ հյուսիսից հարավ ձգվող հարթակ: Այս շինությունը նման է վերոհիշյալ N 4 կացարանի հարթակին, Օշականի ուրարտական համալիրներին, որտեղից գտնվեցին սյան կուռքերի օրինակներ: N 9 սենյակի հատակը ամուր տոփանված է, իսկ տեղ-տեղ սալապատ: Կացարանի արևմտյան մասում գտնվեց թափված հում աղյուսի բեկորներ և տանիքի ծածկ հանդիսացող գերանի մնացորդներ: Պեղումներից հայտնաբերվեց մեծ քանակությամբ հնագիտական նյութ, խոշոր կարասների, թասերի, սափորների, կճուճների մնացորդներ, օղակաձև նստուկով բազալտից թաս, քարից տաշտ, ինչպես նաև բազալտե աղորիքներ, սանդկոթեր և խոշոր ու մանր կենդանիների ոսկորներ:

Կացարան N 10: Հատակագծում ուղղանկյուն հյուսիս հարավ կողմնորոշումով այս շինության չափերն են 4,9x4,7 մ: Տեղադրված է N N 5, 9, 11, 20 կացարանների միջև: Հյուսիսային պատի հաստությունն է 2,1մ, իսկ մնացածինը՝ 1,5 մ: Պատերի պահպանված բարձրությունը 0,5 մ է: Հատակը հարթեցրած ժայռն է: Կացարանը հարավ-արևելյան մասով հաղորդակից է N 5 և N 9 սենյակների հետ: Պեղումներից հայտնաբերվել են բեկորային ձևով խեցեղեն, վանակատից ցլեփներ, բազալտից աղորիքներ:

Կացարան N 19: Տեղադրված է միջնաբերդի արևմտյան պարսպապատի և N N 8, 9, 13, 18, 20 կացարանների միջև: Ունի հյուսիս հարավ կողմնորոշում: 17 x 7,6 մ չափերով, ուղղանկյուն հատակագծով այս կացարանի պատերի հաստությունը 2,1 մ է, իսկ պահպանված միջին բարձրությունը 1,2 մ: Կացարանի արևելյան պատին կից կառուցվել են երկու մույթեր, որոնք հատակից 0,5 մ - բարձրության վրա են գտնվում: Առաջինը՝ հյուսիսային պատից 1,3 մ հեռու ընկած, 2,2 x 2,2 մ չափերով շինություն է: Երկրորդը հեռանում է հարավային պատից 1,2 մ-ով և ունի հյուսիս հարավ ուղղվածություն, հատակագծում ուղղանկյուն է՝ 5 x 2,2 մ չափերով: Այս երկու կոնստրուկցիաները նստած են հարթեցված ժայռաբեկորների վրա և ունեն 1,2 մ բարձրություն: Երրորդ մույթը կառուցված է արևմտյան պատին կից և ունի 2,1 x 1,6 մ չափեր: Այն տեղադրված է I և II մույթերի միջև, արևմտյան պատի կենտրոնական հատվածում: Պահպանված բարձրությունը 0,4 մ է: Կացարանի արևմտյան պատի մեջ,

որը նաև միջնաբերդի պարսպապատն է հանդիսանում, բացվեց ջրահեռացման խոռոչ, որը գտնվում է հարավ արևմտյան հատվածում, հատակի ամենացածր նշակետի վրա: Այս հատվածում հայտնաբերվեց հրդեհի հետևանքով թափված առաստաղի և աղյուսաշարի մնացորդների շերտ: Կացարանի արևմտյան պատի տակ առկա էին խոշոր կարասների (թվով 8) հատակամերձ հատվածները, որոնք թաղված էին հողի մեջ (Աղ. 169, նկ. 1-3): Կացարանի հատակը ամբողջովին տոփանված է հողալիցքով, տեղ-տեղ այն սալապատ է: Բացի վերոհիշյալ կարասներից, հայտնաբերվեցին նաև տարբեր խեցանոթների՝ թասերի, կճուճների, սափորների մնացորդներ, բազալտից աղորիքներ, վանակատից ցլեփներ, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ:

Կացարան N 20: Ունի հյուսիս-հարավ կողմնորոշում: Հատակագծում ուղղանկյուն, 4,8 x 4,4 մ չափերի այս կացարանի պատերի հաստությունը 2,1 մ է: Տեղադրված է N N 10, 19, 21 կացարանների և արևմտյան պարսպապատի միջև: Պատերի պահպանված բարձրությունը 1,35 մ է: Կացարանի հյուսիսային պատի երկայնքով կառուցվել է միաշար՝ 1,8 մ երկարությամբ, 0,25 մ լայնքով հենապատ: Հենապատի բարձրությունը 0,8 մ է: Հատակն ամուր տոփանված է, առանձին հատվածներում սվաղի հետքերով: Արևելյան հատվածում առկա էին հրդեհի հետքեր՝ այրված առաստաղի և աղյուսների մնացորդներով: Կացարանի հատակին հայտնաբերվեցին տարբեր խեցանոթների՝ թասերի, սափորների, քրեղանների բեկորներ, բազալտից աղորիքներ և սանդկոթեր, վանակատից ցլեփներ, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ:

Միջնաբերդի շինությունների երրորդ համալիրը տեղադրված է հյուսիսային հատվածում: Այն ներկայացված է N N 12, 13, 14, 15, 16, 17, 18 կացարաններով և ավելի մեծ է, քան առաջին համալիրը:

Կացարան N 12: Ունի հյուսիս հարավ կողմնորոշում: Հատակագծում ուղղանկյուն, ձգված այս շինության չափերն են 15,2 x 2,6 մ: Այն տեղադրված է N 8, 13, 14, 15 կացարանների, միջնաբերդի արևելյան պարսպապատի և հյուսիս արևելյան անկյունային աշտարակի միջև: Պատերի հաստությունը 2,1 մ է, պահպանված բարձրությունը՝ 0,5 մ: Հարավային պատի մեջ բացվեց 1մ լայնքով մուտքը, որը նշված սենյակը կապում է N 8 կացարանի հետ: Շինության կենտրոնական մասում բացվեց 2,1 x 1,6 մ չափերի կոպտատաշ քարերից մույթ, որը վերջինս բաժանում է երկու մասի: Կացարանի հատակը կազմված է ամուր տոփանված հողալիցքից, որի առանձին հատվածներում պահպանվել են սալապատ հատակի մնացորդներ: Սենյակն ունի ձգված ուղղանկյան տեսք: Պեղումների ժամանակ այստեղից հայտնաբերվեցին ոչ մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ:

Կացարան N 13: Ունի հյուսիս հարավ կողմնորոշում: Հատա-

կագծում ուղղանկյուն, 7,4 x 5,2 մ չափերի այս կացարանը տեղադրված է N N 8, 12, 14, 18, 19 շինությունների միջև: Պատերի պահպանված բարձրությունը 0,7 մ է, հաստությունը՝ 2,1մ: Հյուսիսային պատի մեջ բացվեց 1մ լայնքով դուռը, որով կարելի է մտնել N 14 կացարան: Հյուսիսային պատին կից բացվեց 1,2 x 1,2 մ չափերի, 0,5 մ բարձրությամբ պաշտանմունքային հարթակ մոխրի շերտով:

Հարավային պատի տակ բացվեց 1,8 մ երկարությամբ, 0,4 մ - լայնքով, 0,3 մ բարձրությամբ նստարան: Հարթակի և նստարանի միջև հաստատագրվեց կլորացող՝ 0,4 մ տրամագծով օջախ, որի մեջ հայտնաբերվեց կենդանիների այրված ոսկորներ: Դռան մոտ գտնվեց 0,6 մ բարձրությամբ կարմրավուն տուֆից սյուն-կուռք: Կացարանի հատակը սալապատ է, որոշ հատվածներում այն ներկայացված է տոփանված հողալիցքով: Այստեղից հայտնաբերվեցին խեցանոթների բեկորներ՝ կարասներ, կճուճներ, սափորներ, թասեր, աշխատանքային գործիքներ՝ աղորիքներ, կոկիչներ:

Կացարան N 14: Տեղավորված է N N 12, 13, 15 և 17 կացարանների միջև: Հատակագծում ուղղանկյուն, արևելք արևմուտք ուղղված այս կացարանի չափերն են 5,1x3,2 մ: Պատերի հաստությունը 2,1մ է, պահպանված բարձրությունը 0,6 մ: Կացարանի հարավային պատի մեջ բացված դռան լայնքը կազմում է 1մ, որով հաղորդակցվում է N 13 կացարանի հետ: Հատակը հարթեցված ժայռն է, որը տեղ-տեղ հավասարեցվել է տոփանված հողալիցքով: Կացարանից պեղումների ժամանակ հայտնաբերվեցին ոչ մեծ քանակության, սափորի շուրթեր, կանթեր, թասերի բեկորներ, աղորիքներ:

Կացարան N 15: Տեղադրված է միջնաբերդի հյուսիսային հատվածում: Հատակագծում ուղղանկյուն, արևելք արևմուտք ուղղված 4,8x3,8 մ չափերի այս կացարանի պատերի պահպանված բարձրությունը շուրջ կես մետր է: Հյուսիսային և արևելյան պատերի հաստությունը 1,6 մ է, իսկ հարավայինինն ու արևմտյանինը 2,1 մ: Գտնվում է N N 12, 14, 16 կացարանների և հյուսիսային պարսպապատի միջև: Հատակը տոփանված քարահողային լիցք է, առանձին հատվածներում սալապատ: Պեղումների ժամանակ գտնվել են հիմնականում խեցեղենի նմուշներ՝ կարասների, թասերի, կճուճների բեկորներ:

Կացարան N 16: Հատակագծում ուղղանկյուն 4,6x3,5 մ չափերով, արևելք արևմուտք ուղղված այս կացարանը տեղադրված է N N 15, 17 սենյակների միջև: Հյուսիս-արևմուտքից հարում է միջնաբերդի համապատասխան անկյունային աշտարակին: Պատերի հաստությունը 2,1 մ է, պահպանված միջինը բարձրությունը՝ 1,5 մ: հարավային և արևելյան պատերը ամրացված են միաշար հենապատերով (լայնքը 0,4 մ է, բարձրությունը 0,3 մ), որոնք նստարանի դեր են խաղացել: Արևմտյան մասում տեղադրված է 1,2մ լայնքով մուտքը, որը դեպի միջնաբերդի «դարպասները» տանող հարթակով միաձուլ-

վում է միջնաբերդի մուտքի հետ[189]: Այն ունի 16 մ երկարություն, 3 մ լայնք և ձգվում է միջնաբերդն ի վար՝ դեպի ամրոցի պարիսպները: Կացարանի մուտքը հատակից շուրջ կես մետր բարձր է, որը լրացվել է եռաշարք լավ մշակված քարերից կազմված աստիճանավանդակով, ստեղծելով յուրօրինակ շեմ: Կացարանի հատակը ամուր տոփանված է հողալիցքով: Միջնաբերդի շինություններից սա միակը չէ, որի շեմը հատակից բարձր է տեղադրված: Նման պատկերն առկա էր նաև N 4 կացարանում: Քննարկվող շինության կենտրոնական հատվածում բացվեց 1մ տրամագծով գետնափոր օջախի հետքեր: Կացարանում հաստատագրվեց շուրջ 1մ հզորությամբ հրդեհի շերտ, որը կազմված էր կարմրավուն աղյուսաշերտից, թափված առաստաղի և գերանի մնացորդներից: Հայտնաբերվեցին քիչ քանակությամբ խեցանոթների բեկորներ՝ թասեր, սափորներ:

Կացարան N 17: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով այս կացարանն ունի 4,7 x 3 մ չափեր: Տեղադրված է N N 14, 16, 18 կացարանների և միջնաբերդի արևմտյան պարսպապատի միջև: Պատերի հաստությունը 2,1 մ է, պահպանված բարձրությունը՝ 1մ: Հատակը կազմված է տոփանված հողալիցքից, որի վրայից արվել է սվաղ: Պեղումների ժամանակ գտնվել են բեկորային խեցանոթներ՝ կարասներ, սափորներ, թասեր:

Կացարան N 18: Տեղադրված է միջնաբերդի արևմտյան հատվածում: Ունի հյուսիս հարավ ուղղվածություն: Հատակագծում ուղղանկյուն է՝ 5,2 x 2,6 մ չափերով: Գտնվում է N N 13, 17, 19 կացարանների և միջնաբերդի արևմտյան պարսպապատի միջև: Պատերի հաստությունը 2,1 մ է, պահպանված բարձրությունը՝ 0,8 մ: Արևելյան պատի երկայնքով կառուցվել է հենապատ 0,3 մ բարձրությամբ և նույնքան էլ լայնքով: Հատակը սալապատ է: Հնագիտական գտածոները սակավ են, հիմնականում բեկորների ձևով խեցանոթներ՝ թասեր, կարասներ, սափորներ, կճուճներ:

[189] *Հ.Գ. Ավետիսյան,* Արագածի ամրաշինությունը..., էջ 44:

§ 3. ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՎԵՐԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արագածի միջնաբերդի հնագիտական, ճարտարապետական համալիրների բնութագրիչ հատկանիշները խոսում են այն փաստի օգտին, որ բացի ստորին հարկի համալիրներից, որոնք պահեստմթերանոցների նշանակություն ունեն, միջնաբերդը կառուցապատվել է նաև վերին հարկի շինություններով: Բիայնական քաղաքաշինության ուսումնասիրությունը խոսում է այն մասին, որ երկհարկ շինությունները բնորոշ են եղել վերջինիս համար: Նմանատիպ կառույցներ են եղել Թեյշեբաինի միջնաբերդում, Օշականի միջնաբերդի հարավ արևելյան մասում, Արգիշտիխինիլիի առանձին համալիրներում: Բացի այդ, Վանի թագավորության մի շարք շրջաններում պեղված հնագիտական համալիրներում հաստատագրվել են բազմահարկ շինություններ: Ցավոք, մինչև այսօր այդ համալիրների ներքին կառուցվածքի, մասնավորապես Բիայնիլիի մայրաքաղաք Տուշպայի մասին տեղեկություններ չունենք, բայց որոշ պատմական տեղեկություններ և առանձին գտածոների ուսումնասիրությունը մասամբ լուսաբանում են այդ բացը: Պատմահայր Մովսես Խորենացին նշում է, որ Վանում գոյություն ունեին երկու-երեք հարկից բաղկացած շքեղ տներ: Նման մի շենքի պատկեր է դրվագած Թոփրախ Կալեից հայտնաբերված բրոնզե թիթեղի վրա:[190] Բալավաթյան հայտնի դարբասների վրա թիթեղապատ տեսարաններից մեկը[191] վերաբերում է Արզաշկու քաղաքի գրավմանը, որտեղ պատկերված են բազմահարկ շենքեր, մենատներ:

Արագածի միջնաբերդի պեղումները, ինչպես նաև շինարարական ամենատարբեր կոնստրուկցիաների առկայությունն ապացույցն են այն իրողության, որ խնդրո առարկա միջնաբերդն ունեցել է երկրորդ, կամ ավելի ստույգ վերին հարկ: Ինչպես ստորև նշեցինք, միջնաբերդի բնակեցրած տարածքում շինությունները տեղադրվել են տարբեր, մի քանի մակարդակների, դարավանդաձև հարթակների վրա, որոնք շրջափակված են հզոր պատաշարով: Նման պատերի կառուցումը կարող էր ծառայել միայն վերին հարկերի ամրությունը ապահովելուն:

Բացի նշվածից, առկա են նաև մի շարք փաստարկներ, որոնք թույլ են տալիս արձանագրել վերին հարկի գոյության փաստը: Առաջին կարևոր մանրամասը՝ հզոր որմնամույթերի առկայությունն է, երկրորդը՝ մի շարք կացարաններում դռների՝ մուտքերի բացակայությունը, երրորդը՝ կացարանների բոլոր պատերի, նաև միջանկյալների՝ հաստ ու հզոր լինելն է, առանձին դեպքերում ամրացված որմնահեծերով և մույթերով, չորրորդը՝ հայտնաբերված որմնանկարների թափված մնացորդներն են, հինգերորդը դա պեղված շերտերի կառուցվածքն է՝ երկու հատակների և առաստաղի մնացորդների փոխհարաբերությամբ:

Առաջին, ամենից կարևոր փաստարկը, անշուշտ, միջնաբերդի N N 6, 9 և 19 կացարաններում բացված որմնամույթերի առկայությունն է: N 6 կացարանի հարավային պատին կից կառուցված մույթը (Աղ. 96): (Նկ. 7): արդեն իսկ իր չափերով խոսում է այն մասին, որ այդ կացարանն օգտագործման սահմանափակ մակերես ունի: Հատակագծում ճիշտ քառակուսի՝ (6,3 x 6,3 մ չափերով) սենյակի կենտրոնում կառուցված, հյուսիս-հարավ 4,2 մ երկարությամբ, 2,1 մ լայնքով այս հզոր մույթը ստորին մասում շարված է կոպտատաշ քարաբեկորներից, որոնք շարվածքն ի վեր ավելի փոքր չափեր են ընդունում: Այն հյուսիսային և արևելյան մասերում ամրացված է մեկ և երեք շարք հենապատով: Ակնհայտ է, որ մույթն իր ամբողջ բարձրությամբ մինչև առաստաղ քարաշեն կարող էր լինել՝ հզոր հենակ հանդիսանալով վերի հարկի ամրության համար:

Երկրորդ մույթը բացվեց N 9 կացարանում, (Աղ. 98): (Նկ. 8), որը ի տարբերություն N 6 կացարանի, տեղադրված է սենյակի կենտրոնական մասում և հատակագծում ուղղանկյուն է՝ 2,6 x 2,1 մ չափերով: Այն շարված է խոշոր կոպտատաշ քարաբեկորներից, չոր շարվածքով: Այս կառույցի միջուկը աչքի չի ընկնում կավաշաղախի հզոր զանգվածով: Նախորդ և քննարկվող մույթի մակարդակների միջև տարբերությունը կազմում է շուրջ 1,5 մ և վերջինիս քարե հիմքի վրա բարձրացել է աղյուսաշարը, մինչև առաստաղ: Պեղումների ժամանակ այստեղ հայտնաբերվեցին աղյուսի մնացորդներ: Մույթը կենտրոնական դիրք է գրավում արևմտյան թևի և առաջին մույթի միջև, հանդիսանալով կարևորագույն կառույց: Նման մույթերը բնորոշ են Վանի թագավորության հուշարձաններից շատերին: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ բացվել է նմանօրինակ շինություն[192]: Սովորաբար մեծ մակերես ունեցող շինությունների ծածկերն ապահովելու համար, որպես կանոն, պահեստ մթերանոցում կառուցում էին մույթեր՝ գերանածածկ տանիքն ամուր դարձնելու համար: Կարմիր բլուրում[193] նման մույթեր հաստատագրվել են ամբողջական և կիսավեր վիճակում: Այստեղ բացված կոնստրուկցիաները թե իրենց չափերով և թե շինարարական տեխնիկայի առանձնահատկություններով նույնականանում են Արագածի N 9 կացարանում բացված մույթի հետ: Ուրարտական մի շարք ամրոցներում և մասնավորա-

[190] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, Москва, 1959, с. 204.
[191] Նույն տեղում, Աղ. 4-7:

[192] *Б.Б. Пиотровский,* ук. соч., 1952, с. 16, 28.
[193] Նույն տեղում էջ 28 – 30:

պես Արարատյան դաշտի համալիրներում՝ Էրեբունիի, Արգիշտիխինիլիի[194], նման շինությունների առկայությունը խոսում է ճարտարապետական կոնստրուկտիվ լուծումների ստանդարտեցման մասին, որով ապահովվում էր ոչ միայն տանիքի ամրությունը, այլև վերին հարկի կառույցների համար ստեղծվում էր կայուն հիմք:

Արագածի երկհարկանի միջնաբերդի մասին հաջորդ փաստարկը հիմնավորվում է վերը նկարագրված կացարանների մուտքերի և անցումների առանձնահատկությունների վերլուծությամբ: Միջնաբերդի շինությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դասակարգելու երկու տիպի աստիճանավանդակների կոնստրուկցիաներ: Առաջինը թեքամուտքերով աղյուսաշեն աստիճանավանդակներն են, երկրորդը՝ փայտից աստիճանները: Այսօրինակ տիպաբանությունը բնորոշ է ոչ միայն Արագածին, այլև Արարատյան դաշտին, Վանի թագավորության բազմահարկ հուշարձաններին: Շատ համալիրներ իրար հաղորդակից են մուտքերով և ելքերով, առանձին «դռներով», որոնք գտնվում են տարբեր հարթությունների և մակարդակների վրա: Մինչդեռ, ինչպես N N 2, 3, 6 կացարանների, այնպես էլ երրորդ համալիրի պեղումներից պարզվում է, որ մի շարք կացարաններ՝ N N 13-15, չնայած իրար հաղորդակից են «դռներով»՝ մուտքերով, այնուամենայնիվ արտաքին համալիրների համար դրանք փակ են և զուրկ են պատերի մեջ բացվող մուտքերից, որով հնարավոր կլիներ կապվելու միջնաբերդի մյուս շինությունների հետ: Քննարկվող կացարանների պատերի պահպանված բարձրությունը հնարավորություն է տալիս անելու որոշակի եզրակացություններ: Նախ ոչ մի աստիճանավանդակի մնացորդներ չեն հաստատագրվել նշված կացարաններում, որով հնարավոր կլիներ անգամ հատակից վեր բարձրացող հարթակներով անցնել այսպես կոչված հիմնապատից ավելի բարձր բացվող «դռնով»: Ուրարտական մի շարք հուշարձաններում, մասնավորապես Կարմիր բլուրում, միջնաբերդի հյուսիս-արևմտյան թևում բացվել է քունթուջի ձեթ պատրաստելու արհեստանոց[195], ուր առկա է թեքամուտքի կոնստրուկցիան: Առավել հետաքրքիր են Արագածի N 6 կացարանի հյուսիս արևմտյան հատվածում հսկայական կոպտատաշ ժայռաբեկորների ելուստները, որոնք հավանաբար թեքամուտքի դեր կարող էին ունենալ: Այսպես կոչված աստիճանավանդակը, բացի փայտի աստիճանից, կարող էր նաև կառուցվել աղյուսաշարով: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այս նույն N 6 կացարանում հում աղյուսի մնացորդների հայտնաբերումը, որոնք ժայռաբեկորների հետ են կապվում: Այդ աղյուսաշար զանգվածը 1,2 մ բարձրություն ունի: Տեղ-տեղ տաշած ժայռահարթակը ունի սվաղի հետքեր: Չնայած նյութի սակավությանը, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ այստեղից հնարավոր էր մուտք գործել վերին հարկ, քանի որ կացարանը հատակից մինչև հարթակն ունի աստիճանաձև կառուցվածք և կարող էր թեքամուտքով՝ աղյուսաշար աստիճանավանդակով հասնել առաստաղին, ուր բացվում էր «դուռը»:

[194] *А.А. Мартиросян*, Аргиштихинили, Ереван, 1974, с. 82.
[195] *Б.Б. Пиотровский*, ук. соч., с. 137.

Կացարանի չափերը և նշված առանձնահատկություններն ինքնին թելադրում են այդ աստիճանամուտքի ձևը, որը թեքվելով և վեր բարձրանալով ավարտվելու էր մույթի վերին հորիզոնից քիչ ավելի բարձր՝ առաստաղի և վերին հարկի հատակի մակարդակում: Բացի այս տիպի աստիճանավանդակից, վերոհիշյալ կացարանները N N 2, 12, 13, հավանաբար նաև N 8 և այլն նույնպես կապ են ունեցել երկրորդ հարկի հետ, քանի որ, այլ բնույթի մուտքեր չի ենթադրվում նման մակերևույթով կացարաններ մտնելու համար: Այս կացարաններում հավանաբար դրվել են փայտից աստիճաններ, որով հնարավոր էր առաստաղի մեջ բացված մուտքով հաղորդակցվել վերին հարկի շինությունների հետ: Նման տիպի աստիճանները նորություն չեն և ունեցել են լայն կիրառություն:

Երրորդ կարևորագույն փաստարկը՝ միջնաբերդի ներսի շինությունների հատակագծումն է, որտեղ հստակ դիտվում են պատերի ուղղագիծ կառուցվածքը: Վերջիններս առանձին հատվածներում ամրացված են առաջ եկող որմնահեծերով: Պատերի հաստությունը կազմում է 1,6 մ-ից մինչև 2,1 մ, որոշ դեպքերում էլ 3 մ, իսկ N 5 կացարանի հարավայինը՝ պարսպապատի հետ՝ 5 մ, որը համապատասխանում է ուրարտական ամրաշինական ստանդարտին: Նման պատկերն օրինաչափ է Էրեբունու, Արգիշտիխինիլիի, Կարմիր բլուրի, Օշականի, Արամուսի, Դովրիի և այլ միջնաբերդերի կառուցապատման ժամանակ: Արագածի միջնաբերդում նման հզորությամբ պատերի կառուցումը ինքնանպատակ չէ, այլ անհրաժեշտություն՝ հնարավորին չափով մեղմացնելու առաստաղի ծանրությունը, հենք ստեղծելով երկրորդ հարկի շինությունների համար: Միջնաբերդի նմանօրինակ պատերի մանրամասն զննումը ցույց է տալիս, որ անգամ միջնապատերը, որոնք կացարանները բաժանում են իրարից, ծանրությունը կրող հեծանի դեր են կատարել: Մասնավորապես որմնահեծերի առկայությունը հիմնավոր է դարձնում բերված ենթադրությունը: Այս կրող կոնստրուկցիաներն իրենց հերթին բաժանվում են երկու ենթատիպերի. որմնահեծերով ամրացված և միաշար-եռաշար ուղղագիծ հենապատով ամրացված կարճ պատեր, առանց որմնահեծերի: Ենթատիպերից առաջինը որպես կանոն ավելի երկար է, որը որմնահեծի գոյությունը դարձնում է խիստ անհրաժեշտ, առավել ապահով դարձնելով հեծանի ամրությունը:

Արագածի միջնաբերդը բավականին փոքր լինելով և զիջելով Էրեբունուն, Օշականին, Արամուսին, Դովրիին և այլն, նախագծվել է որպես երկհարկանի շենք, քանի որ պալատային, տաճարային և առանձին բնակելի շինությունների նախագծումը ստորին հարկում անհնարին էր:

Արագածի միջնաբերդը որպես մեկ բազմահարկ շինություն, բացի վերոհիշյալ փաստերից հիմնավորվում է որմնանկարների, շինությունների հատակների և առաստաղների շերտագրական փոխհարաբերությամբ:

Պեղումների ժամանակ միջնաբերդի N 6 կացարանի արևելյան հատվածում հայտնաբերվեցին որմնանկարների մնացորդներ: Այս բեկորները բացվեցին ոչ անմիջապես հատակին, այլ հաստատագրվեցին մի քանի տարբեր մակարդակներում, որոնց տակ կացարանի անմիջապես հատակին մաքրվեցին հրդեհից թափված առաստաղի մնացորդները՝ ծղոտի և կավե սվաղի հետքերով: Որմնանկարների շերտագրական դիրքը (առաստաղի և որմնանկարների թափված մնացորդների հարաբերությունը) հիմնականում բերում են այն եզրակացության, որ որմնանկարները թափվել են վերին հարկից: Հետաքրքիր է նշել, որ առանձին հատվածներում հաստատագրվել են որմնանկարների մնացորդներ, որոնք տեղադրված են շերտագրորեն երկու առաստաղների միջև: Սկզբնական վիճակում որմնանկարները գտնվել են առաստաղից վեր, այսինքն զարդարել են վերին հարկի շինությունների պատերը: Վերը նշվեց, որ N 6 և մյուս պեղված կացարանները նկուղային հարկում էին գտնվում և մթերանոցի դեր ունեցող այս շինությունները հարմար չէին, թեկուզ և թույլ խոնավության պատճառով, որմնանկարներով զարդարվելու համար: Բացի այդ, մինչ այսօր հայտնի բոլոր հուշարձաններում, նաև Կարմիր բլուրում, նկուղային շինություններում, որոնք մթերանոցի դեր են խաղացել, չեն հայտնաբերվել պատերին արված որմնանկարների հետքեր: Արագածի գտածոների մեջ առանձնացվում են երեք տիպի գունային երանգավորումներ. կարմիր-բալագույն, երկնագույն-կապտավուն և հստակ ընդգծված սպիտակ: Որոշ բեկորներ միայն դաջվածքի երանգավորումով են գտնվել, ցավոք ոչ մի պատկեր չի պահպանվել, իսկ որմնանկարների հորինվածքների մասին պատկերացում կարող ենք կազմել Էրեբունիում պեղված նյութերից, որոնք արվեստի բարձրարժեք նմուշներ են հանդիսացել: Տարբեր բովանդակությամբ որմնանկարներ հայտնաբերվել են Կարմիր բլուրում[196], Էրեբունիում[197], Ալթին-թեփեում, Դովրիում, Ազնավուր-թեփեում[198], Արգիշտիխինիլիում: Այս որմնանկարները, որոնք զարդարել են մոնումենտալ շինությունները, միջնաբերդերը, տաճարները, պալատները, կատարված են բարձրարվեստ ճաշակով և բավականին ներդաշնակորեն լրացնում են շինությունների ներքին հարդարանքը: Դրանց տարրերը և հորինվածքը շատ հարուստ են բովանդակային առումով և կազմված են երկրաչափական, բուսական, մարդկային, կենդանական և այլ տիպի պատկերներից (աստվածությունների, սրբազան կենդանիների, կենաց ծառի, որսորդության տեսարաններ): Ակնհայտ է, որ նման պատկերները զարդարել են նաև Արագած ամրոցի միջնաբերդի երկրորդ կամ վերին հարկի շինությունների պատերը, որոնցից ցավոք միայն առանձին բեկորներ են հաստատագրվել:

Ինչպես տեսանք, վերին հարկի մասին վերը շարադրված փաստարկները միանգամայն պարզորոշ կերպով ապացուցվում են ոչ միայն ճարտարապետական, շինարարական առանձնահատկություններով, այլև մի շարք հնագիտական գտածոների մանրամասն վերլուծականով՝ հայտնաբերված միջնաբերդի տարբեր կացարաններում: Այս գտածոները՝ որմնանկարների մնացորդները, հաճախ շերտագրորեն բաժանարար են հանդիսանում վերին և ստորին հարկերի և՛ առաստաղների, և՛ հատակների շերտագրական կառուցվածքում: Կրկնակի հատակները, այրված գերանների մնացորդները և կավասվաղ երկշերտ առաստաղի առկայությունը որոշակիորեն մատնանշում են վերին հարկի շինությունների մասին:

Միջնաբերդի համալիրների ուսումնասիրությունից պարզվեց, որ սենյակների դասավորությունը համապատասխանեցվել է տեղանքին, որը շինություններին աստիճանաձև տեսք է հաղորդել: Այս պատճառով կացարանների հատակները նույնպես տարբեր մակարդակների վրա են գտնվել: Կացարանները հաղորդակցվել են մեկ մեկու աղյուսե և փայտե աստիճաններով, ինչպես նաև թեքամուտքերով /N 5/: Միջնաբերդի ստորին հարկում տեղադրված այս շինությունները մթերանոց պահեստների դեր են ունեցել, որոնց լայնքը միանգամայն հարմար է տանիքի ծածկը լայնակի գերանաշարով կառուցապատելու համար: Ինչպես նշում է Բ. Պիոտրովսկին[199], Թեյշեբաինի քաղաքի համար անտառանյութը բերվել է Սարիղամիշից և Կաղզվանից՝ Արաքս գետով: Տեղ է հասցվել Հրազդանն ի վեր լաստերի օգնությամբ: Արագածի համար շինարարական փայտի բերման երկու ճանապարհ կա: Առաջինը՝ Արաքս Ախուրյան խառնարանից դեպի Արգիշտիխինիլի, հետո Արագած, իսկ երկրորդը, որը ավելի հավանական է և արդյունավետ՝ Արագած լեռան փեշերի անտառներից, որտեղից կարճ ժամանակում սայլերով կարող էր հասցվել բնակատեղի: Օգտագործվել են բարդու, կաղնու, սոճու և հաճարի ծառատեսակները:

[196] *Б.Б. Пиотровский,* ук. соч., 1952, с. 41.
[197] *К.Л. Оганесян,* Крепость Эребуни, Ереван, 1980, с. 75.
[198] Նույն տեղում:
[199] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 207.

Միջնաբերդի ստորին հարկի շինությունների հզորությունը առաստաղի հետ մեկտեղ ամուր հիմք են հանդիսացել երկրորդ հարկի համար: Կարևոր և հետաքրքիր խնդիր է հանդիսանում միջնաբերդի ստորին հարկի շինությունների լուսավորության հարցը: Լինելով նկուղային, այս կացարանները լուսավորման կարիք ունեին: Սենյակների աստիճանաձև կառուցվածքը, հատակների և առաստաղների մակարդակների ընդգծված տատանումները հնարավոր են դարձնում լուսամուտներ բացել միայն տանիքից ներքև, այն էլ ոչ մեծ լայնության բացվածքով: Մյուս շինությունները, որոնք միջնաբերդի կենտրոնական հատվածներում են նախագծվել, լուսավորվել են անմիջապես տանիքի վրա արված երդիկներով: Նման լուսավորությունը եզակի չէ ուրարտական ամրոցներում: Ինչպես ցույց են տալիս պեղումները, նմանաձև հնարքով է լուծված նաև լուսավորության հարցը Թեյշեբաինում[200]: Բուն լուսամուտների ձևի մասին իմանում ենք ինչպես հնագիտական նյութերից, այնպես էլ ասսուրական տեքստերից, բարձրաքանդակներից[201]: Վանի թագավորության հուշարձաններից հայտնի բրոնզից և ոսկորից աշտարակների և շենքերի պատկերների [202] վրա հստակորեն ներկայացված են լուսամուտների ձևերը: Դրանք երկարավուն նեղ ուղղանկյան տեսքով են, տեղադրված են շինությունների վերնամասում, տանիքից ներքև: Հաճախ աղյուսաշարը՝ լուսամուտի ձևին համապատասխան, ծածկվում էր բազալտից սալաքարերով, ստեղծելով յուրօրինակ եզրագծումով հորինվածք: Բացառված չէ, որ ուղղանկյուն ձգված պատուհանները վերնամասում ավարտվեն կլորացող թաղանձ հորինվածքով, մանավանդ որ նման կոնստրուկտիվ հատկանիշը լայն տարածում ուներ Վանի թագավորությունում և արևելքի մի շարք երկրների ճարտարապետության մեջ: Նման պատուհանները սովորաբար բացվում են գերանաձածկ տանիքի տակ: Գերաններով ծածկված առաստաղը վերին մասում լցվում էր հողաշերտով, որը ամուր տոփանվելու դեպքում տանիքը դարձնում էր կայուն, միևնույն ժամանակ զերծ պահելով ջրաթափանցման վտանգից: Նման ձևով են կառուցվել Կարմիր բլուրի նկուղային հարկի և Թոփրախ-կալեի տանիքները: Ասսուրական աղբյուրներում հաճախ հիշատակվում են մի շարք մանրամասներ, որոնք վերաբերվում են նաև Ուրարտուի շինարարական արհեստին: Լուվրյան տեքստերում նշվում է այն մասին, որ Ուլխու քաղաքում Ռուսան կառուցեց մի հոյակերտ պալատ, որի առաստաղը հավաքած էր կիպարիսե անուշահոտ բուրմունք արձակող գերաններով: Ասսուրական զորքերը ներխուժելով քաղաք, ավերածություններ սփռեցին՝ թալանելով տաճարներ ու պալատներ, իսկ կիպարիսից գերանները կացիններով կտրատելով, թալանի հետ միասին տարան Ասորեստան[203]:

Այս ամենի հետ մեկտեղ կարևոր է առանձնացնել ուրարտական շինությունների ծածկերի տիպերն ու ձևերը՝ ըստ մինչև այժմ ուսումնասիրված համալիրների: Թեյշեբաինի և այլ հուշարձանների նյութերի հիման վրա ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը[204] առանձնացնում է փայտածածկ տանիքների հետևյալ տիպերը: Առաջինը միակողմանի մշակումով մեկմեկու կիպ ամրացված գերանածածկն է, որի վրայից փռվել է երկշարք ծղոտաշարք (ղամիշ): Վերջում այն ամրության համար հարթեցվել և տոփանվել է հողաշերտով: Հաջորդ ծածկը լայնակի և երկայնական մեկը մյուսի վրա դրվող խաչվող կոնստրուկցիա հիշեցնող ձևն է, որը նույնպես մինչև հողաշերտը ծածկվել է ծղոտով: Երրորդ տիպը նույնաձև կառուցվածք ունի, սակայն ավելի շատ հիշեցնում է հայկական գլխատունը կամ հազարաշենը: Վերջապես հաջորդը ասսուրական բարձրաքանդակներում հանդիպող հայտնի Մուծածիրի տաճարի երկթեք տանիքն է, որը աչքի է ընկնում բարձր ֆրոնտոնով:

Բ. Պիոտրովսկին[205] նշում է տանիքի մի ձև ևս, որը հիմնական հաստատագրվում է Վանի ժայռափոր խորշերի օրինակով: Թաղի գաղափարը Վանի թագավորությունում և հին արևելյան քաղաքակրթությունում բավականին լայն տարածում ուներ: Ըստ Ստրաբոնի, ասսուրական թաղակապ շինությունները փայտի խիստ պակասի պատճառով հատվածաբար էին կառուցվում, ստեղծելով կրող պատերի վրա որոշակի ծանրություն՝ թաղի ձևն ու գաղափարը ապահովելու համար:

Արագածի միջնաբերդի և հավանաբար քաղաքային թաղամասի շինությունների տանիքները ծածկվել են գերանաշարով, որոնք համապատասխանում են տանիքների առաջին և երկրորդ տիպերին: Այդ մասին են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված այրված տանիքների և հատակների մնացորդները: Համատարած հաստատագրվել են ծղոտի, փայտի (գերան), կավաշերտի մեծաքանակ մնացորդներ:

Հաշվի առնելով տանիքի ամուր լինելու նախապայմանը, կարելի է ենթադրել, որ գերանների տրամագծերը կտրվածքում առնվազն պետք է 15-20 սմ լինեին, մանավանդ եթե նկատի ունենանք երկրորդ հարկի շինությունների առկայությունը: Նման տանիքներ բնորոշ են ոչ միայն Թեյշեբաինիին, այլև Էրեբունուն, Արգիշտիխինիլիին, Օշականին և Արարատյան դաշտի մի շարք այլ հուշարձաններին:

[200] Նույն տեղում, էջ 200:
[201] Նույն տեղում, Աղ. VII:
[202] Նույն տեղում, էջ 204:

[203] Նույն տեղում, էջ 206:
[204] *Կ.Հ. Օգանեսյան,* Кармир-Блур IV, Архитектура Тейшебаини, Ереван 1955, с. 90.
[205] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 270.

Այսպիսով, տարակույս չկա, որ Արագածի միջնաբերդը երկհարկանի շինությունների տիպին է պատկանում: Ցավով պետք է նշել, որ պեղումներից հնարավոր չեղավ պարզելու միջնաբերդի վերի հարկի շինությունների ծևերն ու նախագծային լուծումների մանրամասները: Ակնհայտ է, որ այս շենքը նկուղային հարկով չէր սահմանափակվում և բացի տնտեսական նշանակությունից, այն ուներ նաև վարչական, կրոնական հարկաբաժիններ: Արտատնտեսական գործառույթներով օժտված վերին հարկում տեղադրվել են մի շարք կարևոր շինություններ: Մեր հաշվարկներով վերնահարկը բաղկացած է եղել 12-15 համալիրներից, քանի որ դրանք չէին կարող նախագծվել ստորին հարկի շինությունների խտությամբ: Վերին հարկում բնակվող բարձր խավի համար նախատեսված շինություններն ունեին ազատ տարածական լուծումներ: Դրանք հիմնականում բնակելի կացարաններ, դահլիճ ընդունարաններ, տաճարային և պալատական շինություններին բնորոշ հատկանիշներով կառույցներ պետք է եղած լինեին, ինչը բնորոշ է ուրարտական խոշոր քաղաքներին, ամրոցներին: Թերևս Արագածի պալատական շինությունները, տաճարները, սրահները նման են եղել Էրեբունիում, Արգիշտիխինիլիում, Կարմիր բլուրում բացված կառույցներին: Հոգևոր և աշխարհիկ շինությունների ներքին հարդարանքը աչքի է ընկել հարուստ և բարձրարվեստ որմնանկարների ոճական հորինվածքով: Բացի որմնանկարներից, երկրորդ հարկի շինությունների պատերը հավանաբար զարդարվել են գորգերով, դեկորատիվ զենքի տեսակներով: Նման ճոխ ներքին հարդարանք ունեցել է Թեյշեբաինին[206] և այլ շատ քաղաքներ: Ոչ միայն ուրարտական, այլև ասորեստանյան հուշարձանները[207] նույնպես աչքի են զարնել իրենց շլացուցիչ ներքին հարդարանքով:

§ 4. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Միջնաբերդի հյուսիսային պարսպաշարից մոտ 120-150 մ հյուսիս-արևմուտք ուրվագծվում են բնակելի համալիրների հետքեր: Այստեղ՝ կացարանները շրջափակված են հզոր պարսպապատերով, որոնք ունեն 1,6-2,1 մ հաստություն, շարված բազալտե կոպտատաշ քարաբեկորներով: Կացարանները հյուսիսային հատվածում փակված են արևելք-արևմուտք ուղղված պարսպապատով, որը ամրացված է որմնահեծերով: Այնուհետև արևմտյան կողմից հպվում են ժայռոտ բլրաշարքին, որոնք ձգվում են հյուսիս-հարավ առանցքով

[206] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 204-205, *նույնի* Искусство Урарту, Ленинград, 1962, с. 115.
[207] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 203-204.

մինչև բլուրը, որի վրա վեր է խոյանում միջնաբերդը: Արևելյան կողմից կացարանները շրջափակվում են մի այլ հզոր պարսպաշարով, որի մի զգալի մասն ավերված է: Միջնաբերդից հյուսիս տեղադրված այս հատվածում պեղվեց, «քաղաքային» համալիրին պատկանող, երկու սենյակ:

Սենյակ N 1. (Նկ. 9): Գտնվում է համալիրի հյուսիսային հատվածում հարավ-հյուսիս ուղղվածությամբ 20^0 շեղումով արևելք: Պատերը շարված են կոպտատաշ բազալտե քարաբեկորներով: Սենյակը հատակագծում ունի ուղղանկյան ձև՝ 9,2 x 7,5 մ չափերով: Պահպանված պատերի հաստությունը 1,2 մ է, իսկ միջին բարձրությունը հասնում է 0,8 մ-ի: Սենյակի հյուսիսային պատին կցակառուցված է 1,3 x 1,1 մ չափերի, 0,5 մ բարձրությամբ մույթ հիշեցնող ուղղանկյուն սվաղապատ կառույց, որն ըստ երևույթին հարթակի դեր է կատարել, հանդիսանալով սենյակի համար սրբազան անկյուն: Վերջինիս առջև հաստատագրվեցին կլոր կավե օջախի մնացորդներ, ինչպես նաև անգոբապատ բարձրորակ խեցեղենի նմուշներ (Աղ. 106-109): Սենյակի արևմտյան պատը հարավային կողմից՝ սենյակի ներսից՝ 1,9 մ երկարությամբ կից է ժայռային զանգվածներին: Նման կոնստրուկտիվ լուծումներ հանդիպում են նաև միջնաբերդի շինություններում:

Պեղումների ժամանակ սենյակում բացվեցին ինչպես քարաշար, այնպես էլ քառակուսի բազալտե (0,45 x 0,45 մ) սյան խարիսխներ, որոնք գտնվում են միմյանցից 2,4 մ իսկ արևմտյան պատից 2,2մ հեռավորության վրա: Կենտրոնական մասում հաստատագրվեցին երկու քարաշար օջախների հետքեր 1 մ և 0,45 մ տրամագծերով, իրարից 0,6 մ հեռավորությամբ: Սենյակի հատակը խիստ տոփանված է, որն արևելյան պատի երկայնքով՝ 1,5 մ լայնությամբ ցածրանում է 0,25 մետրով: Հնագիտական նյութը հիմնականում բաղկացած է խեցեղենի բազմաթիվ մնացորդներից, բազալտե աղորիքներից, սանդերից, կոկիչներից: Սենյակից հայտնաբերվեցին նաև կենդանիների ոսկորներ, ինչպես նաև օբսիդաքարի ցլեպներ: Սենյակի հատակը սալապատ է, իսկ արևելյան պատի երկայնքով ամուր տոփանված է և պատված 0,1մ հաստությամբ սվաղով: Այս հատվածը 0,25 մ ցածր է կացարանի հատակի մակարդակից: Արևելյան պատին կից բացվեցին մոտ 1/3 հատակի մեջ թաղված երկու խոշոր կարասներ, ինչպես նաև հոր: Նման կարասներ պեղվեցին արևմտյան պատի երկայնքով: Սենյակը ուներ երկու մուտք: Առաջինը բացվեց հյուսիսային պատի մեջ՝ 0,9 մ լայնքով, որը տեղադրված է շինության հյուսիս արևելյան անկյունից 1մ հեռավորությամբ: Երկրորդը հանդիպակած է առաջինին և կրկնում է բացվածքի նույն չափը: Հարկ է նշել, որ այստեղ հայտնաբերվեց դռան բազալտե կրունկ, ինչ որ առկա էր միջնաբերդում: Այն ունի 0,35 x 0,3 x 0,2 մ չափեր, իսկ կենտրոնում ունի փայտի առանցքի

մաշվածության հետքերով 6 սմ խորությամբ, 7 սմ տրամագծով փոսորակ: Նման գտածոն խոսում է այն մասին, որ Արագածի բնակելի համալիրների մուտքերն ամրացվել են շարժական առանցք ունեցող դռներով: Նման երևույթը լայն տարածում ուներ մի շարք ուրարտական հուշարձաններում՝ Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի, Օշական:

Կացարանում բացված առաջին կարասը տեղադրված էր համալիրի հյուսիս-արևելյան անկյունում՝ 0,8 մ խորությամբ փոսորակի մեջ: Այն ներսից պատված էր մանր սվաղապատ քարերով: Փոսորակը կացարանի հատակի մակարդակում սվաղապատ էր: Այստեղ հորած կարմրավուն անգոբապատ մակերևույթով կարասի պահպանված իրանի տրամագիծը կազմում է 0,7 մ, շուրթն ունի դեպի դուրս կլորացող ճկվածություն: Կարասի մաքրման ժամանակ հայտնաբերվեցին կարմիր անգոբապատ թասի, քրեղանի, մեկ կանթանի սափորի մնացորդներ, ինչպես նաև գորշ մակերևույթով սափոր, սև կճուճ: Վերջիններս հարդարված են հասկանախշի, եղնգանախշի և բոլորանախշի հորինվածքով:

Հաջորդ կարասը բացվեց առաջինից 2,5 մ հեռավորությամբ, արևելյան պատի տակ: Այն թաղված էր կացարանի հատակի մեջ՝ 0,65 մ խորությամբ: Կարասի իրանի տրամագիծը կազմում է 0,85 մ, շուրթն կլորացող դուրս ճկված է: Անոթն ունի կարմրավուն երանգավորումով անգոբապատ մակերես, որի վրա արված է եռանկյունի սուր գագաթներով դեպի վեր և վար ուղղված նախշագոտի, ինչպես նաև բոլորանախշ հորինվածքով ուռուցիկ գոտի: Կարասի մոտ գտնվեց բավականին մեծ չանի բեկոր: Կարասի միջից հայտնաբերված խեցանոթները իրենց տիպերով կրկնում են առաջին կարասի միջից հայտնաբերվածները: Բացի դրանից գտածոների մեջ մեծ քանակ են կազմում խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորները, բազալտից աղորիք, կոկիչ: Հարկ է նշել, որ փոսորակի եզրերը, ուր տեղադրված էր կարասը, սվաղված էր:

Երրորդ կարասը հայտնաբերվեց մույթից 1,5 մ հեռավորությամբ, արևմտյան պատի տակ: Թաղված է հատակի մեջ, պահպանված բարձրությունը 0,5 մ է, տրամագիծը՝ 0,65 մ: Պահպանվել է զանգվածեղ ուղիղ կտրված շուրթի մասը, որի տակից կարասի վիզը ժապավենված էր ուռուցիկ բոլորանախշով: Իրանի մասում արված էր առաջին կարասի զարդամոտիվներին բնորոշ նախշագոտի: Ի տարբերություն վերը նկարագրված կարասների, քննարկվող անոթի հատակին արված էին անցքեր: Այս դեղնավուն երանգավորումով կարասը հավանաբար ծառայել է հացահատիկ պահելու համար: Անոթի միջից գտնվեցին թասերի, քրեղանների, բազալտից աղորիքների մնացորդներ:

Նկարագրվող սենյակի արևելյան պատի տակ, կարասից 2,5 մ - հեռավորությամբ բացվեց հոր: Այն ունի բավականին մեծ չափեր, խորությունը կազմում է 0,8 մ, տրամագիծը վերին մասում 1,3 մ է, հատակամերձ հատվածում՝ 0,9մ: Հորի պատերը և հատակը շարված են մանր քարերով և սվաղապատ են: Կացարանի մակերեսի մակարդակով այն ունի քարերով շրջագծված և առանձին դեպքերում սվաղի մնացորդներով շուրթ: Այստեղից գտնվեցին կարմիր անգոբապատ խեցեղենի մնացորդներ, խոհանոցային սև սպասքի նմուշներ, կոկիչ, սանդ, մանր և խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ:

Քննարկվող շինությունը միջնաբերդի N 3 կացարանի հորից տարբերվում է իր ձևով: Նման տիպի կլորացող հորեր հայտնի են Թեյշեբաինի և Օշականի քաղաքային համալիրներից:

Մոտ 70 մ^2 տարածքով այս սենյակի տանիքի ծածկի համար, կրող կոնստրուկցիա են հանդիսացել հայտնաբերված խարիսխների մնացորդները: Դրանցից առաջինը 0,45 x 0,45 x 0,35 մ բարձրությամբ բազալտից խարիսխ է, որի կենտրոնական մասում հաստատագրվել է 0,28 մ տրամագծով գերանի դրոշմը-հետքը: Առաջինից դեպի հյուսիս, 2,4 մ հեռավորությամբ տեղադրված հաջորդ բազալտվեց քարերից կազմված 0,8x0,8 մ չափերի 0,25 մ բարձրությամբ կոնստրուկցիա է, որը ծառայել է որպես հարթակ, տանիքը պահող գերանի համար: Սենյակի կենտրոնական շրջանում հայտնաբերվեցին երկու օջախներ, մեկը մեծ՝ 1մ տրամագծով, երկրորդը նրա մոտ՝ 0,45 մ տրամագծով: Առաջին օջախը, բազայից 1,2 մ դեպի արևելք տեղադրված 0,15 մ շուրթի բարձրությամբ, ներսի մասում մանր քարերով շարված կառույց է: Երկրորդը կրկնում է առաջինի ձևը և տիպաբանորեն դրանք նույնն են: Օջախները լցված էին մոխրի հաստ շերտով: Երրորդ օջախը տիպաբանորեն տարբերվում է նախորդներից: Այն կավից է, կլորավուն, շուրթը 0,1 մ բարձրությամբ, իրանն ուղիղ: Հյուսիսային պատից 0,8 մ հեռավորությամբ, 0,5 մ տրամագծով այս օջախը տեղադրված է հարթակի՝ սրբազան անկյան դիմաց: Այստեղ հայտնաբերվեց կենդանիների այրված ոսկորներ, մեկ կանթանի հոյակապ, նրբագեղ սափոր, որի կանթին փայլանախշով արվել է վարպետի նշան (Աղ. 108, նկ. 18): (Աղ. 159, նկ. 2, 3):

Քննարկվող սենյակից հայտնաբերված հնագիտական նյութը ներկայացված է ուրարտական խեցանոթների լայն տեսականիով՝ կարասներ (Աղ. LXXXVI, 4), սափորներ, թասեր, քրեղաններ, փիալաներ, կճուճներ, որոնք զարդարված են եղնգանախշի, հասկանախշի, եղևնանախշի, թեք գծիկների մոտիվներով: Քարից գտածոների մեջ առանձնանում են բազալտից կլոր և նավակաձև աղորիքները, տրորիչները, կոկիչները, օբսիդաքարից գլեփները: Հայտնաբերվել են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ:

Սենյակ N 2: Տեղադրված է անմիջապես N 1 սենյակի հյուսիսային կողմում: Հատակագծում ուղղանկյուն, ծգված՝ 10 x 4,5 մ չափերի այս կացարանն ի տարբերություն նախորդի, ունի արևելք

արևմուտք կողմնորոշում: Կացարանի հյուսիսային հատվածը միաձուլվում է համալիրի որմնահեծերով ամրացված պարսպապատի հետ: Պատերի պահպանված բարձրությունը մինչև 1մ է: Համեմատաբար վատ է պահպանված շինության արևելյան պատը: Ինչպես N 1 սենյակում, այստեղի պատերը նույնպես ունեն 1,2 մ հաստություն՝ շարված են երկշարք կոպտատաշ քարաբեկորներով: Կացարանի հյուսիս-արևմտյան հատվածում, հյուսիսային պատին կից բացվեց, ինչպես N 1 կացարանում, ուղղանկյուն մույթ, որը տեղադրված է արևմտյան պատից 1,7 մ հեռավորությամբ: Մույթը ուներ 1,1 x 0,9 մ x 0,5 մ չափեր: Կացարանի հարավային պատի մեջ բացվեց 0,9 մ - լայնքով դուռը, որը N 2 և N 1 սենյակները կապում է իրար հետ: Այստեղ հաստատագրվեց տուֆից դռան կրունկ: Կացարանի հատակը կազմված է ամուր տոփանված հողալիցքից, առանձին հատվածներում հաստատագրվել են սվաղի հետքեր: Ինչպես առաջին սենյակում, այնպես էլ այստեղ աղյուսի հետքեր չեն հաստատագրվել: Չի բացառվում, որ պատերը շարված լինեին միայն քարերով: Այս կացարանից հայտնաբերված հնագիտական նյութը խեցեղենի բեկորներ են՝ կարասներ, թասեր, քրեղաններ, փիալաներ, հալոցներ, սև խոհանոցային սպասքի նմուշներ, աշխատանքային գործիքներ՝ բազալտից աղորիքներ, կոկիչներ: Ոսկրաբանական գտածոներ չեն հայտնաբերվել:

Նշված կացարանի պեղումների ժամանակ պարզվեց, որ հելենիստական ժամանակաշրջանում այստեղ կատարվել են թաղումներ, որոնք բացվել են կացարանի արևմտյան պատին կից: Այս երկու թաղումները պատկանում են «իջեցված» թաղումների տիպին:

Թաղում (դամբարան I), (Նկ. 10): Հաստատագրվել է N 2 սենյակի հարավ-արևմտյան հատվածում, անմիջապես կացարանի հատակին: Դամբարանի արտաքին ոչ մի հատկանիշ չի փաստագրվել: Այն զուրկ է որևիցե կոնստրուկտիվ մանրամասներից: Կմախքը տեղադրված էր կավածեփ օվալաձև 0,6 x 0,3 x 0,15 մ շինության վրա, ունի հյուսիս հարավ կողմնորոշում: Հանգուցյալը կծկված էր, աջ կողքի պառկած, գլխով ուղղված դեպի արևելք: Ձեռքերը տեղադրված են դեմքի մոտ: Համեմատաբար վատ են պահպանվել վերջույթների ոսկորները: Թաղված էր 6-9 տարեկան երեխա: Թաղումն ուղեկցող գույքը բավականին աղքատիկ է: Վզի մոտ հայտնաբերվեց ապակուց շատ մանր կապույտ և կանաչ երանգավորումով 2-3մմ տրամագծով հուլունքաշար (Աղ. 110, նկ. 10): Ձեռքերի մոտ կար բրոնզե՝ կլորացող ծայրերով, կտրվածքում կլոր ապարանջանի բեկոր (Աղ. 110, նկ. 5): Դեմքի՝ ականջների հատվածում հաստատագրվեցին բրոնզից 2 ականջօղեր (Աղ. 110, նկ. 3, 4): Գտնվեց նաև բազմանիստ կապտավուն ապակուց մատանու գեղեցիկ ակն (Աղ. 110, նկ. 11):

Թաղում (դամբարան II), (Նկ. 11): Գտնվում է նույն սենյակի արևմտյան պատի տակ հյուսիս-հարավ ուղղվածությամբ: Դիակը խիստ կծկված վիճակում էր, ձախ կողքի վրա պառկած, գլխով հյուսիս, դեմքով արևմուտք, ձեռքերը ուղղված դեպի դեմքը: Թաղվածը 35-45 տարեկան տղամարդ է: Այստեղից հայտնաբերվեցին երկու բրոնզե ականջօղեր (Աղ. 110, նկ. 1, 2), ոտքերի մոտ խոշոր եղջերավոր անասունի ատամներ: Ինչպես I թաղումը, սա նույնպես պառկած էր կավածեփ շերտի վրա, որը անմիջապես արված է կացարանի հատակին:

Երկու թաղումներն էլ թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ դարերով: Նման թաղումներ հաստատագրվել են Օշականի ուրարտական համալիրներում և լայն տարածում ունեն հետբիայնական հուշարձաններում:

Քաղաքային համալիրների կացարաններից հայտնաբերված հնագիտական նյութը բաժանվում է մի քանի խմբի՝ խեցեղեն, մետաղական առարկաներ, քարե, տարբեր ձևերի աղորիքներ և այլն:

Խեցեղեն. Ներկայացված է բազմաքանակ, բազմաձև տարրայի բեկորներով, որոնք բաժանվում են մի քանի խմբերի: Այս խեցեղենի մեջ աչքի են ընկնում խոշոր կարասները, որոնք ունեն ուռուցիկ, ծգված իրան, հարթ կտրված մասիվ շուրթ: Այս խմբին պատկանող անոթները զարդարված են հորիզոնական եռանկյունիներից բաղկացած գոտենախշով, ինչպես նաև կարասների իրանը զարդարող ուռուցիկ, ժապավենաձև, հարթ գոտիներով: Բավականին մեծ խումբ են կազմում սափորների բեկորները, որոնք հիմնականում կարմիր անգոբապատ են: Մյուս խումբը ներկայացված է թասերով, քրեղաններով, փիալաներով: (Աղ. 106-109):

Վերը թվարկված խեցեղենը պատկանում է բարձրորակ անգոբապատ ուրարտական անոթների խմբին, որոնց մի քանի նմուշներ իրենց վրա ունեն վարպետի նշաններ: Ընդ որում, դրանք իրենց ձևերով կրկնվում են ինչպես միջնաբերդի, այնպես էլ քաղաքային համալիրների կացարաններից հայտնաբերված խեցանոթներին, որոնք իրենց լայն զուգահեռներն ունեն Վանի թագավորության տարբեր հուշարձաններից հայտնաբերված նյութերում:

Խեցանոթների մի ստվար խումբ են կազմում սև, գորշ գույնի, երբեմն փայլեցված սափորների, կճուճների, թասերի բեկորներ, որոնց մի մասը աչքի են ընկնում հասկաձև, եղևնաձև նախշազարդումով, զիգզագ, ալիքանախշով՝ բնորոշ մ.թ.ա. VII-VI դարերի տեղական խեցանոթների համար: Բացի վերոհիշյալից, պեղումների ժամանակ հայտնաբերվել են մի քանի տեսակի աղորիքներ, սանդեր, սանդկոթեր, օբսիդաքարից շեղբեր, ցլեփներ: Քարե գտածոների մեջ աչքի են ընկնում բազալտե թասի բեկորները, որոնցից մեկն ունի հստակ ընդգծված նստուկ: Համալիրներից հայտնաբերվել են նաև տուֆե մեծ և փոքր տաշտերի բեկորներ: Ամբողջ հնագիտական նյութը և նրա վերլուծությունը ցույց է տալիս, որ պեղված համալիրները թվագրվում են մ.թ.ա. VII - դարով, իսկ թաղումները՝ մ.թ.ա. III-II դարերով:

§ 5.ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Միջնաբերդի շինությունների, ինչպես նաև ամրոցի (քաղաքային համալիրներ) որոշ կացարանների պեղումներից պարզվեց, որ, բացի տնտեսական նշանակությունից, որոշ կառույցներ (N N 4, 9, 13 և այլն) կապված են պաշտամունքային դրսևորումների հետ, ինչը վառ արտահայտված է Թեյշեբաինիում, Արգիշտիխինիլիում, Օշականում, Արամուսում և մի շարք այլ ուրարտական հուշարձաններում: Կոնկրետ հետաքրքրություն է ներկայացնում Արագածի N 4 կացարանը, որի ներքին հարդարանքի վերլուծությունից պարզվեց, որ այս կացարանը առանձնանում է մյուսներից: Շինության արևմտյան պատին կից կավասվաղով պատված հարթակի վրա գտնվեցին երկու կուռքերի մրապատ բեկորներ, իսկ հատակին՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների այրված ոսկորներով օջախի հետքեր: Ակնհայտ է, որ քննարկվող կացարանն ունի պաշտամունքային նշանակություն, իսկ հարթակը սրբազան անկյան դեր է կատարել, որը վառ կերպով ներկայացված է Օշականի պալատական համալիրների պեղումներից բացված նմանատիպ կացարաններում[208], ուր կատարվել են զանազան ծիսական արարողություններ: Այս շինությունը հաղորդակից է Արագածի մյուս համալիրների հետ. այնտեղ կարելի է հասնել միջնաբերդի ցանկացած հատվածից:

Նման հարթակով սենյակ պեղվել է Արամուսի միջնաբերդում: N 3 կացարանի հարավային պատին կից բացվեց լավ մշակված սալաքարերից՝ 1,2 մ լայնքով, 6,5 մ երկարությամբ, առանձին հատվածներում կավից սվաղի հետքերով հարթակ: Վերջինիս վրա հաստատագրվեցին վարդագույն տուֆից երկու՝ 0,5 մ բարձրությամբ սյունկուռքեր:

Արագածի և Արամուսի հիշյալ սենյակներում բացված նման հարթակների առկայությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու պաշտամունքային շինությունների առանձին տիպ՝ երբ կացարանների պատերից որևիցե մեկին կցակառուցվել է «սրբազան» հարթակ: Հարկ է նշել, որ նման հարթակներ, հանդիպում են նաև ուրարտական տաճարային և պալատական համալիրներում: Վանի ամրոցում[209] պեղվել է 50 մ երկարությամբ և 10 մ լայնությամբ հարթակի վրա բաց սրբատեղի: Այստեղի խոշերից մեկի հատակին բացվել է 1,48 x 1,48 մ չափերով քարե հիմք: Բացառված չէ, որ այն եղել է զոհասեղան կամ էլ որևիցե կոթողի համար հենակ: Հարթակներ են բացվել նաև Հայկաբերդի[210] վերին և ստորին միջնաբերդերում:

[208] *С.А. Есаян, А.А. Калантарян,* ук. соч, с. 27.
[209] *Th. Forbes,* The Urartian Architecture, London, 1983, p. 28.
[210] *A. Erzen,* Çavuştepe, Ankara, 1978, p. 7.

Պաշտամունքային շինությունների հաջորդ տիպին են պատկանում կացարաններում կամ սրահներում հանդիպող հարթակները, որոնք տեղադրված էին սենյակների կենտրոնական հատվածում:

Նման լուծում ունի Արագածի միջնաբերդում հայտնաբերված N 9 կացարանը, որտեղ բացվեց 2,1 x 2,1 մ չափերի ուղղանկյուն հարթակ: Վերջինս ամբողջովին պատված էր մոխրի հաստ շերտով, ուր հայտնաբերվեցին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների՝ մասամբ այրված մնացորդներ: Նման զոհասեղան-հարթակներ բացվեցին քաղաքային համալիրի սենյակներում (N N 1, 2) որտեղ հարթակների հարևանությամբ պեղվեցին այրված կենդանիների ոսկորներով մոխրապատ օջախների մնացորդներ: Հարկ է նշել, որ զոհասեղան-հարթակի այս տիպը՝ ի տարբերություն մի շարք հուշարձանների, իր լայն զուգահեռներն ունի Օշականում: Յուրօրինակ առանձնահատկությամբ զոհասեղանով հարթակ պեղվել է նաև Արամուսի ուրարտական միջնաբերդի N 5 կացարանի ստորին շերտում: Այստեղ բացվեց հատակի մեջ խորացող, մոտ 3 քառ. մ մակերևույթով, լավ մշակված, ուղղանկյուն բազալտե ժայռաբեկորի ճիշտ կենտրոնում տեղադրված գորշ տուֆից քառակուսի զոհասեղան՝ 0,45 x 0,45 x 0,45 մ չափերով: Այն կավե շաղախով ամրացված էր հարթակին և ամբողջովին պատված էր մոխրի հաստ շերտով: Այստեղից հայտնաբերված խոշոր և մանր եղջերավոր անասունների այրված ոսկորների մեջ գտնվեց ցլի գանգ: Նույն տեղում՝ հարթակի վրա բացվեց զոհասեղանին հենած՝ կարմրավուն տուֆից, կտրվածքում կլոր, 0,35մ երկարությամբ սյուն-կուռք, որը նման է Արագածի N 4 կացարանից հայտնաբերվածին: Գտածոների մեջ առանձնանում են կարծր բազալտից, ընդգծված դիմային մանրամասներով տղամարդու գլուխը, բարձրորակ բրոնզից քանդակազարդ վիշապի գլխով ոճավորված շիգղը (Աղ. 110, նկ. 8), նրբագեղ խեցանոթները: Պետք է նշել, որ Վանի ավազանի խոշոր ամրոցներից մեկի՝ Թոփրախ-կալեի տաճարի մուտքի դիմաց հայտնաբերվել է մարմարյա զոհասեղան[211]: Նշված հարթակները, նաև զոհասեղանները, որպես կանոն, մշտապես համատեղվում են սյուն-կուռքերի, ֆալլոսների, օջախների, բարձրորակ խեցեղենի հետ: Արագածի քաղաքային համալիրների կացարաններից մեկում (N 1) հարթակի մաքրման ժամանակ հայտնաբերվեց մեկ կանթանի լայնափող վզով բարձրորակ սափոր-գավաթ (Աղ. 159, նկ. 2, 3): Նման գավաթներ հայտնաբերվել են Վանում, Իգդիրում և այլ հնավայրերում: Չնայած այս տիպի անոթներ ոչ մեծ քանակով գտնվել են տարբեր տիպի համալիրներում, բայց, ինչպես նշում է Հ. Մարտիրոսյանը, բացառված չէ, որ դրանք տեղադրվել են սենյակների սրբազան անկյուններում՝

[211] *Х.Ф.Б. Линч,* Арменія. Путевые очерки и Этюды т. II, Тифлисъ, 1910, с. 80.

հանդիսանալով պաշտամունքային շինության պարտադիր տարր: Հարկ է նշել, որ այս անոթներն[212] օգտագործվել են հեղուկով ծիսական արարողություններ կատարելու ժամանակ:

Արագածի վերոհիշյալ երկու տիպի պաշտամունքային շինությունների համար բնորոշ է օջախների առկայությունը: Այդ օջախները, որպես կանոն, բացվել են հարթակների դիմաց: Վերջիններիս կիրառական նշանակությունը բացատրվում է նաև պաշտամունքային գործոններով: Այս օջախները բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպը կավից, մինչև 0,5 մ տրամագծով, կլորացող կամ հարթ շուրթով օջախներն են՝ հայտնի քաղաքային համալիրի 1-ին, միջնաբերդի 4-րդ և 8-րդ կացարաններից: Երկրորդ տիպը՝ տափակ քարերից պատրաստված օջախներն են (կացարան N 9, քաղաքային համալիրներից՝ 1, 2 սենյակներ):

Նման տիպի օջախներ հայտնաբերվել են Թեյշեբաինիում, Օշականում, Արամուսում: Վերջինիս միջնաբերդի N 6 կացարանի արևմտյան պատին կից, հայտնաբերվեցին երկու օջախներ: Առաջինը կավից, կլորացող շուրթերով, ձվածիր տեսքով, 0,4 x 0,25 x 0,15 մ չափերով գետնափոր օջախ էր: Երկրորդը տեղադրված էր առաջինից հարավ: Այդ, հարթ գետաքարերից կառուցված, 0,6մ տրամագծով թասի տեսքով օջախը նույնպես մոխրապատ էր: Այստեղից հայտնաբերվեցին տուֆ քարից երկու մրապատ սյուն-կուռքեր, խեցեղեն, երկաթից նետասլաք:

Արագածի միջնաբերդի N N 7, 9 կացարաններում պահվել են շուրջ երկու տասնյակ ուրարտական խոշոր կարասներ, որոնցում հնարավոր էր պահել մինչև 20 տ գինի կամ ցորեն: 9-րդ կացարանն իր հարթակի ձևով և կիրառական նշանակությամբ որոշակի զուգահեռներ ունի Կարմիր բլուրի կարասային N 25 սենյակի հետ: Մասնավորապես Թեյշեբաինիում[213] պեղված շինությունում հայտնաբերվեցին առատորեն հանդիպող կենդանիների այրված մնացորդներ: Սենյակի կենտրոնում՝ հենասյուների միջև, պեղվեց զոհարան - օջախ: Զոհարանի հարևանությամբ կար աղյուսից պատրաստված արկղ, որը լցված էր մոխրով: Քիչ հեռու բացվեց նստարան, որի մոտից հայտնաբերվեցին կարիճի և ձկան պատկերներով կավից պատրաստված աստվածների մանրակերտեր: Կարմիր բլուրում, Արագածում և մի շարք ուրարտական հուշարձաններում նմանատիպ շինությունները ունեցել են պաշտամունքային նշանակություն: Այն կապվում է ինչպես երկրագործական, այնպես էլ գինին օրհնելու, չար ոգիներից պահպանելու ծիսական արարողությունների հետ, որոնք ուղեկցվել են կենդանիների զոհաբերությամբ: Այս երևույթը բնորոշ էր նաև ասսուրա-բաբելական աշխարհում, ինչի մասին վկայում են ծիսական տեքստերը[214]: Առ այսօր ուրարտական ծեսերի մասին տվյալները[215] սակավաթիվ են, ուստի դրանց վերակազմությունները հնարավոր է միայն հնագիտական նյութի քննությամբ, այն էլ ընդհանուր գծերով: Արագածի պաշտամունքային շինությունները կապված են նաև տնտեսական գործունեության հետ կապվող արարողությունների հետ: Մասնավորապես երկրագործական ծեսերի դրսևորումներից պիտի համարել գարեջրի, ձեթի և գինու պատրաստման պրոցեսը: Գինի ստանալու համար աճեցնում էին հատուկ տեսակի խաղող, որը պետական հսկողության տակ էր գտնվում: Միհրի դռան արձանագրություններում նշվում է. «Իշպուինի Սարդուրդին /և/ Մինուա Իշպուինորդին ապարանք /՝/ նոր հիմնեցին, հաստատեցին կարգ. երբ ծառերը /ճյուղերը խաղողենու/ էտվեն /՝/ խալդի աստծուն 3 խոյ թող զոհաբերվի, 3 խոյ՝ աստվածներին բոլոր. երբ խաղողուտը կառուցվի /խչմարվի/, 3 խոյ խալդի աստծուն թող զոհաբերվի, 3 խոյ՝ աստվածներին բոլոր. երբ խաղողուտը /խաղողի բերքը/ հավաքվի, խալդի աստծուն 3 խոյ թող զոհաբերվի, 3 խոյ՝ աստվածներին բոլոր»[216]:

Վանի թագավորությունում բերքի հավաքումով պետական շտեմարաններում և պահեստ-մթերանոցներում պահվում էին շատ մեծ քանակությամբ ամենատարբեր տեսակի մթերքներ:

Բացի Միհրի դռան արձանագրությունից, ուրարտական թագավորներ Մենուան, Արգիշտի II-ը և Ռուսա II-ը նույնպես սեպագիր արձանագրություններ են թողել խաղողագործության վերաբերյալ: Մենուան նշում է, որ երբ խաղողի բերքը հասնի, ցուլ, երեք խոյ կզոհաբերվի խալդի աստծուն, կկատարվեն արարողություններ խալդի աստծո դարպասների և կոթողի առջև: Իսկ երբ խաղողը հավաքեն, տոն կկազմակերպվի ինչպես խալդի աստծո, այնպես էլ Ուարուբաինի դիցուհու կոթողի առջև[217]: Հարկ է նշել, որ այս հիշատակությունների շնորհիվ տեսանելի արարողությունների կոնկրետ դրսևորումները հայտնաբերվել են Արագածի, Արամուսի ամրոցներում բացված սրբարանների, հարթակների զոհասեղանների տարբեր կոթողների պեղումների ժամանակ: Վերոհիշյալ ծիսական արարողությունների մասին բացառիկ տվյալներ ենք քաղում ուրարտական պատկերագրության առանձին դրվագների քննությամբ: Դրանք հաստատագրված էին ամենատարբեր գտածոների վրա:

---

[212] *Г.Г. Аветисян*, Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992, с. 72.

[213] *Б.Б. Пиотровский*, ук. соч., с.148.

[214] *Б.Б. Пиотровский*, Кармир-Блур II, Ереван, 1952, с. 24.

[215] *Ս.Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 75-83:

[216] *Г.А. Меликишвили*, Урартские клинообразные надписи /УКН/, Москва, 1960, No. 27, *Н.В. Арутюнян*, КУКН, No. 38, текст I, стк. 28-31, текст II, стк. 57-62.

[217] *Г.А. Меликишвили*, ук. соч., No. 65, *Н.В. Арутюнян*, ук. соч., No. 82, стк. 23-36.

Տոկիոյի թանգարաններից մեկում պահվող ուրարտական բրոնզից գոտին ունի հետաքրքիր պատկերազարդում[218]: Պատկերված է ծիսական արարողությունների շարք, որտեղ ներկայացված են թևավոր առյուծներ, մարդու դեմքով թռչուններ, այծեր, կենաց ծառեր: Մարդկային պատկերները՝ աստված, թագավոր և քուրմ, կատարում են ծիսական արարողություն՝ ձեռքերին բարձր պահած գավաթներով: Երկու ֆիգուրների՝ կնոջ և տղամարդու միջև պատկերված է հենակի վրա դրված կարաս, իսկ շքեղ հագուստով մարդիկ աջ ձեռքերին պահած գավաթներով սրբազան գինին լցնում են կարասի մեջ: Այստեղ մենք գործ ունենք գինով հեղման ծիսական արարողության հետ, որը, որպես կանոն, կատարվում էր բարձրաստիճան հոգևորականների՝ քրմերի կամ իշխանավորների կողմից: Սարգոն II-ի կողմից Վանի թագավորություն կատարած արշավանքի մասին թողնված տեքստերում նշվում է, որ Մուծածիրի, Խալդի աստծո տաճարի առջև կար հսկայական կաթսա, որը ուրարտական թագավորները լցնում էին աստվածներին զոհաբերելու համար նախատեսված սրբազան հեղուկով՝ գինով: Նման տեսարաններ ունենք Վանի թագավորության տարբեր հուշարձաններից հայտնաբերված բարձրաքանդակների վրա, ուր պատկերված են ուրարտացիներ՝ գինով, կրակով և հեղուկով աստվածներին մատուցվող զոհաբերության ժամանակ: Բացի գինուց, Խալդի աստծուն զոհաբերվել են կենդանիներ, զենքեր:Արագածում պեղված պաշտամունքային շինությունների մանրամասների քննությունը թույլ է տալիս ասելու, որ գործ ունենք ուրարտական կանոնիկ ծիսակատարություններին բնորոշ դրսևորումների հետ:

[218] *K. Tanabe, A. Hori, T. Hayashi, S. Miyashita, K. Ishida,* Studies in Urartian bronze objects from Japanese collections, Tokyo, 1982, vol. 4, fig. i, 28.

ԳԼՈՒԽ IV

ԱՐԱՄՈՒՍ

§ 1. ԱՄՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի Արամուսի հնագիտական արշավախումբը 1988թ. սկսեց ՀՀ Կոտայքի շրջանի Արամուս գյուղի հարավ-արևմտյան ծայրամասում տեղադրված ուրարտական ամրոցի պեղումները[219] (Աղ. 99): (Նկ. 12-14):

Մինչ այդ ամրոցում մասնակի ուսումնասիրություն էր կատարվել հնագետ Է. Վ. Խանզադյանի կողմից[220]: Հուշարձանը տեղադրված է բազալտե զանգվածեղ հզոր ժայռաբլուրներից կազմված թամբաձև տեղանքի վրա:

Ավելի քան 70 մ բարձրությամբ, արևելքից-արևմուտք ձգվող բլրաշարի վրա վեր են խոյանում երբեմնի ահռելի ամրոցի ավերակները: Համալիրը բաղկացած է երկու խոշոր՝ արևելյան և արևմտյան հատվածներից: Արևելյան մասում կառուցվել են վերին և ստորին միջնաբերդերը: Վերին միջնաբերդը հատակագծում ուղղանկյուն, 20-30 մ լայնքով, արևելքից արևմուտք ձգվող առանցքով, շուրջ 6,5 հա տարածք ընդգրկող, բազմաթիվ կառույցներից և շինություններից կազմված ամրաշինական համակարգ է: Վերջինս օղակված է մի քանի տասնյակի հասնող որմնահեծերից և աշտարակներից բաղկացած՝ 2,1-5,5 մ հաստությամբ պարսպապատերով: Պարսպապատերից՝ մինչև 1,05մ առաջ եկող որմնահեծերն ունեն 3-5-8մ երկարություն: Տեղանքի որոշ հատվածներում ժայռերը հարթեցված են: Պարսպապատերի ամրությունն ապահովելու համար տեղ-տեղ կառուցվել են մեկից մինչև երեք շարք աստիճանաձև հենապատեր: Վերին միջնաբերդի արևելյան և արևմտյան ճակատային պարսպապատերի մեջ բացվել են կողային աշտարակներով ամրացված մուտքեր:

Ստորին միջնաբերդը հանդիսանում է վերը նկարագրված համալիրի օրգանական շարունակությունը: Զբաղեցնելով 3 հա տարածություն, այն ուղղված է արևելքից արևմուտք և արևելյան հատվածում միաձուլվում է վերին միջնաբերդի արևմտյան մուտքին: Հատակագծում ձգված ուղղանկյան տեսքի ստորին միջնաբերդը շուրջ 20 մ ցածր է տեղադրված վերինից: Քննարկվող համալիրն ունի 30 մ լայնություն և վերին միջնաբերդի նման շրջապատված է տեղանքի գծագրությանը համապատասխանող պարսպապատերով: Կրկնելով վերին միջնաբերդի կառուցողական մանրամասները, այն արևմտյան պարսպապատի կենտրոնական հատվածում ունի հզոր

[219] *Հ.Գ. Ավետիսյան,* Արամուսի բիայնական ամրոցի պեղումները, զեկուցումների թեզիսներ. Երևան 1989, էջ 60-62:
[220] *Է. Խանզադյան,* Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 11:

մուտք, որի հյուսիսային և հարավային հատվածներում կառուցվել են խոշոր անկյունային աշտարակներ:

Ամրոցի արևմտյան հատվածը համեմատաբար վատ է պահպանվել: Շուրջ 1,5 հա տարածք ընդգրկող այս համալիրը շրջափակված է բազալտե հզոր պարսպապատերով, որը հավանաբար «բակի» դեր է կատարել: Ամրոցի արևմտյան հատվածն ունի արևելք-արևմուտք ուղղվածություն և ստորին միջնաբերդից բաժանվում է 12 մ լայնությամբ հյուսիս հարավ ձգվող փողոցով:

Շուրջ 25 հա ընդգրկող ամրոցի տարածքը տեղանքի գծագրությանը համապատասխան բաղդատվում է դարավանդների, որոնք, մասնավորապես միջնաբերդի հյուսիսային և հարավային թևերում, իրարից հեռանում են 70-100 մ: Դարավանդներն իրենց հերթին տեղ-տեղ ամրացված են մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով, որմնահեծերով և աշտարակներով: Նման դարավանդները բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցներին և բնակավայրերին՝ Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի և այլն[221]:

Ուրարտական խոշոր ամրոցների նման Արամուսն ունեցել է քաղաքային հատված, որը սակայն չի պահպանվել: Պարսպապատերն ունեն բազալտե կոպտատաշ հսկայական քարաբեկորներից կրկնակի զրահապատ չոր շարվածք: Պատերի հաստությունը համապատասխանում է ուրարտական ստանդարտին՝ տատանվելով 2,1-5 մ - միջև, պահպանված բարձրությունը 2,5 մ: Պարսպապատերի համար հիմք են հանդիսացել բազալտից ժայռերի հարթեցված ելուստները: Հին վարպետները պատերի ամրությունն առավել ապահով դարձնելու նպատակով, դրանց հիմքի մասում ավելացրել են միաշար - եռաշար հենապատեր: Բացի այս հենապատերից կառուցվել են նաև 3-8 մ երկարությամբ, 1-1,2 մ լայնքով որմնահեծեր, բազմաթիվ քառանկյուն, ուղղանկյուն կցակառույց աշտարակներ, որոնց մի մասն անկյունային են: Ամրոցի առանձին համալիրներն ու շինությունները մեկ մեկու հաղորդակից են հարթ, աստիճանավոր թեքամուտքերով: Միջնաբերդերի առանձին հատվածներում, պարսպապատերի մեջ, որոշակիորեն ընդգծվում են նաև պաշտպանական նկատառումներով «ծուղակի» սկզբունքով կառուցված մուտքեր, անցումներ, որոնք իրենց հատակագծային լուծումներով տիպական են Վանի թագավորության պաշտպանական համակարգի համար:

Արամուսի պաշտպանական համալիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. VIII-VII դարերում ուրարտական ամրաշինությունը վերելք էր ապրում և հասել էր կատարելության: Տարածքի ռացիոնալ օգտագործումը և կանոնավոր նախագծային լուծումները համապատասխանում են հին արևելյան հզոր պետությունների քաղաքաշինության չափանիշներին:

[221] *Հ.Գ. Ավետիսյան,* Արագածի ամրաշինությունը, էջ 41:

§ 2. ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արամուսի վերին միջնաբերդի արևմտյան հատվածում պեղվեց միջնաբերդերը միացնող մուտքը և 7 կացարաններ:

Վերին միջնաբերդի կացարանները պեղելիս հիմնականում բացվել են շինարարական երկրորդ հորիզոնին պատկանող կացարանները: Պեղված սենյակների առանձին հատվածներում հեռացվեցին հատակները՝ պարզելու համար ստորին՝ երրորդ շինարարական հորիզոնի մշակութային պատկանելությունը և ճարտարապետական առանձնահատկությունները: Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ քննարկվող կացարանների հետ մեկտեղ կներկայացվի ստորին շերտում կատարված մասնակի պեղման արդյունքների վերլուծականը:

Կացարան N 1: Գտնվում է մուտքի արևելյան կողմում: Այն հատակագծում ուղղանկյուն է հյուսիս-հարավ կողմնորոշումով, 3,5 x 3,6 մ չափերով, 1,3 մ խորությամբ: Պատերը շարված են կրկնաշար բազալտե միջին մեծությամբ կոպտատաշ քարերով: Հյուսիսային պատի հաստությունը 1,6մ է, հարավայինը, արևելյանը, արևմտյանը՝ 1մ: Սենյակի հյուսիսային պատին կից կառուցված է հենապատ՝ 0,4մ լայնքով, 0,25մ բարձրությամբ, որն ավարտվելով կացարանի հյուսիս-արևելյան անկյունում, միանում է կոպտատաշ, մինչև 0,4 մ-ով պատի մեջ մտած ժայռին: Կացարանի դուռը չի պահպանվել, հավանաբար այն բացվել է արևելյան պատի մեջ, որը խիստ քայքայված է: Սենյակի հատակը սվաղված է կամ սալապատ: Հատակին, մոխրի հետ մեկտեղ հաստատագրվեցին կավե կլորացող օջախի հետքեր, ինչպես նաև թափված հում աղյուսի մնացորդներ: Գտնված հնագիտական նյութը կազմված է սև, գորշ և կարմրագույն խեցեղենի բեկորներից, երկաթե մանգաղաձև դանակից (Աղ. 110, նկ. 6), աշխատանքային քարե գործիքներից (սանդեր, աղորիքներ) խոշոր և մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներից:

Շերտագրական պատկերը պարզելու նպատակով սենյակի հարավ արևմտյան անկյունում հեռացվեց հատակը 1 x 1մ չափի մակերևույթով, 0,5 մ խորությամբ: Հեռացված հատակի տակ հաստատագրվեց 0,2 մ հաստությամբ մոխրաշերտ, որին հաջորդում է մշակութային ստորին շերտը: Երրորդ շինարարական հորիզոնից գտնված հնագիտական գտածոները՝ հիմնականում խեցեղեն, նույնությամբ կրկնում են երկրորդ շերտից գտնված նյութերը: Հատկանշական է, որ երկրորդ շինարարական հորիզոնի հարավային պատը կառուցվել է դեռևս միջնաբերդի ստորին հորիզոնի կառուցապատման ժամանակաշրջանում: Բացված փոսորակի հատակը տոփանված է և սվաղապատ:

Կացարան N 2: Գտնվում է N 1 սենյակի հարավային կողմում: Այն հատակագծում ուղղանկյուն է՝ 5,3 x 2,8 մ չափերով, արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Մշակութային շերտի հզորությունը

մուտք, որի հյուսիսային և հարավային հատվածներում կառուցվել են խոշոր անկյունային աշտարակներ:

Ամրոցի արևմտյան հատվածը համեմատաբար վատ է պահպանվել: Շուրջ 1,5 հա տարածք ընդգրկող այս համալիրը շրջափակված է բազալտե հզոր պարսպապատերով, որը հավանաբար «բակի» դեր է կատարել: Ամրոցի արևմտյան հատվածն ունի արևելք-արևմուտք ուղղվածություն և ստորին միջնաբերդից բաժանվում է 12 մ լայնությամբ հյուսիս հարավ ձգվող փողոցով:

Շուրջ 25 հա ընդգրկող ամրոցի տարածքը տեղանքի գծագրությանը համապատասխան բաղդատվում է դարավանդների, որոնք, մասնավորապես միջնաբերդի հյուսիսային և հարավային թևերում, իրարից հեռանում են 70-100 մ: Դարավանդներն իրենց հերթին տեղ-տեղ ամրացված են մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով, որմնահեծերով և աշտարակներով: Նման դարավանդները բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցներին և ընակավայրերին՝ Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի և այլն[221]:

Ուրարտական խոշոր ամրոցների նման Արամուսն ունեցել է քաղաքային հատված, որը սակայն չի պահպանվել: Պարսպապատերն ունեն բազալտե կոպտատաշ հսկայական քարաբեկորներից կրկնակի զրահապատ չոր շարվածք: Պատերի հաստությունը համապատասխանում է ուրարտական ստանդարտին՝ տատանվելով 2,1-5 մ - միջև, պահպանված բարձրությունը 2,5 մ: Պարսպապատերի համար հիմք են հանդիսացել բազալտից ժայռերի հարթեցված ելուստները: Հին վարպետները պատերի ամրությունն առավել ապահով դարձնելու նպատակով, դրանց հիմքի մասում ավելացրել են միաշար - եռաշար հենապատեր: Բացի այս հենապատերից կառուցվել են նաև 3-8 մ երկարությամբ, 1-1,2 մ լայնքով որմնահեծեր, բազմաթիվ քառանկյուն, ուղղանկյուն կցակառույց աշտարակներ, որոնց մի մասն անկյունային են: Ամրոցի առանձին համալիրներն ու շինությունները մեկ մեկու հաղորդակից են հարթ, աստիճանավոր թեքամուտքերով: Միջնաբերդերի առանձին հատվածներում, պարսպապատերի մեջ, որոշակիորեն ընդգծվում են նաև պաշտպանական նկատառումներով «ծուղակի» սկզբունքով կառուցված մուտքեր, անցումներ, որոնք իրենց հատակագծային լուծումներով տիպական են Վանի թագավորության պաշտպանական համակարգի համար:

Արամուսի պաշտպանական համալիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. VIII-VII դարերում ուրարտական ամրաշինությունը վերելք էր ապրում և հասել էր կատարելության: Տարածքի ռացիոնալ օգտագործումը և կանոնավոր նախագծային լուծումները համապատասխանում են հին արևելյան հզոր պետությունների քաղաքաշինության չափանիշներին:

[221] *Հ.Գ. Ավետիսյան,* Արագածի ամրաշինությունը, էջ 41:

§ 2. ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արամուսի վերին միջնաբերդի արևմտյան հատվածում պեղվեց միջնաբերդերը միացնող մուտքը և 7 կացարաններ:

Վերին միջնաբերդի կացարանները պեղելիս հիմնականում բացվել են շինարարական երկրորդ հորիզոնին պատկանող կացարանները: Պեղված սենյակների առանձին հատվածներում հեռացվեցին հատակները՝ պարզելու համար ստորին՝ երրորդ շինարարական հորիզոնի մշակութային պատկանելությունը և ճարտարապետական առանձնահատկությունները: Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ քննարկվող կացարանների հետ մեկտեղ կներկայացվի ստորին շերտում կատարված մասնակի պեղման արդյունքների վերլուծականը:

Կացարան N 1: Գտնվում է մուտքի արևելյան կողմում: Այն հատակագծում ուղղանկյուն է հյուսիս-հարավ կողմնորոշումով, 3,5 x 3,6 մ չափերով, 1,3 մ խորությամբ: Պատերը շարված են կրկնաշար բազալտե միջին մեծությամբ կոպտատաշ քարերով: Հյուսիսային պատի հաստությունը 1,6մ է, հարավայինը, արևելյանը, արևմտյանը՝ 1մ: Սենյակի հյուսիսային պատին կից կառուցված է հենապատ՝ 0,4մ լայնքով, 0,25մ բարձրությամբ, որն ավարտվելով կացարանի հյուսիս-արևելյան անկյունում, միանում է կոպտատաշ, մինչև 0,4 մ-ով պատի մեջ մտած ժայռին: Կացարանի դուռը չի պահպանվել, հավանաբար այն բացվել է արևելյան պատի մեջ, որը խիստ քայքայված է: Սենյակի հատակը սվաղված է կամ սալապատ: Հատակին, մոխրի հետ մեկտեղ հաստատագրվեցին կավե կլորացող օջախի հետքեր, ինչպես նաև թափված հում աղյուսի մնացորդներ: Գտնված հնագիտական նյութը կազմված է սև, գորշ և կարմրագույն խեցեղենի բեկորներից, երկաթե մանգաղածև դանակից (Աղ. 110, նկ. 6), աշխատանքային քարե գործիքներից (սանդեր, աղորիքներ) խոշոր և մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներից:

Շերտագրական պատկերը պարզելու նպատակով սենյակի հարավ արևմտյան անկյունում հեռացվեց հատակը 1 x 1մ չափի մակերևույթով, 0,5 մ խորությամբ: Հեռացված հատակի տակ հաստատագրվեց 0,2 մ հաստությամբ մոխրաշերտ, որին հաջորդում է մշակութային ստորին շերտը: Երրորդ շինարարական հորիզոնից գտնված հնագիտական գտածոները՝ հիմնականում խեցեղեն, նույնությամբ կրկնում են երկրորդ շերտից գտնված նյութերը: Հատկանշական է, որ երկրորդ շինարարական հորիզոնի հարավային պատը կառուցվել է դեռևս միջնաբերդի ստորին հորիզոնի կառուցապատման ժամանակաշրջանում: Բացված փոսորակի հատակը տոփանված է և սվաղապատ:

Կացարան N 2: Գտնվում է N 1 սենյակի հարավային կողմում: Այն հատակագծում ուղղանկյուն է՝ 5,3 x 2,8 մ չափերով, արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Մշակութային շերտի հզորությունը

հասնում է մինչև 0,5 մ: Կացարանի պատերն ունեն 1,2 մ լայնք, իսկ արևմտյանը և հարավայինը՝ միջնաբերդի մուտքի հարավային կողմի աշտարակի, հարավային պարսպապատի կողապատերն են: Կացարանի արևելյան պատը, ուր պիտի տեղադրված լիներ սենյակի մուտքը, խիստ քայքայված է: Ամբողջ հատակը հարթեցված է բազալտե քարաբեկորներով, որը պատված է տոփանված հողալիցքով: Պեղումներից հայտնաբերված հնագիտական սակավաթիվ գտածոները բեկորային են, ներկայացված բնորոշ խեցանոթներով, բազալտից թասով, վանակատե ցլեփներով:

Կացարան N 3: Գտնվում է վերին միջնաբերդի հյուսիս-արևմտյան անկյունում, մասամբ N 1 կացարանի և հյուսիսային պարսպապատի միջև: Այն հատակագծում քառակուսի է՝ 6,5 x 6,5 մ - չափերով, մինչև 1,6 մ խորությամբ: Կացարանը արևմտյան մասով հարում է մուտքի հյուսիսային աշտարակին: Հյուսիսային պատը (պարսպապատ է հանդիսանում) ունի 2,1 մ, հարավայինը և արևելյանը՝ 1,6 մ հաստություն: Սենյակի հարավային պատին կից բացվեց լավ մշակված սալ քարերից (առանձին դեպքերում սվաղված) 1,2 մ - լայնքով, հարթակ: Կացարանի արևելյան պատին կից շարված է 0,3 մ լայնքով միաշար հենապատ: Սենյակի հատակը տոփանված է և վրայից սվաղված՝ 0,15 մ հաստությամբ կավաշերտով: Պեղումների ժամանակ կացարանից հայտնաբերվել են հում աղյուսի բեկորներ, այրված առաստաղի մնացորդներ: Հարթակի վրա գտնվեցին վարդագույն տուֆից սյուն-կուռքեր: Հնագիտական գտածոները ներկայացված են խոշոր կարասների, կարմիր անգոբապատ, սև փայլեցված՝ տարբեր նախշազարդով հարդարված կճուճների, սափորների, թասերի բեկորներով: Հայտնաբերվել են կավից կլոր օջախի մոխրապատ մնացորդ, բազալտից լավ մշակված աղորիքներ, սանդեր, վանակատե շեղբեր, խոշոր և մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ: Հիշարժան է նաև 0,8մ լայնքով բրոնզից գոտու բեկորը (Աղ. 110, նկ. 9):

Կացարանի շերտագրական հարցերի պարզաբանման նպատակով հյուսիսային պատի երկարությամբ, շուրջ 1,8 մ լայնքով հեռացվեց երկրորդ շինարարական հորիզոնի հատակը: Վերջինից անմիջապես սկսվում է 0,2 մ հաստությամբ այրված հողաշերտ: Ստորին հորիզոնի հնագիտական շերտի հզորությունը կազմում է 0,5 – 0,7 մ: Հատակը սվաղված է կավաշերտով, որի վրա գտնվեց կարմիր տուֆից ջրատարի բեկոր: Խողովակի կենտրոնով արված է 0,5 մ խորությամբ ակոս: Հեռացված շերտի ուսումնասիրությամբ պարզվեց, որ երկրորդ շինարարական հորիզոնի հյուսիսային և արևմտյան պատերը առանց փոփոխության սկսվում են ստորին շերտից, հավանաբար ընդգրկելով նույն տարածքը, ինչը որ առկա է N 3 կացարանի հատակագծային լուծումներում: Ըստ երևույթին, վերոհիշյալ

հարթակը կառուցվել է դեռևս ստորին հորիզոնում, հետագայում աննշան փոփոխություններով շարունակելով նույն ֆունկցիան: Պեղամասից հայտնաբերված հնագիտական նյութերը ներկայացված են տարբեր չափի և ձևի խեցանոթների բեկորներով, բազալտե աշխատանքային գործիքներով, վանակատե ցլեփներով, խոշոր և մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներով:

Կացարան N 4: Գտնվում է N 3 կացարանից արևելք, ուղղված է արևելքից-արևմուտք: Հատակագծում ուղղանկյուն է՝ 10 x 7 մ չափերով, պատերի պահպանված բարձրությունը 0,5-0,7 մ: Սենյակի պատերն ունեն հետևյալ լայնությունը՝ արևմտյանը՝ 1,6 մ, արևելյանը՝ 1,2 մ, հարավայինը՝ 1 մ, իսկ հյուսիսայինը հանդիսանում է վերին միջնաբերդի հյուսիսային պարսպապատը: Կացարանի հարավ-արևմտյան հատվածում բացվեց բազալտե կոպտատաշ քարերից, չոր շարվածքով կառուցված անկյունային մույթ: Հյուսիս-հարավ կողմնորոշմամբ 2,8 x 1,2 x 0,7 չափերի նշված շինությունը ծառայել է որպես տանիքի ծանրությունը կրող կոնստրուկցիա: Մույթից 1,7 մ հեռավորությամբ, հարավային պատի մեջ բացվեց 0,8 մ լայնքով սալապատ հատակով դուռ: Կացարանի հատակը հիմնականում սվաղված է, տեղ-տեղ սալապատ, որի վրա, սենյակի հարավ արևելյան անկյունից 1,5 մ հեռավորությամբ, հաստատագրվեց կավից՝ կլորացող կողերով, մոխրաշերտով պատված օջախ: Կացարանից հայտնաբերվեցին սև, կարմիր անգոբապատ բազմաթիվ խեցանոթների բեկորներ, աշխատանքային գործիքներ, խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորներ: Հնագիտական գտածոների շարքում առանձնանում է կարմիր տուֆից, ընդգծված դիմային մանրամասներով մարդու արձանի գլուխը:

Պեղումների ընթացքում հեռացվեց N 4 կացարանի հատակը, որը շերտագրորեն համապատասխանում է երկրորդ շինարարական հորիզոնին: Այստեղ ամբողջ մակերևույթով հաստատագրվեց հատակին հաջորդող 0,2 մ հաստությամբ մոխրի շերտ: պարզվեց, որ տվյալ հատվածում կառուցվել է երկու կացարան (N N 5, 6): Կացարաններից առաջինը՝ N 5-ը, պեղվեց ամբողջովին, մյուսը՝ մասամբ: Վերջինս ամբողջովին բացելու դեպքում անհրաժեշտություն կառաջանար հեռացնելու երկրորդ շինարարական հորիզոնին պատկանող N 4 կացարանի արևելյան և հարավային պատերը:

Կացարան N 5: Ստորին հորիզոնին պատկանող այս կացարանը տեղադրված է վերին միջնաբերդի հյուսիս-արևմտյան հատվածում: Այն հատակագծում ուղղանկյուն է՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Կացարանի չափերն են 5 x 4,7 մ, (23,5 մ^2 մակերես): Մշակութային շերտի հզորությունը հասնում է շուրջ 1,5 մ: Կացարանի պատերը շարված են համեմատաբար փոքր չափերի բազալտե կիսակոպտատաշ քարերով, առանց շաղախի, երկշար չոր շարվածքով: Կացարանի արևմտյան պատի հաստությունը կազմում է 1մ,

արևելյանինը՝ 0,8 մ, հարավայինը՝ 0,65 մ, իսկ հյուսիսայինը հանդիսանում է միջնաբերդի պարսպապատը: Շինության հյուսիս-արևելյան անկյունում, արևելյան պատին կից՝ կառուցված է միաշար՝ 0,25 մ լայնությամբ, 1,1 մ երկարությամբ կավով սվաղված հենապատ, որը ծառայել է նաև որպես նստարան: Սվաղի 3-5 սմ հաստությամբ հետքեր պահպանվել են արևելյան և հարավային պատերի առանձին հատվածներում: Հատկանշական է, որ հարավային պատի պահպանված սվաղի վրա նշմարվում են սև ներկի հետքեր: Նման պատկեր առկա է նաև Օշականում: Սենյակի հատակն ամուր տոփանված է հողով, վրայից կավածեփով սվաղված: Այստեղ հաստատագրվեց պատերից թափված հում աղյուսի բեկորներ: Կացարանի հյուսիսային մասում (հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան անկյուններից համապատասխանաբար 2,8 x 3,6 մ հեռավորությամբ) բացվեց կիսով չափ հողի մեջ խրված 0,25 մ բարձրությամբ, 0,4 մ տրամագծով բազալտե կոպտատաշ, սյան կլոր խարիսխ: Վերջինիս մոտ հայտնաբերվեցին կավից կլորացող օջախի, ինչպես նաև տանիքից թափված հարդախառն կավե այրված առաստաղի մնացորդներ: Ներկայացվող սենյակն ունի երկու դուռ: Հատակից 0,25 մ բարձրության վրա, արևելյան պատի մեջ՝ կացարանի հյուսիս-արևելյան անկյունից 2,7 մ հեռավորությամբ բացվող դռան լայնքը 0,75 մ է, որի հատակը սալապատ է: Երկրորդ դուռը բացվեց հարավային պատի մեջ, կացարանի հարավ-արևելյան անկյունից 1,5 մ - հեռավորության վրա: Հատակից 0,3 մ բարձրության վրա բացվող այս դուռը սալահատակ է, խնամքով կառուցված: Հետաքրքիր է, որ ստորին մասում բացվածքը կազմում է 0,6 մ իսկ պահպանված վերին հատվածում՝ 0,45 մ: Շուրջ 1,4 մ բարձրությամբ պահպանված քարերի վերջին երկու շարքերն ունեն որոշակի կորություն, որը հնարավորություն է տալիս մտածելու վերջինիս կամարաձևության մասին: Դռան բացվածքն ամբողջովին լցված էր մոխրաշերտով: Կացարանում, անմիջապես դռան առջև, բացվեց 2,8 մ քառակուսի մակերևույթով, ուղղանկյուն, լավ մշակված բազալտե ժայռաբեկորից հարթեցված հարթակ: Կիսով չափ հատակի մեջ խրված հարթակի ողորկ մակերեսի կենտրոնում տեղադրված է գորշ կարծր տուֆից, քառակուսի՝ 0,45 x 0,45 x 0,45 մ չափերի զոհասեղան: Այն ստորին մակերևույթով, կավե շաղախի օգնությամբ ամրացվել է հարթակին: Վերջինս զոհասեղանի հետ միասին ծածկված էր մոխրաշերտով: Այստեղից գտնվեցին խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորներ, որոնցում առանձնանում է ցլի ամբողջական գանգը: Նույն տեղում, հարթակի վրա, զոհասեղանի հյուսիսային պատին հենված՝ բացվեց կարմրավուն տուֆից, կտրվածքում կլոր 0,35 մ երկարությամբ սյուն-կուռք: Հայտնաբերվեց կարծր բազալտից, դիմային որոշ մանրամասների ընդգծումով մարդու արձանի գլուխ, որի ծոծրակից սկսվում է կոնաձև ելուստ, գլխին՝ գլխարկ: Բացի նշվածից, գտնվեցին

երկաթից դաշույն (Աղ. 110, նկ. 7), բարձրարվեստ ոճավորված վիշապի գլխով շիգդ (Աղ. 110, նկ. 8), բազմաթիվ խեցանոթների բեկորներ, որոնց մեջ աչքի է ընկնում նրբագեղ, փոքրիկ սափորը: Նման սափորները սովորաբար հանդես են գալիս, որպես սրբազան անկյունների, հարթակների ձևավորման պարտադիր ուղեկցող իրեր:

Ներկայացվող կացարանի մանրամասն վերլուծականը թույլ է տալիս ենթադրելու, որ այն հանդիսացել է սրբարան: Ըստ ամենայնի այստեղ կատարվել են նվիրատվական ծիսական արարողություններ, զոհաբերություններ՝ նվիրված բիայնական աստվածություններին:

Կացարան N 6: Ստորին հորիզոնին պատկանող N 5 կացարանից արևելք պեղվեց 5,6 x 5,3մ վրա մի տարածք: Մասամբ պեղված այս սենյակում բացվեցին հարավային պատը ամբողջովին և միջնաբերդի պարսպապատը, որը նույնանում է կացարանի հարավային պատի հետ: Արևմտյան պատի հաստությունը 0,8 մ է, պահպանված բարձրությունը մինչև 1մ: Վերջինիս կենտրոնական մասում բացվեց 0,7 մ լայնքով դեպի N 5 կացարանը տանող դուռ: Պեղված սենյակի հատակը մասամբ սալապատ է, տեղ-տեղ պահպանվել են սվաղի (5 մմ հաստությամբ) հետքեր: Կացարանի մշակութային շերտի հզորությունը 1,3 մ է, իսկ հատակը սրբարանի հատակից բարձր է 0,25 մ: Այստեղից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ անկանոն թափված հում աղյուսի բեկորներ: Սենյակի արևմտյան պատին կից պեղվեցին երկու օջախներ: Առաջինը կավից է: Ունի կլորացող շուրթ, ուղղանկյուն է՝ 0,4 x 0,25 x 0,15 մ չափերով: Նման օջախը ձևով եզակի է և առայժմ չունի զուգահեռներ համաժամանակյա հուշարձաններում: Երկրորդ օջախը գտնվում է առաջինից հարավ: Այն կլորացող է, կառուցված տափակ գետաքարերից: Ի տարբերություն առաջինի, այն գետնափոր չի, իսկ տրամագիծը հասնում է 0,5 մ-ի: Միմյանց կպած օջախների մոտ հայտնաբերվեցին 0,4 մ բարձրությամբ, մոխրապատ կարմիր տուֆից, կտրվածքում ուղղանկյուն և սեղանաձև երկու կանգնած սյուն-կուռքեր: Բացվեց մեծ քանակությամբ կենդանիների այրված ոսկորներ: Երկրորդ օջախից հայտնաբերվեց օղակաձև նստուկով բազալտից թասի բեկոր, ինչպես նաև կարմիր տուֆից ոչ մեծ հալոց: Սենյակից գտնվել են մեծ քանակությամբ տարբեր ձևերի խեցանոթների բեկորներ, վանակատից ցլեփներ, երկաթից նետասլաք: Նշված կացարանն անմիջականորեն առնչվում է N 5 կացարանի հետ, հանդիսանալով միևնույն համալիրի բաղկացուցիչ մասը:

Բացի նշվածին, աշխատանքներ տարվեցին նաև առաջին՝ վերին շինարարական հորիզոնին պատկանող սենյակները պեղելու նպատակով: N 4 կացարանից (երկրորդ հորիզոն) հարավ, շուրջ 80 մ քառակուսի տարածքով բացվեցին շինարարական առաջին հորիզոնին պատկանող ուժեղ տոփանված, առանձին տեղերում սալա-

պատ հատակներ: Մշակութային շերտի բավականին թույլ պահպանվածության պատճառով, ոչ մի շինարարական կառույցի հետքեր չհաստատագրվեց: Միայն N 4 կացարանից հարավ-արևմուտք ընկած տարածքում բացվեց 2,5 մ երկարությամբ, 1,6 մ լայնքով պատի հիմքի քարերի շարք: Այն միաշար է 0,15 - 0,25մ բարձրությամբ, հյուսիս-հարավ ուղղվածությամբ: Տվյալ պատի արևելյան ճակատի մոտ 0,5 մ վրա առկա էին կավե օջախի մնացորդներ: Պեղված երրորդ շինարարական հորիզոնի մշակութային շերտի հզորությունը կազմում է 0,15 - 0,25 մ, որտեղից հայտնաբերվեցին մ.թ.ա. 7-րդ դարի խեցանոթների բեկորներ: Սրա հետ մեկտեղ գտնվեցին բազալտից աղորիքներ, տուֆից սյուն-կուռքերի առանձին մասեր, խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորներ, վանակատից շեղբեր և գլեփներ: Հատակին հաստատագրվել են հում աղյուսի բեկորներ:

Կացարան N 7: Տեղադրված է N 4 սենյակից անմիջապես հարավ: Իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյուն արևելք-արևմուտք կողմնորոշումով 10 x 3 մ չափերով շինություն: Մշակութային շերտի հզորությունը կազմում է 0,5-0,7 մ: Սենյակի հյուսիսային և հարավային պատերի երկարությունը 10 մ է, հաստությունը՝ 1մ: Արևմուտքից կացարանի պատն ընկած է վերին շերտի՝ 2,5 x 1,6 մ - չափերով հիշատակված պատի տակ: Պատն ունի հյուսիս-հարավ կողմնորոշում, 1,8 մ երկարություն և 1,2 մ լայնք: Հարավային պատից 1,2 մ հեռավորությամբ ընդհատվելով, այն միևնույն ժամանակ մույթի նշանակություն է ունեցել: Հյուսիսային պատի մեջ, կացարանի հյուսիս-արևմտյան անկյունից 1,2 մ հեռավորությամբ բացվեց սալահատակ դուռ, որն երկրորդ շինարարական հորիզոնին պատկանող երկու կացարանները՝ N 7 և N 4 հաղորդակից է դարձնում միմյանց: Դռան բացվածքը 0,8 մ է: Սենյակի հատակը կավով սվաղված է, առանձին դեպքերում սալապատ: Արևմտյան պատի մոտ հաստատագրվեցին կավից օջախի և մոխրի հետքեր:

Ի տարբերություն երկրորդ և երրորդ շինարարական հորիզոնների, առաջին և երկրորդ մշակութային շերտերն իրարից չեն բաժանվում մոխրաշերտով: Այս սենյակից հայտնաբերված հնագիտական նյութի մեջ առանձնանում են սև և կարմիր անգոբապատ տարբեր ձևերի և չափերի խեցանոթների բեկորները, վանակատից գլեփները, խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորները, ինչպես նաև ոսկորից կոճակը: Պեղված միջնաբերդի մուտքը՝ որպես հանգուցային օղակ նախագծվել և առանձնակի խնամքով է կառուցվել, հաշվի առնելով առաջին հերթին տեղագրական, ապա նաև պաշտպանական սկզբունքները: Նշված միջնաբերդի արևմտյան մուտքը բացվում է նույն պարսպապատի կենտրոնական հատվածում, որի անմիջական հյուսիսային և հարավային կողամասերում կոպտատաշ խոշոր բազալտե քարերով կառուցվել են ոչ մեծ չափերի (4,4 x 3,4 մ)

անկյունային, հատակագծում ուղղանկյուն աշտարակներ (պահպանված բարձրությունը 2,5 մ): Աշտարակների միջև բացված մուտքի լայնքը կազմում է 3 մ, որը եռաշար, սրբատաշ տուֆաքարերով պատված աստիճանավանդակով տանում է դեպի միջնաբերդի բնակելի համալիրները: Աստիճանները սև և կարմրավուն տուֆից լավ մշակված սալաքարեր են, որոնք ունեն 0,25-0,3 մ հաստություն, 0,7 մ - լայնք, իսկ առանձին քարերի երկարությունը հասնում է մինչև 1,2 մ:

Պեղված կացարանների կառուցողական, շինարարական մանրամասների համեմատական վերլուծականը հնարավորություն է ընձեռում անելու մի քանի դատողություններ: Նախ, ակնհայտ է, որ Արամուսի ուրարտական ամրոցում փաստագրվում են շինարարական երեք փուլեր: Կացարանների շինարարական հորիզոնների շերտագրությունը ցույց է տալիս, որ Արամուսը գոյատևել է մ.թ.ա. VIII - դարից մինչև ուրարտական պետության կործանումը: Ամրոցի հիմնադրումը, հավանաբար պետք է վերագրել Արգիշտի I-ին, որն իր թագավորության հինգերորդ տարում արշավեց Ուլուանի երկրի վրա, գրավելով նրա կենտրոնը՝ քաղաք Դարանին[222]: Հանրահայտ է, որ ուրարտական նվաճումների հետևանքով, որևէ խոշոր ստրատեգիական քաղաք գրավելուց հետո, այն եթե չէր ձևափոխվում և օգտագործվում, ինչպես օրինակ Լճաշենինը, ապա տեղում կամ մոտակայքում, կառուցում էին նոր ամրոց՝ քաղաք: Նման պատկեր է ուրվագծվում նաև Արամուսի միջնաբերդի ուսումնասիրության ժամանակ: Ինչ վերաբերում է վերին միջնաբերդի շինարարական հորիզոնների ժամանակագրությանը, ապա ակնառու է պաշտպանական պարիսպների, աշտարակների, որմնահեցերի համաժամանակյա գոյությունը մշակութային ստորին շերտի կառույցների շինարարական փուլի հետ, որոնք հարատևել են VIII դարից մինչև VII դարի սկիզբը:

Երկրորդ շինարարական հորիզոնի կառույցները, որոնք առավել ամբողջական են ուսումնասիրված պեղված հատվածներում, իրենց պատերի պահպանվածությամբ և հատակների համեմատականով, չնչին տարբերությամբ, գտնվում են միևնույն մակարդակի վրա (N N 1, 4, 7): Բացի այդ, ուսումնասիրված կացարանները կառուցվել են շուրջ 0,2 մ հաստությամբ համատարած հաստատագրվող մոխրաշերտի վրա:

Հիշարժան է աստիճանաձև մուտքի և երկրորդ հորիզոնի, մասնավորապես, N 1 կացարանի հարաբերակցության հարցը: Պեղումներից պարզվեց, որ հետագայում, մոխրաշերտին հաջորդող փուլում, մուտքը արևելյան կողմից փակվել է 1 մ հաստությամբ միջանկյալ պատով (N 1 կացարանի արևմտյան պատ) կորցնելով իր կիրա-

[222] *Н.В. Арутюнян,* Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 208-212, *Г.А. Меликишвили,* Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 259.

ական նշանակությունը: Աստիճանավանդակով կառուցապատված աշտարակների միջև բացվող մուտքը, երկրորդ շինարարական հորիզոնի հետ գոյատևել է որպես վերին միջնաբերդի արևմտյան պարսպապատի լոկ մի հատված:

Երկրորդ շինարարական հորիզոնի պեղված կառույցների որոշակի հատվածներ, մասնավորապես կացարանների պատերն ունեն նույն կոնստրուկցիոն առանձնահատկությունները, ինչ որ ստորինում: Այս փաստերը վկայում են, որ չնայած շինությունների շերտագրական և ժամանակագրական տարբերությանը, պատերի որոշ հատվածներ համարյա անփոփոխ ձևով, անգամ հիմքի պահպանված հատվածներում օգտագործվել են առաջին և երկրորդ փուլերում (3-րդ և 2-րդ շինարարական հորիզոն): Շերտագրական կտրվածքում (Նկ. 14) նման ակնառու փաստերը բացատրելի են, քանի որ ստորին միջնաբերդի լայնքը 25-30 մ է կազմում: Ազատ կառուցողական տարածական հատակագծային սահմանափակ հնարավորությունների պատճառով, առանձին շինությունների պատեր գործածվել են նույնությամբ, առանց որոշակի փոփոխությունների: Առանձին բացառություն պիտի համարել ստորին հորիզոնի N 5, N 6 շինությունները, որոնք միայն հյուսիսային (պարսպապատ) պատով են ընդհանրանում երկրորդ շինարարական հորիզոնի, N 4 կացարանի կառույցների հետ: Երկրորդ շինարարական հորիզոնին վերաբերող շինությունները նախնական թվագրվում են մ.թ.ա. VII դարի կեսով:

Ինչ վերաբերում է երրորդ շինարարական փուլին, ապա ուսումնասիրված հատվածում շինարարական կառույցները չեն պահպանվել, բացի վերը հիշատակված 2,5 x 1,6 մ չափերի պատից, որը նույնպես օրգանական հարաբերակցության մեջ է N 7 կացարանի արևմտյան պատի հետ: Բացի այս պատից, վերին շինարարական հորիզոնի պեղված հատվածներում բացվել են կավածեփ, երբեմն սալապատ հատակներ: Վերին հորիզոնի նշված մանրամասները խոսում են այն մասին, որ հավանաբար այս փուլով ավարտվում է բիայնական ժամանակաշրջանը Արամուսի ամրոցում, թվագրվելով մ.թ.ա. VII-VI դարերով:

Արամուսի ուրարտական ամրոցի թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրա հիմնադրման ժամանակագրության հետ կապված խնդրի վերլուծականը: Տասը տողից կազմված էլառի արձանագրությունը[223] ունի հետևյալ բովանդակությունը.

/1/ Խալդի աստվածն արշավեց, իր զենքին
/2/ հպատակեցրեց էթիունի երկիրը:

[223] *Է. Խանզադյան*, նշվ. աշխ., էջ 9-10, *Г.А. Меликишвили*, ук. соч., с. 259. Տեքստի թարգմանությունը հայերեն կատարվել է Ն.Վ. Հարությունյանի կողմից, տե՛ս նաև *Н.В.Арутюнян*, КУКН, No. 177.

/3/ Խալդին ուժեղ է, Խալդիի զենքը ուժեղ է:
/4/ Խալդյան զորությամբ արշավեց,
/5/ Արգիշտին, Մենուայի որդին,
/6/ նվաճեց Ուլուանի երկիրը՝
/7/ Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան
/8/ մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին,
/9/ թագավոր /է/ հզոր, թագավոր՝ Բիայնիլիի,
/10/ տերը՝ Տուշպա քաղաքի:

Արամուսի ուրարտական ամրոցից ոչ շատ հեռու տեղադրված Դարանի ամրոցի դիմաց՝ նրա հարավային կողմում Արգիշտի I-ի կողմից թողնված այս արձանագրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Ուրարտուի հզորագույն արքան գրավել է Ուլուանի երկիրը Դարանի քաղաքով:

Ուրարտուի թագավորները, որպես կանոն, խոշոր երկրամասեր և քաղաքներ գրավելուց հետո կառուցում էին(եթե չէին վերակառուցում հինը) նոր քաղաքներ, ամրոցներ, միջնաբերդեր:

Ահա նման պատկեր է ուրվագծվում Արամուսի ուրարտական ամրոցի ուսումնասիրության ժամանակ: Այս ամենը և հնագիտական նյութի վերլուծականը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հետազոտվող ամրոցը կարելի է թվագրել մ.թ.ա. VIII դարով, որը գոյատևել է նաև մ.թ.ա. VI դարում:

Տեղանքի ռացիոնալ օգտագործումը և օպտիմալ նախագծային լուծումները համապատասխանում են Բիայնիլիի շինարարական արվեստի չափանիշներին: Արամուսի պարիսպների հատակագծային առանձնահատկությունները բնորոշող հատկանիշները՝ ուղղագիծ պարսպի հաստությունը, միմյանց որոշակի հեռավորությամբ հաջորդող և պարսպից առաջ եկող որմնահեծերը, աշտարակները բնորոշ են ոչ միայն Արարատյան դաշտին, այլև նախալեռնային և լեռնային շրջանների համալիրներին, ամբողջ Վանի թագավորությանը: Արամուսի բիայնական միջնաբերդի պարիսպներն ունեն էրեբունիի և Արգիշտիխինիլիի միջնաբերդերի պարիսպների նույնատիպ ձևերը:

§ 3. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԸ

Պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոների հավաքածուն բաժանվում է մի քանի խմբի. խեցեղեն, մետաղից առարկաներ, քարից քանդակ, սյունակուռքեր, աշխատանքային գործիքներ, ոսկրե իրեր:

Խեցեղեն. (Աղ. 111, 112): Կազմում է ամենամեծ հավաքածուն, որի մեջ առանձնանում են տարբեր չափերի և ձևերի խեցանոթները:

Իրենց կիրառական նշանակությամբ, հայտնաբերված խեցեղենը բաժանվում է երեք մեծ խմբերի:

1. Երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման և պահպանման համար նախատեսված անոթներ: 2. Կենցաղային սպասք: 3. Հանդիսական-ծիսական խեցեղեն: Ըստ իրենց պատրաստման և հարդարման՝ երեք կատեգորիաներում հանդիպող խեցեղենը բաժանվում է երկու խմբի: Կարմիր, սև փայլեցրած բարձրորակ, անգոբապատ, դուրգով պատրաստված՝ կոպիտ, սև փայլատ մակերևույթով անոթներ:

Առաջին կատեգորիաների մեջ առանձնացված խեցեղենը բաժանվում է հետևյալ տիպերի:

Կարասներ. Իրենցից ներկայացնում են խոշոր և փոքր չափերի ձգված, ուռուցիկ իրանով, հարթ հատակով, լայնաբերան, կլորացող, ուղիղ կտրված շուրթով անոթներ: Զարդամոտիվների համակարգը հիմնականում բաղկացած է ուղղանկյուն, եռանկյուն սուր գագաթներով վեր կամ ներքև ուղղված միաշարք-եռաշարք երկրաչափական պատկերներից, որոնց միջև, ինչպես նաև շուրթի տակ, հաճախ արվում են միաշարք, երկշարք ուռուցիկ հարթ կամ բոլորանախշ հորիզոնական գոտիներ: Այս անոթների շուրթերի վրա հանդիպում են տարբեր ձևի՝ խաչի կամ օղակների պատկերով խազագիծ կամ դաջազարդ նշանագրեր:

Չաներ. Մեծ քանակի, հիմնականում բեկորային այս խեցեղենն ունի սահուն դեպի վեր լայնացող իրան, զանգվածեղ կլորացող, դուրս ճկված կամ ուղիղ շուրթ, հարթ նեղ հատակ:

Սաջ-տապականեր. Տարբեր տրամաչափի այս կարճ խեցանոթներն ունեն լայն, հարթ հատակներ, կլորացող, ուղիղ կողեր, սրացող շուրթեր:

Բացի նշվածից, հայտնաբերվել են նաև գարեջրի պատրաստման անոթների, ծխամանի բեկորներ, որոնց օգնությամբ ծծումբով ծխեցրել են խոշոր անոթները, ապահովելով դրանց ախտահանումը:

Կենցաղային սպասքը ներկայացված է երկու խոշոր խմբերով՝ հասարակ և խոհանոցային խեցեղեն:

Առաջին խմբի խեցանոթների մեջ առանձնանում են սափորները, քրեղանները, թասերը, ինչպես և ճրագները:

Սափորներ. Իրենցից ներկայացնում են ոչ մեծ չափերի, կլորացող ձգված իրանով, կարճ կամ ձգված վզով, նեղ բերանով,հարթ, օղակաձև նստուկավոր հատակներով անոթներ: Քննարկվող սափորների մեջ մեծ տոկոս են կազմում միականք (օյնախոյա) տիպի օրինակները: Միականք սափորների մյուս տիպը ունի կլորացող, դուրս ճկված, երբեմն հարթ շուրթ, իսկ կտրվածքում կլոր կանթերը հարդարված են աստիճանավոր ակոս նախշով:

Քրեղաններ - թասեր. Բեկորային ձևով հանդիպող սպասքի այս նմուշները բաժանվում են երեք տիպի: Կլորացող, դեպի վեր լայնացող և եզրագծված ցածր կողերով անոթներ: Ունեն կլորացող դուրս ճկված, հարթ կտրված շուրթեր և հարթ, ներճկված, օղակաձև նստուկով հատակներ: Որոշ օրինակների իրանների վրա արված են զուգահեռ գծեր, ալիքավոր, զիգզագ ներճկված նախշագոտիներ:

Նշված խեցեղենի հետ մեկտեղ գտնվել են ճրագների, ափսեների, սկուտեղների բեկորներ: Հանդիպում են նաև գլանի ձև ունեցող բաժակներ: Երկրորդ խումբը հիմնականում բաղկացած է կճուճներից: Դրանք ունեն կլորացող, գնդաձև, ձգված իրան, հարթ կամ դուրս ճկված շուրթ, տափակ հատակ: Այս անոթները մրապատ են, իսկ իրանի վերին մասը զարդարված է հորիզոնական՝ մեկից մինչև մի քանի շարք ուղիղ, զիգզագ, ալիքաձև, եղնգանախշ, հասկանախշ դեկորի հորինվածքներով: Կճուճների որոշ օրինակներ ձեռածեփ են:

Հանդիսական-ծիսական սպասքի նմուշները հիմնականում իրենց ձևաբանությամբ նույնանում են վերը քննարկված խեցանոթների հետ՝ տարբերվելով խեցու բարձրորակությամբ: Այս խմբի անոթների մեջ աչքի են ընկնում փոքր չափեր ունեցող սափորները, գավաթները, փիալաները:

Գավաթներ. Սակավ հանդիպող այս խեցանոթներն ունեն կլորացող, ձգված իրան, գլանաձև, փողալայնուկ վիզ, կլոր շուրթ, հարթ հատակ: Որպես կանոն գավաթները երկկանթ են: Կտրվածքում կլոր կանթերի վերին մասում արված են սեպաձև մեկ, կամ երկու ելուստներ: Իրանը վզից անջատող՝ ընդգծված հատվածում կա ներճկված կամ ուռուցիկ գոտի:

Փիալաները ներկայացված են երկու բեկորներով: Դրանք ունեն կլորացող, կարճ եզրագծված, գդալանախշով հարդարված ուռուցիկ կողեր, հարթ շուրթ:

Քննարկվող խեցեղենի մեջ առանձին խումբ են կազմում նրբագեղ տարբեր ձևի անոթները: Դրանք սովորաբար մինչև 0,1մ բարձրությամբ թասեր, սափորներ և սրվակներ են, որոնք օգտագործվել են տարբեր օծանելիքներ, հեղուկներ պահելու համար: Այս անոթների շարքում առանձնանում է N 5 կացարանից հայտնաբերված սև գույնի, անգոբապատ սափորը: Այն ունի ուռուցիկ իրան, կարճ գլանաձև վիզ, կլորացող դուրս ճկված շուրթ, որից սկիզբ է առնում վիզը հարդարող, իրար հաջորդող թույլ փայլանախշով արված ուղղահայաց նախշազարդը:

Հանդիսական, տոնական սպասքի այս օրինակները հարդարել են բնակարանների սրբազան «անկյունները»[224], ինչպես նաև տաճարների, սրբարանների հարթակները: Բացի նշվածից, այս խմբին

[224] *А.А. Мартиросян,* Арташихинили, с. 148.

պատկանող անոթներն օգտագործվել են ծիսական արարողությունների ժամանակ, գինով (հեղուկով) հեղում կատարելով աստվածներին: Նման պատկերներ սովորաբար հանդիպում են ուրարտական գոտիների, բարձրաքանդակների, նվիրատվական թիթեղների, որմնանկարների վրա:

Քննարկվող խեցեղենը, թե՛ կիրառական նշանակությամբ և թե՛ տիպերի բազմազանությամբ իր լայն զուգահեռներն ունի ինչպես Արարատյան դաշտի՝ Արգիշտիխինիլի, Էրեբունի, Կարմիր բլուր, Օշական, Արագած, այնպես էլ Արևմտյան Հայաստանի մի շարք հնավայրերում, Փոքր խնձոր (Կայալի Դերե), Ճմին (Ալթին-թեփե), Վան, Հայկաբերդ (Չավուշ-թեփե) և այլն[225]:

Մետաղե իրեր. Այս խմբի մեջ ընդգրկված բրոնզից և երկաթից առարկաները ներկայացված են զենքի, զարդի, աշխատանքային գործիքների տեսակներով:

Մետաղե գտածոներից հետաքրքիր է բարձրորակ բրոնզե թիթեղից պատրաստված գոտու բեկորը (Աղ. 110, նկ. 9): Այն դրվագման եղանակով զարդարված է մեծ և փոքր ուղղահայաց խաչվող կլոր վարդյակներով, որոնք արևի խորհրդանշան են հանդիսանում: Նման զարդամոտիվներով հարդարված գոտիներ գտնվել են Կարմիր բլուրից, Նոր Արեշից, Մեծամորից, Երևանի բիայնական դամբարանից[226]:

Հաջորդ գտածոն բարձրարվեստ ոճավորված բրոնզից շիգղն է (Աղ. 110, նկ. 8): Այն կազմված է կլորացող, կենտրոնում ուռուցիկ իրանից, որի գլխամասում քանդակված է վիշապի պատկեր, ընդգծված աչքերով, լայն բացված բերանով գծանախշ վզով: Գազանի երախից դուրս է գալիս ասեղը: Այս զարդը պատրաստված է կաղապարով: Նմանօրինակ ոճական առանձնահատկությունով հարդարումը բնորոշ է ուրարտական կիրառական արվեստին, ինչի մասին վառ խոսում են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Նոր Արեշից գտնված օձագլուխ ապարանջանները, զարդերը:

Պեղումներից հայտնաբերվել են նաև երկաթից ոչ մեծ չափի երկու դանակներ (Աղ. 110, նկ. 6, 7), որոնցից մեկը սրածայր է, մյուսը՝ մանգաղաձև շեղբով: Այս տիպի երկաթից դանակները լայն տարածում ունեն Հայաստանի և Անդրկովկասի մ.թ.ա. IX- VIդդ. հնավայրերում:

Քննարկվող երկաթից իրերի վերջին օրինակը ներկայացված է կենտրոնական ողով ուրարտական տիպի նետասլաքով, որը իր բազմաթիվ զուգահեռները ունի Էրեբունիում, Արգիշտիխինիլիում, Կարմիր բլուրում, Օշականում և այլ հուշարձաններում:

Քարե քանդակ. Քննարկվող խմբին պատկանող առարկաները բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպին պատկանող գտածոնե-

[225] *Գ.Գ. Ավետիսյան,* ук. соч., с. 7:
[226] *С.А. Есаян, Л.Н.Биягов, С.Г.Амаякян, А. Г. Канецян,* Биайнская гробница в Ереване, Ереван, 1991, с. 17-18.

ը բազալտից, տուֆից երկու գլուխներ են (Աղ. 179-180), իսկ երկրորդը՝ սև, կարմիր տուֆից սյուն-կուռքեր:

Սրբարանից (N 5) հայտնաբերված բազալտե քանդակն ունի ուռուցիկ ծգված քիթ, խազագծված աչքեր, լայն բերան, կարճ կզակ, որն արծանի դեմքին տալիս է ծվածիր տեսք: Արծանի ծոծրակին արված է ուռուցիկ ելուստ, իսկ ճակատը ավարտվում է գլխարկով: Երկրորդ արծանը կարմիր տուֆից է: Այն ի տարբերություն առաջին օրինակի, ունի կլոր անցքերով արված աչքեր, փոքրիկ բերանի բացվածք, քիչ ծգված քիթ: Գլխի վերին մասը կոտրված է:

Ներկայացված արծանները իրենց ոճական առանձնահատկություններով նմանվում են մ.թ.ա. VIII-VIIդդ. Հայաստանի հնավայրերից հայտնաբերված գտածոներին:

Երկրորդ տիպին պատկանող սև և կարմիր տուֆից կտրվածքում կլոր, խնամքով մշակված սյուն-կուռքերն ունեն 0,3-0,7 մ բարձրություն: Պաշտամունքային նշանակությամբ նման կուռքերը առավելապես հայտնի են Օշականի բնակելի համալիրներից[227]:

Աշխատանքային գործիքներ. Պեղումներից հայտնաբերված այս հավաքածուի մեջ առանձնանում են աշխատանքային գործիքների մի քանի տիպեր:

Առաջին տիպին պատկանող բազալտից կլոր և մակույկաձև աղորիքները ունեն ողորկ մակերես: Մյուս տիպին պատկանող գտածոները ներկայացված են բազալտից մեծ և փոքր սանդերով, սանդկոթերով, տրորիչներով: Բացի վերոհիշյալից, կացարաններից գտնվել են ծակոտկեն բազալտից թասեր: Սրանց մեջ առանձնանում են կլորացող շուրթով, փոքրիկ նստուկով թասի բեկորները:

Վանակատից գտածոների մեջ աչքի են ընկնում կտրվածքում սեղանաձև, եռանկյունի ցլեփները և շեղբերը, որոնց մի մասը ունի ռետուշի հետքեր:

Ոսկրից պատրաստված գործիքները 6սմ երկարությամբ ասեղի, հերունի բեկորներ են: Պեղումներից հայտնաբերվել է նաև ոսկորից կոճակ:

Արամուսի ուրարտական միջնաբերդը կարևոր նշանակություն ունի բիայնական ամրոցների պաշտպանական համակարգում, քանի որ այն բացի պահակակետ լինելուց, նաև Ուլուանի երկրի վարչա-տնտեսական կենտրոններից է: Այն իր ֆունկցիաներով մոտենում է Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի[228] քաղաքներին:

Բլրի գագաթից տեսանելի ազդանշանով կարելի է հաղորդակցվել մի շարք ամրոցների հետ, որոնք գտնվում են ռազմավարական

[227] *С.А. Есаян, А.А. Калантарян,* ук. соч., с. 44:
[228] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 22.

բանուկ ճանապարհների վրա: Արամուսի ամրոցը յուրօրինակ դարբաս է Սևանի ավազանի և Արարատյան դաշտի միջև:

Ընդհանրացնելով պեղված համալիրներից հայտնաբերված հնագիտական գտածոների վերլուծականը, կարելի է մի քանի խոսքով բնութագրել տնտեսության հիմնական ճյուղերը: Ակնառու է, որ Արամուսում բարձր զարգացածության էր հասել երկրագործությունը, որն ի տարբերություն Արարատյան դաշտի, ուներ նախալեռնային շրջանին բնորոշ առանձնահատկությունները: Սրա հետ մեկտեղ բարձր զարգացածության մակարդակի հասած անասնապահությունն առավել ամբողջական էր դարձնում տնտեսական կյանքը, ապահովելով բնակչությանը երկրագործական և անասնապահական մթերքներով: Սրա վառ ապացույց են հանդիսանում վերը նշված բոլոր շինարարական փուլերից առատորեն հանդիպող նյութական մշակույթի ամենատարբեր հավաքածուները:

Արամուսի ամրոցն իր ուրույն տեղն ուներ Վանի թագավորությունում. այն պաշտպանական ամբողջական համակարգի բաղկացուցիչ և հանգուցային հատվածներից էր հանդիսանում՝ ապահովելով անմիջականորեն Արարատյան դաշտի անվտանգությունը[229]:

[229] *Հ.Գ. Ավետիսյան,* Արամուսի ամրաշինական համալիրները, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1997, էջ 124:

ԳԼՈՒԽ V

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Արագածի պեղումներն ի հայտ բերեցին բազմաձև և բազմաբնույթ հնագիտական գտածոներ: Հայտնաբերված նյութական մշակույթի նմուշները կապված են ուրարտական պետության սոցիալ-տնտեսական աննախադեպ զարգացման հետ: Վանի թագավորության տնտեսական հիմքը խարսխված էր զարգացած երկրագործության և անասնապահության վրա, որի համար տարածաշրջանն ուներ բարենպաստ բնակլիմայական պայմաններ: Պետական ստանդարտի ու չափանիշների շրջանակներում արտադրվող ապրանքատեսականին բարձր զարգացած արհեստագործության հետևանք էր հանդիսանում: Երկրում գործում էին մի շարք խոշոր արհեստանոցներ, որոնք կենտրոնացված էին հիմնականում քաղաքներում, բերդամրոցներում, խոշոր վարչատնտեսական կենտրոններում:

Արագածից հայտնաբերված հնագիտական հավաքածուն դասակարգվում է մի քանի խմբի՝ մետաղական, քարե իրեր, խեցեղեն:

§ 1. ՄԵՏԱՂԻՑ ԳՏԱԾՈՆԵՐ

Չնայած Արագածի պեղումներից հայտնաբերված մետաղե իրերը եզակի և հազվագյուտ գտածոներ չեն, բայց և այնպես խոսում են զարգացած արհեստագործության մասին: Հարկ է նշել, որ պեղումների ժամանակ արհեստանոցների հետքեր չեն արձանագրվել:

Արագածի միջնաբերդի N 1 կացարանի հատակին հայտնաբերվեց բարձրորակ բրոնզից՝ 2,5 սմ լայնությամբ, 4 սմ տրամագծով օղ (Աղ. 100, նկ. 25), որից քիչ հեռու գտնվեց բրոնզից փոքրիկ գլխիկով, 2 սմ երկարությամբ գամ: Հավանաբար բրոնզից թիթեղը գամով ամրացվել է փայտից ինչ-որ առարկայի, որը չի պահպանվել: Հնարավոր է, որ այն վերին հարկից միջնաբերդի փլուզման հետևանքով հայտնվել է նկուղային հարկում: Հաջորդ առարկան գտնվեց N 6 կացարանից: Այն երկաթից փականի մաս է, որի ծայրը կեռ է, իսկ ծողի սկիզբն իրենից ներկայացնում է 1,2 սմ տրամագծով օղակ (Աղ. 105, նկ. 11): Գտածոն ժամանակին ամրացվել է երկրորդ հարկի փայտե դռանը, կատարելով փականի դեր: Նմանատիպ փականները լայն կիրառություն ունեն նաև ներկայումս, նամանավանդ գյուղական բնակավայրերում:

1946 թ. Կարմիր բլուրի[230] պեղումների ժամանակ, միջնաբերդի հյուսիսային մասում բացված միջանցքում հայտնաբերվեց բարձրո-

[230] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, рис. 24, *նույնի* Кармир-Блур /альбом/ Ленинград, 1970, рис. 25,26, *նույնի* Кармир-Блур I, Ереван, 1950 с. 58.

ռակ բրոնզից մի փական, որը արտաքին տեսքով նման է Արագածից հայտնաբերված օրինակին: Թեյշեբաինից հայտնաբերված բազմաթիվ գտածոների մեջ այս օրինակը կազմված է մեծ և փոքր օղակներից, ձողից: Փոքր օղակին հարմարացվել է երկաթից ամրակ, որով փականը ամրացվել է դռանը, իսկ մեծ օղակի վրա կա սեպագիր արձանագրություն՝ «Ռուսա, Արգիշտիի որդի, Թեյշեբաինի քաղաքի զինանոց» բովանդակությամբ: Ինչպես տեսնում ենք, Արագածի թերի պահպանված նմուշը կրկնում է Կարմիր բլուրի փականի ձևերը, որը հնարավորություն է տալիս խոսելու գտածոյի կիրառական նշանակության մասին: Թեյշեբաինիի պեղումների ժամանակ N 17 կացարանից հայտնաբերվեց մի այլ տիպի բրոնզից փական, որը ունի «կ» տառի տեսք: Այն իր կառուցվածքով տարբերվում է վերոհիշյալներից և հանդիսանում է ավելի բարդ տեխնիկայով պատրաստված գտածո:

Արագածից հայտնի մետաղե առարկաների մեջ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միջնաբերդի N 9 կացարանից գտնված զարդի՝ գնդասեղի բեկորը: Որմնամույթից ոչ հեռու գտնված գնդասեղի պահպանված չափն է 4,7 սմ: Այն կտրվածքում կլոր է՝ սրացող ծայրով, որի գլխի մասը չի պահպանվել: Գնդասեղը պատկանում է Վանի թագավորությունում լայն տարածում ունեցող գնդասեղ-քորոցների թվին: Դրանք որպես կանոն հասարակ են, իսկ առանձին օրինակներ գլխիկի հատվածում հարդարված են զարդաքանդակներով: Նմանօրինակ արտեֆակտեր հայտնի են Արգիշտիխինիլիից231, Երեբունուց, Կարմիր բլուրից232, Իգդիրից233: Առանձին նմուշներ պատրաստված են ոսկուց և արծաթից: Կարմիր բլուրի ոսկուց շքասեղը գլխիկի վերին մասում զարդարված է վեց թևանի տերևանախշով, իսկ արծաթե օրինակը վերին մասում պսակված է կենդանիների գլխաքանդակով: Կան օրինակներ, որոնք զարդարվել են բուսական, երկրաչափական հորինվածքի տարրերով: Բացի մետաղե շքասեղներից, ուրարտական հնավայրերում լայն տարածում են ունեցել ոսկրից նմանօրինակ զարդերը: Օշականի ուրարտական համալիրներից հայտնաբերված օրինակներում, որպես կանոն գերիշխում է երկրաչափական նախշազարդումը:

Մետաղական գտածոների հաջորդ տիպը ներկայացված է բրոնզե նետասլաքով (Աղ. 105, նկ. 12), որը հայտնաբերվեց միջնաբերդի արևելյան պարսպապատի տարածքում: Մոտ 40 քառ. մ հրդեհված աղյուսի մնացորդներով, 0,2 մ հզորությամբ շերտում գտնված եռաթև սկյութական տիպի նետասլաքի ծայրը կոտրված է: Ակնհայտ է, որ այն պատկանել է թշնամուն և պարսպի պատի աղյուսաշարի

231 *Ա.Ա. Մարտիրոսյան*, Արգիշտիխինիլի, с. 150, рис. 82.
232 *Б.Б. Пиотровский*, Кармир-Блур /альбом/, рис. 80.
233 *Б.А. Куфтин*, Урартский колубларий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Вестник Гос. муз. Грузии. Тбилиси, 1943, т. XIII – B, Таб. V, рис. 1.

մեջ մնալով հրդեհի հետևանքով փլուզված տարածքում է հայտնվել: Նետասլաքի արտաքին մակերեսի մանրադիտակային զննումը վկայում է կրակի մեջ երկար ժամանակ մնացած լինելու մասին: Նման նետասլաքներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Վանի թագավորության համալիրներում: Վերջիններս որպես կանոն ավելի շատ հանդիպում են մ.թ.ա. VII-VI դարի հուշարձաններում, չնայած առանձին նմուշներ հայտնի են նաև մ.թ.ա. VIII դարով թվագրվող հնավայրերում: Այդօրինակ նետասլաքներ գտնվել են Կարմիր Բլուրում[234], Արգիշտիխինիլիում[235], Երեբունիում[236], Նոր Արեշի դամբարանում[237], Օշականում[238], Իգդիրում[239], Արամուսում և այլ հուշարձաններում:

Այսպես կոչված սկյութական նետասլաքների լայն տարածումը Անդրկովկասում և Առաջավոր Ասիայում անշուշտ ունի իր բացատրությունը: Սկյութական ցեղերը իրենց արշավանքները այս տարածքներում սկսել են հիմնականում մ.թ.ա. VII դարից և անգամ դրանից հետո մ.թ.ա. VI դարում տարբեր հուշարձաններից հայտնաբերված նետասլաքները համապատասխանում են պատմական իրականությանը: Բորիս Պիոտրովսկու դիտարկումներով[240] Թեյշեբաինի քաղաքի պեղումներից հայտնաբերված նետասլաքների մեծ մասը պատկանում են ամրոցն ավերածությունների ենթարկած սկյութներին, որոնք մ.թ.ա. VII-VI դարում ավերեցին և կողոպտեցին ոչ միայն Արարատյան դաշտի բերդ-ամրոցները, այլև Ուրարտական պետության այլ շրջանների ծաղկուն քաղաքները (Տուշպա, Հայկաբերդ և այլն): Ակնհայտ է, որ նման բախտի է արժանացել նաև մեր կողմից ուսումնասիրված Արագածի ուրարտական ամրոցը:

Արագածի միջնաբերդի N 7 կացարանի հատակին հայտնաբերված երկաթից շիգն ունի աղեղնաձև, միջին մասում համեմատաբար հաստացող, կտրվածքում կլորացող իրան, որի ծայրերն օղակաձև են: Վերջիններս միմյանց միացնող ասեղը բեկորային է: Այս տիպին պատկանող շիգերը պարզունակ են և ունեն լայն տարածում: Մինչդեռ Բիայնական հուշարձաններից հայտնաբերված մի շարք շիգեր ավելի բարդ տեխնոլոգիայով են պատրաստված և աչքի են ընկնում ոճավորված բարձրարվեստ հարդարանքով: Նման

234 *Б.Б. Пиотровский*, Ванское царство, с. 240-241.
235 *А.А. Мартиросян*, Аргиштихинили, с. 150, рис. 108.
236 *С.И. Ходжаш, Н.С. Трухтанова, К.Л. Оганесян*, Эребуни, Москва, 1979, с. 103, *Ս.Ա. Իսրայելյան*, Երեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 94, նկ. 11:
237 *Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան*, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1958, 10, էջ 63-84:
238 *С.А. Есаян, А.А. Калантарян*, Позднеурартское погребение Ошаканского могильника, Историко-Филологический Журнал, 1976, 3, с. 273.
239 *Б.А. Куфтин*, ук. соч., Т. 4-7:
240 *Б.Б. Пиотровский*, ук. соч., с. 240-241.

գտածոներից հատկապես աչքի են ընկնում Արամուսի, Կարմիր Բլուրի, Արգիշտիխինիլիի, Էրեբունու, Օշականի, Նոր Արեշի[241] պեղումներից հայտնաբերվածները: Հատկապես վերջինից գտնված արծաթից շիգղը ուրարտական արվեստի գլուխգործոց է հանդիսանում: Այն աչքի է ընկնում բարդ հորինվածքով, որի զարդաքանդակները, անշուշտ, կապված են Վանի թագավորության դիցաբանական պատկերացումների հետ (զրահակիր զինվոր, աշտարակավոր շինություն, դարբաս, զոհաբերվող այծ և այլն): Ակնհայտ է, որ այծի զոհաբերությունը պատերազմի աստծուն՝ յուրօրինակ խնդրանք է բարեհաջող արշավանքի համար: Սովորաբար դա հայցում էին նաև ուրարտական թագավորներն արշավանքներ կատարելուց առաջ, իրենց գլխավոր աստվածներ Խալդիին, Թեշեբային, Շիվինիին առատորեն զոհ և զոհաբերություններ մատուցելով, խնջույք ու տոնախմբություններ կազմակերպելով:

Արագածի պեղումներից հայտնաբերված հաջորդ զարդը բրոնզե ապարանջանն է: Միջնաբերդի N 13 կացարանի հատակին գտնված օրինակը բեկորային է: Այն ունի հարթ մակերես, կտրվածքում կլորացող իրան: Ապարանջանի ծայրամասը համեմատաբար բարակ է: Անագի խառնուրդ պարունակող այս զարդն իր լայն զուգահեռներն ունի ուրարտական հնավայրերում: Վանի թագավորության հուշարձաններում հանդիպող ապարանջաններն ունեն նաև ավելի բարդ զարդամոտիվներ: Որպես կանոն դրանք ծայրամասերում ունեն օձի կամ առյուծի պատկերով քանդակազարդ, հաճախ կենդանիների դիմային մանրամասները աչքի են ընկնում բացառիկ արտահայտչությամբ: Նմանօրինակ ապարանջաններ պեղվել են Իգդիրում[242], Կարմիր բլուրում[243], Էրեբունիում[244], Արգիշտիխինիլիում[245], Օշականում[246], Նոր Արեշում[247] և այլ հուշարձաններում[248]:

Արագածի քաղաքային բնակելի համալիրներից N 2 կացարանում արևելյան պատի տակից հայտնաբերվեց երկաթե առարկա՝ բեկորային ձևով, որը հավանաբար ծառայել է որպես աշխատանքային գործիք: 2,5 սմ հաստությամբ գտածոյի միջին մասում կա երկայնական խոր փորվածք, հավանաբար բռնակի կամ կոթառի համար: Աշ-

[241] *Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան,* նշվ. աշխ., էջ 63-84:
[242] *Б.А. Куфтин,* ук. соч., с. 39, рис. 28:
[243] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 138.
[244] *Ս.Ս. Իսրայելյան,* նշվ. աշխ. էջ 90, նկ. 10, *С.И. Ходжаш* ... , ук. соч., с. 105:
[245] *А.А. Мартиросян,* Аргиштихинили. с. 150, рис. 85, *Հ.Ս. Մարտիրոսյան, Ռ.Մ. Ղորոսյան,* Արգիշտիխինիլիի սարկոֆագը, Պատմա-Բանասիրական Հանդես,1986, 3, էջ 224, Աղ. 1, նկ. 7:
[246] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Ошакан I, Т. LI, LXIX.
[247] *Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան,* նշվ. աշխ., էջ 63-84:
[248] *С.А. Есаян, Г. Оганесян,* Каталог археологических предметов Дилижанского краяведческого музея, Ереван, 1969, Т. 34, 43, рис. 3.

խատանքային գործիքների լայն հավաքածու է գտնվել Կարմիր բլուրում[249], Էրեբունիում[250], Արգիշտիխինիլիում[251] և այլն, որոնք կապված են Վանի թագավորության տնտեսական համալիրի հետ: Դրանք ամենատարբեր ձևի աշխատանքային գործիքներ են:

Արագածից հայտնաբերված մետաղական գտածոները չնայած փոքրաթիվ են և աչքի չեն ընկնում իրենց շքեղությամբ, այնուհանդերձ բնորոշ են Վանի թագավորությանը: Արարատյան դաշտի հնավայրերից հայտնաբերված իրերի լայն զուգահեռները խոսում են մետաղագործության բարձր զարգացածության մասին: Վարպետների կողմից պատրաստված առարկաների (աշխատանքային գործիքներից մինչև նրբագեղ պերճանքի առարկաները) մասին արձանագրված են նաև գրավոր, մասնավորապես ասսուրական աղբյուրներում: Դրա վառ ապացույցն է հանդիսանում Սարգոն II-ի կողմից Մուծածիրում, Խալդի աստծո տաճարից կողոպտած և թալանած առարկաների նկարագրությունները: Հարկ ենք համարում փաստել, որ ուրարտական մետաղագործությունը հիմնված էր զուտ տեղական հումքային բազայի վրա[252]: Հայկական բարձրավանդակը հնուց ի վեր հայտնի է մետաղական հանքերով՝ Մուշի, Բիթլիսի, Վանի շրջան և այլն, որտեղից արհեստագործական կենտրոնների համար առատ հումք էր մատակարարվում:

§ 2. ՔԱՐԻՑ ԳՏԱԾՈՆԵՐ (ՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՄ)

Արհեստագործության այս ճյուղը ուրարտական մշակույթի կարևորագույն ցուցիչներից է: Այն ունի մի քանի բնութագրիչ հատկանիշներ: Շինարարական արվեստում մեծ տարածում ուներ ինչպես կարծր քարատեսակների՝ բազալտի, այնպես էլ համեմատաբար փխրուն ապարների՝ տուֆի մշակումը: Արագածի ամրոցից հյուսիս տարածված են հսկայական բազալտե զանգվածեղ ժայռաբեկորներ, որոնք կտրվել և որպես շինարարական հումք են ծառայել միջնաբերդի և քաղաքային համալիրների կառուցման համար: Արագածի շինությունների հիմնապատերը շարվել են մեծ քարաբեկորներից, որի վրա բարձրացել են համեմատաբար փոքրացող տուֆից և ապա աղյուսից պատաշարը: Ամրոցի ժայռոտ շրջապատը քարհանքի դեր է կատարել, ուր բազալտից և տուֆից ժայռաբեկորները վերամշակվել են և առանց դժվարության բերվել շինհրապարակ:

Արագածի միջնաբերդի պատերի շարվածքում կան կիսակոպտատաշ, հսկայական բլոկներ, ինչպես նաև մշակված, հարթ մակեր-

[249] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 141, рис. 8-10.
[250] *С.И. Ходжаш* ..., ук. соч., с. 103:
[251] *А.А. Мартиросян,* Аргиштихинили, с. 150, рис. 83-86:
[252] *Б.Б. Пиотровский,* ук. соч., с. 163-164.

նույթով քարաբեկորներ: Վերջիններս, որպես կանոն ծառայել են դարբասների, դռների և առանձին մուտքերի և կարևորագույն հանգույցների կառուցման համար: Ծակոտկեն բազալտից քարաբեկորները մշակելուց հետո ծառայել են նաև որպես որմնամույթ (բազա), որոնք աչքի են ընկնում մշակման կատարելությամբ, ինչպես օրինակ քաղաքային համալիրի N 1 կացարանում: Գտածոների մյուս խումբը հղկված և փայլեցված քարերից թասերն են, դռան կրունկները, աղորիքները և այլն:

Արագածում շինարարական աշխատանքների ժամանակ կիրառվել է քարի մշակման երկու տեխնիկական ձև: Առաջինը կոպտատաշ, կամ կիսակոպտատաշ մշակման տեխնոլոգիան է, երկրորդը՝ ռուստովկան: Հարկ է նշել, որ առաջին ձևը Հայկական լեռնաշխարհում հայտնի է շատ վաղուց, մինչդեռ երկրորդը Վանի թագավորությունում հայտնի է Տուշպայում, Արգիշտիխինիլիում և այլ ամրոցներում: Դեռևս ժամանակին Մ. Նիկոլսկին և Ա. Ուվարովը նշել են Արմավիր-Արգիշտիխինիլիում նման տեխնիկայի առկայության մասին: Ներկայումս նման մշակումով շարվածք բացվել է նաև Արարատյան դաշտի այլ հուշարձաններում, որոնք ունեն նաև ուշ թվագրում: Ինչ վերաբերվում է 1880 - ական թվականներից Արմավիրում կատարված պեղումներին, ապա Ա. Երիցովից հետո Ա. Ուվարովը պարսպի սրբատաշ շարվածքը համեմատելով Գառնիի տաճարի շարվածքի հետ, թվագրեց մ.թ.ա. IV դարով[253], որը հետագայում հիմնավորապես հերքվեց Մ. Նիկոլսկու կողմից[254]:

Վանի թագավորության ամրոց-բնակավայրերի դիտարկումներից պարզվում է, որ պաշտպանական պարսպապատերը որպես կանոն կառուցապատվել են կոպտատաշ, երբեմն կիսասրբատաշ բազալտի և տուֆի քարաբեկորներից:

Այդ ամրոցները՝ Թեյշեբաինի, Էլար, Նոր-Բայազետ, Ծովինար, Դովրի, Արամուս, Ջորափ և այլն հիմնականում տեղական քարատեսակներից են կառուցվել: Հարկ է նշել, որ ավելի վաղ ամրոցներում՝ օրինակ Էրեբունիում, հիմնապատի բարձրությունը հասնում է 2մ, իսկ ավելի ուշ փուլի հուշարձաններում՝ Կարմիր բլուր, Արագած՝ 0,5-ից մինչև 1,5 մ: Վերջին չափը բնորոշ է նաև աքեմենյան ժամանակաշրջանի համալիրների համար: Այս ամրապատերը հաճախ մակերեսին ունեն թմբիկաձև ելուստներ, ինչը պարզ երևում է Թեյշեբաինում: Ռուստովկայի տեխնիկան շարունակվում է նաև Ուրարտուի անկումից հետո: Նման տեխնիկան բնորոշ է նաև Իրանի և Անդրկովկասի[255] մի շարք համալիրներին, որոնք թվագրվում են մ.թ.ա. V-IVդդ-ով:

Ռուստովկայի տեխնիկան մեծ չափերի և զարգացման հասավ հատկապես հելենիստական ժամանակաշրջանում, երբ քարի մշակումը կատարվեց երկու եղանակով: Առաջինը երբ քարի մակերեսին ծվածիր ուռուցիկությամբ դեկորատիվ ձև էին տալիս, երկրորդը, երբ եզրագծված կողմերի ներսը թողնվում էր խորդուբորդությունների ձևով: Նման տեխնիկան բնորոշ է Գառնիի[256] պարիսպներին և աշտարակներին: Վերոհիշյալ ձևը հատկապես Օշականի[257] ամրոցի համար է տիպական, որը խոսում է Վանի թագավորության շինարարական արվեստի ավանդական բնույթի մասին:

Աշխատանքային գործիքներ: Արագածի պեղումներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ աշխատանքային գործիքներ, որոնք հիմնականում օգտագործվել են երկրագործական մթերքների վերամշակման նպատակով: Ամբողջական և բեկորային աշխատանքային գործիքների հավաքածուն բաժանվում է մի քանի խոշոր խմբերի: Առաջին խմբի մեջ առանձնանում են խոշոր և միջին չափի աղորիքները (Աղ. 100, նկ. 26-28), (Աղ. 101, նկ. 26, 27), (Աղ. 103, նկ. 23-26), որոնք բաժանվում են երկու տիպերի: Մասսայաբար հանդիպող աղորիքների առաջին տիպն ունի 0,25-0,5մ երկարություն: Ձևով նմանվում է ավելի վաղ հանդիպող ծվածիր և նավակատիպ աղորիքներին: Սրանց մեջ հանդիպում են ողորկ, հարթ փայլեցրած մակերևույթով օրինակներ, որը խոսում է երկարատև օգտագործման մասին: Կան աղորիքներ, որոնց վերին աշխատող մակերեսն աչքի է ընկնում խորդուբորդությամբ: Արագածի շինություններից հայտնաբերված աղորիքների երկրորդ տիպը միջին չափի, 0,15-0,3 մ տրամագծով կլորավուն գտածոներն են, որոնց վերին աշխատող հարթ մակերեսն ունի լավ մշակում: Նման աղորիքները, որպես կանոն հանդիպում են բոլոր ուրարտական ամրոցներում՝ Էրեբունի, Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր, Օշական, Արամուս և այլն:

Գտածոների երկրորդ խոշոր խումբը տուֆից և բազալտից սանդերն են: Այս գտածոները լայն կիրառություն ունեն Վանի թագավորության տնտեսության մեջ: Եթե բազալտե սանդերը օգտագործվել են հացահատիկի և այլ բնամթերքների վերամշակման նպատակով, ապա տուֆից գտածոները հավանաբար ծառայել են ամենատարբեր հանքանյութերի, քարերի, ներկերի մշակման համար: Բազմաքանակ մեծ ու փոքր սանդերն իրենց ձևերով բաժանվում են երկու

[253] *А.С. Уваров,* Исследование местности, на которой предполагались развалины Армавира, Протоколы Подготовительного комитета V археологического сьезда в Тифлисе, М., 1882, с. 140-148, 443-444.
[254] *В.М. Никольский,* Клинообразные надписи Закавказья, Материалы по археологии Кавказа, V М., 1896, с. 57.

[255] *И.В. Хоштария,* Археологические исследование в Вани и Ванском районе в 1952г. Материалы по археологии Грузии и Закавказья вып. II Тбилиси, с. 51-52.
[256] *Б.А. Аракелян,* Гарни I, Ереван, 1951, с. 33.
[257] *С.А. Есаян, А.Г. Канецян,* Строительная техника урартских сооружений Ошакана, Вестник Общественных Наук, 1983, 4, с. 68-69.

տիպի: Առաջին տիպի սանդերն ունեն կլոր - ուռուցիկ, երբեմն գնդաձև իրան, հարթ նստուկ, կլորացող պսակ շուրթ: Կենտրոնական մասում արված է ծագարաձև փորվածք: Երկրորդ տիպի սանդերն իրենց ձևով նմանվում են առաջինին, միայն տարբեր են շուրթերի տեսքով: Վերջիններիս շուրթերը հարթ կտրված են, իսկ կենտրոնում արված փորվածքը գլանաձև է: Սանդերի հետ միասին Արագածից հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ սանդկոթեր, որոնք հիմնականում հաստատագրվել են կարասներով կացարաններում (N N 7, 9, 19). Նմանօրինակ սանդեր և սանդկոթեր գտնվել են Էրեբունիում, Արգիշտիխինիլիում, Կարմիր բլուրում, Օշականում, Արամուսում և մյուս մեծ ու փոքր կենտրոններում: Սանդկոթերը հիմնականում բազալտից են մեծ ու փոքր չափերի: Դրանք կոնաձև են, ստորին մասում ունեն հարթ կամ կլորացող մակերես: Սանդերի, սանդկոթերի հետ միասին հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ կոկիչներ և տրորիչներ: Վերջիններս մեծ քանակությամբ գտնվել են Արգիշտիխինիլիից[258]:

Արագածի պեղումներից հայտնաբերված գտածոների հաջորդ խումբը բազալտից կոպիտ և բարձրորակ մշակումով ոչ մեծ քանակությամբ թասերն են: Դրանք ունեն կլոր, դեպի վեր լայնացող իրան, ուղիղ կտրված կամ կլորացող շուրթ: Դրանցից մի քանիսն ունեն փոքրիկ նստուկ և հիմնականում տարբերվում են իրանի տրամագծի մեծությամբ: Օրինակ N 9 կացարանից հայտնաբերված բազալտից թասի տրամագիծը 0,3մ է, որը գտնվեց օջախի միջից: Նմանատիպ թասեր հայտնաբերվել են Էրեբունուց, Արգիշտիխինիլիից և այլ հնավայրերից: Հարկ է նշել, որ այդ թասերը կրկնում են խեցանոթների ձևերը հանդիսանալով ընդօրինակում:

Արագածի համալիրներից հայտնաբերված նյութերի մեջ առանձնակի տեղ է գրավում ծվածիր գորշ տուֆից պատրաստված «տաշտը»: Այն ունի 0,25 մ բարձրություն, 0,65 մ երկարություն, դեպի վեր փռված կողեր, որն ավարտվում է կլորացող շուրթով: Նմանօրինակ գտածոներ հայտնի են Օշականի հնագիտական համալիրներից[259], որոնք կարմիր տուֆից են, ունեն ուղղանկյան տեսք: Դրանցից մեկն իր չափերով մոտենում է Արագածից հայտնաբերվածին:

Հատկապես հետաքրքիր խումբ են կազմում վանակատից և կարմիրից գտածոները: Դրանք բաժանվում են մի քանի տիպերի՝ շեղբեր (Աղ. 103, նկ. 18, 19), քերիչներ, ներդիրներ, միջուկաձև [illegible]: Շեղբերը մեծ չեն, կտրվածքում սեղանաձև են, իսկ [illegible] հատակ բնտրի եղանակով հարդարված: Քերիչները [illegible] ձվածիր են, երբեմն խիստ ընդգծված կողերով, միջուկ-

[illegible]

[illegible]

ների վրա պարզ երևում է հարվածի հրապարակը, որից երկարավուն, դանակատիպ շեղբեր են բեկորվել, ինչպես օրինակ N 10 կացարանից գտնված երկու դանակ-շեղբերը: Շեղբերի մեջ կան վանակատից և կայծքարից օրինակներ, որոնք մանգաղի դեր են կատարել: Մաշված կողեզրերով այդպիսի շեղբեր հայտնաբերվել են քաղաքային համալիրի N 1 և N 2 կացարաններից: Նման ներդիր-շեղբեր հայտնի են Օշականի[260] պալատական համալիրներից: Հետաքրքրական է, որ նմանատիպ շեղբեր, ներդիրներ հայտնի են նաև համաժամանակյա և ավելի վաղ թվագրություն ունեցող հուշարձաններից՝ Թմբադիր, Բերքաբեր[261], Ծովինար[262], Դվին, Գառնի[263] և այլն[264]:

Արագածի համալիրներից հայտնաբերվել են ոսկրից երկու գտածոներ: Առաջինը ոչ մեծ չափի ասեղ է, երկրորդը այծի եղջյուրից բիզ (Աղ. 101, նկ. 25): Այս օրինակները ամենատարբեր անհրաժեշտության գործածություն են ունեցել:

Արագածի համալիրներից հայտնաբերված նյութերի մեջ առանձնանում են քարակոթողները, որոնք կապվում են ուրարտական մշակույթի կրոնա-ծիսական համակարգի հետ: Քննարկվող նյութերը՝ կուռքերը, ֆալլոսները, սյուն-կուռքերն ունեն ինքնատիպ կառուցվածք և կիրառական լայն սպեկտոր: Դրանք բաժանվում են երեք տիպերի՝ մարդակերպ /անտրոպոմորֆ/ կուռքեր, սյուներ, ֆալլոսներ:

Մարդակերպ կուռքեր: Այս խմբում ընդգրկված պաշտամունքային գտածոների շարքում աչքի է ընկնում Արագածի միջնաբերդի N 1 կացարանից հայտնաբերված անտրոպոմորֆ կուռքը (Աղ. 100, նկ. 24): Արձանը պատրաստված է կարմրավուն կարծր տուֆից, բրգաձև է՝ 0,82մ երկարությամբ: Հարթ կիսակոպտատաշ մակերևույթով կուռքի ստորին մասը 0,38 մ լայնությամբ նեղանում է դեպի վեր: Մարդու սխեմատիկ մարմին հիշեցնող կուռքի վերի մասում՝ գլխի վրա արված է ծվածիր փորվածք, որը բերանի ընդօրինակում է հանդիսանում: Իրանի վրա շատ թույլ կերպով ընդգծված է ձեռքերի հետքերը: Նման կուռք-արձանները լայն տարածում ունեն Վանի թագավորության հուշարձաններում, մասնավորապես Օշականում[265], որտեղ գտածոներն աչքի են ընկնում դիմային մանրամասներով: Բացի Օշականից, նման կուռքեր գտնվել են Արգիշտիխինիլիում, Կարմիր բերդում, Կիրովականում, Բազմաբերդում, Կարմիր բլուրում: Այս գտածոների մի մասը Հայաստանի ուշ բրոնզի և երկաթի դարի համալիրներից են: Որոշ օրինակներ պատկերագրված են կեռխաչի[266]

[260] Նույն տեղում:
[261] *Հ.Ա. Եսայան*, Древняя культура племен Северо-Восточной Армении, с. 164.
[262] *Բ.Բ. Պիոտրովսկի*, Ванское царство, с. 141.
[263] *Է.Վ. Խանզադյան*, Գառնի IV, Երևան, 1969, Աղ. XXXV, նկ.1:
[264] *Բ.Ա. Կուֆտին*, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, с. 69.
[265] *Հ.Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան*, ук. соч., с. 44-45.
[266] *Ա.Ա. Մարտիրոսյան*, Город Теишебаини, с. 74.

նշանով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել և մեկնաբանել կուռքերի պաշտամունքային բնույթը՝ կապված արևի, պտղաբերության, տան՝ օջախի պահպանման գաղափարի հետ:

Սյուն-կուռքեր: Այս խմբին պատկանող գտածոները հայտնաբերվել են Արագածի միջնաբերդի N 4 (2 օրինակ), N 5 (2 օրինակ), N 13 (1 օրինակ) կացարաններից: Դրանք, (բացառությամբ N 5 կացարանի կուռքերից մեկի), պատրաստված են վարդագույն տուֆից: N 4 կացարանի հարթակից հայտնաբերվածը բազալտից է, մրապատ, կտրվածքում կլոր, ունի 0,3մ բարձրություն: Մնացած գտածոները մինչև 0,7 մ բարձրությամբ քառակող ուղղանկյան տեսք ունեն և կտրվածքում կլոր կամ սեղանաձև են (Աղ. 103, նկ. 21, 22), (Աղ. 104, նկ. 16, 17): Նման պատկեր է արձանագրվել նաև Արամուսի միջնաբերդում, որտեղ ստորին հորիզոնից հայտնաբերվեց մրապատ փոքր կուռք: Այս կուռքերից մի քանիսը վերին մասում նեղացող են: Այս սյուն-կուռքերի հետ բավականին լայն արձագանք են գտնում Այգեշատի դամբարանադաշտից հայտնաբերված կոթողները, որոնք կամ կրոմլեխների լիցքի մեջ են գտնվել, կամ դամբարանախցերում: Դրանք մահարձան-սյուների նշանակություն ունեն և տարածված են ինչպես ուրարտական, այնպես էլ ավելի վաղ ժամանակաշրջաններում:

Ֆալլոսներ: Արագածից գտնված ֆալլոսները in situ չեն: Դրանք մի քանի օրինակներ են, պատրաստված կարմիր և գորշ տուֆից: Ունեն մինչև 0,8 մ բարձրություն, կազմված են իրանից և գլխիկից, ստորին մասը քիչ լայնացող հարթ նստուկի դեր է կատարել: Ակնհայտ է, որ ֆալլոսները սրբազան հարթակներում ունեցել են իրենց համապատասխան պաշտամունքային նշանակությունը, իսկ ամրոցի կործանումից հետ օգտագործվել են որպես շինանյութ: Այդ գտածոները լայն տարածում ունեն Վանի թագավորության և ավելի վաղ թվագրություն ունեցող հուշարձաններում: Մեծ քանակությամբ ֆալլոսներ գտնվել են հատկապես Օշականի պալատական համալիրներում[267], որոնք բաժանվում են մի քանի տիպերի[268]: Հատկապես դրանցից մեկի վրա քանդակված է մարդու դեմք, հստակ ընդգծված քթով, խոշոր աչքերով և ականջներով:

Բացի ուրարտական ամրոց-բնակավայրերից, ֆալլոսները հանդիպում են նաև դամբարանային համալիրներում: Դրանք հանդես են գալիս որպես մահարձաններ, որոնք ինչպես նշում են Ե. Լալայանը, Թ. Խաչատրյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Եսայանը պահպանում են հանգուցյալին չար ոգիներից, խորհրդանշում են պտղաբերությունը և տոհմի շարունակությունը: Ֆալլոսները խորհրդանշում են նաև կյանքի հարատևություն, հարության գաղափարը կապում են արևի,

[267] *С.А. Есаян, А.А. Калантарян*, ук. соч., Т. XXXV.
[268] Նույն տեղում:

տնային օջախի և այլ սիմվոլների հետ: Այդ առումով հատկապես աչքի է ընկնում Այգեշատի դամբարանադաշտը[269], որտեղ հաստատագրվել են ֆալլոսների հետ միասին մարդակերպ՝ տարբեր չափի արձաններ, սյուն-կուռքեր:

§ 3. ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ուրարտական խեցեղենը, որպես մշակութային ֆենոմեն հանդես է գալիս խեցեգործական հատկանիշների այնպիսի կայուն համադրությամբ, որը թերևս հնարավոր է մեկնաբանել, որպես պետական պատվերից բխող ստանդարտների ու չափանիշների արդյունք: Արագածի պեղումներից գտնված խեցեղեն իրերը քննարկման են ենթակա միայն այս ենթատեքստով: Բազմաքանակ բեկորային և առանձին դեպքերում ամբողջական պահպանված տեսքով Արագածի խեցեղեն հավաքածուն կիրառական նշանակությամբ բաժանվում են երեք խոշոր կատեգորիաների: Առաջինը՝ երկրագործական և անասնապահական մթերքների պահպանման ու վերամշակման համար լայն տարածում գտած տարբեր ձևի անոթներ են: Դրանք ներկայացված են գինի, ցորեն և բուսական յուղ (ձեթ) պահելու համար *կարասներով* (Աղ. 113-115, 169) և այլ տիպի խեցեղենով: Կարասները ունեն ուռուցիկ ձգված, կլորացող իրան,բարձր կամ ցածր հարթ կտրված, դեպի դուրս ճկված, կլորացող զանգվածեղ շուրթ, հարթ մեծ կամ փոքր հատակ: Հատկապես խոշոր օրինակներն ունեն զարդամոտիվների հարուստ հորինվածք, որով տարբերվում են մյուս խեցանոթներից: Զարդամոտիվները կազմված են հիմնականում երկրաչափական և բուսական նախշազարդից: Դրանք ուղղանկյուն, եռանկյուն միաշարք, եռաշարք զարդագոտիներ են, ուռուցիկ ժապավենաձև, երբեմն հասկանախշ հիշեցնող հարդարանքով: Ուրարտական կարասները շուրթերի տակ ունեն ամենատարբեր հիերոգլիֆ նշաններ, չափ ու քանակի մասին վկայակոչող սեպագրեր, վարպետի նշաններ: Նման կարասներ հայտնի են ոչ միայն Արարատյան դաշտի ամրոցներում, այլև Վանի թագավորության հնավայրերում[270]:

Ուրարտական խոշոր կարասների զարդամոտիվների դասակարգումը կատարվել է ելնելով տարբեր խորադիր տարրերի հաջորդականությունից և դիրքից՝ առանձնացնելով հետևյալ տարրերը. միաշարք, խորադիր եռանկյունաձև նախշազարդ, կլորացող գագաթներով՝ ուղղված դեպի վեր, նմանատիպ երկշարք եռանկյունաձև նախշազարդ, սրածայր գագաթներով ուղղված դեպի վեր: Հորիզո-

[269] *Հ.Գ. Ավետիսյան*, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1996, 2, էջ 156:
[270] *Հ.Գ. Ավետիսյան*, Արարատյան դաշտավայրի մ.թ.ա. VIII-VII դդ հուշարձաններից գտնված կարասները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, 1, էջ 69-77:

նական դասավորված երկշարք ուղղանկյան տեսքով նախշազարդ, ներքևից ավարտվող միաշարք եռանկյունիներ՝ սուր գագաթներով ուղղված դեպի անոթի հատակը, նույնատիպ եռաշարք, ուղղանկյան տեսքով. վերևից ավարտվում են միաշարք եռանկյունիներով, որոնց կլորացող գագաթներն ուղղված են դեպի վեր:

Բացի վերոհիշյալից, այս խոշոր կարասների զարդամոտիվների համակարգում, որպես կանոն, հանդիպում են միաշարք, երկշարք ուռուցիկ, ներծկված, երկրաչափական և բուսական էլեմենտներ, որոնք հիմնականում տեղադրված են շուրթի տակ և իրանի վրա: Դրանք հարդարված են թեք գծերով, սերմանախշով, ժապավենաձև ալիքանախշով: Նման հորինվածքով զարդարված կարասներ հայտնի են Կարմիր բլուրից, Էրեբունիից, Արգիշտիխինիլիից, Օշականից[271], Արագածից:

Կարասների մյուս խումբը հիմնականում զուրկ է հարուստ զարդամոտիվներից, չնայած մի քանիսի վրա հանդիպում են առանձին նախշազարդ տարրեր: Այսպես՝ Արին բերդից գտնված կարասներից մեկը վզի տակ ունի երեք ռելիեֆ գծեր՝ երկուսը զարդարված օղակաձև կետային նախշերով, իսկ մնացածը իրենց վրա ունեն սեպաձև նշաններ: Հետաքրքիր են Կարմիր բլուրից հայտնաբերված սև փայլեցված անոթները, որոնցից առաջինն իրանին ունի երեք հավասարաչափ իրարից հեռացող զուգահեռ ռելիեֆ գոտի, իսկ երկրորդը՝ նույնատիպ չորս գոտի, ընդ որում վերիջինիս վզի տակ արված է գալարվող օձի ծեփաքանդակ: Նման կարասի բեկորներ պահվում են Վանի թանգարանում[272]:

Հաջորդ խումբ անոթների զգալի մասը զարդանախշ չունի, չնայած առանձին կարասներ աչքի են ընկնում հարուստ հարդարումով: Այստեղ առանձնանում է Կարմիր բլուրի N 16 սենյակից հայտնաբերված անոթը[273] (Աղ. 163): Իրանի վերին մասում կա 3 ցլագլուխ ծեփաքանդակ, որոնք ձևավորված են բավականին նուրբ դիմային մանրամասներով՝ փոքրիկ դունչ, կլորավուն աչքեր, սրացող եղջյուրներ: Կարասի ուսի ուռուցիկ գոտին ներկված է սև, շագանակագույն, դեղնավուն օղակներով, որոնք միմյանցից անջատված են զույգ ուղղահայաց գծիկներով: Այսպիսի ցլագլուխ քանդակազարդ անոթներ հայտնաբերվել են Երևանի բիայնական դամբարանից, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանի հնավայրերից՝ Ալթին-թեփե, Արծկե, որոնցից մի քանի նմուշներ պահվում են Վանի թանգարանում[274]: (Աղ. 170, նկ. 1):

[271] *С.А. Есаян,* Об урартских дворцовых комплексах Ошакана. В кн. Культурное наследие Востока, Ленинград, 1985, с. 112-113.
[272] *F. Edgü,* Avrupa Sanat Sergisi, Anadolu Medeniyetleri, Kultur ve Turizm Bakanlig'i, Istanbul, 1983, sah. 289, A-777.
[273] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур 1, с. 56, 70, рис. 43.
[274] Kultur ..., sah. 289, A-776, 777.

Կենդանիների քանդակազարդ պատկերներ հանդիպում են նաև մետաղական առարկաների վրա, ինչպիսին է օրինակ Վանի շրջանից գտնված բրոնզե կացինը: Բիայնական կարասները, որոնք զարդարված են ծեփաքանդակ պատկերներով, իրենց բովանդակությամբ շատ մոտ են ավելի վաղ ժամանակաշրջանի խեթական ոճին բնորոշ օրինակներին՝ հայտնաբերված Բողազքյոյից, Ալիշարից[275]: Այս խմբի մեջ ընդգրկված անոթներից աչքի են ընկնում Թեյշեբաինի պեղումներից գտնված 2 գնդաձև կարասներ, որոնք ունեն սև փայլեցված մակերես: Առաջինի իրանի կենտրոնով անցնող ուռուցիկ հորիզոնական լայն գոտին անոթը բաժանում է երկու մասի: Մյուսն ունի ավելի հարուստ հարդարանք: Անոթի (Աղ. 168) վերնամասը զարդարում են 12 եռանկյունիներ՝ սուր ծայրերով ուղղված ներքև, որոնց մեջ լցված է կարճ կետագծերով արված ալիքանախշ: Դրանք սուր ծայրերով հպվում են կարասի կենտրոնամասով անցնող նուրբ ուռուցիկ հորիզոնական գոտուն: Նման երկշարք եռանկյունիներ՝ սուր ծայրերով ուղղված վերև, զարդարում են Արգիշտիխինիլիից գտնված անոթի իրանը (Աղ. 115, նկ. 7): Ի տարբերություն Կարմիր բլուրից հայտնաբերված օրինակի, այս եռանկյունիները լցված են փոքր սեպերով, իսկ անոթն ունի բալագույն անգոբապատ մակերես: Արգիշտիխինիլիից գտնված մեկ այլ անոթի[276] վերին մասում կա կրկնակի դաջվածք, որի վրա նշմարելի է թռչունի և օձի պայքարի պատկեր՝ շրջապատված բուսական ալիքանախշով:

Արարատյան դաշտի հուշարձաններից հայտնաբերված բիայնական կարասների զարդամոտիվները չեն սահմանափակվում վերոհիշյալով: Բազմաքանակ բեկորներ իրենց վրա կրում են ամենատարբեր բովանդակությամբ պատկերներ, որոնց մի մասն արված է թրծումից հետո: Դրանցից կարելի է առանձնացնել Արգիշտիխինիլիից գտնվածը, որի վրա գծագրված է սլացող մարտակառք՝ իր մանրամասներով[277]: Նման պատկերներ կան Արծկեի (Աղիլջևազի) պեղումներից հայտնաբերված բարձրաքանդակներում:[278] Պարզունակ կենդանակերպ զարդանախշով կարասների բեկորներ են գտնվել Էրեբունիի պեղումներից:[279] Դրանցից մեկի վրա խաչագծված է վազող ձի՝ ձգված իրանով, փարթամ պոչով,[280] նման՝ Արգիշտիխինիլիի

[275] *Б.Б. Пиотровский,* История и культура Урарту, с. 242-243.
[276] *А.А. Мартиросян,* Печати мастеров на сосудах из Аргиштихинили /Древний Восток и мировая культура/, Москва, 1981, с. 80, рис. 60.
[277] *А.А. Мартиросян,* Аргиштихинили, с. 100, рис. 36 /б/.
[278] *E. Bilgiç, B. Ögün,* Excavations at Kef Kalesi of Adilcevaz, Anatolia IX, Ankara, 1965, d. 11-28, mat. XIX.
[279] *Ս. Իսրայելյան,* Էրեբունի բերդ-ամրոցի պատմությունը, էջ 72, *А.А. Демянская,* Кладовые Эребуни, Сообщения государственного музея изобразительных искусств имени А.С. Пушкина, 4, Москва, 1968, с. 187, рис. 5:
[280] *Ս. Իսրայելյան,* նշվ. աշխ., էջ 73:

օրինակին: Մյուս անոթների վրա արված են թռիչքի պատրաստված քարայծի[281], երկսապատ ուղտի, թռչունի պատկերներ: Այդ հավաքածուի մեջ առանձնանում է խոշոր կարասի մի բեկոր[282], որի վրա խազագծված է ճտքավոր կոշիկ: Կարմիր բլուրից[283] (Աղ. 166), Վանի թագավորության կենտրոնական և հարավային շրջաններից՝ Հասանլու, Զիվիե,[284] գտնվել են կոշիկաձև անոթներ, որոնց մի մասը պահվում է Թեհրանի թանգարանում: Էրեբունիի Խալդի տաճարի որմնանկարի բեկորներից մեկի վրա պատկերված է մարտիկների ռազմերթը,[285] որտեղ առանձնանում է ճտքավոր կոշիկ հագած զինվորը՝ իր զենք ու զրահով: Նմանատիպ անոթներն ունեցել են տարածքային և ժամանակագրական լայն սահմաններ (Լճաշեն, Դավիթ Բեկ, Լծեն, Նախիջևան և այլն)[286]:

Էրեբունիից գտնված կարասի մի բեկորի վրա խազագծված է ուղղանկյուն շենք[287], որն ունի աշտարակներ, բարձր մուտք: Նման պատկերներ կան նաև մետաղե տարբեր առարկաների վրա, ինչպես օրինակ Թոփրախ-կալեից հայտնաբերված բրոնզե թիթեղը[288]:

Քննվող կարասներն ունեցել են բազմաբնույթ կիրառական նշանակություն: Ընդ որում տարբեր խմբերի առանձին օրինակներ կարող էին կատարել միևնույն ֆունկցիան: Խոշոր կարասները տնտեսական լայն կիրառություն են ունեցել հիմնականում օգտագործվելով գինի, հացահատիկ, բուսական յուղ պահելու համար: Ամբարները, ինչպես և մառաններում պահվող կարասները, խիստ հսկողության տակ էին: դրանք պարտադիր կնքվում էին: Կարասների տարողությունները շատ անգամ վերստուգվում, վերահաշվառվում էին: Դրանց վրա դվում էր նոր չափի միավոր՝ համառոտագրերով կամ էլ ամբողջական բառերով[289]: Հայտնի է, որ բիայնական պետությունում գոյություն ուներ չափի միավոր՝ աքարքին, տերուսին և տուրուզան (LIŠ)[290]: Շտեմարան-մառաններում պահվող մթերքը ծառայում էր ոչ միայն ամրոցի բնակիչների, ներքին և արտաքին առևտրի, այլև բանակի, կայազորի համար:

---

[281] Г. Гриев. Крыша над древним городом. Техника молодежи, 1967, 11, с. 29.
[282] Инвентарный фонд музея Эребуни 23/21.
[283] Б.Б. Пиотровский. Кармир-Блур /альбом/, рис. 69, 70.
[284] G. Azarpay. The Urartian Boot-Shaped Vessels. "Artibus Asiae". New York, 1964, vol. 27, 1-2, p. 61-71, ill. 3,4.
[285] [illegible] Էրեբունիի որմնանկարները, Երևան 1973, նկ. 50:
[286] Г.А. Есаян. Древняя культура племен северо-восточной Армении, с. 204.
[287] Г.А. Есаян. Эребуни, с. 70.
[288] Б.Б. Пиотровский. Ванское царство, с. 204, рис. 57, Ванский Искусство Урарту, рис. 56.
[289] [illegible] նույն տեղում, էջ 82.
[290] Г.Г. Арутюнян, Г.Г. Асатрян. Некоторые замечания по метрологии Урарту, Историко-филологический Журнал, 1980, 2, с. 172-173. I. Rendel, M. Salvini. Die urartäischen Holzmöbel für Flüssigkeiten. SMEA, 43, 2001, S. 119-139.

Միաժամանակ Կարմիր բլուրի «հարուստ ուրարտացու» բնակարանի պեղումները ապացուցում են, որ այդ կարասները ծառայել են ինքնուրույն տնտեսություն ունեցող վերնախավի կարիքները բավարարելու համար: Այս անոթները օգտագործվել են նաև երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման աշխատանքներում:

Կարմիր բլուրի միջնաբերդի երկրորդ հարկում գտնվել է առանց տանիքի մի այլ մեծ մառան (սենյակ N 50), որն ըստ Լ. Մ. Ջանփոլադյանի կառուցվել է միջնաբերդի բարձրադիր, արևից լավ տաքացվող և փոշուց պահպանված վայրում, գինեգործության համար[291]: Հայտնաբերվել է նաև խոշոր արհեստանոց-ձիթհան՝ քունջութի ձեթ ստանալու համար, որի հատիկները գտնվել են սենյակներում պահվող կարասների մեջ[292]:

Երկրագործական մթերքների վերամշակումը Թեյշեբաինիում, Արգիշտիխինիլիում չի սահմանափակվում նշվածով: Այստեղ գարեջուր պատրաստելու արհեստանոցներում հայտնաբերվել են բազմաթիվ անոթներ (Աղ. 117, 118), քարե տաշտեր՝ պատրաստի արտադրանքի, գարու և կորեկի համար[293]: Երկրագործականի հետ մեկտեղ այստեղ վերամշակվել են նաև անասնապահական մթերքների տարբեր տեսակներ: Հետաքրքիր են պանրագործական արհեստանոցի պեղումները[294], ուր գտնվել են միջին չափի մի քանի տասնյակ կարասներ: Դա վկայում է պետական խոշոր տնտեսության առկայության մասին: Այդ անոթների մի մասը ծառայել է որպես թաղման կարասներ (Աղ. 170, նկ. 2-4), որոնք աճյունասափորների նման ունեն անցքեր՝ արված անոթի թրծումից հետո: Մասնավորապես այդպիսի կարասներ հայտնաբերվել են Արգիշտիխինիլիի[295] պեղումներից, որոնք նույնությամբ կրկնում են մառաններում և կացարաններում հայտնաբերվածներին: (Աղ. 178, նկ. 1):

Բիայնական խոշոր ու միջին կարասների մի զգալի մասն ի տարբերություն մյուսների, պատրաստվել է ձեռքի ու դուրգի միջոցով: Սակայն այս խմբի մեջ հանդիպում են առանձին օրինակներ, որոնք պատրաստվել են ձեռքի միջոցով: Այդ եղանակների մասին հետաքրքիր հաշվարկներ է կատարել Լ. Ն. Բիյագովը[296], ըստ որի, Հայաստանի խեցեգործական արտադրության մեջ, սկսած բրոնզեդար-

---

[291] *Б.Б. Пиотровский*, ук. соч., с. 146-147.
[292] Նույն տեղում, էջ 137:
[293] Նույն տեղում, էջ 147:
[294] *Ս.Ս. Եսայան*, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, III, Երևան, 1972, էջ 19-20:
[295] *А.А. Мартиросян*, Аргиштихинили, с. 100, рис. 36 /б/.
[296] *Л.Н. Биягов*, Материальная культура долины реки Мармарик /эпохи поздней бронзы – раннего железа /, автореферат канд. дис., Ереван, 1986, с. 15-16.

յան ժամանակաշրջանից, դուրգով պատրաստված անոթների քանակը հասնում է 70%-ի, մնացածը կատարվել է ձեռքով: Այս տեսակետը կարելի է տարածել նաև Վանի թագավորության խեցանոթների վրա, որոնց զուգահեռները գտնվել են Կարմիր բլուրում: Ինչպես նշում է Բ. Պիոտրովսկին[297], այստեղի խեցանոթների մեջ հանդիպում են շատ մեծ քանակությամբ բարձրորակ անոթներ՝ պատրաստված դուրգի վրա և համեմատաբար սակավաթիվ օրինակներ՝ արված ձեռքով, որոնք պատկանում են նույն ժամանակաշրջանին:

Այսպիսով՝ Արարատյան դաշտի հնավայրերից, ամրոց-բնակավայրերից հայտնաբերված Վանի թագավորության ժամանակաշրջանին պատկանող կարասների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնել այս անոթների տարբեր տիպեր:

Բոլոր կարասներն ունեն ձևաբանական ընդհանուր հատկանիշներ. սկսած շուրթից մինչև հատակը՝ պատրաստումից մինչև անգոբապատում և թրծում: Այս ամենը չի խանգարում մատնանշել այն կոնկրետ հատկանիշները, որոնցով կարասները տարբերվում են միմյանցից: Դա առաջին հերթին անոթների իրանների կառուցվածքին է վերաբերում՝ ձգված, ուռուցիկ, գնդաձև, ապա՝ շուրթերի տարբեր չափերին ու ձևերին՝ ուղիղ, հարթ, կտրած, կլորացող դուրս ճկված և այլն: Նկատվող երևույթը կարելի է բացատրել առանձին վարպետների, ինչպես և՝ միևնույն կենտրոնների տարբեր արհեստանոցների գոյությամբ, որի մասին վկայում են խոշոր կարասների վրա պահպանված վարպետների նշանները: Այդ նշանները հանդիպում են նաև այլ խմբերի կավանոթների վրա (քրեղաններ, թասեր, սափորներ և այլն): Դա ապացուցում է միևնույն արհեստանոցի և կավագործական տարբեր կենտրոնների՝ բազմազան խեցանոթներ արտադրելու հնարավորությունների մասին: Այսպես՝ վարպետների նշանագրերը՝ գտնված Կարմիր բլուրի պեղումներից, իրենց կրկնություններն ունեն Արարատյան դաշտի բազմաթիվ հուշարձանների խեցեղենի վրա (Արգիշտիխինիլի, Էրեբունի, Օշական, Արագած): Միևնույն ժամանակ այս անոթների լայն զուգահեռները հանդիպում են ոչ միայն Ազա երկրի, այլև ողջ Վանի թագավորության հանրահայտ հուշարձաններում (Տուշպա, Հայկաբերդ, Բաստամ, Կայալի Դերե, Ալթին-թեփե):

Պեղումներից հայտնաբերված անոթների հաջորդ խումբը *ծխամաններն* են, որոնք հիմնականում բեկորային են: Սրանք կարմրավուն սնամեջ ոտքի վրա կլորացող իրանով, հարթ, դուրս ճկված շուրթով սկահակներ են (Աղ. 118, 119), որոնք իրանի վրա ունեն ուղղանկյուն, եռանկյուն, ձվածիր անցքեր: Այս երկմասանի անոթները ծառայել են որպես ծխամաններ, կարասներն ու խոշոր անոթները

[297] *Б.Б. Пиотровский*, ук. соч., . 93.

ծծումբով ծխացնելու և ախտահանելու համար: Ախտահանված անոթները ապահովում էին գինին փչանալուց: Այս փաստը վկայակոչված է Կարմիր բլուրում[298], որտեղ գտնվել են ծծումբի կուտակումներ գինու կարասների հետ միասին:

Գտնված անոթների մեջ մեծ թիվ են կազմում *սաջերը* (Աղ. 120), որոնք ունեն կլորացող ուղիղ կողեր, ուղիղ շուրթ, 0,15-0,45մ տրամագիծ, հարթ հատակ: Ծառայել են հացահատիկի, ցորեն, գարի, քունջութ բովելու համար: Հնարավոր է, որ այս սաջերի օգնությամբ նաև հաց է թխվել: Այս անոթները մրապատ են, պատրաստվել են համեմատաբար վատ հունցված կավից: Բացի վերոհիշյալից, Արագածի համալիրներից գտնված խեցանոթների մի զգալի խումբ առնչվում է կաթնամթերքի մշակման և պահպանման հետ: Քննարկվող խեցանոթները բեկորային են, դրանք *ծցումների*, պանրագործության մեջ կիրառվող *կրկնակի հաղորդակցվող անոթների* (Աղ. 121), խոշոր և միջին չափի *չանների* (Աղ. 122-124) և այլ անոթների հավաքածու են: Մի մասը օգտագործվել է ջուր պահելու նպատակով:

Ձցումները հիմնականում կավագույն, անգոբապատ անոթներ են, որոնք ունեն կանթ և իրանի վրա անցք: Այս խոշոր սափորները ներսի կողմից ունեն ելուստավոր մակերես, ինչը զուտ կաթի հարման տեխնոլոգիական խնդիրների հետ է կապված: Հանրահայտ է, որ նման անոթները ավելի շատ օգտագործվում էին հենց արոտավայրերում, քանի որ ամռանը կաթը կարող էր շուտ փչանալ: Այդ պատճառով տեղում կաթնամթերքի վերամշակումը խիստ կարևոր էր:

Վանի թագավորությունում պանրագործության մշակույթի զարգացածության մասին վկայակոչված է Թեյշեբաինիում[299]:

Արագածի համալիրներից հայտնաբերված խեցանոթների շարքում գտնվել են փոքրիկ, մեկ մեկու հաղորդակից՝ կարմիր անգոբապատ կլորավուն իրաններով, դուրս չճկած կլորացող շուրթով, հարթ կամ սրացող հատակներով անոթներ, որոնք կապվում են պանրի արտադրության հետ:

Չանները (Աղ. 122-124) հանդիսանում են առանձին մեծ խումբ, որոնք հանդիպում են բոլոր կացարաններում՝ հիմնականում բեկորային վիճակում: Դրանք սահուն դեպի վեր լայնացող իրանով, ուղիղ կտրված, կամ կլորացող դուրս ճկված շուրթով, նեղ հարթ հատակով բարձրորակ անգոբապատ, կարմրավուն, դեղնագույն անոթներ են: Այս անոթները հիմնականում առնչվում են կաթնամթերքի հետ:

Արագածի համալիրներից պեղված վերը ներկայացված խեցեղենը կարասներից մինչև չանները ունեն տնտեսական նշանակութ-

[298] *Б.Б. Пиотровский*, Кармир-Блур II с. 23, 25, 40, *նույնի* Кармир-Блур III, Ереван, 1955, с. 15.
[299] *Б.Б. Пиотровский*, Ванское царство, с. 189, *Ս.Ա.Եսայան*, Կարմիր բլուր, Երևան 1982, էջ 36:

յուն և լայն տարածում են ունեցել Վանի թագավորությունում՝ մասնավորապես Արարատյան դաշտում: Բարենպաստ կլիմայական պայմանների առկայությունը հնարավորություն էր տալիս երկրագործության, ինչպես նաև անասնապահության տնտեսածնի զարգացման համար: Դրանով ապահովվում էր ոչ միայն տարածաշրջանի պետական կարիքների համար նախատեսվող բնամթերային բազան, այլև ստացվող մթերքով կարելի էր լուծել բնակչությանը սննդով բավարարելու խնդիրը:

Արագածից հայտնաբերված խեցեղենի երկրորդ խոշոր կատեգորիան *կենցաղային սպասքն* է: Այն բաժանվում է կիրառական երեք խմբերի՝ *հասարակ, խոհանոցային և հանդիսական* խեցանոթներ:

Հասարակ խեցեղենն իր բնույթով տարատեսակ է, հիմնականում կարմրավուն, դեղնավուն անգոբապատ: Դրանք համեմատաբար ավելի լայն տարածում ունեն և իրենց որակական հատկանիշներով և պատրաստման տեխնոլոգիայով զիջում են հանդիսական սպասքին, չնայած առանձին օրինակներ ձևաբանությամբ կրկնում են միմյանց: Ինչ վերաբերվում է խոհանոցային խեցանոթներին, ապա դրանք աչքի են ընկնում առատությամբ: Այս անոթներն ունեն սև, գորշ մակերես, մրապատ են և հաճախ պարզունակ զարդանախշված: Անոթների վերոհիշյալ խմբերը, անշուշտ ունեն սոցիալական պատկանելություն և որոշակի կիրառական դաշտ:

Նշված կատեգորիայի խեցանոթներից առաջին տիպը, որը առանձնացվում է նաև Արագածի նյութերում՝ *առանց կանթի սափորներ* են (Աղ. 126-131): Ունեն ձգված կլորացող իրան, կարճ վիզ, դեպի դուրս ճկված կլորացող շուրթ, հարթ ոչ մեծ հատակ: Մակերեսը ողորկ է, կարմիր անգոբապատ, փայլեցրած: Դիտարկվող սափորները որպես կանոն զուրկ են նախշազարդից: Առանձին դեպքերում ունեն ուռուցիկ, ալիքաձև, խորադիր եղնգանախշ հորինվածք, որը լայն տարածում ունի բրոնզ-երկաթեդարյան խեցեղենի վրա:

Մեկ կանթանի կարմիր և դեղնավուն անգոբապատ սափորները (Աղ. 1132-139) բաժանվում են երկու ենթատիպերի՝ օյնախոյ և կլորացող շուրթերով: Առաջինն ունի կլոր կամ գնդաձև իրան, հարթ կամ նստուկով հատակ, կանթը կտրվածքում լոբաձև է: Երկրորդ ենթատիպը բացի կանթի և շուրթի ձևից կրկնում է նույն կառուցվածքը: Եթե օյնախոյ տիպի սափորների կանթերը կտրվածքում լոբաձև են, ապա մյուս խմբի կանթերը փոսիկավոր, աստիճանաձև, երբեմն ուռուցիկ ելուստավոր զարդանախշ ունեն, որը շատ բնորոշ է Անդրկովկասի մ.թ.ա. VIII-VIդդ. խեցանոթներին: Մեկ կանթանի սափորները զուրկ են զարդանախշումից, միայն վզի և իրանի միացման հատվածում արված են ուռուցիկ, կամ ակոսով նեղ գոտենախշ:

Թեյնիկ-քամիչները խիստ բեկորային են, օրինակները աչքի են ընկնում կարմրագույն անգոբապատ մակերևույթով, առանձին խեցեբեկորների վրա արված են ծորակներ, որոնք անոթի իրանի միացման հատվածում ծակոտկեն հարդարում ունեն (Աղ. 140, 141):

Պեղումների ժամանակ գտնված խեցանոթների մեջ խոշոր մասնաբաժինը ընկնում է *քրեղանների և թասերի խմբին* (Աղ. 144-150): Այս տիպի անոթները դեղին, կարմիր, երբեմն գորշ անգոբապատ մակերևույթով, կլորացող, եզրագծված կողերով, նստուկով կամ հարթ հատակով լայնաբերան խեցանոթներ են: Հանդիպում են նաև կլորացող կանթով, առանց զարդամոտիվների գտածոներ:

Թասերի, քրեղանների հետ հաճախ հանդիպող խեցանոթների հաջորդ տիպը *պնակներն* են: Ունեն խիստ փռված իրան, փոքր հաստացող շուրթ, հարթ, օղակաձև նստուկով հատակ: Այս խեցանոթները բավականին թեթև են և բարձրորակ: Աչքի են ընկնում անգոբապատ փայլուն մակերևույթով, դեղին, կարմիր, հաճախ դարչնագույն երանգավորմամբ: Առանձին նմուշների վրա անգոբի հեռացման մեթոդով արված են գծանախշեր:

Վերը քննարկված խեցեղեն նմուշները հասարակ կենցաղային սպասքի օրինակներ են, որոնք լայն կիրառություն են գտել Վանի թագավորության տնտեսական համալիրում, երկրի բնակչության ամենօրյա կարիքները բավարարելու համար: Նման հասարակ խեցեղեն հայտնաբերվել է ուրարտական բազմաթիվ հուշարձաններից. Էրեբունի, Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր, Արամուս, Օշական, Դովրի, Տուշպա, Հայկաբերդ, Արծկե, Կայալի Դերե, Իգդիր, Բաստամ, Ալթին- թեփե և այլն[300]:

Խոհանոցային խեցեղենի կատեգորիային պատկանող գտածոների ամենաբնորոշ տիպը *կծուծներն* են (Աղ. 151-154): Այս անոթները օգտագործվել են ինչպես կերակուր պատրաստելու, այնպես էլ մթերք պահելու նպատակով: Համեմատաբար անշուք և տեխնոլոգիապես ոչ բարձր մակարդակի այս գտածոները խիստ մրապատ, երբեմն քայքայված վիճակում են: Ունեն ձգված, կլորացող, ուռուցիկ իրան, լայն բերան, կլորացող դուրս ճկված կամ թեք կտրված շուրթ: Հատակը հարթ է, ոչ մեծ չափերի, մակերեսը գորշ, շագանակագույն: Ի տարբերություն մյուս տիպերի, այս անոթներն իրանի վրա ունեն զարդանախշ: Զարդամոտիվների դաշտը կազմված է միաշար, բազմաշար հորիզոնական գծերից, կետազարդ, եղևնանախշ և հասկանախշ դեկորից, որը շատ մեծ տարածում ունի Արարատյան դաշտի և Անդրկովկասի երկաթեդարյան ամենատարբեր համալիրներում, որոնց թվագրման վերին սահմանը հասնում է նաև վաղ միջնադար: Արագածից, ինչպես նաև ուրարտական այլ համալիրներից հայտնաբերված մի փոքրիկ խեցեղեն հավաքածու, հիմնականում բեկորային տեսքով, ներկայացված է գորշ մակերևույթով *ճրագներով*: Այս ա-

[300] *Գ.Գ. Ավետիսյան,* Биайнская керамика из памятников Араратской долины, с. 44-63.

նոթներն ունեն միջնապատ, որը թասածև իրանը բաժանում է երկու անհավասար մասերի: Ճրագները լցվել են ձեթով, որը պատրույգի օգնությամբ այրվել է լուսավորելով սենյակները (Աղ. 155, 156):

Կենցաղային խեցեղենի վերջին խումբը *հանդիսական սպասքն* է: Դրանք բարձրորակ, կատարելապես մշակված մակերևույթով խեցանոթներն են՝ *երկկանք սափորներ, միականք սափոր-գավաթներ, փիալաներ* և այլն (Աղ. 157-167):

Սափոր-գավաթները կարմիր, դեղնագույն անգոբապատ ձգված, ուռուցիկ իրանով, բարձր փողալայնուկ վզով, ուղիղ շուրթով, հարթ փոքրիկ հատակով անոթներ են: Դրանք (Աղ. 157-159) ունեն ձգված կանթեր, որոնցից մի քանիսը վերին հատվածում օժտված են եռանկյունաձև ելուստով: Արագածի բնակելի համալիրներից հայտնաբերված գտածոների մեջ առանձնանում է դեղնավուն անգոբապատ մեկ կանթանի գավաթ սափորը, որի իրանի վրա փայլեցման եղանակով արված է վարպետի նշան N տառի տեսքով (Աղ. 159, նկ. 2, 3): Նման անոթները սովորաբար հայտնաբերվել են ուրարտական համալիրների սրբազան անկյուններում[301]: Հանդիսական սպասքի հաջորդ խումբը *փիալաների* (Աղ. 160, 161) տիպն է[302], որը բաժանվում է երկու տարբերակի: Առաջինը ներկայացված է ցածր իրանով, խիստ եզրագծված կամ ուղղանկյուն ուսերով զարդարված՝ հարթ կամ կլորավուն (գդալատիպ) զարդանախշով, կլորացող կամ կենտրոնում ներծկված հատակով անոթներով: Երկրորդ տարբերակը հարթ մակերևույթով, կլորացող իրանով եզրագծված կողերով, քիչ կլորացող հատակով փիալաներն են:

Բացի վերը հիշատակված գտածոներից, Արագածի պեղումների ժամանակ հայտնաբերվել են բարակ պատերով, փայլուն անգոբապատ խեցանոթների մի հավաքածու, որոնք չեն ունեցել ամենօրյա կիրառություն, չնայած ձևաբանորեն հանդիսանում են կենցաղային սպասքի նմուշներ:

Արագածի, ինչպես նաև ուրարտական մյուս համալիրներից հայտնաբերված խեցանոթների երրորդ կատեգորիան, որը չափազանց կարևոր նշանակություն ունի Վանի թագավորության հոգևոր և նյութական մշակույթի բազմաբնույթ խնդիրների մեկնության համար, *պաշտամունքային խեցեղենն* է: Այս կատեգորիան բնորոշվում է, որպես այդպիսին միայն կիրառական նշանակությամբ: Քննարկվող խեցանոթների ձևաբանական բազմազանությունը երկրորդական նշանակություն ունի խնդրո առարկայի համար:

Պեղված անոթները (Աղ. 163-167, 173, 174) կապված են

[301] Հ.Հ. Մարտիրոսյան, Արուսուխանում, էջ 148. Հ.Ա. Ասատրյան, Ա.Ա. Կանտարյան, նշ. աշխ., էջ 70-71:
[302] Հ.Հ. Լալայան, Ուրարտական սպասքի ձևերի ընտրությունը Վանի թագավորության խեցեգործության մեջ. Բանբեր Երևանի համալսարանի, 1986, 2, էջ 116-117:

բժշկության, հեղման արարողությունների և այլ պաշտամունքային դրսևորումների հետ: Հավաքված խեցանոթները իրենց կիրառությամբ բաժանվում են մի քանի հիմնական խմբերի: Առաջին՝ *հեղման արարողակարգի համար օգտագործվող անոթներ*: Երկրորդ՝ արարողություններում *(հրի) կրակի օգտագործման համար կիրառվող խեցեղեն*: Երրորդ՝ *անուշահոտ յուղերի, քսուկների և դեղորայքի անոթներ*: Կան նաև անոթներ, որոնք հանդես են գալիս որպես *օսուարիներ՝ թաղման համար նախատեսվող ածյունասափորներ* (Աղ. 142, նկ. 2), (Աղ. 170, 171):

Հեղման ակտի հետ կապված խեցանոթները[303] շատ չեն: Դրանք ներկայացված են բարձրորակ սափորների և փիալա-թասերի խմբով: Հեղման արարողությունը գինով և հեղուկով փաստագրված է թե գրավոր աղբյուրներում, ինչպես օրինակ Լուվրի՝ Սարգոն II կողմից թողած սալիկների տեքստերում, թե կիրառական արվեստի նմուշներ հանդիսացող բրոնզից գոտիների, սրբազան նվիրատվական թիթեղների և առանձին արտեֆակտերի վրա: Դրանք ամենատարբեր կոմպոզիցիաներով հագեցված պատկերագրական նմուշներ են, որտեղ կերտված են թևավոր ցուլերի, թռչնի տեսքով մարդկային ֆիգուրների, այծերի, սրբազան ծառերի շարքեր: Կենտրոնական մոտիվը, որպես կանոն մարդկանց, աստվածների, քրմերի, երբեմն թագավորների պատկերներն են, որոնք արարողակարգի հիմնական կատարողներն են՝ ձեռքերին պահած թաս-փիալաներ, սափոր-գավաթներ: Բիայնացիները ծիսական արարողության ժամանակ աստվածներին զոհաբերել և ծոնել են ամենատարբեր հեղուկներ՝ գինի, սրբազան ջուր և այլն: Հեղելու համար օգտագործվել են հատուկ նախատեսված անոթներ, որոնք պատկերված են նաև ասսուրական բարձրաքանդակներում, ուրարտական որմնանկարներում: Արծկեից հայտնաբերված հայտնի բարձրաքանդակի վրա պատկերված է ծիսական մի արարողակարգ, ուր գլխավոր աստված Խալդին մեկ ձեռքով բռնել է անոթ, իսկ մյուսով՝ սրբազան ծառի ճյուղը: Էրեբունու որմնանկարներում կան դրվագներ, երբ քուրմը ձեռքին բարձր պահած թաս ունի և օրհնում է սրբազան գինով լցված, իր առջև դրված կարասը:

Արագածի պեղումներից հայտնաբերված խեցանոթների մի առանձին խումբ կապվում է ծիսական արարողության ժամանակ կրակի օգտագործման հետ: Այդ անոթները ծխաման-սկահակներն են, առանձին գավաթները: Ինչպես նշում է Ա. Մարտիրոսյանը[304], այս բարձրորակ անգոբապատ խեցանոթները դրվում էին մետաղից եռոտանիների, աշտանակների վրա, կատարելով համապատասխան

[303] *Գ.Գ. Ավետիսյան*, նշ. աշխ., էջ 88-90.
[304] *Ա.Ա. Մարտիրոսյան*, Արուսուխանում, էջ 148.

ֆունկցիա: Նման պատկերները փաստագրված են ասսուրական բարձրաքանդակներում, որտեղ պատկերված են սրբազան կրակով արարողության տեսարաններ: Նման անոթներ հանդիպում են կացարանների սրբազան անկյուններում, հարթակների վրա՝ համապատասխան ինտերիերում: Արագածի N 9 կացարանում զոհասեղան հարթակի վրա գտնվեց նման բեկորային մրապատ խեցանոթ, որն իր անմիջական աղերսներն ունի Կարմիր բլուրում[305]: Բացի այս մրապատ անոթներից, նման կիրառական նշանակությամբ ուրարտական խեցանոթներ գտնվել են Վանի թագավորության տարբեր համալիրներից: Բավականին հետաքրքիր բարդ ձևաբանությամբ կարմիր անգոբապատ յոթփողանի *կեռնոս* է (Աղ. 167) հայտնաբերվել Կարմիր բլուրում: Փոսորակների դեր են կատարել սափորի ուռուցիկ իրանին ամրացված 7 փոքրիկ անոթները: Այս գտածոն իր զուգահեռներն ունի ավելի վաղ թվագրություն ունեցող Մեծամորի[306] և Ծաղկալանջի համալիրներում: Թեյշեբաինիից հայտնաբերված կեռնոսը օգտագործվել է կրակով և սրբազան հեղուկով ծիսակատարության ժամանակ, որի հետքերը որոշակիորեն հաստատագրվել են անոթի վրա: Կրակի օգտագործման ծիսական նշանակության մասին որոշակի պատկերացում ենք կազմում նաև ազգագրական դիտարկումների ժամանակ, մասնավորապես ժողովրդական տոների և արարողությունների հետաքրքիր և բազմաբնույթ դաշտում: Դա առաջին հերթին կապված է լայն տարածում գտած Տյառնընդառաջի հետ:

Տոնի պաշտոնական Տյառնընդառաջ անունը բացատրվում է այսպես. համաձայն ավանդույթի Փրկչի ծննդյան քառասուներորդ օրը նրա ծնողները՝ Մարիամն ու Հովսեփը, որդուն տաճար տարան: Այստեղ նրան ընդառաջ եկավ խոր ծերության հասած և տիրոջ գալստյանն սպասող Սիմոն ծերունին, որտեղից և տոնի անունը՝ *Տյառնընդառաջ* - Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն, ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Նշվում է փետրվարի 13-ին, և նշանակալից դեր է կատարում: Այն պատկերացումը կար, որ «Տրրընդեզի կրակը իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն»: Ահա այս գաղափարների շուրջն էլ կառուցված էին տոնական արարողությունները:

Տյառնընդառաջի հիմնական ծեսը, հիրավի, խարույկ վառելն էր: Որոշ տեղեր խարույկը վառում էին միայն եկեղեցու բակում, այլ վայրերում՝ բոլոր տների բակերում, երրորդներում՝ միայն նշանված

[305] *Б.Б. Пиотровский*, Кармир-Блур II с. 21-24.
[306] *Է.Վ. Խանզադյան, Կ.Հ. Մկրտչյան, Է.Ս. Պարսամյան*, Մեծամոր, Երևան, 1973, էջ 129, նկ. 128:

աղջիկների և նորապսակ ունեցող ընտանիքների բակերում: Գերադասելի էր խարույկի համար օգտագործել հատուկ ծառի փայտ: Սակայն անտառազուրկ վայրերում ծղոտ էլ էին վառում: Բոլոր դեպքերում խարույկի փայտը կամ այլ վառելիքը բերում էին նշանված ու նորապսակ երիտասարդները, ընդ որում բերում էին բուն տոնի օրը: Առաջինը, քահանայի օրհնությունից հետո, վառում էին եկեղեցու բակի մեծ խարույկը: Կրակը վառելու պատվավոր իրավունքը նորապսակ, այդ տարի ամուսնացած նորափեսաներինն էր. եթե գյուղում նույնիսկ 10 նորափեսա լիներ՝ բոլորն էլ պետք է մասնակցեին կրակը վառելու արարողությանը, պայմանով, որ յուրաքանչյուրը որևէ ընծա տար եկեղեցուն՝ մեկ ոչխար, մի տիկ գինի, դրամ և այլն: Այս խարույկը հատուկ էր, այն ողջ համայնքի ընթացիկ տարվա կյանքի նախագուշակը պիտի լիներ: Ամբողջ ժողովուրդն այստեղ էր հավաքվում՝ հետները նորանոր փայտեր, նույնիսկ գերաններ բերելով և կրակը թեժացնելով և միմյանց կոչ անելով «ծմեռը վառել»: Հավաքվածները ուշադիր հետևում էին խարույկի ծխի ուղղությանը այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Տարածված էր այն պատկերացումը, որ Տյառնընդառաջի հետ վերջանում է «ծմռան քառասունքը»: Այս մեծ, գլխավոր խարույկից մասնակիցները խանձողներ էին տանում, որով վառում էին բակերի խարույկները[307]:

Հաջորդ՝ երրորդ, բավականին հետաքրքիր խումբը դեղօրայք, անուշահոտ յուղեր և օծանելիք պահելու համար օգտագործվող անոթներն են (Աղ. 173, 174): Դրանք բաժանվում են երկու խմբի՝ լայնաբերան՝ բժշկության հետ կապված և նեղ վզով անուշահոտ յուղեր, օծանելիք պահելու համար նախատեսված խեցանոթներ: Բոլոր քննարկվող անոթները աչքի են ընկնում բարձր որակով և խիստ փոքրիկ չափերով: Դրանց բարձրությունը հասնում է անգամ 0,1մ: Նշվածներն ունեն կարմիր, դեղին, սև անգոբապատ մակերես և իրենց կառուցվածքով կրկնում են ուրարտական խեցանոթների համարյա բոլոր հայտնի ձևերը՝ կարասներից մինչև թասեր: Արագածից հայտնի, հիմնականում բեկորային, խեցանոթների խումբը լայն զուգահեռներ ունի Արգիշտիխինիլիի «բժշկի տան»[308] պեղածո նյութի հետ: Նմանօրինակ խեցեղենից զատ այստեղ գտնվել են կենդանիների, յուրահատուկ ոսկրաբանական մնացորդներ: Այս փոքրածավալ անոթները չէին կարող հանդիսանալ տնտեսական, կենցաղային տարա և ըստ ամենայնի ծառայել են դեղօրայք, յուղեր, քսուկներ[309] պահելու համար հատուկ նախատեսված օրինակներ: Բացառված

[307] *Հ. Խառատյան-Առաքելյան*, Հայ ժողովրդական տոները, Երևան 2000, էջ 44-45:
[308] *А.А. Мартиросян*, ук. соч., с. 119, 133.
[309] *Р.М. Джанполадян*, О трех образцах стекла из Кармир-Блура, Советская Археология, 1, с. 307-312.

չէ, որ այս անոթների մեջ պահված լինեն նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, զարդեղեն: Հայտնի փաստ է, որ Վանի թագավորությունում և ամբողջ Հին արևելքում ծիսական արարողությունների ժամանակ օգտագործվում էին ամենատարբեր ձևերի խեցանոթներ: Վերջիններիս խմբին պետք է դասել ուրարտական կարասները, որոնք հաստատագրվել են դամբարանային համալիրներում՝ Արգիշտիխինիլիում[310], Ալթին-թեփեում և այլն[311]՝ որպես աճյունասափորներ: Այս անոթների վրա արված են անցքեր, որոնք հանդիպում են նաև հատակներին: Մինչ դամբարանում դրվելը նման կարասներն օգտագործվել են ցորեն, կամ այլ տիպի հացահատիկ պահելու համար, ինչպես օրինակ Արագածում և այլ հնավայրերում:

Երևանի բիայնական դամբարանում գտնվել է հրաշալի լայնաբերան անոթ (Աղ. 142, նկ. 2), որի շուրթին քանդակված է դիմային արտահայտիչ մանրամասներով երեք ցլի գլուխ: Նման կարասատիպ անոթ գտնվել է նաև Թեյշեբաինում[312]:

Վանի թանգարանում պահվում է կարասի բեկոր, վրան քանդակված դիմային մանրամասներով ցլի գլուխ, որի ճակատին արված է սեպաձև նախշ[313]: Նման մի անոթ գտնվել է Բաղնոցի[314] պեղումներից, որի վրայի քանդակ պատկերը հորինվածքով կրկնում է «Ավտոագրեգատներից» հայտնաբերված ցլագլուխ անոթին:

Ինչպես տեսնում ենք, անոթների ցլագլուխ հարդարանքը ընդհանուր է Վանի թագավորության արվեստում և անմիջական կապ ունի պաշտամունքի հետ երկու առումներով: Առաջինը կարասների բուն կիրառությունն է որպես օսսուարի և երկրորդը զոոմորֆ պատկերագրումը, որը Հայկական լեռնաշխարհում ունի բավականին հին արմատներ: Երկրագործության և անասնապահության տնտեսածևի զարգացման հետ միասին հատկապես արժեվորվում է ցլի պաշտամունքը, որը բնորոշում է բնության երևույթներից կայծակը, ամպրոպը, որոտը, երկրային ջուրը: Պատահական չէ, որ ուրարտական պանթեոնում Թեյշեբան զուգակցվում է ցլի պաշտամունքի հետ՝ խորհրդանշելով ուժի, հզորության պտղաբերության կապը հողի բերրիության, առատության հետ: Արգիշտիի որդի Ռուսան կառուցելով քաղաք, այն ծոնեց Թեյշեբային՝ որոտի, պատերազմի աստծուն:

Արծկեից հայտնի բարձրաքանդակում պատկերված է Թեյշեբան՝ կանգնած ցլի վրա, աստղերով զարդարված շքեղ հագուստով:

[310] *А.А. Мартиросян*, ук. соч., с. 50-53.
[311] *Ս.Գ. Հմայակյան*, պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումը Ուրարտուում, Պատմա-Բանասիրական Հանդես, 1, 1986, էջ 113-133:
[312] *Б.Б. Пиотровский*, Ванское царство с. 192-193.
[313] Kultur ..., A – 776.
[314] Urartu, ein wiederentdekter Rivale Assyriens. Munchen, 1976, taf. 2.

Հարկ է նշել, որ Թեյշեբայի հագուստը տարբերվում է պանթեոնի գլխավոր աստծո՝ Խալդիի հանդերձանքից[315]: Կասկածից վեր է, որ այդ անոթների կանթերի փոխարեն քանդակված ցլագլուխ դեկորը պաշտամունքային բնույթ ունի: Այս երևույթն իր արտացոլումն է գտել մի շարք հնավայրերի, մասնավորապես Դվինի նյութերում[316], հետագայում բուռն զարգացում ապրելով: Նման խեցեղեն մեծ քանակությամբ պեղվել է Կարմիր բլուրի նախաուրարտական շերտերում և Արարատյան դաշտի այլ համալիրներում, ողջ Առաջավոր Ասիայում: Վանի թագավորության մշակույթում ցլի պաշտամունքի հույժ կարևորության մասին փաստագրված է «Միհրի դռան»[317] սեպագիր տեքստերում, որտեղ յուրաքանչյուր աստծո համար նախատեսվում է նաև ցուլերի զոհաբերման որոշակի քանակություն: Հետաքրքիրն այն է, որ պանթեոնի հիերարխիկ կառուցվածքում Խալդիից սկսած և հաջորդիվ իրենց նշանակությամբ տեղադրված աստվածների շարքին համապատասխանեցված է զոհաբերվող կենդանիների նվազող քանակներ: Ակնհայտ է, որ ցուցակում ընդգրկված են նաև նվաճած երկրների աստվածությունները, որոնց համար նույնպես նախատեսվել է զոհաբերվող կենդանիների որոշակի քանակություն: Բացի ցլի (պատկերներից) քննարկվող անոթների վրա հաճախ հանդիպում են նաև օձի ամենատարբեր պատկերներ, ինչպիսիք հայտնի են ուրարտական և մ.թ.ա. I հազարամյակի Արարատյան դաշտի համալիրներից՝ Կարմիր բլուր, Դվին, Մեծամոր, Այգեվան և այլն: Կարմիր բլուրից հայտնի կարասի վերին մասում արված է օձի պատկեր, իսկ Դվինից պեղված բարդ հորինվածքով կարասի վրա բացի օձից հանդիպում են այծի, եղջերվի, որսորդների, երկնային լուսատուների ռելիեֆային պատկերների շարքեր[318]: Օձի պատկերով, հասկանախշի հորիվածքով անոթներ են գտնվել նաև Մեծամորում: Հայտնի են նաև Մեծամորի օձի և ջրի պատկերներով կրակարան-կոթողները: Քննարկվող մոտիվները խորհրդանշում են պտղաբերության, հավերժության և վերածննդի գաղափարը: Օձի պատկերները լրացնում են նաև կիրառական արվեստի մի շարք արտեֆակտերի զարդամոտիվները: Դրանք հանդիպում են բրոնզից գոտիների, կացինների, ոսկուց, արծաթից ապարանջան-հմայիլների վրա[319], հայտնի Նոր Արեշից, Մուխանաթ թափայից, Թեյշեբաինիից, «Ավտոագրեգատի» կոլումբարիից: Միևնույն ժամանակ օձի պատ-

[315] *А.Р. Демирханян*, К мифопоэтическим истокам геральдических композиций, в кн. Культурное наследие Востока. Ленинград, 1985, с. 137.
[316] *К.Х. Кушнарева*, Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 23-24, рис. 23, 1-5.
[317] *Б.Б. Пиотровский*, ук. соч., с. 221-222.
[318] *Г.Г. Аветисян*, ук. соч., с. 82.
[319] *Ս.Ա. Եսայան*, Հայաստանի պատմության թանգարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 2, 1964, էջ 83-94:

կերը պահպանում էր չար ոգիներից, անհաջողությունից, նպաստելով վերարտադրությանը և ուժին: Օձի պաշտամունքի վերաբերյալ ինքնատիպ հայտնագործություններ են կատարվել Օշականում: Պեղված ոսկուց թիթեղով պատած սալիկների վրա պատկերված է երախը բաց առյուծի պատկեր, որի շուրջը նկարազարդված է գալարվող օձ[320]: Կարմիր բլուրի N 40 գինու պահեստից NN 17-19-ը կարասների մեջ հայտնաբերվել են ոսկուց օձի, առյուծի, գրիֆոնի պատկերներով թիթեղներ: Առայժմ դժվար է բացատրել, թե ինչու են թիթեղները գցել գինու մեջ: Բ. Բ. Պիոտրովսկին նշում է ոսկին գինու մեջ գցելու սովորույթը[321], որը սակայն հայտնի չէ ազգագրական համեմատականներում:

Արարատյան դաշտի թաղումներից հայտնաբերված անոթների շարքում հանդիպում են սափորների, կճուճների այլ անոթների խումբ, որոնք իրենց վրա ունեն անցքեր: Թաղման ածյունասափոր հանդիսացող այս անոթների մասին ինքնատիպ տեսակետ է հայտնել Գ. Ղափանցյանը[322]: Վաստակաշատ գիտնականը նշում է, որ Ուրարտուում կար աստվածություն, որը հոգիներ է տեղափոխում: Ամենայն հավանականությամբ անոթների վրա արված անցքերը անկախ քանակից ծառայել են, որպեսզի հանգուցյալի հոգին հաղորդակցվի այսպես կոչված արտաքին աշխարհի հետ: Բոլոր վերոհիշյալ անոթների վրա կատարված անցքերը կատարվել են թրծումից հետո, ինչը խոսում է դրանց կիրառական մի այլ բնույթի, որպես օսսուարի հանդես գալու մասին:

Արագածի ուրարտական համալիրներից հայտնաբերված խեցանոթները իրենց վրա ունեն վարպետի նշան հանդիսացող հիերոգլիֆ պատկերներ: Դրանք հիմնականում պարզ երկրաչափական պատկերներ են խաչի, եռանկյան, նետասլաքի տեսքով: Ի տարբերություն Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլիի և ուրարտական այլ համալիրներից գտնված օրինակների, որոնք ավելի բարդ հորինվածքի նշաններ և դաջեր են, Արագածից հայտնաբերված նշանները կատարվել են թրծումից հետո: (Աղ. 100, նկ. 23), (Աղ. 102, նկ. 18):

[320] *Հ.Ա. Եսայան,* Находки урартских изделий в Ошаканском могильнике, Древний Восток и Мировая Культура, Москва, 1981, рис. 78. /9, 12/.
[321] *Բ.Բ. Пиотровский,* Кармир-Блур III с. 22.
[322] *Գ.Ա. Капанцян,* Историко-лингвистические работы, Ереван 1975, 1, с. 91.

§ 4. ԻՄԻՏԱՑԻԱ (ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄ)

Վանի թագավորության հուշարձաններում, ինչպես նաև Արագածի միջնաբերդի և քաղաքային համալիրի կացարաններից հայտնաբերված տարատեսակ խեցանոթների մեջ հանդիպում են սպասքի առանձին տիպեր, որոնք չնայած թվագրվում են ուրարտական ժամանակաշրջանով, բայց պահպանել են իրենց ձևերը թագավորության անկումից հետո: Դրանցից շատերը հանդիսանում են մետաղի սպասքի դասական ընդօրինակում և գոյատևում են մինչև անտիկ ժամանակաշրջան:

Մասնագետները նկատել են, որ հին Հայաստանի և հարևան երկրների խեցեգործական արտադրության մեջ առանձնանում է հիմնականում ծիսական կամ տոնական նշանակության արվեստի հոյակապ նմուշներ հանդիսացող իրերի մի ոչ մեծ խումբ, որոնք կրկնում են ձուլածո կամ կոփածո մետաղե սպասքի ձևերը: Այսպես, օրինակ, դեռ միջին և ուշ բրոնզե ժամանակաշրջանի խեցեգործական արտադրության մեջ հանդիպում են կավե առարկաներ (Աղ. 162), որոնք իրենց ձևերով նույն և ավելի վաղ ժամանակաշրջանի մետաղե իրերի ընդօրինակություն են: Հատկապես հետաքրքիր են կիրովականյան և թրիալեթյան ոսկե, արծաթե գավաթների, թասերի ձևերը և զարդամոտիվները, որոնք իրենց ընդօրինակումներն ունեն Լճաշենի, Ծիծեռնակաբերդի, Ոսկեվազի, Վերին նավերի կավանոթների մեջ և միաժամանակ նման են փոքրասիական և Միջերկրականի մետաղե ու կավե իրերին[323]:

Այս տեսակետից բացառություն չէ մ. թ. ա. VIII-VIIդդ. Վանի թագավորության խեցեգործական արվեստը: Ինչպես նշում է Բ. Բ. Պիոտրովսկին, վաղուց արդեն նկատվել է, որ ուրարտական խեցանոթները՝ մեկ կանթանի սափորներ, փիալաներ, թասեր, հաճախ ընդօրինակվել են մետաղական սպասքի նմանօրինակ ձևերից: Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, նա հիմնականում ստուգաբանել է անոթների մի քանի ձևեր: Վերջին տարիներս հատկապես Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի տարածքից հայտնաբերված բազմաթիվ նոր նյութերի շնորհիվ պարզվում է, որ կավե անոթների բազմազան և հարյուրավոր օրինակներ կրկնում են նմանօրինակ մետաղե սպասքի ձևերը՝ մի երևույթ, որը Վանի թագավորության կավագոր-

[323] *Բ.Բ. Пиотровский,* Археология Закавказья, Ленинград, 1949, с. 47, *Ա.Օ. Мнацаканян,* О двухцветной керамике Лчашена, Известия АН Арм. ССР, 5, 1957, *Կ.Խ. Кушнарева,* Поселение эпохи бронзы на холме Узерлик тепе, В кн.: Материалы и исследования по археологии СССР /МИА/ 67, М., 1959, рис. 12, 13, 15, *Ա.Ա. Мартиросян,* Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 65, *Հ.Ա. Եսայան,* Ереван /археологический очерк/, с. 43, *Գ.Ե. Арешян,* Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века, Советская Археология, 1973, 4, с. 40-49, *Թ.Հ. Хачатрян,* Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 218, 220.

ծության մեջ ուներ մասսայական բնույթ[324]: Այս նյութերը, որոնք հայտնաբերվել են տարբեր բնակավայրերից, ամրոցներից և դամբարաններից, կազմում են բավականին մեծ խումբ, և որոնց մեջ աչքի են ընկնում կարմիր, բարձրորակ անգոբապատ մեկ կանթանի սափորները, թասերը, փիալաները, գնդաձև անկանթ անոթները, գավաթները և այլն:

Մեզ հայտնի մետաղե սպասքի ձևերը, որոնք ունեն իրենց կավե ընդօրինակումները, ավելի վաղ են թվագրվում (Իշպուինիի, Մենուայի, Սարդուրիի արձանագրություններով անոթները), և դրանց ընդօրինակումը կավանոթներում արտացոլված է ոչ միայն ընդհանուր ձևերի, այլև պատրաստման տեխնոլոգիայի տեսակետից մետաղե անոթներին բնորոշ առանձին մանրամասների պահպանմամբ, ինչպես օրինակ, կավե սափորների իրանի վրայի ուռուցիկ գոտիները, նրանց կանթերի, շուրթերի, հատակների ձևերը, փիալաների գնդաձև ելուստանախշերի և ուռուցիկ ներս ընկած հատակի կառուցվածքները և այլն, նման են մետաղե անոթներին:

Այս անոթները իրենց ձևերով բավականին բազմազան են: Մենք այն դասակարգել ենք հետևյալ խմբերի:

Գնդաձև իրանով անկանթ սափորներ (Աղ. 128, նկ. 1-5), (Աղ. 171) Այս խմբի անոթները բազմաքանակ չեն: Սրանք, ըստ երևույթին, ընդօրինակում են մետաղե սպասքը, որի օրինակները մեզ հայտնի են Ալիշարից և Ալթին թեփեից[325]: Վերջիններս ունեն կարճ վիզ, քիչ դուրս ճկված շուրթ, գնդաձև իրան, որի վերին մասը զարդարված է ուռուցիկ գոտիով: Հատակի մասում առկա է աննշան գոգավորություն, որն անոթին տալիս է գնդի ձև: Մեզ հայտնի նմանատիպ կավե սափորները գտնվել են Վանի թագավորության հուշարձաններից և ունեցել են հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտ և Արաքսի աջափնյա շրջաններ (Վանի թագավորության հյուսիսը և հյուսիս-արևելյան մարզեր), Էրեբունի[326], Կարմիր բլուր[327], Օշական[328], Իգդիր[329], Բաստամ[330], Արգիշտիխինիլի, Արածանի-Եփրատ գետերի ավազան, Ալթին-թեփե[331]:

[324] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 189, *Հ.Գ. Ավետիսյան,* Մետաղե սպասքի ձևերի ընդօրինակումը Վանի թագավորության խեցեգործության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի, 1988թ. 2, էջ 112-121:

[325] *С.И. Ходжаш,* Керамика Эребуни – "Сообщение Гос. музея изобразительных искусств им. А.С. Пушкина ", вып. 4, М., 1968, Таб. 1, рис. 4.

[326] *С.И. Ходжаш, Н.С. Трухтанова, К.Л. Оганесян,* ук. соч., с. 101.

[327] *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, Ереван 1961, с. 131, рис. 51.

[328] *С.А. Есаян, А.А. Калантарян,* Позднеурартское погребение Ошакана, Историко-Филологический журнал, 3, с. 270. Таб. 1, рис. 9.

[329] *Б.А. Куфтин,* Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит с. 15, Таб. 12, рис. 2.

[330] *L.V. Berghe en L. Meyer,* Urartu /een vergeten cultuur uit het bergland Armenie/ Gent, 1982-1983, p. 206, 207.

[331] *С.И. Ходжаш, Н.С. Трухтанова, К.Л. Оганесян,* ук. соч., с. 101.

Մետաղե սպասքի բացարձակ ընդօրինակում է Էրեբունիից հայտնաբերված մոտ կես մետր բարձրությամբ սափորը, որի կլոր իրանը, քիչ ճկված շուրթը, ուսի ուռուցիկ գոտին ինչպես տեսնում ենք, ճիշտ կրկնում են վերը նշված բրոնզե անոթների ձևերը: Կավե սպասքի այս տեսակը զուրկ է զարդանախշերից: Ինչպես նշում են Վանի թագավորության մետաղագործության և կավագործության խնդիրներով զբաղվող մասնագետները[332], կրկնելով մետաղե թանկարժեք իրերի ձևերը կավե խեցանոթներում՝ վարպետները աշխատել են պահպանել մետաղագործի պատրաստած բրոնզե սափորների արտաքին տեսքը, բնորոշ գծերը: Բացի վերը նկարագրված ամբողջական սափորից, Էրեբունիում գտնվել են նաև նմանատիպ անոթների բազմաթիվ բեկորներ, որոնք վկայում են նրանց լայն տարածման մասին: Նմանօրինակ անոթ գտնվել է Արգիշտիխինիլիից, որը Էրեբունու սափորից տարբերվում է միայն չափերով: Կարմիր բլուրի, Օշականի և Բաստամի նմանաձև սափորները վերը նկարագրված մետաղե և կավե համանուն անոթներից տարբերվում են միայն ուսի վրայով անցնող ուռուցիկ գոտու բացակայությամբ, վկայելով այն մասին, որ կավագործ վարպետները մետաղե սպասքը ընդօրինակելիս նրա ձևերը պարզեցնում էին:

Միաժամանակ Էրեբունիից գտնված սափորի և մյուս անոթների վերլուծությունը ցույց է տալիս, որ կավագործ վարպետները ընդօրինակում և ոչ թե պատճենում էին մետաղե սպասքի ձևերը, տալով սափորներին տարբեր չափեր: Այսպես, Ալիշարի բրոնզե սափորը ունի 17 սմ բարձրություն, Էրեբունիինը՝ 43 սմ, Բաստամինը՝ 9,5 սմ, Արգիշտիխինիլիինը՝ 12 սմ:

Մեկ կանթանի սափորներ (Աղ. 132, նկ. 1-6): Այս մետաղե սափորները լայն տարածում են ունեցել Վանի թագավորության մ.թ.ա. VIII-VII դդ. հուշարձաններում: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեկ կանթանի 2 բրոնզե (մեկը՝ թերի) և մեկ արծաթե սափորները[333], գտնված Կարմիր բլուրից: Վերջինս ունի 25 սմ բարձրություն, որի կանթի վերին և ստորին հատվածները զարդարված են պարույրներով և շեղանկյուններով: Սափորի վզի վրա առկա է ուռուցիկ գոտի՝ սրացող եզրերով և երեք հիերոգլիֆ նշաններով: Մետաղե նմանատիպ անոթներ հայտնաբերվել են Թոփրախ-կալեի[334], Ուրմիայի

[332] *R.D. Barnett and M. Gökce,* The find of Urartian Bronzes of Altin-Tepe Near Erzincan, Anatolian Studies, 16, London, 1953, p. 121-129.

[333] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур, III, с. 13, рис. 13, *նույնի* Искусство Урарту, Ленинград, 1962, с. 88.

[334] *S. Kroll,* Keramik Urartäischer Festungen in Iran, Berlin, 1976, p. 186.

տարածքի հուշարձաններից՝ Ռեզայե[335], Նուշի ջան[336], ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանից, Պարսկահայքից, որ պահվում են Շվեյցարիայի, Մայնցի, Մյունխենի թանգարաններում[337]: Դրանք հրապարակող հեղինակները նշում են, որ այս առարկաները գտնվել են Արևելյան Թուրքիայից, Իրանական Ադրբեջանից կամ Հյուսիս-արևելյան Իրանից: Շփոթություն չառաջացնելու նպատակով այս շրջանների համար մենք ստորև կօգտագործենք Վանի թագավորության կենտրոնական կամ արևելյան մարզեր անվանումները:

Այս գտածոների մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկու բրոնզե սափորները, որ հայտնաբերվել են Վանի թագավորության կենտրոնական շրջաններից ու պահվում են Շվեյցարիայի և Մայնցի թանգարաններում[338]: Առաջինը իրենից ներկայացնում է 15,3 սմ բարձրությամբ մեկ կանթանի փոքրիկ սափոր՝ ուռուցիկ իրանով, երկար վզով, դուրս ծկված շուրթով: Անոթի իրանի վերին մասը զարդարված է երկու ուռուցիկ գոտիներով: Իր ձևով այն նման է Կարմիր բլուրից գտնված արծաթե սափորին, տարբեր է չափերով: Երկրորդ անոթը՝ 23,7 սմ բարձրությամբ, նույնպես նմանվում է Կարմիր բլուրի արծաթյա սափորին, միայն այն տարբերությամբ, որ սրա վիզը կարճ է, և իրանն ունի կլորացող գնդի ձև, իսկ կտրվածքում կանթը ավելի հաստ է և կլորավուն: Հաջորդ երկու մետաղե սափորները՝ բրոնզից և արծաթից (Մյունխենի թանգարան)[339], իրենց ձևով ու չափերով մոտենում են Կարմիր բլուրի անոթներին, սակայն նրանցից առաջինի հատակը ունի կլորացող նստուկ, իսկ երկրորդը իրանի ամենալայն մասում՝ ուռուցիկ գոտի, որը չի նկատվում վերը նկարագրված բոլոր բրոնզե, արծաթե, ինչպես նաև կավե մեկ կանթանի սափորների վրա: Ինչպես տեսնում ենք, մետաղե իրերի այս խմբի մեջ կա զգալի բազմազանություն, որն արտահայտվում է սափորների իրանի ուռուցիկությամբ, վզի բարձրությամբ, հատակի կառուցվածքով: Հիշյալ առանձնահատկությունները, ինչպես կտեսնենք ստորև, իրենց արտացոլումն են գտել կավագործ վարպետների արտադրանքում, որը մեկ անգամ ևս վկայում է նրանց՝ մետաղե սպասքի ձևերից ընդօրինակման մասին: Նմանատիպ կավե անոթներ՝ ակոսավոր կանթի, ճզմված շուրթի կառուցվածքի պատճառով հնագիտական գրականության մեջ ստացել են օյնախոյ անունը:Նրանք գտնվել են հետևյալ շրջաններում՝ 1. Վանի թագավորության հյուսիս և հյուսիս-արևելյան շրջաններ (Արարատյան դաշտ և Արաքսի ա-

[335] Նույն տեղում:
[336] Նույն տեղում:
[337] *L. V. Berghe en L. de Meyer*, նշվ. աշխ, նկ. 170, 171:
[338] Նույն տեղում:
[339] Նույն տեղում:

ջափնյա հուշարձաններ), Էրեբունի[340], Արգիշտիխինիլի[341], Կարմիր բլուր՝ միայն N 29 մառանից 1036 հատ[342], Օշական[343], Երևան քաղաքի տարածքի հուշարձաններից՝ Մոսկովյան փողոց (այժմ՝ Սարյան), Ավտոագրեգատների գործարան, ինչպես նաև Բաստամից և այլ վայրերից[344], 2. Վանա լճի ավազան. Թոփրախ-կալե, Արծկե (Ադիլջևազ), Հայկաբերդ (Չավուշ թեփե), Բաղնոց[345], 3. Արածանի-Եփրատ գետերի ավազան. Նորշուն-թեփե, Կայալի դերե. 4. Ուրմիայի ավազան, Խոյ, Մուծածիր և այլն[346]:

Այժմ մի քանի անոթների համեմատություններով փորձենք ցույց տալ մեր դիտարկումների արդյունքները, որոնք հաստատում են այս ձևի սափորների ընդօրինակման փաստը մետաղե նմանօրինակ անոթներից: Ինչպես տեսանք, վերը նկարագրված մետաղե անոթները հիմնականում վերաբերում են նույն տիպին՝ տարբերվելով վզի չափերով, հատակի և երբեմն էլ կանթի հարդարանքով: Թվարկված հուշարձաններից հայտնի բոլոր կավանոթների մեծ մասը իրենց ներծկված կանթով կրկնում են մետաղե սափորների ձևերը: Նույնը նկատվում է դրանց հարթ ու օղակածև նստուկով հատակների համեմատության ժամանակ, սակայն, ինչպես և անկանթ սափորները, տարբերվում են չափերով և ունեն 0,25-6 լ տարողություն: Այս անոթների մակերեսները երանգավորված են մուգ բալագույնից մինչև բաց վարդագույն և բաց դեղնավուն անգոբով[347]: Միաժամանակ տեսնում ենք, որ վարպետի նշանները և անգոբապատման երանգները վկայում են այս սափորների տարբեր արհեստանոցներին պատկանելը: Հետաքրքիր է նշել, որ Օշականի N 25 դամբարանից հայտնի անկանթ սափորը[348] նույնպես ունի դեղնավուն անգոբապատում, իսկ երկու կարմիր անգոբապատ և մեկ սև սափորները, որոնց բռնակները կտրվածքում կլորավուն են, հիշեցնում են վերը նկարագրված Մայնցի թանգարանի բրոնզե սափորի բռնակի ձևը :

Գավաթ-բաժակներ: Այս խմբի մետաղե սպասքի օրինակները, որոնք ունեն իրենց կավե ընդօրինակումը, հայտնի են Ալթին-թեփեի N 2 դամբարանից և Թոփրախ-կալեից[349]: Ալթին-թեփեից գտնված

[340] *Հ.Ի. Խաչատուր, Ն.Ս. Տրուխանովա, Կ.Լ. Օգանեսյան*, ук. соч., с. 100, ЭП. 83, 86, 88, *Հ.Ի. Խաչատուր*, Керамика Эребуни, Таб. 8, рис. 2, *Ս.Ս. Եսայան*, Կարմիր բլուր, էջ 33:
[341] *Ա.Ա. Մարտիրոսյան*, Аргиштихинили, Ереван, 1974, с. 144, рис. 61, 62.
[342] *Բ.Բ. Պիոտրովսկի*, Ванское царство с. 145.
[343] *Ս.Ա. Եսայան*, Находки урартских изделий в Ошаканском могильнике, с. 95.
[344] *S. Kroll*, նշվ. աշխ., էջ 128, նկ. 46:
[345] *L. V. Berghe en L. Meyer*, նշվ. աշխ., նկ. 195-202, 208:
[346] *S. Kroll*, նշվ. աշխ., նկ. 46:
[347] *Բ.Բ. Պիոտրովսկի*, Искусство Урарту, с. 108.
[348] *Ս.Ա. Եսայան, Ա. Ա. Կալանթարյան*, ук. соч., с. 270.
[349] *S. Kroll*, նշվ., աշխ., նկ. 85:

արծաթից և բրոնզից այս անոթներն ունեն գլանաձև իրան, հարթ հատակ, աննշան կլորացող շուրթ: Նույնն է կրկնվում Թոփրախ-կալեից գտնված բրոնզե գավաթում: Մետաղական սպասքի այս տեսակը զուրկ է որևիցե զարդանախշից և միակ կավե ընդօրինակումը գտնվել է Կարմիր բլուրից: Նրա իրանին կա երկու կլոր անցք, և ծառայել է որպես ծխաման[350]:

Փիալաներ (Աղ. 160): Վանի թագավորության մետաղագործական արտադրանքի մեջ կարևոր տեղ են գրավում մ. թ.ա. IX-VIIդդ. հոգևոր և աշխարհիկ բարձր խավի սպասքի բաղկացուցիչ մաս կազմող ոսկե, արծաթե և բրոնզե փիալաները, որոնք աչքի են ընկնում իրենց շքեղ արտաքին հարդարանքով: Այս, ձևով բազմազան անոթներից մի մասը նույնպես ընդօրինակել են կավագործ վարպետները: Այսպես, առաջին տիպի մետաղական փիալաները իրենցից ներկայացնում են ցածր իրանով, խիստ եզրագծված կամ ուղղանկյուն ուսերով զարդարված՝ հարթ կամ կլորավուն զարդանախշերով, կլորացող կամ կենտրոնում ներճկված հատակով անոթներ, որոնք գտնվել են Թոփրախ-կալեից[351], Կարմիր բլուրից[352], ինչպես նաև Վանի թագավորության անհայտ հուշարձաններից և պահվում են Եվրոպայի թանգարաններում[353] (Մայնց, Լես Արս, Բեռլին): Նկարագրենք դրանցից մի քանիսը, որոնցից ամենահին օրինակը արծաթից է, Իշպուինիի արձանագրությամբ և պահվում է Լես Արսի թանգարանում (Աղ. 160, նկ. 2): Անոթն ունի քիչ դուրս ճկված շուրթ[354], իսկ կլոր իրանը վերից վար զարդարված է գդալաձև երկարավուն ուռուցիկ նախշերով: Մյուս նույնատիպ անոթը ոսկուց է, պահվում է Մայնցի թանգարանում: Այն զուրկ է որևիցե արձանագրությունից և իր չափով մոտենում է Լես Արսի թանգարանում պահվող արծաթյա անոթին, կրկնելով սրա ձևը[355]: Նույն ձևն ունեն նաև Մայնցի թանգարանում պահվող երկու բրոնզե նույնատիպ փիալաները: Թոփրախ-կալեից գտնված անոթն ուսին ունի երկու հիերոգլիֆ նշան, ինչը բացակայում է Թեյշեբաինիի պեղումներից գտնված բարձրորակ, կենտրոնում ներճկված հատակով, Սարդուր 2-րդի արձանագրությամբ փիալաներում: Այս տիպի մեջ առանձնանում է նույն Մայնցի թանգարանում պահվող նրբագեղ արծաթյա փիալան[356], որի զարդանախշման եղանակը տարբերվում է մնացած բոլոր մետաղյա համանման անոթներից իրանի վրայի ելուստների կլորությամբ: Նման բարդ անոթները, ի տարբերություն մյուս խմբերի, ավելի քիչ են հանդիպում և վկայում են կավագործ վարպետների բարձր մասնագիտացման մասին, որոնք աշխատում էին արքունիքի և նահանգների կենտրոնների բարձր խավերի կարիքների համար: Նման կարմիր, բարձրորակ անգոբապատ մակերես ունեցող տարբեր չափերի կավանոթներ՝ զարդարված ուռուցիկ նեղ ելուստանախշերով, որոնք իրենց ձևով հիշեցնում են խեթական, սիրիական, կիպրոսյան մետաղե անոթներ[357], գտնվել են Կարմիր բլուրից, Էրեբունիի միջնաբերդից[358], ինչպես նաև Օշականի տեղական իշխանավորի դամբարանից:

Երկրորդ տիպի փիալաները պատրաստված արծաթից և բրոնզից, ունեն հարթ մակերես, կլորացող իրան, եզրագծված կողեր, քիչ կլորավուն հատակ և հայտնի են Գորդիոնից, Պերսեպոլիսից[359]: Նմանատիպ կավե փիալաները ունեցել են լայն տարածում Վանի թագավորությունում և հայտնի են 36 հուշարձաններից՝ հյուսիս և հյուսիս-արևելյան շրջաններ (Արարատյան դաշտ և Արաքսի աջափնյա հուշարձաններ)՝ Արգիշտիխինիլի[360], Օշական[361], Թեյշեբաինի[362], Բաստամ[363], Վանա լճի ավազան՝ Թոփրախ-կալե, Բադնոց[364], Արածանի, Եփրատ գետերի ավազան՝ Ալթին-թեփե[365], Ուրմիայի ավազան, Զիվիե, Խոյ և այլն[366]:

Վերը նկարագրված փիալաների առաջին տիպը ավելի սակավաթիվ է: Խոսելով այս անոթների մասին, Բ. Բ. Պիոտրովսկին[367] նշում է, որ վաղուց արդեն նկատվել է այս անոթների՝ մետաղե սպասքի համանուն ձևերից ընդօրինակված լինելը, որի փայլուն օրինակը նշված հուշարձաններից գտնվածներն են: Միաժամանակ պետք է նշել, որ Վանի թագավորությունում 1-ին տիպի փիալաները հանդես են գալիս վերջին շրջանում, ինչպիսիք են Կարմիր բլուրի և Օշականի օրինակները: Ինչ վերաբերում է Էրեբունիից գտնվածներին, ապա հարկ է հիշել Բ. Բ. Պիոտրովսկու[368] հանրահայտ այն կարծիքը, որ Արին բերդից գտնված փիալաները գոյատևել են վաղ

[350] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур, II, с. 36, рис. 17.
[351] *Б.Б. Пиотровский.* История и культура Урарту, с. 271, рис. 73, *նույնի՝* Ванское царство, с. 180, рис. 44.
[352] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 180, *նույնի՝* Кармир-Блур /альбом/, рис. 73-75.
[353] *L.V. Berghe en L. Meyer,* նշվ. աշխ., նկ. 151-153, 163-165:
[354] Նույն տեղում:
[355] Նույն տեղում:
[356] Նույն տեղում:

[357] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 180.
[358] Նույն տեղում, էջ 189, *С.И. Ходжаш,* Керамика Эребуни, с. 136, Таб. 1, рис. 2.
[359] *S. Kroll,* նշվ. աշխ., նկ. 11:
[360] *А.А. Мартиросян,* Аргиштихинили, с. 63, рис. 25 /a – b/.
[361] *Ս.Ս. Եսայանի* 1985թ. պեղումները:
[362] *А.А. Мартиросян,* Город Тейшебаини, рис. 68 .
[363] *S. Kroll,* նշվ. աշխ., նկ. 11:
[364] Նույն տեղում:
[365] Նույն տեղում:
[366] Նույն տեղում:
[367] *Б.Б. Пиотровский,* Ванское царство, с. 189-190.
[368] *Б.Б. Пиотровский,* Искусство Урарту, с. 109.

հայկական (աքեմենյան) ժամանակաշրջանում, երբ, ըստ երևույթին, անցումը մետաղից խեցանոթների նմանօրինակ ձևերին տեղի է ունեցել ուշացումով: Ինչպես տեսնում ենք, Վանի թագավորության վերջին շրջանում ընդօրինակված կավե փիալաները և որոշ մետաղե իրերի ձևեր շարունակում են գոյատևել աքեմենյան ժամանակաշրջանից սկսած մինչև անգամ անտիկ ժամանակները (2-րդ տիպի փիալաներ), մի հանգամանք, որը վկայում է Վանի թագավորության՝ հետագա ժամանակաշրջանի մշակույթի վրա ազդեցության մասին:

Թասեր (Աղ. 148-150): Այս մետաղական անոթների մի ոչ մեծ խումբ (թվագրվող մ.թ.ա. IX-VIIդդ.), իրենց կավե ընդօրինակման հետ միասին, որ հայտնի են Բիայնական թագավորության կենտրոնական և ծայրամասային շրջանների հուշարձաններից, բաժանվում են 3 տիպի: Առաջինին պատկանող թասերը (արծաթ, բրոնզ) ունեն կլորացող իրան, ուղիղ ուսեր, կտրված շուրթ և ներծկված նստուկ: Դրանք հայտնաբերվել են Հասանլուից, Իգդիրից, Կարմիր բլուրից: Համանման կավե թասերը, որոնք այս մետաղե անոթների ընդօրինակում են, ունեն հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտի հուշարձաններ՝ Արին բերդ, Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի, Բաստամ[369], Վանի տարածքի հուշարձաններ՝ Արծկե, Բադնոց, Արածանի, Եփրատի ավազան՝ Նորշուն-թեփե, Կայալի Դերե, Ուրմիայի շրջաններից՝ Հավքավան, Խոյ և այլն[370]:

Երկրորդ տիպին պատկանող բրոնզե թասերը ունեն կլորացող ցածր իրան, եզրագծված կողեր, քիչ դուրս ճկված սրածայր շուրթ, լայն, հարթ հատակ: Այս տիպի կավե ընդօրինակումները հայտնի են հետևյալ շրջանների հուշարձաններից՝ Արարատյան դաշտ՝ Արին բերդ, Արգիշտիխինիլի, Բաստամ, Վանի տարածք՝ Բադնոց, Արածանի-Եփրատ՝ Նորշուն-թեփե, Ուրմիայից՝ Զիվիե, Խոյ[371]: Քանի որ այս մետաղե թասերի մի մասի վրա պահպանվել է Մենուայի արձանագրությունը, իսկ դրանց կավե ընդօրինակումները գտնվել են նաև ուշ ուրարտական ժամանակաշրջանի վայրերից, ապա կարելի է նշել, որ այս թասերը Բիայնական թագավորությունում հարատևել են շուրջ 200 տարի՝ մ.թ.ա. IX-VIIդդ.: Այս տիպին են մոտենում մի խումբ բրոնզե թասեր՝ գտնված Իգդիրից, Բադնոցից, որոնք տարբերվում են եզրագծված կողերով, դուրս ճկված շուրթով: Նման կավե անոթների տարածման սահմանները հետևյալն են՝ Արարատյան դաշտ և հարակից շրջանները՝ Բաստամ, Իգդիր, Արգիշտիխինիլի, Վանի տարածք՝ Թոփրախ-կալե, Բադնոց, Արածանի, Եփրատ՝ Նորշուն թեփե, Ուրմիայից՝ Հասանլու, Լիվար և այլն[372]: Երրորդ խումբը ներկայացված է Կարմիր բլուրի բրոնզե թասերով, որոնք ունեն ուղիղ կտրված շուրթ, սահուն լայնացող կողեր, հարթ հատակ, Մենուայի, Արգիշտի 1-ինի, Սարդուր 2-րդի, Ռուսա 1-ինի սեպագրերով, ինչպես նաև կենդանիների, թռչունների, բուսական զարդանախշերի և խորհրդանշաններ պատկերներով: Այս տեսակի արծաթե, բրոնզե թասեր գտնվել են Վանի թագավորության կենտրոնական շրջաններից և պահվում են Լես Արսի թանգարանում[373]: Այս խմբի ընդօրինակված կավե անոթները լայն տարածում են ունեցել Արարատյան դաշտի հուշարձաններում[374]՝ Կարմիր բլուր, Էրեբունի, Արգիշտիխինիլի, Օշական, Արագած և առավել տիպական են այս շրջանի համար:

Բացի վերը նշված սպասքի ձևերից, բիայնացիների նյութական արտադրությունում հանդիպում են նաև մետաղե տարբեր իրեր՝ սկահակ-ծխամաններ, աշտանակ-ճրագներ, որոնք կավե արտադրության մեջ ստանալով մասսայական բնույթ, լայն տարածում են ունեցել Վանի թագավորության տարբեր շրջաններում:

Ծխամաններ (Աղ. 118-119): Չնայած այս խմբի մետաղե անոթների վերաբերյալ մենք չունենք որևիցե նյութական փաստարկ, բայց կավե ծխամանների ընդօրինակման մասին (մետաղջց) մեզ համար աղբյուր է Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի թողած բարձրաքանդակը[375], ուր առանձնանում է ասորական զինվորի պատկերը, որը ուսի վրա տանում է սկահակ[376]: Այս բարձրաքանդակը առայժմ միակ փաստն է ուրարտական մետաղե սկահակների առկայության: Ինչ վերաբերում է կավե նմանօրինակ անոթներին, ապա դրանք իրենց ձևերով բաժանվում են երկու տիպերի: Առաջին տիպի սկահակները իրենցից ներկայացնում են երկմասանի անոթներ՝ բաղկացած սնամեջ ոտքից և կլորացող իրանով վերնամասից, որի վրա արված են ուղղանկյուն, եռանկյուն և ծվածիր անցքեր: Սրանք հայտնի են հետևյալ շրջանների հուշարձաններից՝ Արարատյան դաշտ՝ Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի, Էրեբունի, Օշական, Բաստամ, Վանի տարածք, Արծկե, Թոփրախ-կալե, Բադնոց, Հայկաբերդ (Չավուշ-թեփե), Արածանի-Եփրատ՝ Ալթին-թեփե, Կայալի Դերե, Ուրմիայից՝ Հավքավան, Զենդան[377]:

Երկրորդ տիպի սկահակները նույնպես երկմասանի են՝ բաղկացած սնամեջ հենակից և թասանման մասից: Այս անոթները ունեցել

---

[369] *S. Kroll*, նշվ., աշխ., նկ. 8:
[370] Նույն տեղում:
[371] Նույն տեղում:
[372] Նույն տեղում:

[373] *L.V. Berghe en L. Meyer*, նշվ. աշխ նկ. 161-162:
[374] *С.И. Ходжаш*, Керамика Эребуни, Таб. 3. рис. 13-14, *А.А. Мартиросян*, Аргиштихинили, рис. 21-24, 65-68.
[375] *Б.Б. Пиотровский*, История и культура Урарту, Таб. 4, *նույնի* Ванское царство, Таб. 7.
[376] Նույն տեղում:
[377] *S. Kroll*, նշվ. աշխ., նկ. 47 /a, c/:

են հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտ՝ Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր, Բաստամ, Վանի տարածք, Թոփրախ-կալե, Բաղնոց, Արածանի-Եփրատ՝ Կայալի Դերե, Ուրմիա՝ Զենդան, Պերսեպոլիս, ինչպես նաև Թել Հալաֆ և Գորդիոն[378]:

Ճրագներ (Աղ. 155): Բիայնացիների բազմատեսակ խեցանոթների մեջ իր ուրույն տեղն ունի ճրագների խումբը: Թասի ձև ունեցող այս անոթները գտնվել են ուրարտական ամենատարբեր հուշարձաններից՝ բնակավայրերի մառաններից, սենյակներից, դուսբարաններից և բաժանվում են երկու տիպի՝ բարձրորակ, կարմիր անգոբապատ, կոպիտ՝ ծածկված համարյա աննկատ դեղնավուն անգոբով: Կավե անոթների այս խմբի մի մասը նույնպես համանման մետաղե իրերի ընդօրինակում է: Առայժմ եզակի նմուշ հանդիսացող բրոնզե ճրագը (Բեռլինի թանգարան) 15սմ տրամագծով ունի թասակաձև իրան՝ քիչ ընդգծված ծորակով: Մահիկաձև միջնապատը թասը բաժանում է երկու անհավասար մասերի, որի վրա արված են երկու ծվածիր անցքեր՝ պատրույգի համար: Ճրագի շուրթի տակից ամրացված է աղեղնաձև հարթ շեղբ, որի կենտրոնով անցնում է տափակ երկարավուն ծող: Հավանաբար կատարել է բռնակի դեր[379] (Աղ. 155, նկ. 7): Կավե ճրագները չունեն նման բռնակներ, բայց բուն թասանման իրանը, ինչպես նաև միջնապատի կառուցվածքը կրկնում են վերը նկարագրված բրոնզե ճրագի ձևը և ունեն հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտ՝ Էրեբունի, Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի, Օշական, Արագած, Բաստամ, Վան, Թոփրախ-կալե, Արծկե, Արածանի-Եփրատ՝ Ալթին-թեփե, Կայալի Դերե, Ուրմիա՝ Լիվար, Հավթավան, Զիվիե: Այս տեսակետից մեզ համար կարևոր է նաև բրոնզե, երկաթե աշտանակների[380] (եռոտանիների) առկայության փաստը (Թոփրախ-կալեից և Կարմիր բլուրից), որոնց վերին մասը կամ հարթ է, կամ թասանման կլորացող: Հավանաբար սրանք հենակի դեր են կատարել, որոնց վրա, ըստ երևույթին, դրվել են մետաղե ճրագներ: Այս ենթադրության օգտին է վկայում վերը նշված (Բեռլինի թանգարան) բռնակով մետաղե ճրագը:

Անդրադառնալով Թոփրախ-կալեի աշտանակին, պետք է նշել, որ սրա ծողը զարդարված է տերևաձև պսակներով, իսկ եռոտանու հենակները ցլի ոտքերի ձև ունեն: Վերջիններս կարծես թե դուրս են գալիս ինչ-որ գիշատիչ գազանի երախից: Եռոտանու յուրաքանչյուր ոտքին քանդակված է նստած սֆինքսի պատկեր: Նման քանդակազարդ, սակայն չափերով փոքր աշտանակներ[381] (Լուվր) գտնվել են

[378] Նույն տեղում, նկ. 47 /b/:
[379] *L.V. Berghe en L. Meyer,* նշվ. աշխ., նկ. 51:
[380] *Б.Б. Пиотровский,* Кармир-Блур I, с. 69-70, рис. 42, *նույնի՝* Ванское царство, с. 174-175, рис. 35.
[381] *L.V. Berghe et L. Meyer,* նշվ. աշխ., նկ. 183,184:

Վանի թագավորության տարբեր վայրերից: Կասկածից վեր է, որ արվեստի այս բարձրանմուշ առարկաները ծառայել են վերնախավի կարիքներին, հանդիսանալով նրանց ապարանքների, դղյակների, սենյակների կահավորանքի բաղկացուցիչ մասը:

Ինչպես տեսնում ենք, մետաղե իրերի ընդօրինակումը հին արևելյան կավագործության մեջ սկիզբ է առել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին քառորդում և լայնորեն տարածվել Վանի թագավորությունում: Այս ընդօրինակումը, ըստ երևույթին, տեղի է ունեցել երկու ձևով: Առաջինը՝ անմիջապես մետաղե իրերից կատարված կրկնօրինակումն է, երկրորդը՝ կրկնօրինակված խեցանոթների ընդօրինակումը, որն ավելի մասսայական բնույթ ուներ: Կարելի է ենթադրել, որ այս մետաղե թասերի խումբը, ընդօրինակված անոթների հետ մեկտեղ, հիմնականում տարածված է եղել Արարատյան դաշտի մ.թ.ա. VIII-VII դդ. հուշարձաններում և առավել բնորոշ է այս շրջանի համար: Անընդմեջ ընդօրինակման մասին է վկայում նաև այն փաստը, որ Վանի թագավորության վերջին շրջանում մետաղե մեկ կանթանի սափորները որոշ ձևական փոփոխություն են կրում, այն է՝ օյնախոյաների շուրթերը կլորանում են: Հետաքրքիր է նշել, որ նույն երևույթը նկատվում է նաև տեղական մեկ կանթանի սև սափորների շուրթերի ձևավորման մեջ, որը վկայում է տեղական և ուրարտական խեցեգործական արվեստի կապերի մասին:

Ուսումնասիրելով այս ընդօրինակված անոթների ձևերը՝ կարելի է նկատել, որ կավագործ վարպետներից պահանջվում էր ոչ թե անոթի մեխանիկական կրկնություն, այլ ընդհանուր ձևերի պահպանում: Պարտադիր պահանջ էր նաև խեցու որակի և հատկապես անգոբապատման մեթոդների նույնությունը, որով Վանի թագավորության բարձրորակ խեցեղենի հիմնական խմբերը խիստ տարբերվում են նույն ժամանակի Հայկական բարձրավանդակի և հարևան երկրների հուշարձաններից գտնված այլ խեցանոթներից: Բացի մետաղե իրերի բուն արտաքին ձևերից, կավանոթներում ընդօրինակվել են նաև այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են անոթների հատակների կառուցվածքը (օղակաձև, ներծկված), իրանի վրայի ուռուցիկ գդալաձև ելուստանախշերն ու ուռուցիկ գոտիները:

Մետաղե ընդօրինակում հանդիսացող մի խումբ խեցանոթներ (թասեր, փիալաներ), ունենալով լայն տարածում Վանի թագավորությունում, իրենց ձևերով շարունակել են գոյատևել վաղ հայկական և ավելի ուշ ժամանակաշրջաններում, որոնց մասին նշել է Բ. Բ. Պիոտրովսկին՝ ուսումնասիրելով Արինբերդի և Կարմիր բլուրի նյութերը:

Վանի թագավորության խեցեգործության, ինչպես նաև մետաղե զենքի, զարդի շատ նմուշներ շարունակել են հարատևել նաև հետագա ժամանակաշրջանում, դառնալով հայ ժողովրդի նյութական մշակույթի բաղկացուցիչ մասը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ք. Նավասարդյան

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կավանոթների արտադրության տեխնոլոգիական գործընթացի որոշ հարցերի բացահայտման հիմնականում օգտագործված կավազանգվածների տարբերակման, անգոբապատման, ինչպես նաև թրծման ռեժիմի վերականգնման նպատակով հետազոտվել է Արագածից, Արամուսից և Դովրիից պեղված տարբեր գույների, չափերի և ձևերի 100-ից ավելի խեցեբեկորներ: Ուսումնասիրությունները կատարվել են քիմիական և ֆիզիկաքիմիական եղանակներով: Հետազոտությունների մի մասը կատարվել է երկրաբանության վարչության կենտրոնական լաբորատորիայում (պետրոգրաֆիական, սպեկտրալ, դեֆերենցիալ ջերմային) մյուս մասը (բինոկուլյար մանրադիտակային ջրակլանման) համալսարանի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայում, պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Նավասարդյանի կողմից:

Բինոկուլյար մանրադիտակային և պետրոգրաֆիական հետազոտությունները թույլ են տվել բացահայտել օգտագործված առավել բնութագրական կավազանգվածների կրկնվող մի քանի կառուցվածքային խմբեր:

Ստորև բերվում են ավելի բնութագրական շլիֆերի նկարագրությունները:

Արագած. 1. Վառ կարմիր թասեր - կառուցվածքը բեկորային է, նյութակառուցվածքը՝ ծակոտկեն: Կապակցող նյութը մանրահատիկավոր է, որն իրենից ներկայացնում է երկաթի օքսիդներով ինտենսիվորեն հագեցած կարմիր կավազանգված, որի մեջ հավասարաչափորեն տեղաբաշխված են պլագիոկլազի և բազալտային կեղծեղջյուրի ալևրիտային մասնիկներ:

Կոպիտ և խոշոր բեկորանյութը 15-20 % պարունակությամբ ներկայացված է պլագիոկլազով, բազալտային կեղծեղջյուրով, հազվադեպ պիրոքսենով և այլ ապարների բեկորներով: Պլագիոկլազի հատիկների մեծությունը տատանվում է 0.5-1.5 մմ-ի սահմաններում, ունեն ոչ ճիշտ անկյունային և պրիզմայի ձև: Բազալտային կեղծեղջյուրը երևում է պրիզմայաձև մինչև 1.2 մմ մեծությամբ հատիկներով:

Ապարների բեկորները ներկայացված են անդեզիտային և բազալտային պորֆիրիտներով, որոնք խիստ փոփոխված են (թրծման հետևանքով):

Շլիֆում երևում է նաև անգույն միներալ, որն իր օպտիկական հատկանիշներով մոտ է վոլոստոնիտին:

Ինչպես արդեն նշվել է, նյութակառուցվածքը ծակոտկեն է: Ծակոտիները օվալաձև են, չափերը ըստ երկարության՝ 1 մմ-ի սահմաններում (ձգված ծակոտիները դուրգի պտտման հետևանք են)[382]:

2. Վառ կարմիր կճուճներ - կառուցվածքը բեկորային է՝ կրիպտոբյուրեղային-միկրոթափուկավոր կապակցող նյութով: Վերջինս իրենից ներկայացնում է զուգահեռ դասավորված հիդրոֆայլարի թերթիկներ, որի մեջ հավասարաչափ տեղաբաշխված են թթու հրաբխապակու բեկորներ:

Խոշոր բեկորանյութը կազմված է պլագիոկլազի, ավգիտի, հիպերստենի անկյունավոր բյուրեղներից, որոնց չափերը տատանվում են 1-1.5 մմ-ի սահմաններում: Խեցեմնուշներում երևում են շամոտի բեկորներ մինչև՝ 1.5 մմ չափով: Խոշոր բեկորանյութի (հավելախառնուրդ) պարունակությունը շամոտի հետ միասին տատանվում է 10-15 %-ի սահմաններում:

Աքցեսորային հանքանյութերից հանդիպում են ապատիտները (0,6 մմ չափով):

Նյութակառուցվածքը ծակոտկեն է: Ծակոտիները ունեն օվալաձև ձգված տեսք, ըստ երկարության 1,5 մմ չափեր:

3. Կարմիր և դեղնագորշ կճուճներ - կառուցվածքը բեկորային է, ալևրոպելիտային կապակցող նյութով: Վերջինս թրծումից փոփոխված է և կազմված է գորշ կավազանգվածից, պլագիոկլազի և պիրոքսենի ներառումներով: Այդ զանգվածում անհավասարաչափ տեղաբաշխված են լեռնային ապարների և հանքանյութերի բեկորներ:

Ապարների բեկորները 15-20 % պարունակությամբ 0,2-2,0 մմ - չափերով ներկայացված են դիորիտներով, անդեզիտներով, անդեզիտաբազալտային պորֆիրիտներով, ինչպես նաև թթու կազմության տուֆերով, վերջիններս ունեն անկյունավոր, անկյունա-կլորավուն եզրագծեր: Խեցեմնուշներում հանդիպում են 1,5-1,5 մմ մեծությամբ շամոտի բեկորներ, որոնք ունեն տարբեր կազմություն և ներկայացված են ինչպես բարձր, այնպես էլ ցածր ջերմաստիճանային թրծումով տարատեսակներ: Շամոտի բեկորները կազմում են ամբողջ շլիֆի 3-5 %-ը, նյութակառուցվածքը ծակոտկեն է: Ծակոտիները ձգված են, չափերը 0,2-0,7 մմ-ի սահմաններում:

Արամուս-1. Մուգ կարմիր թասեր- կառուցվածքը բեկորային է, նրբաթել կապակցող նյութերով: Թելիկները կազմված են գորշ-դեղին հիդրոֆայլարից, որի մեջ հավասարաչափ տեղաբաշխված են ալևրիտային և կավային խառնուրդներ՝ 0,1-0,2 մմ մեծությամբ:

---

[382] *А.И. Августинник,* К истории развития формирования керамических изделий методом вращения. Труды Ленинградского технологического ин-та имени Ленсовета, 1954, вып. 29.

Կոպիտ և խոշոր բեկորանյութը 17-20 % պարունակությամբ ներկայացված է հիմնականում անդեզիտային և դացիտային կազմի էֆուզիվների բեկորներով, պերլիտով, պլագիոկլազով, պիրոքսենով, հազվադեպ կեղծեղջյուրով, քվարցի ճառագայթաձև գոյացություններով և բիոտիտի թերթիկներով:

Ավազանյութը բավականաչափ տեսակավորված է, չափերը տատանվում են 0.3-0.6մմ-ի սահմաններում: Նյութակառուցվածքը միկրոծակոտկեն է :

2. Կարմիր և դեղնագորշ կճուճներ-կառուցվածքը բեկորային է, նյութակառուցվածքը՝ ծակոտկեն: Նախկինում մոնտմորիլոնիտային կազմության կավազանգվածը թրծումից փոփոխված է, ներկայումս բնութագրվում է միկրոթերթավոր կառուցվածքով և կազմված է հիդրոբիոտիտից, որի մեջ հավասարաչափ տեղաբաշխված են ալևրիտային խառնուրդները (պլագիոկլազ, ամֆիբոլ, պիրոքսեն):

Ավազանյութը 20-25% պարունակությամբ կազմում են ջրաթափանցիկ պլագիոկլազի անկյունավոր հատիկները, հանդիպում են նաև կեղծեղջյուրի և պիրոքսենի պրիզմայաձև հատիկներ, որոնց չափերը տատանվում են բավականին մեծ սահմաններում՝ 0.2-2.5 մմ: Շլիֆում երևում են նաև շամոտի բեկորներ, կազմելով ամբողջ շլիֆի 5%-ը:

3. Սև, կարմիր կճուճներ- կառուցվածքը բեկորային է, միկրոթերթավոր կապակցող նյութով: Վերջինս կազմված է հիդրոփայլարի որոշակի ուղղվածությամբ դասավորված թեփուկներից, որի մեջ հավասարաչափ տեղաբաշխված են 0.2 մմ չափեր ունեցող անկանոն անկյունավոր և պրիզմայաձև ալևրիտային մասնիկներ:

Ավազանյութը 15-20% պարունակությամբ ներկայացված է բազալտային անդեզիտային պորֆիրիտներով, վանակատով, պլագիոկլազի փշրանքներով, պիրոքսենով և ամֆիբոլի բեկորներով: Ավազանյութի չափերը տատանվում են 0.3-1.8 մմ-ի սահմաններում: Շլիֆում հանդիպում են շամոտի բեկորներ՝ 0.5-0.7մմ, որոնք ներկայացնում են թրծումից ձևափոխված մուգ գորշ կավազանգված: Նյութակառուցվածքը միկրոծակոտկեն է:

Դուլրի-1. Կարմիր թասեր- կառուցվածքը բեկորային է, միկրոթեփուկավոր կառուցվածքի կապակցող նյութով: Վերջինս կազմված է որոշակի ուղղվածությամբ դասավորված հիդրոփայլարի թելիկներից, որի մեջ հավասարաչափ տեղաբաշխված են ալևրիտային և ավազային մասնիկներ՝ 0.1-0.3 մմ չափով: Խոշոր բեկորները ներկայացված են գրանիտի, պլագիոկլազի բեկորներով, քվարցով, պիրոքսենով և ամֆիբոլով (10-15 %): Նշված խեցեմուշների համար հատկանշական է էֆուզիվ ապարների բեկորների քիչ պարունակությունը և սֆենի, գրանիտի, ցիրկոնի և ռուտիլի բյուրեղների առկայությունը:

Նյութակառուցվածքը ծակոտկեն է: Ծակոտիներն ունեն 0.2-0.5 մմ չափեր և ձգված օվալի ձև:

2. Կարմիր թասերի մեկ այլ խումբ: Կառուցվածքը մանրահատիկավոր է, ալևրոպելիտային կապակցող նյութով: Վերջինս կազմված է հիդրոփայլարի թեփուկներից և կավի պելիտային մասնիկներից: Ալևրիտային խառնուրդները ներկայացված են պլագիոկլազի, քվարցի, ամֆիբոլի և բիոտիտի հատիկներով: Մանր բեկորանյութի չափերը տատանվում են 0.7-1 մմ սահմաններում, քանակը 10 %-ից չի անցնում-որոնց մեջ երևում են պլագիոկլազի, քվարցի, պիրոքսենի բյուրեղներ և էֆուզիվ ապարների բեկորներ, նյութակառուցվածքը միկրոծակոտկեն է:

3. Կարմիր կճուճներ-կառուցվածքը բեկորային է, ալևոպելիտային կապակցող նյութով: Ցեմենտանյութը ներկայացնում է թրծումից փոփոխված, երկաթի օքսիդներով ներկված մուգ գույնի կավազանգված, որի սկզբնական կառուցվածքը հնարավոր չէ որոշել: Այդ զանգվածում հավասարաչափ տեղաբաշխված են դաշտային սպաթների, ամֆիբոլի և բիոտիտի բյուրեղներ, որոնց չափերը 0.2 մմ-ից չեն անցնում: Խոշոր բեկորանյութը ներկայացված է անդեզիտային և անդեզիտաբազալտային պորֆիրիտներով, քվարցով, դիորիտներով: Շլիֆում երևում են շամոտի բեկորներ 0.7 մմ չափով և 2-3% պարունակությամբ:

Նյութակառուցվածքը ծակոտկեն է: Ծակոտիները ձգված են, և երկարությունը 0.5-0.7 մմ է:

Ինչպես երևում է մանրադիտակային նկարագրություններից, ընդհանուր առմամբ, նշված հուշարձանների ուրարատական ժամանակաշրջանի խեցեղենի համար մի կողմից հատկանշական է ընտրված լավ մշակված (մաղված, լվացված և լավ հունցած) կավազանգվածների օգտագործումը, մյուս կողմից՝ ակնհայտ է տարբեր կառուցվածքի կավերի օգտագործումը, ինչպես տարբեր, այնպես էլ նույն հուշարձանում (հիդրոփայլարային, մոնտմորիլոնիտային), (Աղ. I):

Արհեստական խառնուրդներից առավելապես գործածվել են անօրգանական նյութերը՝ գետավազը, քվարցը, շամոտը և տարբեր ապարների մանրացված բեկորները: Դրանց քանակական պարունակությունը, փոխհարաբերությունը և հատիկների մեծությունը նույնպես տարբեր են և մեծապես պայմանավորված են խեցանոթների ձևերով և չափերով: Հատկանշական է նաև շամոտի բացակայությունը թասանման խեցանոթների կավազանգվածում: Կավազանգվածների պատրաստման տարբերակները նախ պայմանավորված են աշխարհագրական գործոններով՝ տեղական կավերի առանձնահատկություններով, ինչպես նաև տարբեր խեցեգործական արհես-

տանոցների առկայությամբ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ուրույն տեխնոլոգիական սխեման և հնարավորությունները:

Խեցեբեկորների մանրադիտակային, մասնավորապես թափանցիկ շլիֆներում ծակոտիների և հատկապես նյութի լավ ընդգծված ուղղվածությունը թույլ է տալիս ասել, որ այդ անոթները պատրաստվել են դուրգի վրա, քանի որ վերջինիս պտտմանը զուգահեռ կավազանգվածը նույնպես պտտվում է, որի հետևանքով բեկորանյութը և ծակոտիները ընդունում են որոշակի ուղղվածություն[383]:

Դուրգի աշխատանքային հատկանիշները բնութագրվում են նրա պտտման արագությամբ, համաչափությամբ և իներցիայով: Ըստ Լ. Բիյագովի հետազոտությունների՝ ուրարտական ժամանակաշրջանի դուրգերն անցել են պտտման ոչ մեծ արագություն՝ մոտ 30 պտույտ 1 րոպեում[384]:

Հետազոտված 12 խեցանոթների պատերի հաստության չափումները ըստ հորիզոնական կտրվածքի 2 սմ հեռավորությամբ, որպես կանոն, նույնն են: Այս փաստը թույլ է տալիս ասել, որ չնայած ուրարտական ժամանակաշրջանի դուրգերի ոչ մեծ արագությանը, նրանք ունեցել են համաչափ պտտման որոշակի տևողություն:

Տեխնոլոգիական հետագա փուլը անգոբապատումն է, որի շնորհիվ խեցանոթը ձեռք է բերում նոր տեխնիկական որակ և դեկորատիվ հարդարում:

Կարմիր անգոբները, որոնք տիպիկ են ուրարտական խեցեղենի համար, տարբերվում են իրենց երանգով, խտությամբ և շերտի հաստությամբ:

Խեցատի կամ անգոբի կարմիր գույնի տարբեր երանգները ուղղակի կախվածության մեջ են կավազանգվածում երկաթի օքսիդի (Fe_2O_3) պարունակությունից, թրծման ջերմաստիճանից և միջավայրից (օքսիդացնող կամ չեզոք):

Բնության մեջ գոյություն ունի երկաթի օքսիդի երեք մոդիֆիկացիա, αFe_2O_3, γFe_2O_3, βFe_2O_3: Կավերում հանդիպում են α և γ ձևերը: αFe_2O_3-ը՝ հեմատիտ հանքանյութն ունի վառ կարմիր գույն, իսկ γFe_2O_3-ը շագանակագույն է, վերջինս $400^0 C$ –ից բարձր ջերմաստիճաններում վեր է ածվում α ձևին: Խեցատի կարմիր գույնը բացատրվում է նաև 700^0-ում ($Al_2O_3 \cdot Fe_2O_3$) խառը բյուրեղների առաջացմամբ[385]:

Ավելի բարձր ջերմաստիճաններում այս բյուրեղները քայքայվում են (1150^0), որի հետևանքով խեցատի գույնը բացանում է:

[383] *Э.В. Сайко,* Техника и технология керамического производства средней Азии в историческом развитии, Москва 1982, с. 91-116.
[384] *Л.Н. Биягов,* Материальная культура долины реки Мармарик, Автореферат дисс. на соиск. уч. степени канд. ист. наук., с. 10-16.
[385] *Г. Зальманг,* Физико-химические основы керамики, Москва, 1959, с.159.

Համալսարանի հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայում տարբեր կավազանգվածներից պատրաստված նմուշները, որոնց մեջ երկաթի օքսիդների քանակը տատանվում է 2-10 %-ի սահմաններում տարբեր ջերմաստիճաններում (600^0, 700^0, 800^0, 900^0) օքսիդացնող և չեզոք միջավայրում թրծելիս ստացվել են աղյուսագույն, կարմիր գույնի տարբեր երանգների խեցաբեկորներ (Աղ. I): Վերջիններից շատերն իրենց տեսքով և գույնով հիշեցնում են հնավայրերից պեղվածներին[386]:

Ինչպես ցույց են տալիս փորձերը, կարմիր և վառ կարմիր մակերեսները ստացվում են այն դեպքում, երբ անգոբապատման համար օգտագործվում է երկաթով հարուստ կավազանգված (Fe_2O_3,7 %-ից բարձր): Ստացված արդյունքների պահպանումը կախված է նաև թրծման ջերմաստիճանի իջեցման ռեժիմից: Ջերմաստիճանի կտրուկ անկումը առատ թթվածնային պայմաններում (օքսիդացնող միջավայր) բերում է արտաքին մակերեսի գույնի բացացմանը[387]:

Փորձնական խեցեբեկորները տարբերվում են ոչ միայն գունային երանգներով, այլ խեցատի որակական ցուցանիշներով՝ խտություն, ջրակլանում:

Արամուսի և Արագածի 15 կարմիր և վառ կարմիր խեցեբեկորների քիմիական անալիզից պարզվեց, որ կավազանգվածում երկաթի օքսիդների քանակը միջին հաշվով տատանվում է 7-10 %–ի սահմաններում, ընդ որում՝ վառ կարմիր խեցեբեկորներում՝ 9-12 %-ի սահմաններում:

Սպեկտրալ անալիզի միջոցով որոշվեց նաև երկաթի օքսիդների պարունակությունը նույն խեցեբեկորի անգոբի շերտում, որն առանձնացվեց խեցատից հատուկ կտրող գործիքի օգնությամբ և բուն խեցատում: Անգոբի շերտում Fe_2O_3-ը կազմում է 12-15 %, իսկ բուն խեցատում՝ 7-9 %: Ստացված արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ որոշ դեպքերում վառ կարմիր անգոբներ ստանալու համար օգտագործել են հատուկ՝ երկաթի միացություններով հարուստ կավեր: Այդպիսի կավեր մեզ հայտնի են Հրազդանի շրջանի Մեղրաձոր, Աբովյանի շրջանի Գեղադիր և այլ գյուղերի կավահանքերից: Ըստ քիմիական անալիզի արդյունքների այդ կավերում երկաթի օքսիդների քանակը տատանվում է 10-15 %-ի սահմաններում:

Հարկ է նշել, որ մեր հետազոտություններից ստացված տվյալները չեն համընկնում այն կարծիքի հետ, թե ուրարտական խեցեգործները վառ կարմիր անգոբ ստանալու համար օգտագործել են

[386] *Ռ.Հ. Նավասարդյան,* Երկաթի դերը որպես խեցեղենի գույնը պայմանավորող գործոն, Բանբեր Երևանի համալսարանի, 1992, 3, էջ. 136-141 :
[387] *Г. Зальманг,* ук. соч., с. 159.

թրծված խեցատի աղացված, մանրացված զանգվածը, որը կրկնակի թրծումից ձեռք է բերել ավելի վառ կարմիր գույն[388]:

Բացի դեկորատիվ նշանակությունից անգոբի շնորհիվ խեցատը ստանում է նոր որակ, հիմնականում կրճատվում է ջրաթափանցելությունը:

Արագածի, Արամուսի և Դովրիի բիայնական խեցեբեկորների ջրաթափանցելությունը միջին հաշվով տատանվում է 5-12 %-ի սահմաններում, իսկ անգոբի շերտի հաշվին այն կրճատվում է 30-50 %-ով (Աղ. II):

Ջրակլանումը կարող է հանդես գալ նաև որպես անոթների համար օգտագործվող տարատեսակ կավազանգվածները բնութագրող ցուցանիշ: Խեցատի ջրակլանման ծավալը և աստիճանը կարևոր վկայագիր են նաև թրծման ջերմաստիճանի և պայմանների վերաբերյալ:

Խեցեղենի փաստական թրծման ջերմաստիճանը բացահայտելու համար համալսարանի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայում ջրակլանման եղանակով ուսումնասիրվել է մ.թ.ա. 1-ին հազարամյակի հուշարձանների (Արամուսից, Արագածից, Դովրիից) 50 խեցեբեկոր: Այս մեթոդի էությունն այն է, որ ուսումնասիրվող խեցեբեկորները, երբ երկրորդ անգամ ենթարկվում են թրծման նորմալ պայմաններում, ջերմաստիճանային փոփոխությունների ընթացքում պահպանում են իրենց ունեցած ջրակլանման աստիճանը մինչև որոշակի ջերմաստիճան: Ջերմաստիճանի հետագա բարձրացման ընթացքում այն սովորաբար ընկնում է: Ուսումնասիրվող խեցեբեկորի իրական թրծման ջերմաստիճանը կարելի է համարել այն վերջնական ջերմաստիճանը, որից բարձր սկսվում են ջրակլանման հետագա փոփոխությունները:

Վերը նշված հուշարձանների խեցեղենի առավել բնորոշ ջրակլանման գրաֆիկները ներկայացված են Աղ. II:

Ջրակլանման կորերի վերլուծությունը թույլ է տալիս որոշել վերը նշված հուշարձանների խեցեղենի թրծման միջին ջերմաստիճանը, որը տատանվել է 900-1000 ^{0}C-ի սահմաններում, որոշակի շեղումներով դեպի իջեցում մինչև՝ 800^0: Սակայն եղել է տարբեր՝ ինչպես նույնանման և նույն գույնի իրերի, այնպես էլ տարբեր գույնի և իրերի համար: Օրինակ, կարմիր անգոբապատ բարակ պատերով թասի թրծումը, դատելով ջերմային փոփոխությունների բնույթից տարվել է 1000^0-ից բարձր ջերմաստիճանում, իսկ մեկ այլ կարմիր անգոբապատ նույնանման թասի թրծումը չի գերազանցում 900^0-ից[389]:

[388] *С.И. Ходжаш, Н.С. Трухтанова, К.Л. Оганесян,* ук. соч., с. 101.

[389] *Ք.Հ. Նավասարդյան,* Հայաստանի մ.թ.ա. III-I հազարամյակի խեցեղենի թրծման ջերմաստիճանի մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1990, 3, էջ. 138-140 :

Ջրակլանման կորերի վերլուծությամբ խեցեղենի ջերմաստիճանի որոշումը բազմիցս կիրառվել է տարբեր ուսումնասիրողների կողմից և համարվում է ստուգված եղանակ և տալիս է բավականին հաստատուն արդյունք, սակայն հնարավոր շեղումներից խուսափելու համար մենք օգտվել ենք նաև դիֆերենցիալ ջերմային անալիզի մեթոդից, որը հնարավորություն է տալիս ճշտել ջրակլանման եղանակով ստացված տվյալները թրծման ջերմային ռեժիմի վերաբերյալ: Այս եղանակից օգտվել են Մ.Տայտը[390], Է.Սայկոն[391]:

Դիֆերենցիալ-ջերմային հետազոտության եղանակը հիմնված է ջերմաստիճանի բարձրացման ժամանակ կատարվող նյութի ֆիզիկաքիմիական փոխարկումների վրա: Ըստ Ավգուստիննիկի[392], այս եղանակով կատարվող հետազոտությունների ժամանակ արձանագրվում են նյութի փոխակերպման հետևյալ ջերմային գործոնները. աբսորբցիոն ջրի անջատում, օրգանական նյութերի այրում, կոնստիտուցիոն ջրի անջատում (կավի կազմության մեջ մտնող հանքանյութերի բյուրեղային մասից), էվտեկտոիդ հալույթի անջատում՝ իոնների փոխադարձ դիֆուզիայի շնորհիվ, նոր բյուրեղական փուլի գոյացում: Տարբեր փուլային փոխակերպումները ուղեկցվում են ջերմության կլանմամբ (էնդոթերմիկ էֆեկտ) կամ անջատմամբ (էկզոթերմիկ էֆեկտ), որոնք արձանագրվում են թերմոգրամայի տեսքով, հատուկ սարքի (դերիվատոգրաֆի) միջոցով:

Այս մեթոդով հնագույն խեցեղենի թրծման ջերմաստիճանի որոշման ժամանակ մենք հենվել ենք խեցու ֆիզիկաքիմիական այն հատկության վրա, որ թրծման ժամանակ ջերմաստիճանի ազդեցությամբ ընթացած փոփոխությունների մեծ մասը անդառնում են և կավազանգվածի բոլոր ջերմային փոփոխությունների վրա (էկզոթերմիկ և էնդոթերմիկ), որոնք արտահայտվում են ջերմության անջատմամբ կամ կլանմամբ և գրանցվում են թերմոգրամայի վրա: Արդեն թրծված նմուշում երկրորդ անգամ ջերմաստիճանային ազդեցության ենթարկվելուց ջերմային էֆեկտները չեն կրկնվում մինչև վերջնական թրծման ջերմաստիճանին հասնելը, և այն սահմանը, որից հետո նշվում են կավազանգվածի հետագա փոփոխությունները, կարող է պայմանականորեն ծառայել որպես հին խեցեղենի թրծման ջերմաստիճանային ցուցանիշ:

Հայաստանի մ.թ.ա.1-ին հազարամյակի տարբեր շրջանների հուշարձանների բիայնական խեցեղենի համար արձանագրվում է 900-1000 ^{0}C-ում թրծում:

[390] Tite M. Methods of Fhisical Examination in Archeology, London and New York, 1972.

[391] *Э. Сайко,* Техника и технология..., Москва, 1982, с. 52-60.

[392] *А. Августинник,* К вопросу о методике исследования древней керамики, Краткие Сообщения Института Истории Материальной Культуры, 1956, 64, с. 148-153

Արագածի խեցեբեկորների կավազանգվածների քիմիական և մանրադիտակային հետազոտություններից երևում է, որ ուրարտական խեցեգործները օգտագործել են տարբեր հանքաբանական կազմության կավազանգվածներ: Օրինակ, թասերը պատրաստվել են երկաթային ավազակավից, հիդրոփայլարային կավերից, ինչպես նաև կարբոնատային պարունակությամբ մանրահատիկ կավազանգվածից:

Որպես հատուկ ավելացված խառնուրդ օգտագործել են քվարցը, բազալտը, պորֆիրիտը:

Խեցեղենի պատրաստման ավարտական փուլը թրծումն է, որին նախորդել է անգոբապատումը: Անգոբների պատրաստման համար օգտագործել են բարձր երկաթայնության կավեր կամ որոշ դեպքերում՝ նույն կավազանգվածի ավելի մանրացված զանգվածը: Թրծման ջերմաստիճանի որոշման համար հետազոտվել է 30 խեցեբեկոր՝ ջրակլանման, դիֆերենցիալ ջերմային անալիզի և պետրոգրաֆիական եղանակներով: Ուսումնասիրության արդյունքները թույլ են տվել որոշել Արագածի խեցանոթների թրծման միջին ջերմաստիճանը, որը տատանվել է 900-1000 ^{0}C-ի սահմաններում որոշ շեղումներով դեպի իջեցում մինչև 800^{0}:

Աղյուսակ 1

ԱՌԱՎԵԼ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ԿԱՎԱԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՊԵՏՐՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՆԱԼԻԶՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Հուշարձան	Կապակցող նյութ	Բեկորանյութի քանակը %	Բեկորանյութի կազմը		Հավելա-խառ-նուրդների բնույթը
			հիմնական	լրացուցիչ	
Արագած	1.Ալևրիտային կավազանգված	15-20	պլագիոկլազ բազալտային կեղծեղջյուր	պիրոքսեն	գետավազ
	2.Հիդրոփայլա-ային կավա-զանգված	10-15	պլագիոկլազ ավգիտ	ապատիտ	գետավազ շամոտ
	3. Ալևրիտային կավազանգված	15-20	պլագիոկլազ պիրոքսեն անդեզիտ դիորիտ	--	գետավազ տուֆ շամոտ
Արամուս	1. Հիդրոփայլա-ային	17-20	պլագիոկլազ անդեզիտ դացիտ	պերլիտ բիոտիտ	բազալ-տային կեղծեղ-ջյուր քվարց
	2. Մանտմորի-լոնիտային կա-վազանգված	20-25	պլագիոկլազ ամֆիբոլ պիրոքսեն	պերլիտ	ավազա-նյութ շամոտ
	3. Հիդրոփայլա-ային կավա-զանգված	15-20	պորֆիրիտներ պիրոքսեն ամֆիբոլ	վանակատ	ավազա-նյութ շամոտ
Դովրի	Հիդրոփայլա-ային կավա-զանգված	10-15	պլագիոկլազ գրանիտ քվարց ամֆիբոլ	սֆեն ցիրկոն ռուտիլ	քվարց պիրոքսեն
	Հիդրոփայլա-ային կավա-զանգված	7-10	պլագիոկլազ քվարց	բիոտիտ	պլագիոկ-լազ քվարց պիրոքսեն
	Ալևրիտային կավազանգված	15-20	դաշտային սպաթ ամֆիբոլ բիոտիտ	--	քվարց շամոտ

Մ.Թ.Ա. I ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԽԵՑԵԲԵԿՈՐՆԵՐԻ ՋՐԱԿԼԱՆՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հուշարձան	Նմուշի N	Ջրակլանումը առանց սգ-գոբի %	Ջրակլանումը անգոբով	Թրծման ջեր-մաստիճանը
Արագած	60	7,8	5,5	900^0
	63	11,0	8,2	850^0
	75	9,5	7	900^0
	81	12,6	9	900^0
	87	6	5	900^0-1000^0
Արամուս	180	8,0	6,5	900^0
	182	9,0	7,5	900^0
	183	12,0	9,0	800^0
	184	14,5	11,0	900^0
	191	7,5	6,0	900^0
Դովրի	185	9	6,5	900^0
	187	8,5	6,0	900^0
	189	14,0	10,5	850^0
	195	11,5	8,5	900^0
	196	11,0	8,0	900^0

ՕՔՍԻԴԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԹՐԾՎԱԾ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԽԵՑԵՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Գույնը			Թրծման ջերմաստիճանը	Տևողությունը ժամերով	Երկաթի միացությունների քանակը	
արտաքինից	ներսից	Կտրվածքում			խեցաստում	անգոբում
Կարմիր	կարմիր	կարմիր	800^0-900^0	2	7-9	7-9
Աղյուսագույն	նույնը	նույնը	700^0-800^0	2	5-6	5-6
Կարմիր	աղյուսա-գույն	աղյու-սագույն	700^0-800^0	2	5-6	7-9
Վառ կարմիր	աղյուսա-գույն	կարմիր	800^0-900^0	2	7-9	9-10
Վառ կարմիր	աղյուսա-գույն	աղյու-սագույն	800^0-900^0	2	5-6	9-10
Դեղնավուն	նույնը	նույնը	800^0-900^0	2	4-5	4-5
Դեղնաշա-գանակա-գույն	նույնը	նույնը	700^0-800^0	2	2-4	2-4
Կարմիր	կարմիր	գորշ	600^0-700^0	1 ժ-ից պակաս	5-6	5-6

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

Ալիշան Ղ., Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ 1890 թ., ս. Ղազար:

Ավետիսյան Հ. Գ., Մետաղե սպասքի ձևերի ընդօրինակումը Վանի թագավորության խեցեգործության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1988թ., էջ 112-121:

Ավետիսյան Հ. Գ., Արարատյան դաշտավայրի մ.թ.ա. VIII-VII դդ - հուշարձաններից գտնված կարասները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1, 1989, էջ 70-77:

Ավետիսյան Հ. Գ., Արամուսի բիայնական ամրոցի պեղումները, զեկուցումների թեզիսներ, Երևան 1989, էջ 60-62:

Ավետիսյան Հ.Գ., Բիյագով Լ.Ն., Այգեշատի դամբանադաշտի պեղումները, զեկուցումների թեզիսներ, Հայաստանում 1989-90թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան 1991, էջ 35-36:

Ավետիսյան Հ. Գ., Արագածի ամրաշինությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1, 1996, էջ 41-46:

Ավետիսյան Հ. Գ., Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1996, էջ 156-162:

Ավետիսյան Հ. Գ., Արամուսի ամրաշինական համալիրները, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1997, էջ 118-124:

Ավետիսյան Հ. Գ., Արագած, Երևան 2001:

Ավետիսյան Հ. Գ., Արագածի և Արամուսի պաշտամունքային կառույցներն ու քարակոթողները, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 2002, էջ 52-56:

Ավետիսյան Պ.Ս., Սուրադյան Ֆ.Մ., Պեղումներ Թալինի նորակառույցներում, ՀՀ 1989 – 90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 26-28:

Ավետիսյան Պ., Բաղալյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա., Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ, ՀՀ 1993-95 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 8-10:

Աւետիսեան Պ., Ենգիբարեան Ն., Սարգսեան Գ., Հայաստանի նորահայտ հնագիտական յուշարձաններ (Արտաշաւանի դամբարանադաշտ), Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1-12, 1998, էջ 193-247:

Արեշյան Գ.Ե., Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, զեկուցումների թեզիսներ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1985, էջ 13-15:

Դևեջյան Ս. Հ., Ուրարտական հուշարձաններից հայտնի կոյաբզեզածև կնիքների շուրջ, Էրեբունի- Երևան, Երևան, 1998, էջ 3-4:

Դևեջյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001:

Եսայան Ս. Ա., Հայաստանի պատմության թանգարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 2, 1964, էջ 83-94:

Եսայան Ս.Ա., Հնագիտական իրերի կատալոգ, I, Երևան 1964:

Եսայան Ս. Ա., Հնագիտական իրերի կատալոգ, II, Երևան, 1967:

Եսայան Ս. Ա., Հնագիտական իրերի կատալոգ, III, Երևան, 1972:

Եսայան Ս. Ա., Ուրարտական գոտիով դամբարան Ջոդում, Պատմա-Բանասիրական Հանդես, 2, 1979, էջ 265-268:

Եսայան Ս. Ա., Կարմիր բլուր, Երևան, 1982:

Ենգիբարյան Ն.Գ., Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ՀՀ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 66-69:

Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942:

Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա., Հին Շիրակավան (հնագույն բնակավայրն ու դամբարանադաշտը), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան 1992:

Թումանյան Գ. Ս., Գուսանագյուղի դամբարանը, ՀՀ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 29:

Իգումնով Վ.Ա., Կարագյոզյան Հ.Հ., Հմայակյան Ս.Գ., Օձասարի սեպագիր արձանագրությունը, Պատմա-Բանասիրական Հանդես, 1, 1997, էջ 193-202:

Իսրայելյան Մ. Ա., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971:

Խանզադյան Է.Վ., Գառնի IV, Երևան, 1969, Աղ. XXXV, նկ.1:

Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս., Մեծամոր, Երևան, 1973:

Խանզադյան Է., Էլառ-Դարանի, Երևան, 1979:

Խանզադյան Է., Մեծամորը Էթիունիի Ազա (Վազա) երկրի արքունի քաղաք, Հայաստանի հնագույն մշակույթը, հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 20-21:

Խաչատրյան Ժ.Դ., Արտաշատի պեղումները, զեկուցումների թեզիսներ, ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

նստաշրջան, Երևան, 1987, էջ 40-42:
Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան 2000.
Խնկիկյան Օ.Ս., Հին Հայաստանի դաշույնատեսակների տեղայնացման փորձ (Ուշ բրոնզ-վաղ երկաթ), Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1991, էջ 79-91:
Խնկիկյան Օ.Ս., Դամբարանների պեղումներ Հարժիս գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1992, էջ 97-102:
Կարապետյան Ի.Ա., Նորաշենի վաղ հայկական ամրոցը, Պատմա-Բանասիրական Հանդես, 2, 1974, էջ 281-290:
Կարապետյան Ի.Ա., Ենգիբարյան Ն.Գ., Քրմի կնիքով թաղում Արգիշտիխինիլիից, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 2002, էջ 218-225:
Հայկական ճարտարապետության պատմություն, հատոր 1, Երևան, 1996:
Հասրաթյան Մ., Հնագիտական հետազոտություններ Սիսանում, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:
Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
Հմայակյան Ս. Գ., Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումը Ուրարտուում, Պատմա-Բանասիրական Հանդես, 1, 1986, էջ 113-133:
Հմայակյան Ս.Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:
Հմայակյան Ս. Գ., Ուրարտական պետության և մշակույթի դրսևորման խնդրի շուրջ, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995:
Հովհաննիսյան Կ. Լ., Էրեբունիի որմնանկարները, Երևան, 1973:
Ղաֆադարյան Կ., Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984:
Մարտիրոսյան Հ., Մնացականյան Հ., Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 10, 1958, էջ 63-84:
Մարտիրոսյան Հ. Ա., Թորոսյան Ռ. Մ., Արգիշտիխինիլիի սարկոֆագը, Պատմա-Բանասիրական Հանդես,3, 1986, էջ 221-227:
Մկրտչյան Ռ.Ա., Ավետիսյան Պ.Ս., Ուրարտական դամբարաններ-ի հնամարդաբանական նյութերը, մ.թ.ա. 8-6-րդ դդ. պատմահնագիտական կոնտեկստում, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995:
Մնացականյան Հ., Դամբարանների պեղումները Գոլովինո գյուղում, Աշխատություններ Հայաստանի պատմության պետական Թանգարանի, հ. V, Երևան, 1959, էջ 5-62:

Նավասարդյան Ք. Հ., Հայաստանի մ.թ.ա. III-I հազարամյակի խեցեղենի թրծման ջերմաստիճանի մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 1990, էջ 136-141:
Նավասարդյան Ք. Հ., Երկաթի դերը որպես խեցեղենի գույնը պայմանավորող գործոն, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 1992, էջ 136-141:
Պետրոսյան Լ.Ա., Լճաշենի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1992, էջ 41-48:
Պետրոսյան Լ.Ա., Քուչակի նախնադարյան հուշարձանները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, 1992, էջ 61-65:
Սարգսյան Գ. Մ., Պեղումներ «Գազանոց» հնավայրում, Հայաստանում հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան, 1987, էջ 19-20:
Սիմոնյան Հ.Ե., Շամիրամ քաղաքատեղիի 1-ին շերտագրական տեղամասի 1983 թ. պեղումների արդյունքները, զեկուցումների թեզիսներ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1985, էջ 15-17:
Սիմոնյան Հ., Գաշ Հ., Ժամկոչյան Ա., Վարդանյան Ռ., Հմայակյան Ս., Կարապետյան Ի., Ավետիսյան Պ., Հայ-բելգիական համատեղ պեղումներ Ոսկեվազում, զեկուցումների թեզիսներ, ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1996, էջ 68-70:
Տիրացյան Գ. Ա., Արեշյան Գ. Ե., Հնագիտությունը և Ուրարտու – Հայաստան պրոբլեմը, Պատմա-Բանասիրական Հանդես, 3, 1990, էջ 70-75:
Փիլիպոսյան Ա. Ս., Խաչատրյան Լ. Ե., Գեղհովտի վանտոսպյան վիմափոր դամբարանը, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 16, պրակ. III, Երևան 1995:
Փիլիպոսյան Ա.Ս., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ, հ. 17, պրակ IV, Երևան, 1999:
Аветисян Г.Г., Раскопки Кагни Хача, Археологические Открытия, Москва, 1986, с. 425.
Аветисян Г.Г., Раскопки поселения Арагац, Археологические Открытия, Москва, 1988, с. 467.
Аветисян Г.Г., Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван, 1992.

Аветисян П.С., Раскопки в Талинском районе, Археологические Открытия, Москва, 1988, с. 467-468.

Августинник А.И., К истории развития формирования керамических изделий методом вращения, Труды Ленинградского технологического ин-та имени Ленсовета вып. 29, 1954, с. 7-10.

Августинник А., К вопросу о методике исследования древней керамики, Краткие Сообщения Института Истории Материальной Культуры. 64, 1956, с. 148-153.

Апакидзе А.М., Николайшвили В.В., Гиунашвили Г.Д., Манджгаладзе Г.Н., Дзнеладзе М.С., Садрадзе В.Г., Давлианидзе Р.В., Глонти Н.В., Археологические раскопки в Мцхета и ее округе, Полевые Археологические Исследования в 1982 г., Тбилиси, 1985.

Арешян Г.Е., Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века, "Советская Археология", 3, 1973, с. 40-49.

Арешян Г.Е., О раннем этапе освоения железа в Армении и на Южном Кавказе, Историко-Филологический Журнал, 2, 1974, с. 192-212.

Арутюнян В.М., Каменная летопись Армянского народа, Ереван, 1985.

Арутюнян Н.В., Новые урартские надписи Кармир Блура, Ереван, 1966.

Арутюнян Н.В., Биайнили (Урарту), Ереван 1970.

Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985.

Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван 2001.

Асланов Г.М., Ваидов Р.М., Ионе Г.И., Древний Мингечаур, Баку, 1959.

Бадалян Р.С., Агекян О.К., Раскопки Оромского некрополя (предварительный отчет о работах 1987 года), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան1992:

Биягов Л.Н., Материальная культура долины реки Мармарик, Автореферат дис. на соиск. уч. степени канд. ист. наук., Ереван, 1986.

Варданян Р.О., Асатрян Д. Г., Некоторые замечания по метрологии Урарту, Историко-Филологический Журнал, 2, 1980, с. 166-178.Гамбашидзе О.С., Гамбашидзе И.О., Работы Месхетджавахетской экспедиции, Полевые Археологические Исследования в 1987г., Тбилиси, 1995.

Гуммель Я., Археологические очерки, Баку, 1940.

Гущев С., Крыша над древним городом, Техника молодежи, 11, 1967.

Деведжян С.Г., Лори берд I, Ереван, 1981.

Демирханян А.Р., К мифопоэтическим истокам геральдических композиций. а кн. Культурное наследие Востока, Ленинград, 1985, с. 131-144.

Демянская А.А., Кладовые Эребуни, Москва, 1968.

Джанполадян Р.М., О трех образцах стекла из Кармир блура, "Советская Археология", 1, 1964, с. 307-312.

Древнейшие государства Кавказа и Средней Азии, Археология СССР, Москва, 1985.

Дьяконов И.М., Киммерийцы и скифы на древнем Востоке, Российская Археология, 1, 1994, с. 108-116.

Есаян С.А., Оганесян Г., Оружие и военное дело древней Армении (III-I тыс. до н.э.), Ереван, 1966.

Есаян С.А., Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея, Ереван, 1969.

Есаян С.А., Ереван /археологический очерк/, Ереван,1969.

Есаян С.А., Калантарян А.А., Позднеурартское погребение Ошакана, Историко-Филологический Журнал, 3, 1976, с. 268-275.

Есаян С.А., Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976.

Есаян С.А., Погребова М.М., Палочки-застежки в закавказских и скифских памятниках, Вестник Общественных Наук, 1, 1980, с. 79-88.

Есаян С.А., Находки урартских изделий в Ошаканском могильнике. В кн. Древний Восток и мировая культура, Москва, 1981, с. 94-97.

Есаян С.А., Канецян А.Г., Строительная техника урартских сооружений Ошакана, Вестник Общественных Наук, 4, 1983.

Есаян С.А., Об урартских дворцовых комплексах Ошакана. В кн. Культурное наследие Востока, Ленинград, 1985, с. 112-121.

Есаян С.А., Погребова М.Н., Скифские памятники Закавказья, Москва, 1985.

Есаян С.А., Работы в Ошакане, Археологические Открытия,1986, Москва.

Есаян С.А., Калантарян А.А., Ошакан I, Ереван 1988.

Есаян С.А., Хнкикян О.С., Находки Биайнских изделий в Ехегнадзоре, Вестник Государственного Университета, 3, 1990, с. 31-44.

Есаян С.А., Биягов Л.Н., Амаякян С.Г., Канецян А.Г., Биайнская гробница в Ереване, Археологические Памятники Армении, Т. 15/II, 1991.

Зальманг Г., Физико-химические основы керамики. Москва, 1959.

Иессен А.А., К вопросу о древнейшей металлургии меди на Кавказе, Известия Государственной Академии Истории Материальной Культуры, 120, Москва-Ленинград, 1935, с. 8-22.

Каландадзе А.Н., Археологические памятники доантичной эпохи Самтавро, Мцхета, т. VI, Тбилиси, 1982.

Курочкин Г.Н., Хронология переднеазиатских походов скифов по письменным и археологическим данным, "Российская Археология", 1, 1994, с. 117-122.

Куфтин Б.А., Урартский колумбарии у подошвы Арарата и Куро-Аракский "энеолит", Вестник Гос. Муз. Грузии. т. XIII – B, Тбилиси, 1943 .

Куфтин Б.А., Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941.

Куфтин Б.А., Материалы к археологии Колхиды, Тбилиси, Т. I., 1949.

Кушнарева К.Х., Поселение эпохи бронзы на холме Узерлик тепе, Материалы и Исследования по Археологии СССР, 67, Москва, 1959.

Кушнарева К.Х., Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

Линч Х. Ф. Б., Арменія. Путевые очерки и Этюды т. II, Тифлисъ, 1910.

Мартиросян А.А., О древнем поселении и могильнике близ Ленинакана, Краткие Сообщения Института Истории Материальной Культуры, 55, 1954, с. 106-116.

Мартиросян А.А., Раскопки в Головино, Результаты работ 1929 и 1950гг., Ереван, 1954.

Мартиросян А.А., Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода /IX – VIII вв. до н.э./, Вестник Общественных Наук, 9, 1956, с. 61-84.

Мартиросян А.А., Город Тейшебаини, Ереван 1961.

Мартиросян А.А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

Мартиросян А.А., Аргиштихинили, Ереван, 1974.

Мартиросян А.А., Печати мастеров на сосудах из Аргиштихинили, В кн.: "Древний Восток и Мировая Культура", Москва, 1981, с. 80-84.

Медведская И.Н., Некоторые вопросы хронологии бронзовых наконечников стрел Средней Азии и Казахстана, Советская Археология, 3, 1972, с. 86-107.

Медведская И.Н., Периодизация скифской архаики и древний Восток, "Российская Археология", 3, 1992, с. 95-105.

Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960.

Мнацаканян А.О., Раскопки могильников в селении Атарбекян в Армянской ССР, Краткие Сообщения Института Истории Материальной Культуры, вып. 60, 1955, с. 31-38.

Мнацаканян А.О., О двухцветной керамике Лчашена, Известия АН Арм. ССР, 5, 1957, с. 107-116.

Никольский М.В., Клинообразные надписи Закавказья. Материалы по Археологии Кавказа, вып. V, 1896.

Оганесян К.Л., Кармир блур IV, Архитектура Тейшебаини, Ереван 1955.

Оганесян К.Л., Урартское поселение в селе Арагац, Լրաբեր հասարակական գիտությունների, 4, 1958, с. 78-82.

Оганесян К.Л., Крепость Эребуни, Ереван, 1980.

Окропиридзе Н.И., Бронзовые витоголовые булавки из грунтовых погребений Самтаврского могильника, Материалы по истории Грузии и Кавказа, вып. 29, Тбилиси, 1951.

Петросян Л.А., Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н.э.), Ереван, 1989.

Пиотровский Б.Б., История и культура Урарту, Ереван, 1944.

Пиотровский Б.Б., Археология Закавказья, Ленинград, 1949.

Пиотровский Б.Б., Кармир-Блур I, Ереван, 1950.

Пиотровский Б.Б., Кармир-Блур II, Ереван, 1952.

Пиотровский Б.Б., Кармир-Блур III, Ереван,1955.

Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), Москва 1959.

Пиотровский Б.Б., Искусство Урарту VIII-VI вв. до н.э., Ленинград, 1962.

Пиотровский Б.Б., Кармир блур /альбом/, Ленинград, 1970.

Пицхелаури К.Н., Основные проблемы истории племен Восточной Грузии в XV-VII вв. до н.э., Тбилиси, 1973.

Пицхелаури К.Н., Новые аспекты хронологии археологических памятников центральной части Южного Кавказа, Тбилиси, 1979.

Пицхелаури К.Н., Варазашвили В.В., Кинцурашвили М.В., Менабде Ц.Н., Квавадзе Д.Л., Археологические исследования в Кахети, Полевые Археологические Исследования в 1984-85 гг., Тбилиси, 1987.

Погребова М.Н., Иран и Закавказье в раннем железном веке, Москва, 1977.

Садрадзе В., Археологические памятники "Мцхета Великой" эпохи средней бронзы, Тбилиси, 1993.

Сайко Э.В. , Техника и технология керамического производства средней Азии в историческом развитии, Москва, 1982.

Сорокин В., Следы древнейшего поселения у Кармир блура, Советская Археология, 2, 1958, с. 150-152.

Степи Европейской части СССР в скифо-сарматское время, Москва, 1989.

Техов Б.В., Центральный Кавказ в XVI-X вв. до н.э., Москва, 1977.

Тирацян Г.А., Древнеармянская керамика из раскопок Армавира, Историко-Филологический Журнал, 1, 1971, с. 216-228.

Тирацян Г.А., Урарту и Армения (к вопросу о преемственности материальной культуры), II международный симпозиум по армянскому искусству, Ереван, 1978, с. 181-191.

Тирацян Г.А., Культура древней Армении: VI в. до н.э.-III в. н.э., Ереван, 1988.

Уваров А.С., Исследование местности, на которой предполагались развалины Армавира. Протоколы Подготовительного комитета V археологического сьезда в Тифлисе, Москва, 1882.

Хачатрян Т.С., Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении. Աշխատություններ Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի, h., 5, Երևան, 1959, с. 203-257.

Хачатрян Т.С., Материальная культура древнего Артика, Ереван, 1963.

Хачатрян Т.С., Древняя культура Ширака, Ереван, 1975.

Хачатрян Т.С., Артикский Некрополь, Ереван, 1979.

Ходжаш С.И., Керамика Эребуни, Сообщение Гос. музея изобразительных искусств им. А. С. Пушкина, вып. 4, Москва, 1968.

Ходжаш С.И., Трухтанова Н.С., Оганесян К.Л., Эребуни, Москва, 1979.

Хоштария И.В., Археологические исследования в Вани и - Ванском районе в 1952г. Материалы по археологии Грузии и Закавказья, вып. II , Тбилиси, 1972.

Яйленко В.П., Архаическая Греция и Ближний Восток, Москва, 1990.

Avetisian H., Urartian ceramics from the Ararat valley as a cultural phenomenon (a tentative representation), Iran & Caucasus, vol. 3-4, Tehran 1999-2000, p. 293 –314.

Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O., The 1998 Excavation Campaign at the Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, Studi Micenei ed Egeo-Anatolici, XLII/2, 2000, p. 161-173.

Azarpay G., The Urartian Boot-Shaped Vessels, "Artibus Asiae", New York, 1964, vol. 27 1964/65, p. 61-71.

Barnett R. D. and Gökce N., The Find of Urartian Bronzes in Altin Tepe Near Erzincan, "Anatolian Studies", 13, 1953, p. 121-129.

Barnett R. D., Further Russian Excavations in Armenia (1949-1953), "Iraq", 21, 1959, p. 1-19.

Barney C. A., A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalidere, "Anatolian Studies", 16, 1966, p. 55-111.

Berghe L. Vanden en De Meyer L., Urartu: een vergeten cultuur uit het bergland Armenië, Gent, 1982-1983.

Bilgiç E., Ögün B., Excavations at Kef Kalesi of Adilcevaz, Anatolia, IX, 1965, p. 1-20.

Çilingiroğlu A., The Early Iron Age at Dilkaya. In Anatolian Iron Ages. The Proceedings of the Second Anatolian Iron Ages Colloquium Held at Izmir (4-8 May, 1987), ed. A. Çilingiroğlu, D.H. French, Oxford, 1991, p. 29-38.

Edgü F., Avrupa Sanat Sergisi, Anadolu Medeniyetleri, Kultur ve Turizm Bakanlig'i, Istanbul, 1983.

Erzen A., Giyimli bronz definesi ve Giyimli Kazisi, Türk Tarih Kurumu Belleten, 1974, C. XXXVIII, s. 191-213.

Erzen A., Çavuştepe I, Ankara, 1978.

Forbes Th., The Urartian Architecture, BAR International Series 170, London, 1983.

Kellner H. - J., Bronzene Weih – und Votivgaben, in: Urartu: Ein Wiederentdeckter Rivale Assyriens, Ausstellungskataloge der Prähistorischen Staatssammlung, Band 2 Münich, 1976.

Khanzadian E., Metsamor 2, La Nesropole, v. 1, Neuchatel, Paris, 1995.

Kleiss W., Architektur, in Bastam II, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1977-78, Berlin, 1988, S. 13-74.

Kohl Ph., Kroll St., Notes on the Fall of Horom, Iranica Antiqua, v. XXXIV, 1999, p. 243-259

Korbe G., Sağlamtimur H., Çevik Ö., Potteri. In: "Ayanis I. Ten Years' Excavations at Rusaḫinili Eiduru-kai 1989-1998" (Eds. A. Çilingiroğlu, M.Salvini), Roma, 2001, p. 85-153.

König F. W., Handbuch der Chaldischen Inschriften, Archiv für Orientforschung, Beiheft 8, Graz, 1955-57.

Kroll St., Keramik Urartäischer Festungen in Iran, Berlin, "Archäologische Mitteilungen aus Iran", Ergänzungsband 2, 1976.

Kroll St., Urartus Untergang in anderer Sicht, "Istanbuler Mitteilungen", 34, 1984, S. 151-170.

Kutlu E., Altintepe'de Urartu Seramiği (The Urartian Pottery from Altintepe), Belleten, 1969, 33, s.291-301.

Lloid S., Sultantepe, p. II, Anatolian Studies, vol. II, 1954.

Lloyd S., Burney Ch.A., Excavations at the Urartian Citadel of Kayalidere, "Türk Arkeoloji Dergisi", 14 (1-2), 1965, s. 217-222.

Morgan de J., Mission Scientifique au Caucase, Paris, 1889.

Nagel W., Strommenger E., Kalakent, Berlin, 1985.

Ögün B., Die Urartäischen Bestattungsbräuche, in: Studien zur Religion und Kultur Kleinasiens, Festschrift für F. K. Dörner, Leiden, 1978, S. 639-678 (Hrsg. S.Şahin).

Özguç T., Altintepe. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 24, Ankara, 1966.

Özguç T., Altintepe II. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 27, Ankara, 1969.

Özguç T., Urartu and Altintepe, "Archaeology" 22, 1969, p. 256-263.

Özgüç T., Jewellery, Gold Votive Plaques and a Silver Belt from Altintepe, "Anatolian Studies", 33, 1983, p. 33-37.

Reindell I., Salvini M., Die urartäischen Hohlmaße für Flüssigkeiten, SMEA, 43, 2001, S. 119-139.

Salvini M., Reflections about the Urartian Shrines of the Stelae. In: "Aspects of Art and Iconography: Anatolia and Its Neighbors". Studies in in Honor of Nimet Özguç, ed. J.M.Mellink, E.Porada, T. Özguç, Ankara, 1993, p. 543-548.

Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995.

Salvini M., Archaeological inquiries into ethno-linguistic diversity in Urartu, in: Greater Anatolia and the Indo-Hittite Language Family, Journal of Indo-European Studies, Monograph Number 38, Washington D.C. 2001, p. 15-27.

Sevin V., The Excavations at the Van Castle Mound, Anatolian Iron Ages 3, eds. A. Çilingiroğlu, D.H. French, Ankara, 1994, p. 221-228.

Sevin V., The Origins of the Urartians in the light of the Van/Karagündüz Excavations, "Anatolian Studies", 49, 1999, p. 159-164.

Sevin V., Özfirat A., Kavakli E., 1997-1998 Van/Altintepe Urartu Nekropolü Kazibari, "Kazi Sonuçlari Toplanisi", XXI/1, Ankara, 2000, s. 421-434.

Sulimirski T., Scythian Antiquities in Western Asia, "Artibus Asiae", 17, 1954, p. 282-318.

T. C. Kultur ve Turizm Bakanlig'i Anadolu Medeniyetleri, Istanbul, 1983.

Tanabe K., Hori A., Hayashi T., Miyashita S., Ishida K., Studies in Urartian Bronze Objects from Japanese Collections, Bulletin of the Ancient Orient Museum, 4, Tokyo, 1982.

Tarhan M.T., Recent Research at the Urartian Capital Tushpa, "Tel Aviv", 21, 1994, p. 22-57.

Taşyürek O. A., Darstellungen des urartäischen Gottes Haldi, in: Studien zur Religion und Kultur Kleinasiens, Festschrift für F. K. Dörner, Leiden, 1978, S. 940-955.

Tite M., Methods of Fhysical Examination in Archeology. London and New York 1972.

Urartu. A Metalworking Center in the First Millenium B. C. E. Edited by Rivka Merhav, Yerusalem 1991.

Yengibaryan N., The Craves of the Urartian Period of Karchaghbyur, The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians In the Sevan Lake Basin, Documenta Asiana VII, Roma, 2002,

Zafer D., The Urartian Cremation Jars in Van and Elaziğ Museums. In: Anatolian Iron Ages 3. The Proceedings of the Third Anatolian Iron Ages Colloquium Held at Van (6-12 August, 1990) ed. A. Çilingiroğlu, D.H. French, Ankara, 1994, p. 49-62.

Zimansky P., The Kingdom of Urartu in Eastern Anatolia, in "Civilisations of the Ancient Near East", ed. J.M.Sasson, II, New York, 1995, p. 1135-1146.

Zimansky P., Ancient Ararat. A Handbook of Urartian Studies, Delmar, New York, 1998.

Zimansky P., Archaeological inquiries into ethno-linguistic diversity in Urartu, in: Greater Anatolia and the Indo-Hittite Language Family, Journal of Indo-European Studies, Monograph Number 38, Washington D.C. 2001, p. 15-27.

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ
ԵՎ
ՆԿԱՐՆԵՐ



Սկ. 1. Այթեշտոն, դամբ. 1.



Աղ. 2. Այգեշատ, դամբ. 5.



Աղ. 3. Այգեշատ. 1-14 - դամբ. 8; 15-17 -դամբ. 12.



Աղ. 4. Այգեշատ. դամբ. 13.



Աղ. 5. Այգեշատ. 1-3 - դամբ. 24; 4-6 - դամբ. 19; 7, 8 - դամբ. 29.



Աղ. 6. Այգեշատ. 1-4, 7, 8 - դամբ 35; 5, 6 - դամբ. 34.



Աղ. 7. Թալին. 7-9 - դամբ. 1; 4-6 - դամբ. 3; 1-3, 10 - դամբ. 4.



Աղ. 8. Թալին. դամբ. 2.



Աղ. 9. Թալին. դամբ. 5.



Աղ. 10. Թալին. դամբ. 6.



Աղ. 11. Թալին. 1-2 - դամբ. 14; 3-4 - դամբ. 93; 5-7, 9 - դամբ. 13; 8 - դամբ. 15.



Աղ. 12. Թալին. 1-4 - դամբ. 16; 5 - դամբ. 17.



Աղ. 13. Թալին, դամբ. 18.



Աղ. 14. Թալին, դամբ. 19.



Աղ. 15. Թալին, դամբ. 20.



Աղ. 16. Թալին, դամբ. 21.



Աղ. 17. Թալին. դամբ. 23.



Աղ. 18. Թալին. դամբ. 24.



Աղ. 19. Թալին. 4 - 7 - դամբ. 25; 12 - դամբ. 32; 9 - դամբ. 39; 10-11 - դամբ. 41; 1-3 - դամբ. 42; 8 - դամբ. 43.



Աղ. 20. Թալին, դամբ. 26.



Աղ. 21. Թալին. դամբ. 27.



Աղ. 22. Թալին, դամբ. 28.



Աղ. 23. Թալին. դամբ. 29.



Աղ. 24. Թալին. դամբ. 30.



Աղ. 25. Թալին, դամբ. 31.



Աղ. 26. Թալին. դամբ. 34.



Աղ. 27. Թալին. 4-10 - դամբ. 35; 1-3 - դամբ. 38.



Աղ. 28. Թալին. դամբ. 37.



Աղ. 29. Թալին. 1-4 - դամբ. 44; 6 - դամբ. 45;5- դամբ. 36.



Աղ. 30. Թալին, դամբ. 47.



Աղ. 31. Թալին, դամբ. 48.



Աղ. 32. Թալին. 1 - դամբ. 49; 2 - դամբ. 50 .



Աղ. 33. Թալին, դամբ. 51.



Աղ. 34. Թալին. 1-2 - դամբ. 52; 3-5 - դամբ. 53 .



Աղ. 35. Թալին. դամբ. 54 .



Աղ. 36. Թալին. դամբ. 55.



Աղ. 37. Թալին, դամբ. 57.



Աղ. 38. Թալին, դամբ. 58.



Աղ. 39. Թալին. դամբ. 59 .



Աղ. 40. Թալին. դամբ. 60 .



Աղ. 41. Թալին, դամբ. 61.



Աղ. 42. Թալին. դամբ. 62 .



Աղ. 43. Թալին. դամբ. 63 .



Աղ. 44. Թալին, դամբ. 64.



Աղ. 45. Թալին, դամբ. 65.



Աղ. 46. Թալին. դամբ. 66 .



Աղ. 47. Թալին. դամբ. 69 .



Աղ.48. Թալին. դամբ. 70 .



Աղ. 49. Թալին, դամբ. 71.



Աղ. 50. Թալին, դամբ. 73.



Աղ. 51. Թալին, դամբ. 75.



Աղ. 52. Թալին, դամբ. 76.



Աղ. 53. Թալին, դամբ. 77.



Աղ. 54. Թալին. դամբ. 79 .



Աղ. 55. Թալին. դամբ. 85 .



Աղ. 56. Թալին. դամբ. 86 .



Աղ. 57. Թալին, դամբ. 89.



Աղ. 58. Թալին. դամբ. 92.



Աղ. 59. Թալին. 11 - դամբ. 23; 1,7,8 - դամբ. 25; 3, 14,15 - դամբ. 31; 2 - դամբ. 32; 8 - դամբ. 30; 10 - դամբ. 17; 4-6 - դամբ. 20; 12- դամբ. 24.



Աղ. 60. Թալին. 3, 9-11, 14, 20 - դամբ. 6; 5- 8, 22 - դամբ. 35; 1 - դամբ. 37; 19 - դամբ. 39; 4 - դամբ. 41; 12-13, 15-17, 21, 23 - դամբ. 43; 2,18 - դամբ. 46.



Աղ. 61. Թալին. 1- դամբ. 46; 2, 3 - դամբ. 44; 4,6, 9 - դամբ. 41; 5, 8 - դամբ. 43; 7 - դամբ. 39.



Աղ. 62 Թալին. 6 - դամբ. 54; 1, 2, 5 - դամբ. 57; 3, 4 - դամբ. 61.



Աղ. 63. Թալին 1- դամբ. 46; 2- 9, 11a - դամբ. 75; 12 - դամբ. 48; 10a - դամբ. 59; 11b - դամբ. 63; 13, - դամբ. 85.



Աղ. 64. Թալին. 1 - դամբ. 89; 2 - դամբ. 52; 5 - դամբ. 46; 4 - դամբ. 86; 3 - դամբ. 54.



Սկ. 65. Թալին, դամբ. 85.



Աղ. 66. Օշական. դամբ. (ըստ Հ. Ա. Եսայան, Ա.Ա. Կալանտարյան, 1988).



Աղ. 67. Օշական. դամբ. 25 (ըստ. Հ.Ա.Եսայան, Ա.Ա. Կալանտարյան, 1988).



Աղ. 68. Օշական. 1-12- դամբ. 46; 13-16- դամբ. 62 (ըստ С. А. Есаян, А.А. Калантарян, 1988)



Աղ. 69. Օշական. 1-3-դամբ. 68; 4-10-դամբ. 47 (ըստ С. А. Есаян, А.А. Калантарян, 1988)



Սղ. 70. Օշական. դամբ. 59 (ըստ Հ. Ա. Եսայան, Ա.Ա. Կալանտարյան, 1988)



Սղ. 71. Օշական. դամբ. 59 (ըստ. Հ.Ա.Եսայան, Ա.Ա. Կալանտարյան, 1988).



Աղ. 72. Օշական. դամբ. 59 (ըստ Հ. Ա. Եսայան, Ա.Ա. Կալանթարյան, 1988)



Աղ. 73. Օշական. դամբ. 60 (ըստ. Հ.Ա.Եսայան, Ա.Ա. Կալանթարյան, 1988).



Աղ. 74. Օշական. 1-4-դամբ. 91; 5-13-դամբ. 61 (ըստ С. А. Есаян, А.А. Калантарян, 1988)



Աղ. 75. Օշական. դամբ. 69 (ըստ С. А. Есаян, А.А. Калантарян, 1988)



Աղ. 76. Արտաշավան. դամբ. 3



Աղ. 77. Արտաշավան. դամբ. 4.



Աղ. 78. Արտաշավան. դամբ. 6



Աղ. 79. Արտաշավան. դամբ. 6



Աղ. 80. Մեծամոր. դամբ. 4 (ըստ. Է. Խանզադյան..., 1973).



Աղ. 81. Մեծամոր. դամբ. 7 (ըստ. Է.Խանզադյան..., 1973).



Աղ. 82. Շամիրամ.



Աղ. 83. Արարատի հարթությունը:

Նկ. 84. Սկոտոպի վերջամասում գտնվող գյուղատնտեսական վերակառուցման ծրագիրը:

Նկ. 85. Սկոտոպի գյուղական համայնքի վերակառուցման ծրագիրը:



Աղ. 86. Արագածի միջնաբերդի հատակագծից հատված:



Աղ. 87. Արագածի միջնաբերդի հատակագիծը:



Աղ. 88. Արագածի միջնաբերդի կացարանների տեղադրության սխեմա:



Աղ. 89. Թելշեթահնի միջնաբերդի հատակագիծը:



Աղ. 90. Օշականի միջնաբերդի հատակագիծը:



Աղ. 91. Արաքսի միջնաբերդի N 1 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 92. Արագածի միջնաբերդի N 2 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 93. Արագածի միջնաբերդի N 3 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 94. Արագածի միջնաբերդի N 4 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 95. Արագածի միջնաբերդի N 5 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 96. Արագածի միջնաբերդի N 6 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 97. Արագածի միջնաբերդի N 8 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 98. Արագածի միջնաբերդի N 9 կացարանի հատակագիծը և կտրվածքը:



Աղ. 99. Արամուս ամրոցի հատակագիծը (ըստ Smith A., Kafadarian K., 1996):



Աղ. 100. Միջնաբերդի N 1 կացարանից գտածոներ.
1-19, 21-23 խեցեղեն, 20 քարից թաս, 24 կարմիր տուֆից կուռք,
25 բրոնզից օղ, 26-28 բազալտից աղորիքներ:



Աղ. 101. Միջնաբերդի N 2 կացարանից գտածոներ.
1-24 խեցեղեն, 25 ոսկրից բիզ, 26-27 քարից աղորիքներ



Աղ. 102. Միջնաբերդի N 3 կացարանից գտածոներ. 1-21 խեցեղեն, 22-24 քարից աշխատանքային գործիքներ:



Աղ. 103. Միջնաբերդի N 4 կացարանից գտածոներ. 1-17, 20 խեցեղեն,18-19 վանակատից շեղբեր, 21-22 բազալտից և տուֆից սյուն-կուռքեր,23-26 քարից աղորիքներ և աշխատանքային գործիքներ:



Աղ. 104. Միջնաբերդի N 5 կացարանից գտածոներ. 1-15 խեցեղեն, 16-17 տուֆից սյուն-կուռքեր:



Աղ. 105. Միջնաբերդի N 6 կացարանից գտածոներ. 1-9 խեցեղեն, 12 բրոնզից նետասլաք, 10-11 մետաղից իրեր:



Աղ. 106. Խեցեղեն գտածոներ միջնաբերդի կացարաններից և քաղաքային համալիրներից:



Աղ. 107. Խեցեղեն գտածոներ միջնաբերդի կացարաններից և քաղաքային համալիրներից:



Աղ. 108. Խեցեղեն գտածոներ միջնաբերդի կացարաններից և քաղաքային համալիրներից:



Աղ. 109. Խեցեղեն գտածոներ միջնաբերդի կացարաններից և քաղաքային համալիրներից:



Աղ. 110. Մետաղից գտածոներ. 1-5 Արագած, 6-9 Արամուս, 10-11 զարդեր՝ մածուկից վզնոց, մատանու քար Արագածից:



Աղ. 111. Խեցեղեն գտածոներ Արամուսից:



Աղ. 112. Խեցեղեն գտածոներ Արամուսից:



Աղ. 113. Կարասներ. 1, 3, 7, 9, 10 Կարմիր բլուր, 4 Էրեբունի, 5, 6, 11 Արգիշտիխինիլի, 2, 8 Օշական, 12 Կայալի Դերե:



Աղ. 114. Կարասներ. 2-5, 7-10 Կարմիր բլուր,
1 Էրեբունի, 6, 11-16 Արգիշտիխինիլի:



Աղ. 115. Կարասներ. 7-9, 11 Կարմիր բլուր, 1- 6, 10 Արգիշտիխինիլի:



Աղ. 116. Գարեջրի անոթներ. 1-3 Կարմիր բլուր, 4,5 Արգիշտիխինիլի:



Աղ. 117. Գարեջրի անոթներ. 1-3 Կարմիր բլուր, 4,5 Արգիշտիխինիլի:



Աղ. 118. Գավաթ ծխամաններ. 1, 2, 5 Արգիշտիխինիլի, 3, 6 Կարմիր բլուր, 4 Էրեբունի, 8 Օշական, 7 Կայալի Դերե:

Աղ. 119. Գավաթ ծխամաններ. 1, 2, 6, 8, 11 Կարմիր բլուր, 3, 4, 9 Ալթին-թեփե, 5 Մեծամոր, 7, 10 Արգիշտիխինիլի:



Աղ. 120. Սաջեր. 1, 2, 9-12 Կարմիր բլուր, 3, 4, 13-16 Արգիշտիխինիլի,
6, 17 Էրեբունի, 7, 18 Օշական, 8, 19, 20 Արագած:



Աղ. 121. Կրկնակի հաղորդակից անոթներ. 1-4 Կարմիր բլուր:



Աղ. 122. Չաներ. 1-8 Կարմիր բլուր:



Աղ. 123. Չաներ. 1-8 Կարմիր բլուր:



Աղ. 124. Չաներ. 1-6 Արգիշտիխինիլի:



Աղ. 125. Չագարներ. 1, 2 Կարմիր բլուր:



Աղ. 126. Անկանք սափորներ. 1, 3 Կարմիր բլուր, 2 Արգիշտիխինիլի, 4 Էրեբունի:



Աղ. 127. Անկանք սափորներ. 1, 3, 5 Կարմիր բլուր, 4 Օշական, 2 Էրեբունի, 6 Արգիշտիխինիլի:



Աղ. 128. Անկանք սափորներ. 1, 5 Կարմիր բլուր, 2, 4 Արգիշտիխինիլի, 3 Օշական, 6 Էրեբունի:



Աղ. 129. Անկանք աճյունասափորներ. 1, 2 «Ավտոագրեգատների» գործարան, 3 Մեծամոր, 4, 5 Իգդիր:



Աղ. 130. Անկանք սափորներ. 1 Արգիշտիխինիլի, 3, 4 Էրեբունի, 2 Թազագյուղ, 5 Կարմիր բլուր:



Աղ. 131. Աճյունասափորներ. 1-3 Արգիշտիխինիլի, 4 Օշական:



Աղ. 132. Մեկ կանթով սափորներ. 5, 6 Կարմիր բլուր, 1-4 Արևմտյան Հայաստան:



Աղ. 133. Մեկ կանթով սափորներ. 1 Արգիշտիխինիլի, 2 Օշական:



Աղ. 134. Մեկ կանթով սափորներ. 1, 2 Կարմիր բլուր, 3 Արգիշտիխինիլի, 4 Էրեբունի:



Աղ. 135. Մեկ կանթով սափորներ. 1, 5 Կարմիր բլուր, 6 Էրեբունի, 4 Արգիշտիխինիլի, 2 Իգդիր, 3 Թազագյուղ:



Աղ. 136. Մեկ կանթով սափորներ. 1, 4 Կարմիր բլուր, 3 Արգիշտիխինիլի, 2 Օշական:



Աղ. 137. Մեկ կանթով սափորներ. 1-3 Օշական, 4 Կարմիր բլուր:



Աղ. 138. Մեկ կանթով սափորներ. 1-5 Օշական, 6 Կարմիր բլուր:



Աղ. 139. Մեկ կանթով սափորներ. 1,2 Երեբունի, 3, 4 Արգիշտիխինիլի:



Աղ. 140. Ծորակով թեյնիկ քամիչներ. 1 Արգիշտիխինիլի, 2 Օշական, 3 Կարմիր բլուր:



Աղ. 141. Ծորակով թեյնիկ քամիչներ. 1, 3 Էրեբունի, 2 Օշական:



Աղ. 142. Ծորակով անոթ. 1 Երեբունի, պաշտամունքային անոթ.
2 «Ավտոագրեգատների» գործարան:



Աղ. 143. Պաշտամունքային աճյունասափոր.
«Ավտոագրեգատների» գործարան:



Աղ. 144. Քրեղաններ 1, 3, 4 Կարմիր բլուր, 2 Արգիշտիխինիլի, 5 Երեբունի, 7 Օշական, 6, 8 Իգդիր, 9 Արագած:



Աղ. 145. Քրեղաններ. 1-4 Կարմիր բլուր, 6 Երեբունի, 7 Արգիշտիխինիլի, 8, 9 Օշական, 5 Արագած:



Աղ. 146. Քրեղաններ. 1, 7 Կարմիր բլուր, 2-4 Արգիշտիխինիլի , 8 Էրեբունի, 6, 9 Օշական, 5 Արագած:



Աղ. 147. Թաս սկուտեղ. Արգիշտիխինիլի:



Աղ. 148. Թասեր. 1-4 Կարմիր բլուր, 5 Երեբունի, 6 Արգիշտիխինիլի, 8 Արագած, 7 «Ավտոագրեգատների» գործարան, 9 Օշական:



Աղ. 149. Թասեր 1-3 [illegible] 4 5 [illegible] 6, 7 [illegible] 9 [illegible] 12 [illegible]



Աղ. 150. Թասեր. 1, 4, 7 Կարմիր բլուր, 2, 8 Էրեբունի, 3 Արգիշտիխինիլի 5, 9 Օշական, 6 Արագած, 10 Սարյանի փողոց:



Աղ. 151. Կճուճներ. 2-6 Կարմիր բլուր, 1, 7, 8 Էրեբունի:



Աղ. 152. Կճուճներ. 1-4 Կարմիր բլուր:



Աղ. 153. Կճուճներ. 2, 6, 7 Կարմիր բլուր 1, 4 Իգդիր, 5 Երեբունի 3 Արգիշտիխինիլի



Աղ. 154. Կճուճներ. 1, 2 Կարմիր բլուր, 3, 4 Իգդիր, 5 Արգիշտիխինիլի:



Աղ. 155. Ճրագներ. 4 Էրեբունի, 1, 2, 5 Կարմիր բլուր, 6 Արգիշտիխինիլի, 3 Օշական, 7 Արևմտյան Հայաստան:



Աղ. 156. Ճրագներ. 4, 5 Կարմիր բլուր, 1-3 Էրեբունի:



Աղ. 157. Երկկանք գավաթ սափորներ. 4, 5 Կարմիր բլուր, 1, 2, 9 Արգիշտիխինիլի, 6, 7, 10 Օշական, 3, 12 Էրեբունի, 8 Սարուխան, 11 Հարժիս:



Աղ. 158. Երկկանք գավաթ սափորներ. 1-4 Արգիշտիխինիլի, 5, 6 Երեբունի, 7, 9 Կարմիր բլուր, 8 Օշական:



Աղ. 159 Երկկանք գավաթ սափորներ. 1, 10, 11, 15, 16 Օշական, 2, 3, 12-14 Արագած, 9 Թազագյուղ, 6 Սարյանի փողոց, 7 Թոփրախ-Կալե, 8 Իգդիր, 4 Բաստամ, 5 Ալթին-թեփե:



Աղ. 160. Փիալաներ. 2, 4-7 Արևմտյան Հայաստան, 3 Էրեբունի, 1, 8 Կարմիր բլուր, 9 Օշական:



Աղ. 161. Փիալաներ. 1, 3, 5 Կարմիր բլուր, 2, 4 Արգիշտիխինիլի, 6, 12 Էրեբունի, 7, 8 Արագած, 9-11 Օշական, 13, 14 Արամուս:



Աղ. 162. Գունազարդ անոթ. Օշական:



Աղ. 163. Գունազարդ անոթ. Կարմիր բլուր:



Աղ. 164. Ասկոսներ. 1 Կարմիր բլուր, 2 Սարյանի փողոց, 3 գունազարդ անոթ. Օշական:



Աղ. 165. Ռիտոններ. 1 Էրեբունի, 2 Արգիշտիխինիլի; գունազարդ խեցեղեն. 3, 4 Կարմիր բլուր:



Աղ. 166. Գավաթ անոթներ. 1, 2 Կարմիր բլուր:



Աղ. 167. Կեռնոս. Կարմիր բլուր:



Աղ. 168. Կարաս. Կարմիր բլուր:



Աղ. 169. Կարասներ. 1-4 Արագած:



Աղ. 170. Աճյունասափորներ. 1-4 Ալթին-թեփե:



Աղ. 171. Աճյունասափորներ. 1-3 Ալթին-թեփե:



Աղ. 172. Գարեջրի անոթներ:



Աղ. 173. Նրբագեղ անոթներ. 1, 4, 7, 9, 20-23 Կարմիր բլուր, 2, 5, 24, 25 Էրեբունի, 3 Բուսաբանական այգի, 6, 8, 19 Արգիշտիխինիլի, 10-13 Օշական, 14-18 Արագած:



Աղ. 174. Նրբագեղ անոթներ. 2, 5, 6, 8 Կարմիր բլուր, 1 Էրեբունի, 4, 7, 9-11 Արգիշտիխինիլի, 3 Օշական:



Աղ. 175. Մեկ կանթով սափորներ:



Աղ. 176. Մեկ կանթով սափորներ:



Աղ. 177. Թասեր. 1-4 Արգիշտիխինիլի:



Աղ. 178. 1 կարաս Արգիշտիխինիլիից, 2 քարից արձան (ՀԱՊԹ 1476):



Աղ. 179. Քարե արձան Արամուսից:

Աղ. 180. Քարե արձան Արամուսից:



Քարտեզ: Արամուսյան ցամաքամերձ դամբարանադաշտի կամ դամբարանների տեղաբաշխումը ըստ ծագման

Նկ. 1. Այգեշատ. դամբ. 34.

ա

բ

Նկ. 2 ա, բ. Այգեշատ. դամբ. 35.



ա



բ

Նկ. 3 ա, բ. Այգեշատ. դամբ. 36.

Նկ. 4. Կիրճաձի ամրոցը:

Նկ. 5. Կոպտաթիթեղի միջնաբեղերի կյուսիսային արևմտյան մասում – հարավային մասում քաղաքային ամառանոցը:

Նկ. 6. Կոպտաթիթեղի վերին մասում գտնվող կիրճերի վերին մասում գտնվող ամառանոցը:

Նկ. 7. Արագածի միջնաբերդի N 6 կացարանի մույթը:

Նկ. 8. Արագածի միջնաբերդի N 9 կացարանը:

Նկ. 9. Արագածի քաղաքային համալիրը, N 1 սենյակ:



Նկ. 10. Արագածի N 1 թաղումը:

Նկ. 11. Արագածի N 2 թաղումը:



Նկ. 12. Արամուսի միջնաբերդը:

Նկ. 13. Արամուսի միջնաբերդի պարսպապատը:



Նկ. 14. Արամուսի միջնաբերդի շերտագրական փոսորակը:

АВЕТИСЯН ГАЙК ГРИГОРЬЕВИЧ

АВЕТИСЯН ПАВЕЛ СЕДРАКОВИЧ

Культура Араратской долины XI-VI веков до н.э.

Резюме

Основной целью работы явилось исследование культуры Араратской долины периода XI-VI веков до н.э., фактологическим основанием которого явилось изучение как уже известных, так и новых раскопов древних комплексов. В связи с этим представлялось важным выявление процессов формирования и развития государственных образований. Вне всякого сомнения, что первые государственные формирования, зафиксированные на Армянском нагорье, относятся, как минимум, к концу III-го тысячелетия до н.э. С возникновением на территории Армянского нагорья владений Ванского царства отмечается новый этап и совершенно новая ситуация в развитии культуры. Бесспорно, что вышеприведенные факты приобретают важное значение при решении таких вопросов, как: структура и функционирование государственной системы Ванского царства, выявление взаимовлияния "урартской" и "местной" культур, наследственных связей, скифо-урартских отношений.

Благодаря системному подходу, который включает классификацию фактологического материала, его каноническое описание и интерпретацию, материалы, собранные при раскопках в Араратской долине, предоставили значительное количество фактов, которые дополняют и расширяют границы понимания важнейших проблем.

Исследовались:

1. Комплексы памятников, которые были уничтожены во время походов ванских правителей и в период царствования не заселялись. Дается характеристика исключительно доурартских слоев в следующем порядке: Двин, Шамирам, Элар и т.д.
2. Комплексы памятников, которые были уничтожены и в дальнейшем восстановлены правителями Вана. Дается характеристика доурартских и урартских слоев в следующем порядке: Мецамор, Воскеваз, городская часть Кармир Блура и т.д.
3. Комплексы памятников, которые были построены царями Вана. Дается характеристика, в основном, урартских и послеурартских слоевв следующем порядке: Эребуни, Аргиштихинили, цитадель крепости Кармир Блура, дворцовые комплексы и крепостной дворец Ошакана, крепости Арагаца и Арамуса и т.д.

Предложенный типологический подход предоставляет исключительную возможность с помощью сравнительной характеристики исходных данных памятников выявить следующее:

а) историко-археологическую картину территории до урартских походов.

б) особенности и основные характерные критерии ситуации, сложившейся после походов ванских царей.

в) археологические проявления взаимосвязей и взаимовлияний "урартских" и "этиунских" культур.

В работе представлены решения важнейших историко-археологических проблем, касающихся обстановки в Араратской долине периода XI-VI вв. до н.э.

Всесторонне исследованы и представлены факты проявления как урартской государственной, так и негосударственной материальной и духовной культур. Это, в свою очередь, послужило исходной точкой, благодаря которой стало возможным картографирование целого ряда археологических памятников с внесением исторических, археологических, культурологических и хронологических уточнений; уточнены решения проблем в области градостроения, возведения крепостей, архитектуры.

Благодаря исследованиям новых археологических раскопов расширилось и стало более содержательным представление об археологии, историко-культурных и социальных особенностях страны "Аза". В этом аспекте приобретают новое значение исследования урартской крепости Арагаца, некрополей Айгешата, Талина и других комплексов. Выдвинуты и решены методологические проблемы.

HAYK AVETISYAN

PAVEL AVETISYAN

The culture of the Ararat valley in the XI-VI centuries B.C.

(Summary)

The main objective of the thesis is to study the culture of the Ararat valley (XI-VI c.c. B.C.). The basis of the source study is the investigation of both known as well as newly excavated complexes. In this respect, the process of state formations and their development is of special interest. It is beyond doubt that the early state formations in the upland are recorded at least since the end of the III millennium B.C. With the advent of the kingdom

of Van comprising the borders of the upland, a new cultural phase started. It is obvious that the abovementioned facts are important to solve the mechanics of the formation of the kingdom of Van as a state, as well as to reveal the problems of the interaction of the "Urartian" and "local" cultures, the hereditary links, the Scythian-Urartian relations.

The materials excavated in the Ararat valley accumulated considerable data, which complement and extend the scope of the problems in question, especially in the context of the classification, the canonic description and the interpretation of the recorded materials. As a result, the following most important typological problems stand-out:

1. Monument complexes, which were destroyed during the invasions of the rulers of Van and were not inhabited during the existence of the layers prior to Urarty: Dvin, Shamiram, Elar, and so on.
2. Monument complexes, which were destroyed and were restored later by the rulers of Van. They are described by the morphology of the layers prior to Urartu and belonging to Urartu: Metsamor, Voskevaz, the city zone of Karmir Blur, and so on.
3. Monument complexes built by the kings of Van. They are described mainly by the morphology of the Urartian and often by the post-Urartian layers as well: Erebuni, Argishtikhinili, the citadel of Karmir Blur, the palace complexes and the fortress-castle of Oshakan, the fortress of Aragats and Aramus, and so on. This typology enables an exceptional opportunity through comparative analyses of the monuments to reveal:

a. the hisrotico-archaeological panorama of the area prior to the Urartian invasions.
b. the peculiarities and the basic characteristic features of the situation after the invasions of the kings of Van.
c. the archaeological manifestations of the interrelation and the interaction of the "Urartian" and "Ethiunian" cultures.

The most important problems of the historico-archaeological situation of the Ararat valley (XI-VI c.c. B.C.) have found their solutions in this work. Through a comprehensive study both the material and the spiritual manifestations of the two great facts – Urartian state and non-state cultures have been presented. By means of this starting point it has been possible to draw a map of a number of archaeological complexes, making historical, archaeological, cultural corrections, corrections relating to dates, and solve urban development, fortification, architectural problems. By presenting the newly found archaeological complexes, the archaeological,historico-cultural and the social panorama of the country "Aza" has become more spacious and richer in content. In this respect, the study of the Urartian castle of Aragats, the burial sites of Aigeshat, Talin, and other complexes is of special value. New problems are revealed to be investigated.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Գլուխ I. Արարատյան դաշտի հուշարձանները մ.թ.ա. XI –VIII դարերի պատմահնագիտական համատեքստում 8
Հուշարձանների թվագրությունը և համաժամանակեցման հարցերը 50

Գլուխ II. Արարատյան դաշտի հուշարձանները մ.թ.ա. VIII – VI դարերի պատմահնագիտական համատեքստում 55
Հուշարձանների թվագրությունը և համաժամանակեցման խնդիրները 79

Գլուխ III. Արագածի ամրոցը 82
§1. Ամրաշինական համակարգը 87
§2. Միջնաբերդի շինությունները 91
§3. Միջնաբերդի վերին հարկի հաստատագրման խնդիրները 100
§4. Քաղաքային համալիրները 108
§5. Պաշտամունքային կառույցները 114

Գլուխ IV. Արամուս 119
§1. Ամրոցի պեղումները 119
§2. Միջնաբերդի կացարանները և շերտագրությունը 121
§3. Հնագիտական գտածոները 129

Գլուխ V. Նյութական մշակույթ 135
§1. Մետաղից գտածոներ 135
§2. Քարից գտածոներ (քարի մշակում) 139
§3. Խեցեգործություն 145
§4. Իմիտացիա (ընդօրինակում) 161
Հավելված
Ք. Նավասարդյան, Վանի թագավորության խեցեգործության տեխնոլոգիական առանձնահատկությունների մասին 172

Գրականության ցանկ 184
Աղյուսակներ և նկարներ 196
Резюме 392
Summary 393

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ ՍԵԴՐԱԿԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ Մ.Թ.Ա. XI -VI ԴԱՐԵՐՈՒՄ

Ստորագրված է տպագրության 27.04.06 թ.:
Չափսը՝ 60×84 1/16 : Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 21.5 մամուլ,
տպագր. 24.75 մամուլ= 23.0 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 200: Պատվեր՝ 82:

Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան, Ալ. Մանուկյան 1: